ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

# ԱՊՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

398
Ա - 68

ԳԻՐՔ 6










ՀՐԱՉՅԱ ԱՄԻՐՅԱՆ

# ԻՆՔՆԱԿԵՐՏՈՒՄ

ՀՈԳԵԲԱՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Կազմող՝
ՀՐԱՉՅԱ ԱՄԻՐՅԱՆ

ԱՊՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

ԳԻՐՔ 6

# ԻՆՔՆԱԿԵՐՏՈՒՄ

ՀՈԳԵԲԱՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 398:1/14
ԳՄԴ 82.33+87
Ա 681

13177
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ»
Կրթահամալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա 681 Ապրելու արվեստը: Գիրք 6: Ինքնակերտում: Յոգեբանափիլիսոփայական առակներ:/ Կազմող՝ Յ. Ամիրյան. – Եր.: Զանգակ–97, 2008. – 140 էջ:

*«Ինքնակերտում» ժողովածուն «Ապրելու արվեստը» խորագրով նախկինում լույս տեսած հոգեբանափիլիսոփայական առակների ժողովածուների շարունակությունն է: Ժողովածուում ընդգրկված են տարբեր դարաշրջաններում և մշակույթներում ստեղծված բազմազան թեմատիկայով առակներ և ուսանելի պատմություններ, որոնք հայերենով լույս են տեսնում առաջին անգամ:*

*Ժողովածուն նախատեսված է ինչպես ընթերցողների լայն շրջանի, այնպես էլ մասնագետների համար:*

ԳՄԴ 82.33+87

ISBN 978-99941-1-437-87

© Կազմելու համար՝ Ամիրյան Յ., 2008 թ.
© «Զանգակ–97» հրատարակչություն, 2008 թ.

# ԸՆԴԴԵՄ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՎԱԿՈՒՈՒՄԻ
# ԿԱՄ
# ԱԿՆԱՐԿՆԵՐ ԻՆՔՆԱԿԵՐՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ողջո՛ւյն, սիրելի՛ բարեկամներ:

Ահա և մենք նորից հանդիպեցինք, որի համար շատ ուրախ եմ: Քանզի մենք հնամենի և նորօրյա պրակտիկ իմաստություններին միասին հաղորդակցվելու ևս մի նոր առիթ ունենք: Չմոռանամ նշել, որ այս առիթի ստեղծման հիմնական «մեղավորը» դարձյալ դուք եք, սիրելինե՛րս: «Ապրելու արվեստը: Յոգեբանափիլիսոփայական առակներ» շարքն անպայմանորեն շարունակված տեսնելու ձեր բուռն ցանկությունն էր, որ ինձ մղեց ձեռնամուխ լինել շարքը ևս մեկ հատորյակով հարստացնելուն: Արդյունքում ծնունդ առավ շարքի թվով վեցերորդ ժողովածուն, որը հիմա ձեր ձեռքում է:

Աշխարհայացքային նշանակության բազմաթիվ կարևոր հարցեր կան, որոնք, որոշակի տարիքից սկսած, անխուսափելիորեն ծառանում են ցանկացած մտածող մարդու առջև: Դրանք անչափ կարևոր հարցեր են, որոնց պատասխանները պայմանավորում են մարդու մտածելակերպը, արժեքային համակարգը, նրա վերաբերմունքը կյանքի հանդեպ, նրա ընդհանուր ապրելակերպը, այլ կերպ ասած՝ նրա կյանքի բովանդակությունը: Ահա այդպիսի հարցերի մի քանի նմուշներ:

Ինչպե՞ս աճել... ի՞նչ հիմքի վրա և ինչպե՞ս կառուցել փոխհարաբերությունները շրջապատող աշխարհի և մարդկանց հետ ... ինչպե՞ս վերաբերվել անձիդ... ուրիշներին... ամենատարբեր երևույթներին ու իրադարձություններին... ինչպիսի՞ արժեքներով ու չափանիշներով առաջնորդվել կոնկրետ իրավիճակներում ու հանգամանքներում... ինչպե՞ս մշակել այդ չափանիշները... և ինչպե՞ս կիրառել դրանք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում... ի՞նչ է նշանակում ապրել իսկապես լիարժեք և իսկապես երջանիկ կյանքով... ինչի՞ց է կազմվում այդ լիարժեքությունը... ի՞նչն է, որ իսկական երջանկություն, այլ ոչ թե լոկ երջանկության պատրանքն է առաջացնում... ինչի՞ է հարկավոր ձգտել և ինչի՞ց խուսափել մեր այս բարդ ու հարափոփոխ ժամանակներում... ինչպիսի՞ նպատակներ դնել և ինչպե՞ս հասնել այդ նպատակների իրականացմանը...

Բնականաբար, սա ոչ թե լրիվ ցանկն էր, այլ ընդամենը նմուշներ էին...

Յամաձայնեք, որ սրանք շատ կարևոր, միանգամայն կոնկրետ և լիովին պրակտիկ նշանակություն ունեցող հարցեր են, որոնց ճշգրիտ պատասխաններն ունենալն էլ հենց օգնում է տիրապետել *ապրելու արվեստին*:

Ցավոք սրտի, մեր իրականության մեջ ներկայումս առկա արժեքային վակուումը բնավ չի նպաստում այս հարցերի ճշգրիտ պատասխանները գտնելուն: Դպրոցական ու բուհական կրթությունը չի կարևորում աշխարհայացքի ձևավորման խնդիրը, չի շեշտադրում այս հարցերի կարևորությունը և ոչ էլ մղում է այդ հարցերի պատասխաններն ինքնուրույնաբար գտնելուն:

Զանգվածային լրատվամիջոցներն էլ իրենց հերթին զբաղված են փող աշխատելով, այլ ոչ թե համապատասխան արժեքային դաշտ ձևավորելով և հասարա-

կության կրթելով: Դե, երբ իսկապես որակյալ արժեքային դաշտ չի ձևավորվում, ապա հոգևոր սնանկությունը, զուտ սպառողական արժեքներն ու մտածելակերպը դառնում են գերիշխող: Իսկ դա բացահայտորեն կործանարար է, քանի որ արդեն վաղուց գիտականորեն ապացուցված է. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԹԵ ԱՅԼ ԲՆՈՒՅԹԻ) ԱՐՄԱՏԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ ՀՈԳԵՎՈՐ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է:

Եվ եթե հոգեբանափիլիսոփայական առակների և ուսանելի պատմությունների այս ժողովածուները թեկուզ ինչ–որ չափով նպաստեն առկա արժեքային վակուումը լցնելուն, ապա ես կհամարեմ, որ կատարել եմ իմ առջև դրված խնդիրը: Հոգեբանափիլիսոփայական առակների ընթերցումը կարող է շատ օգտակար լինել սեփական ճշմարիտ ուղին ու ճշմարիտ կենսափիլիսոփայությունը մշակելու գործում: Ինչ–ինչ, բայց ես հենց այդ մտայնությամբ եմ առաջնորդվել ժողովածուները կազմելիս:

Առակները սքանչելի են նրանով, որ ոչինչ չեն պարտադրում: Քանզի ճշմարիտ աշխարհայացքը դրսից պարտադրվել չի կարող: «Ճշմարտությունը պետք է ապրվի, այլ ոչ թե մատուցվի»` (Լաո Ցզի): Ամեն ոք ինքը պետք է հեղինակի իր կենսափիլիսոփայությունը: Այս առումով առակներն ընդամենը հուշումներ են, որոնք մարդուն մղում են խորհրդածելու և կարևոր ճշմարտություններն ինքնուրույնաբար բացահայտելու:

Հիշեցնեմ, որ ժողովածուները ո՛չ կրոնական, ո՛չ էլ հակակրոնական որևէ ուղղվածություն չունեն: Նպատակս նաև այն չի եղել, որ ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնեմ տարբեր կրոնական հոսանքներին կամ դավանաբանական ուսմունքներին: Այդ է պատճառը, որ ժողովածուները չեմ ծանրաբեռնել մանրամասն բացատրություններով ու ծանոթագրություններով: Ամենատարբեր դարաշրջաններում և մշակույթներում ստեղծված իմաստությունների այս պատառիկներն ընթերցողներին ներկայացնելիս խնդիրս եղել է կարևոր հարցերի շուրջ մտորումների համար լոկ առատորեն նյութ տրամադրելը: Այդ առումով ամենևին կարևոր չէ, թե իմաստությունները որտեղից են քաղված: Կարևորն այն է, որ առակներից և ուսանելի պատմություններից յուրաքանչյուրն ինչ–որ բան է սովորեցնում, ճշմարտության ինչ–որ բաժին է պարունակում իր մեջ:

Արդեն նշել եմ, որ ժողովածուները մտահղացվել են որպես յուրօրինակ հուշումներ սեփական ճշմարիտ և կենսահաստատ կենսափիլիսոփայությունը մշակելու գործում: Ինչ–ինչ, բայց այդպիսի կենսափիլիսոփայությունն ամենից առաջ իրատեսական պետք է լինի. ոչ մի խաբեություն, ոչ մի պատրանք: Այլապես դա այն ուժը չի ունենա և մի գեղեցիկ օր կարող է փլուզվել ավազի վրա կառուցված տան պես: Իսկ իրատես լինելու դեպքում հարկավոր է ուղիղ նայել իրականության աչքերին, առանց որևէ կանխակալության: Այսինքն` ընդունել, որ մարդու մեջ կա և՛ լավը, և՛ վատը: Ուստի չզարմանաք, եթե մարդու լավագույն կողմերն ու անսահման հնարավորությունները բացահայտող առակների ու պատմությունների կողքին հանդիպեք նաև այնպիսիններին, որոնք նկարագրում են մարդկային էության վատագույն կողմերը: Վստահ եմ` դա հոռետեսական տպավորություն ու տրամադրվածություն չի ստեղծի ձեզ մոտ:

Առակների մասին կարելի է անվերջ խոսել և չսպառել նյութը, ուստի այսքանով սահմանափակում եմ ասելիքս: Չեմ ցանկանում չարաշահել ձեր համբերությունը, քանզի գիտեմ, որ ծանոթ եք նախորդ հատորյակների նախաբաններին և արդեն գիտեք, թե ինչ պետք է անել այս գրքերի ընթերցումից առավել մեծ օգուտ քաղելու համար:

Շնորհակալություն եմ հայտնում «Տաթև գիտակրթական համալիրի» տնօրեն Սոկրատ Մկրտչյանին և «Զանգակ–97» հրատարակչությանը` գրքաշարի հրատարակման գործում ցուցաբերած աջակցության համար, իմ բազմաթիվ ընթերցողներին, ովքեր իրենց խոհերն ու տպավորությունները սիրով կիսել են ինձ հետ, բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ ոգևորել են ինձ և նպաստել գրքաշարի լույս աշխարհ գալուն:

Ինչպես միշտ, շատ ուրախ կլինեմ, եթե առակների վերաբերյալ ձեր խոհերը, տպավորությունները, ցանկություններն ու մտքերը կիսեք ինձ հետ: Այդպիսի ցանկության դեպքում կարող եք ձեր նամակներն ուղարկել **hrachamir@yahoo.com** էլեկտրոնային հասցեով կամ զանգահարել տողերիս հեղինակին **(093)541375** հեռախոսահամարով: Սիրով կպատասխանեմ ձեր բոլոր նամակներին և հեռախոսազանգերին:

Մինչ նոր հանդիպում, բարեկամնե՛ր:

*Հրաչյա Ամիրյան*

## ԱՌԱՆՑ ՍԻՐՈ

*(ծագումն անհայտ է)*

Պարտականությունն առանց սիրո մարդուն դարձնում է դյուրագրգիռ:

Պատասխանատվությունն առանց սիրո մարդուն դարձնում է անհարգալից:

Արդարությունն առանց սիրո մարդուն դարձնում է անողոք:

Ճշմարտությունն առանց սիրո մարդուն դարձնում է քննադատամոլ:

Բարեկրթությունն առանց սիրո մարդուն դարձնում է երկերեսանի:

Խելամտությունն առանց սիրո մարդուն դարձնում է խորամանկ:

Սիրալիրությունն առանց սիրո մարդուն դարձնում է կեղծավոր:

Կարգապահությունն առանց սիրո մարդուն դարձնում է մանրախնդիր:

Իրավասությունն առանց սիրո մարդուն դարձնում է անհողդողդ:

Իշխանությունն առանց սիրո մարդուն դարձնում է բռնակալ:

Պատիվն առանց սիրո մարդուն ռարձնում է ամբարտավան:

Յարստությունն առանց սիրո մարդուն դարձնում է ագահ:

Յավատն առանց սիրո մարդուն դարձնում է մոլեռանդ:

* * *

## ԱՐԾԻՎՆԵՐ ԵՎ ԽԵՑԵՄՈՐԹՆԵՐ

*(առակ Օշոյի շարադրմամբ)*

Երբ Աստված ստեղծեց մարդուն, նրան հարցրեց, թե նա ով է ուզում լինել: Մարդը դեռևս ջահել ու անփորձ էր և այդ պատճառով այդպիսի հարցից մի քիչ շփոթվեց ու ասաց.

— Ես չգիտեմ:

Այդժամ Աստված մարդու թևից բռնեց ու տարավ ծովի մոտ: Մարդուն մոտեցնելով ափին՝ Աստված նրան ցույց տվեց ծովի ափին պառկած խեցիներն ու ասաց.



— Եթե ցանկանում ես, ապա կարող ես քեզ համար խեցու կյանք ընտրել՝ գտնվելու ես ամենախոր հատակում միլիոնավոր քեզ նմանների հետ, և քո սնունդը լինելու է միայն այն, ինչ հոսանքը կբերի: Քո այսօրվա օրը նման է լինելու երեկվա օրվան, և քո ամբողջ կյանքը կանցնի առանց ռիսկի ու ցնցումների: Ո՛չ հաղթանակները, ո՛չ պարտությունները քեզ չեն հուզի: Ամբողջ ժամանակ դու միշտ պառկած ես լինելու հատակին՝ միայն բացուխուփ անելով քո փեղկերը: Եվ այդպես առավոտից երեկո. բացել, փակել, բացել, փակել:

Խեցու կյանքը ցույց տալով՝ Աստված մարդուն տարավ լեռները: Եվ այնտեղ՝ բարձր գագաթների մոտ, նրան մատնացույց արեց արծվի բույնը:

— Բայց եթե դու ցանկանում ես, կարող ես այս կյանքն ընտրել: Դու կարողանալու ես ճախրել այնքան բարձր, որքան ցանկանաս, կկարողանաս ապրել այնպես, ինչպես ցանկանաս, կկարողանաս հասնել ամենաբարձր գագաթներին և այդ բարձունքներում կհանդիպես քիչ թվով այնպիսիններին, ինչպիսին դու ես: Դու ինքդ ես որոշելու, թե դեպի ուր և ինչպես թռչես, և այդ ամենի գինն այն է լինելու, որ երբեք ոչ մի բան հենց այնպես չի տրվելու քեզ: Դու ամեն օր գնալու ես սնունդ որոնելու և արյուն–քրտինքով ես ձեռք բերելու այն: Դու կարող ես նաև այս կյանքն ընտրել, եթե ցանկանում ես:

Եվ այդ ժամանակներից ի վեր աշխարհում հայտնվեցին մարդիկ, ովքեր ընտրում էին խեցու կյանքը, և քիչ թվով նրանք, ովքեր արծվի կյանք էին ընտրում իրենց համար:

* * *

## ՍԵՓԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

— Դու լսում ես ոչ թե նրա համար, որ ինչ–որ նոր բան իմանաս, այլ նրա համար, որ քո մտքերի հաստատումը գտնես: Դու վիճում ես ոչ թե նրա համար, որ ճշմարտությունը գտնես, այլ նրա համար, որ պաշտպանես քո համոզմունքները,— ասաց Վարպետը ու պատմեց մի թագավորի մասին, որը մի ոչ մեծ քաղաքով անցնելիս զարմանալիորեն դիպուկ նետահարումների արդյունքի ականատեսը եղավ: Ծառերի, խորդանոցների ու ցանկապատերի վրա նկարված թիրախները խոցված էին ուղիղ ամենակենտրոնում: Նա հրամայեց իր մոտ բերել այդ դիպուկ նետահարին: Պարզվեց, որ նետահարը տասնամյա մի տղեկ է:

— Չի կարող պատահել,— բացականչեց թագավորը:— Ինչպե՞ս է դա քեզ հաջողվում:

— Տարրական ձևով,— պատասխանեց տղեկը:— Սկզբից ես նետահարում եմ, իսկ հետո նետի շուրջը թիրախ եմ նկարում:

Վարպետն ավելացրեց.

— Այդպես և դու. սկզբից եզրակացություններ ես անում, իսկ հետո դրանց շուրջը պատեր ես կառուցում: Յենց այդ ձևով ես դու պահում քո գաղափարախոսությունն ու կրոնը:

կության կրթելով: Դե, երբ իսկապես որակյալ արժեքային դաշտ չի ձևավորվում, ապա հոգևոր սնանկությունը, զուտ սպառողական արժեքներն ու մտածելակերպը դառնում են գերիշխող: Իսկ դա բացահայտորեն կործանարար է, քանի որ արդեն վաղուց գիտականորեն ապացուցված է. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԹԵ ԱՅԼ ԲՆՈՒՅԹԻ) ԱՐՄԱՏԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ ՀՈԳԵՎՈՐ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է:

Եվ եթե հոգեբանափիլիսոփայական առակների և ուսանելի պատմությունների այս ժողովածուները թեկուզ ինչ–որ չափով նպաստեն առկա արժեքային վակուումը լցնելուն, ապա ես կհամարեմ, որ կատարել եմ իմ առջև դրված խնդիրը: Հոգեբանափիլիսոփայական առակների ընթերցումը կարող է շատ օգտակար լինել սեփական ճշմարիտ ուղին ու ճշմարիտ կենսափիլիսոփայությունը մշակելու գործում: Ինչ–ինչ, բայց ես հենց այդ մտայնությամբ եմ առաջնորդվել ժողովածուները կազմելիս:

Առակները սքանչելի են նրանով, որ ոչինչ չեն պարտադրում: Քանզի ճշմարիտ աշխարհայացքը դրսից պարտադրվել չի կարող: «Ճշմարտությունը պետք է ապրվի, այլ ոչ թե մատուցվի» (Լաո Ցզի): Ամեն ոք ինքը պետք է հեղինակի իր կենսափիլիսոփայությունը: Այս առումով առակներն ընդամենը հուշումներ են, որոնք մարդուն մղում են խորհրդածելու և կարևոր ճշմարտություններն ինքնուրույնաբար բացահայտելու:

Հիշեցնեմ, որ ժողովածուները ո՛չ կրոնական, ո՛չ էլ հակակրոնական որևէ ուղղվածություն չունեն: Նպատակս նաև այն չի եղել, որ ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնեմ տարբեր կրոնական հոսանքներին կամ դավանաբանական ուսմունքներին: Այդ է պատճառը, որ ժողովածուները չեմ ծանրաբեռնել մանրամասն բացատրություններով ու ծանոթագրություններով: Ամենատարբեր դարաշրջաններում և մշակույթներում ստեղծված իմաստությունների այս պատառիկներն ընթերցողներին ներկայացնելիս խնդիրս եղել է կարևոր հարցերի շուրջ մտորումների համար լոկ առատորեն նյութ տրամադրելը: Այդ առումով ամենևին կարևոր չէ, թե իմաստությունները որտեղից են քաղված: Կարևորն այն է, որ առակներից և ուսանելի պատմություններից յուրաքանչյուրն ինչ–որ բան է սովորեցնում, ճշմարտության ինչ–որ բաժին է պարունակում իր մեջ:

Արդեն նշել եմ, որ ժողովածուները մտահղացվել են որպես յուրօրինակ հուշումներ սեփական ճշմարիտ և կենսահաստատ կենսափիլիսոփայությունը մշակելու գործում: Ինչ–ինչ, բայց այդպիսի կենսափիլիսոփայությունն ամենից առաջ իրատեսական պետք է լինի. ոչ մի խաբեություն, ոչ մի պատրանք: Այլապես դա այն ուժը չի ունենա և մի գեղեցիկ օր կարող է փլուզվել ավազի վրա կառուցված տան պես: Իսկ իրատես լինելու դեպքում հարկավոր է ուղիղ նայել իրականության աչքերին, առանց որևէ կանխակալության: Այսինքն՝ ընդունել, որ մարդու մեջ կա և՛ լավը, և՛ վատը: Ուստի չզարմանաք, եթե մարդու լավագույն կողմերն ու անսահման հնարավորությունները բացահայտող առակների ու պատմությունների կողքին հանդիպեք նաև այնպիսիններին, որոնք նկարագրում են մարդկային էության վատագույն կողմերը: Վստահ եմ՝ դա հոռետեսական տպավորություն ու տրամադրվածություն չի ստեղծի ձեզ մոտ:

Առակների մասին կարելի է անվերջ խոսել և չսպառել նյութը, ուստի այսքանով սահմանափակվում եմ ասելիքս: Չեմ ցանկանում չարաշահել ձեր համբերությունը, քանզի գիտեմ, որ ծանոթ եք նախորդ հատորյակների նախաբաններին և արդեն գիտեք, թե ինչ պետք է անել այս գրքերի ընթերցումից առավել մեծ օգուտ քաղելու համար:

Շնորհակալություն եմ հայտնում «Տաթև գիտակրթական համալիրի» տնօրեն Սոկրատ Մկրտչյանին և «Զանգակ–97» հրատարակչությանը՝ գրքաշարի հրատարակման գործում ցուցաբերած աջակցության համար, իմ բազմաթիվ ընթերցողներին, ովքեր իրենց խոհերն ու տպավորությունները սիրով կիսել են ինձ հետ, բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ ոգևորել են ինձ և նպաստել գրքաշարի լույս աշխարհ գալուն:

Ինչպես միշտ, շատ ուրախ կլինեմ, եթե առակների վերաբերյալ ձեր խոհերը, տպավորությունները, ցանկություններն ու մտքերը կիսեք ինձ հետ: Այդպիսի ցանկության դեպքում կարող եք ձեր նամակներն ուղարկել **hrachamir@yahoo.com** էլեկտրոնային հասցեով կամ զանգահարել տողերիս հեղինակին **(093)541375** հեռախոսահամարով: Սիրով կպատասխանեմ ձեր բոլոր նամակներին և հեռախոսազանգերին:

Մինչ նոր հանդիպում, բարեկամնե՛ր:

*Հրաչյա Ամիրյան*

398
Ա-63

ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Կազմող՝
ՀՐԱՉՅԱ ԱՄԻՐՅԱՆ

## ԱՊՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

ԳԻՐՔ 6

# ԻՆՔՆԱԿԵՐՏՈՒՄ

*ՀՈԳԵԲԱՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ*

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 398:1/14
ԳՄԴ 82.33+87
Ա 681

13177
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
«ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ»
Կրթահամալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա 681 Ապրելու արվեստը: Գիրք 6: Ինքնակերտում: Հոգեբանափիլիսոփայական առակներ:/ Կազմող՝ Հ. Ամիրյան. – Եր.: Զանգակ–97, 2008. – 140 էջ:

*«Ինքնակերտում» ժողովածուն «Ապրելու արվեստը» խորագրով նախկինում լույս տեսած հոգեբանափիլիսոփայական առակների ժողովածուների շարունակությունն է: Ժողովածուում ընդգրկված են տարբեր դարաշրջաններում և մշակույթներում ստեղծված բազմազան թեմատիկայով առակներ և ուսանելի պատմություններ, որոնք հայերենով լույս են տեսնում առաջին անգամ:*

*Ժողովածուն նախատեսված է ինչպես ընթերցողների լայն շրջանի, այնպես էլ մասնագետների համար:*

ԳՄԴ 82.33+87

ISBN 978-99941-1-437-87

© Կազմելու համար՝ Ամիրյան Հ., 2008 թ.
© «Զանգակ–97» հրատարակչություն, 2008 թ.

# ԸՆԴԴԵՄ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՎԱԿՈՒՈՒՄԻ
# ԿԱՄ
# ԱԿՆԱՐԿՆԵՐ ԻՆՔՆԱԿԵՐՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ողջո՛ւյն, սիրելի՜ բարեկամներ:

Ահա և մենք նորից հանդիպեցինք, որի համար շատ ուրախ եմ: Քանզի մենք հնամենի և նորօրյա պրակտիկ իմաստություններին միասին հաղորդակցվելու ևս մի նոր առիթ ունենք: Չմոռանամ նշել, որ այս առիթի ստեղծման հիմնական «մեղավորը» դարձյալ դուք եք, սիրելինե՛րս: «Ապրելու արվեստը: Հոգեբանափիլիսոփայական առակներ» շարքն անպայմանորեն շարունակված տեսնելու ձեր բուռն ցանկությունն էր, որ ինձ մղեց ձեռնամուխ լինել շարքը ևս մեկ հատորյակով հարստացնելուն: Արդյունքում ծնունդ առավ շարքի թվով վեցերորդ ժողովածուն, որը հիմա ձեր ձեռքում է:

Աշխարհայացքային նշանակության բազմաթիվ կարևոր հարցեր կան, որոնք, որոշակի տարիքից սկսած, անխուսափելիորեն ծառանում են ցանկացած մտածող մարդու առջև: Դրանք անչափ կարևոր հարցեր են, որոնց պատասխանները պայմանավորում են մարդու մտածելակերպը, արժեքային համակարգը, նրա վերաբերմունքը կյանքի հանդեպ, նրա ընդհանուր ապրելակերպը, այլ կերպ ասած՝ նրա կյանքի բովանդակությունը: Ահա այդպիսի հարցերի մի քանի նմուշներ:

Ինչպե՞ս աճել... ի՞նչ հիմքի վրա և ինչպե՞ս կառուցել փոխհարաբերությունները շրջապատող աշխարհի և մարդկանց հետ ... ինչպե՞ս վերաբերվել անձիդ... ուրիշներին... ամենատարբեր երևույթներին ու իրադարձություններին... ինչպիսի՞ արժեքներով ու չափանիշներով առաջնորդվել կոնկրետ իրավիճակներում ու հանգամանքներում... ինչպե՞ս մշակել այդ չափանիշները... և ինչպե՞ս կիրառել դրանք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում... ի՞նչ է նշանակում ապրել իսկապես լիարժեք և իսկապես երջանիկ կյանքով... ինչի՞ց է կազմվում այդ լիարժեքությունը... ի՞նչն է, որ իսկական երջանկություն, այլ ոչ թե լոկ երջանկության պատրանքն է առաջացնում... ինչի՞ է հարկավոր ձգտել և ինչի՞ց խուսափել մեր այս բարդ ու հարափոփոխ ժամանակներում... ինչպիսի՞ նպատակներ դնել և ինչպե՞ս հասնել այդ նպատակների իրականացմանը...

Բնականաբար, սա ոչ թե լրիվ ցանկն էր, այլ ընդամենը նմուշներ էին...

Համաձայնեք, որ սրանք շատ կարևոր, միանգամայն կոնկրետ և լիովին պրակտիկ նշանակություն ունեցող հարցեր են, որոնց ճշգրիտ պատասխաններն ունենալն էլ հենց օգնում է տիրապետել *ապրելու արվեստին*:

Ցավոք սրտի, մեր իրականության մեջ ներկայումս առկա արժեքային վակուումը բնավ չի նպաստում այս հարցերի ճշգրիտ պատասխանները գտնելուն: Դպրոցական ու բուհական կրթությունը չի կարևորում աշխարհայացքի ձևավորման խնդիրը, չի շեշտադրում այս հարցերի կարևորությունը և ոչ էլ մղում է այդ հարցերի պատասխաններն ինքնուրույնաբար գտնելուն:

Զանգվածային լրատվամիջոցներն էլ իրենց հերթին զբաղված են փող աշխատելով, այլ ոչ թե համապատասխան արժեքային դաշտ ձևավորելով և հասարա-

* * *

## ԲՋԻՋԸ: ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ ԵՎ ԴՐՍԻՑ

*(ծագումն անհայտ է)*

Մի անգամ մարդու օրգանիզմի բջիջներից մեկը խորհրդածում էր կյանքի մասին: Նա մտածում էր այն մասին, որ կյանքն այնքան էլ լավը չէ, չէ՞ որ կյանքում շատ տառապանքներ կան: Նա տեսնում էր, որ իրեն շրջապատում են նույնպիսի բջիջներ, ինչպիսին ինքն է, որ բոլոր նրանք ծնվում, ապրում, աշխատում, ամուսնանում, բազմանում ու մահանում են: Եվ այդպես՝ սերնդեսերունդ: Դրան գումարած՝ պատերազմները բակտերիաների ու միկրոբների դեմ: «Եվ ինչի՞ համար ենք մենք ապրում, ինչի՞ համար է այսպիսի կյանքը, որում այսքան տառապանքներ կան: Ուրեմն ոչ մի Բարձրագույն գիտակցություն էլ գոյություն չունի, ոչ մի ՄԱՐԴ էլ գոյություն չունի, որը մեզանից վեր կանգնած կլիներ, և որի գիտակցությունը կլցներ մեր աշխարհն ու կկառավարեր այն,— եզրակացնում էր նա: — Եթե ՄԱՐԴՆ իսկապես գոյություն ունենար, ապա այս կյանքում և՛ նպատակ կլիներ, և՛ իմաստ, և այսքան տառապանքները չէին լինի, քանզի այս ամենը կկառավարվեր այդ բարձրագույն, բանական ու բարի էակի կողմից»:

Մարդը, որի մի մասն էր կազմում բջիջը, լսեց այդ մտքերը և ժպտաց: Նա հո գիտեր, որ այն, ինչը տեսանելի է ներսից, տարբերվում է նրանից, ինչը դրսից է երևում:

Բջիջը նայում էր այդ ՄԱՐԴՈՒՆ և չէր տեսնում Նրան, ապրում էր Նրա մեջ և նույնիսկ չէր էլ կասկածում, որ Նրա մասն է: Այն պատճառով, որ նա ներսից էր նայում, նա բազմություն էր տեսնում, իսկ ՄԱՐԴԸ բազմությունը չէր տեսնում, Նա Իրեն միասնական մի ամբողջություն էր զգում՝ չնայած և գիտեր, թե Իր մարմինն ինչից է կազմված...

Կար–չկար մի մարդ կար, և մի անգամ նա սկսեց խորհրդածել կյանքի մասին: Նա կյանքը այնքան էլ լավ բան չէր համարում, քանի որ բազում տառապանքներ էր տեսնում նրանում: Նա տեսնում էր, որ իրեն շրջապատում են իր նման մարդիկ՝ իրենց փոքրիկ ուրախություններով ու վշտերով, որ բոլոր նրանք ծնվում են, աշխատում, ամուսնանում, բազմանում ու մահանում: Եվ այդպես՝ սերնդեսերունդ: Դրան ավելացրած և հիվանդությունները, և՛ կատակլիզմները, և մարդկանց միջև պատերազմները: «Եվ ինչի՞ համար ենք մենք ապրում, ինչի՞ համար է այս կյանքը, որում այսքան շատ տառապանքներ կան: Ուրեմն ոչ մի Բարձրագույն գիտակցություն էլ գոյություն չունի, ոչ մի ԱՍՏՎԱԾ էլ գոյություն չունի, որն այս ամբողջ աշխարհից վեր կլինի,— եզրակացնում էր մարդը: — Իսկ եթե Աստված գոյություն ունենար, ապա այս կյանքը և՛ նպատակ, և՛ իմաստ կունենար, այսքան տառապանքներ չէին լինի, քանզի այդ ամենը կկառավարվեր բարձրագույն, բանական և բարի էակի կողմից»:



Աստված, որի մասն էր կազմում այդ մարդը, լսեց այդ մտքերը և ժպտաց: Նա հո գիտեր խսկությունը, որ այն, ինչը տեսանելի է ներսից, տարբերվում է նրանից, ինչը դրսից է երևում:

* * *

## ՄԵԾԱԳՈՒՅՆ ՄԱՐԴԸ

*(ըստ Օշոյի շարադրմամբ)*

Դուք շարունակ կյանքին նայում եք մեն–միակ տեսանկյունից՝ ձեր տեսանկյունից: Մարդկության համար սովորական է համարել, որ երկրագունդը տիեզերքի կենտրոնն է. մարդն, ինչ խոսք, երկրի կենտրոնն է, իսկ դուք, ինչ խոսք, մարդկության կենտրոնն եք:

Ես լսել եմ Փարիզի համալսարանից փիլիսոփայության մի պրոֆեսորի մասին: Մի անգամ նա հայտարարեց.

— Ես մեծագույն մարդն եմ աշխարհում:

Ուսանողները ծիծաղեցին. նա աղքատ պրոֆեսոր էր: Բայց քանի որ նա դա ասել էր, ուրեմն դրա տակ ինչ–որ բան պետք է նկատի ունեցած լիներ: Այդ պատճառով էլ նրան հարցրեցին.

— Դուք տրամաբան եք, ապացուցեք դա, խնդրեմ:

Նա դասարան բերեց աշխարհի քարտեզն ու հարցրեց ուսանողներին.

— Աշխարհի մեծագույն երկիրը ո՞րն է: Կարո՞ղ եք ասել, կարո՞ղ եք ցույց տալ:

Նրանք բոլորը ֆրանսիացիներ էին, այդ պատճառով էլ աշխարհի մեծագույն երկիրը Ֆրանսիան դուրս եկավ: Այնուհետև նա ասաց.

— Եվ այսպես՝ մնացած ամբողջ աշխարհը մեզ չի հետաքրքրում: Եթե ես կարողանամ ապացուցել, որ ես Ֆրանսիայի մեծագույն մարդն եմ, այդքանը բավական կլինի:

Նրանք ասացին.

— Ձեր ասածը տրամաբանական է:

Բայց այժմ նրանք սկսեցին որոշ անհանգստություն զգալ:

— Իսկ Ֆրանսիայի մեծագույն քաղաքը ո՞րն է:

Նրանք բոլորը փարիզեցիներ էին, և, ինչ խոսք, այդ քաղաքը Փարիզն էր: Նրանք էլ ավելի անհանգստացան: Իսկ հետո նա հարցրեց.

— Իսկ Փարիզի մեծագույն և ամենասրբազան վայրը ո՞րն է:

Ինչ խոսք, դա նրանց համալսարանն էր:

— Իսկ համալսարանի ամենագլխավոր ֆակուլտետը ո՞րն է:

Իհարկե, դա փիլիսոփայության ֆակուլտետն էր: Եվ նա ավարտեց.

— Դե, իսկ ես փիլիսոփայության ֆակուլտետի դեկանն եմ:

* * *

## ԱՌԱԿ ԱՍՏԾՈ ՄԱՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Ես Աստծուն խնդրեցի, որ Նա ինձանից վերցնի իմ հպարտությունը,
Եվ Աստված ինձ ասաց. «Ո՛չ»:
Նա ասաց, որ հպարտությունը չի վերցվում, այլ հրաժարվում են դրանից:

Ես Աստծուն խնդրեցի բուժել անկողնուն գամված իմ դստերը,
Եվ Աստված ինձ ասաց. «Ո՛չ»:
Նա ասաց, որ նրա հոգին վնասված չէ, իսկ մարմինը, միևնույնն է, մեռնելու է:

Ես Աստծուն խնդրեցի համբերություն շնորհել ինձ,
Եվ Աստված ինձ ասաց. «Ո՛չ»:
Նա ասաց, որ համբերությունը փորձությունների արդյունքում է առաջանում: Այն չեն շնորհում, այլ արժանի են դառնում դրան:

Ես Աստծուն խնդրեցի երջանկություն պարգևել ինձ,
Եվ Աստված ինձ ասաց. «Ո՛չ»:
Նա ասաց, որ օրհնություններ է շնորհում, իսկ երջանիկ կլինե՞մ ես, թե՞ ոչ, ինձանից է կախված:

Ես Աստծուն խնդրեցի հեռու պահել ինձ ցավից,
Եվ Աստված ինձ ասաց. «Ո՛չ»:
Նա ասաց, որ տառապանքները մարդուն հեռացնում են աշխարհիկ հոգսերից և մոտեցնում են իրեն:

Ես Աստծուն խնդրեցի, որ իմ ոգին աճի,
Եվ Աստված ինձ ասաց. «Ո՛չ»:
Նա ասաց, որ ոգին ինքը պետք է աճի:

Ես Աստծուն խնդրեցի օգնել, որ ես ուրիշներին սիրեմ այնպես, ինչպես ինքն է սիրում ինձ,
Եվ Աստված ասաց. «Վերջապես դու հասկացար, թե ինչ է հարկավոր խնդրել»:

Ես ուժեր խնդրեցի,
Եվ Աստված ինձ փորձություններ ուղարկեց, որպեսզի կոփի ինձ:

Ես իմաստություն խնդրեցի,
Եվ Աստված ինձ ուղարկեց պրոբլեմներ, որոնց վրա հարկավոր էր գլուխ ջարդել:



Ես արիություն խնդրեցի,
Եվ Աստված ինձ վտանգներ ուղարկեց:

Ես սեր խնդրեցի,
Եվ Աստված իմ օգնության կարիքն ունեցող դժբախտներ ուղարկեց ինձ:

Ես բարիքներ խնդրեցի,
Եվ Աստված ինձ հնարավորություններ տվեց:

Ես չստացա ոչինչ այն ամենից, ինչ խնդրել էի:

Ես ստացա ամեն ինչ, որ հարկավոր էր ինձ:

Աստված լսեց իմ աղոթքները:

* * *

## ԱՍՏՎԱԾ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ՞

*(քրիստոնեական առակ)*

Աթեիստը հարցրեց Վարպետին.
— Իրականում Աստված գոյություն ունի՞:
— Եթե դու անկեղծ պատասխան ես ցանկանում ստանալ, ապա ես չեմ կարող այդ պատասխանը տալ քեզ:
Ավելի ուշ աշակերտները Վարպետին հարցրին, թե նա ինչու չպատասխանեց:
— Այդ հարցին հնարավոր չէ պատասխանել:
— Բայց չէ՞ որ Դուք աթեիստ չեք:
— Իհարկե, ո՛չ: Աթեիստը սխալ է գործում՝ ժխտելով այն, ինչը հնարավոր չէ բառերով արտահայտել: Թեիստն, ընդհակառակը, սխալ է թույլ տալիս՝ պնդելով այն, ինչն անհնար է բառերով արտահայտել:

* * *

## ՀԱՎԱՏՆ ՈՒ ԻՄԱՍՏՈՒՆԻ ՄԱՏԸ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

— Կրոնական հավատը,— ասում էր Վարպետը,— ոչ թե իրականության պնդումն է, այլ մարդկային ըմբռնման սահմաններից դուրս գտնվող ինչ–որ գաղտնիքի ակնարկ, հուշում: Կարճ ասած՝ կրոնական հավատը մատ է, որը մատնա-

ցույց է անում Լուսինը:

Որոշ հավատացյալներ երբեք մատն ուսումնասիրելուց այն կողմ չեն անցնում:

Այլոք զբաղված են նրանով, որ ծծում են այդ մատը:

Երրորդներն այդ մատն օգտագործում են այն բանի համար, որ սեղմելով հանեն իրենց աչքերը:

Եվ միայն շատ քչերն են ընդունակ վերացարկվել այդ մատից և տեսնել այն, ինչը նա մատնացույց է անում: Այս վերջինները դուրս են գալիս հավատի սահմաններից և աստվածանարգների համբավ են ձեռք բերում:

Մի անգամ երեկոյան Վարպետն իր աշակերտներին դուրս բերեց բաց դաշտ, որի վրա տարածվել էր աստղերով սփռված երկինքը: Աստղերը մատնացույց անելով՝ Վարպետն աշակերտներին ասաց.

— Իսկ հիմա բոլորդ կենտրոնացրե՛ք ձեր ուշադրությունն իմ մատի վրա:

Նրանք հասկացան նրան:

* * *

## ՀԵՐԹՈՎ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

Վարպետն աշակերտներին ներկայացնում էր կրոնական համոզմունքների լիակատար անհեթեթությունը այն դեպքում, երբ դրանք ձևավորված են լինում ոչ թե ներքին որոնման արդյունքում, այլ պարտադրված են լինում դրսից: Իր ասածները ցուցադրելու համար նա պատմություն պատմեց ամուսնական ծառայությունների բյուրո դիմած մի մարդու մասին:

— Ես հարսնացու եմ փնտրում,— ասաց այդ մարդը:

— Ուրախ ենք ծառայել: Ընտրե՛ք:

Տղամարդը քսանհինգամյա մի գեղեցկուհու լուսանկար ընտրեց և ասաց.

— Ես այս աղջկան եմ ուզում:

— Ներեցե՛ք, բայց Դուք ստիպված կլինեք այս լեդիին ընտրել,— առարկեց գրասենյակի տնօրենը՝ ճերմակող մազերով հիսնամյա մի կնոջ լուսանկարը ցույց տալով:

— Ինչո՞ւ հենց նրան:

— Որովհետև նա առաջինն է հերթում:



* * *

## ԿՈՒՅՐ ԵՆԹԱՐԿՎՈՂՈՒԹՅՈՒՆ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

Վարպետը, ինչպես և Հիսուսը շատ դարեր առաջ, զգուշացնում էր կրոնի վտանգավորության մասին: Ինքն իրեն թողնված կրոնը ստիպում է կույրորեն հետևել օրենքին: Ահա թե ինչպես նա բացատրեց դա:

Սպան զինակոչիկին հարցրեց, թե խզակոթի արտադրության համար ինչու են ընկուզենու փայտն օգտագործում:

— Որովհետև այն ամուր է:

— Սխալ է:

— Որովհետև այն ավելի ճկուն է, քան մնացածները:

— Դարձյալ սխալ է:

— Երևի այն պատճառով, որ այն փայտի մնացած տեսակներից ավելի լավ է փայլում:

— Ապուշ մի՛ եղիր: Ընկուզենու փայտն օգտագործում են այն պատճառով, որ այդպես է գրված Կանոնակարգի մեջ:

* * *

## ՀԱՎԱՏ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

Մի կրոնական մոլեռանդ հարցրեց.

— Դու հավատո՞ւմ ես Աստծո գոյությանը:

— Ես կպատասխանեմ քո հարցին, եթե դու պատասխանես իմ հարցին,— առաջարկեց նրան Վարպետը:— Աթոռը, որին դու նստած ես, ձա՞խ կողմում է:

— Ինչի՞ նկատմամբ ձախ:

— Ինչի՞ գոյությանը,— իր հերթին հարցրեց Վարպետը:

* * *

## ԴՅՈՒՐԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

Վարպետը խոսում էր կրոնական առաջնորդների մասին. նրանք ծխականների մոտ այնպիսի դյուրահավատություն էին դաստիարակել, որ երբ հավատացյալներից որևէ մեկը նույնիսկ համարձակվում էր ինչ-որ հարց տալ, ապա այդ հարցերը երբեք դուրս չէին գալիս նրանց նեղ աշխարհայացքի շրջանակներից:

Վարպետը պատմեց մի քարոզչի մասին, որն անկեղծորեն ցանկանում էր, որպեսզի ծխականներն իր ասածները կասկածի տակ առնեն: Դրա համար նա այսպիսի խորամանկության դիմեց. նա ծխականներին պատմություն պատմեց մի գլխատված սրբի մասին, որն իր գլուխը ձեռքին բռնած՝ գնում էր ճանապարհով այնքան ժամանակ, մինչև լայն գետը կտրեց նրա ճամփան: Գետը լողալով անցնելու համար նրան իր երկու ձեռքերն էլ հարկավոր էին: Այդ պատճառով էլ նա գլուխը մտցրեց իր բերանն ու բարեհաջող դուրս եկավ հանդիպակաց ափ:

Ծանր լռություն տիրեց, և այդ ժամանակ, ի ուրախություն քարոզչի, մի մարդ վեր կացավ և ասաց.

— Այդպիսի բան չի կարող լինել:

— Ինչո՞ւ,— հույսը սրտում հարցրեց քարոզիչը:

— Որովհետև գլուխը բերանն առած վիճակում նա չէր կարողանա շնչել:

* * *

## ԱՍՏԾՈ ՄԵԾ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ

*(ներկայացնում է Վլադիմիր Տանցյուրան)*

Մի անգամ աշակերտը գնաց Ուսուցչի մոտ ու նրան հարցրեց.

— Իսկ ընդհանրապես հնարավո՞ր է ըմբռնել Երկինքն ու Երկիրն ստեղծած Աստծո Մեծ Մտահղացումը:

— Դրա համար անհրաժեշտ է, որ դու նախ հասկանաս քո տեղն ու կոչումը կյանքում, իսկ դրա համար՝ ճանաչես խորությունը Սիրո և ատելության, Նվիրվածության ու դավաճանության, Հույսի և հիասթափության, Հավատի ու ժխտման, Իմաստության ու հիմարության, Առատաձեռնության ու ագահության, Բարության ու չարի: Նայել ու սովորել, տեսնել Կյանքի Մեծ Ներդաշնակությունը յուրաքանչյուր քարի ու հասկի մեջ, ծյան ամեն մի փաթիլի ու ջրի կաթիլի մեջ, ամեն մի ավազահատիկի ու ծաղկի, երեխայի ամեն մի ժպիտի ու արցունքի կաթիլի, ծառի ամեն մի ճյուղի ու բույսի ամեն մի փշի մեջ: Կարողանալ ունկնդրել ու լսել այդ ներդաշնակությունը քամու հոսանքի ու թռչնի երգի մեջ, առվի խոխոջի ու տերևների սոսափի, քնած երեխայի ֆսֆսոցի ու դեպի դեպո ընթացող տրամվայի հոգնած թխկթխկոցի մեջ:

Դրանից հետո դու պետք է սովորես զգալ. զգալ Մեծագույն Գաղտնիքի ներկայությունը Գոյության ամեն մի րոպեի մեջ, զգալ Երկրի վրա ամենայն կենդանականի Սերն ու Միասնությունը, Ուրախությունն ու Ցավը ամեն մի կենդանի էակի, որ Կյանքի մեծագույն Շրջապտույտի մասնակիցն է: Իր ներսում զգալ զարմանալի արձագանքը Տիեզերական Երաժշտության՝ Ոլորտների Երաժշտության: Զգալ կյանքի առկայությունը յուրաքանչյուր ատոմի մեջ ու ամենահեռավոր աստղի մեջ, ամեն մի ներշնչման ու արտաշնչման մեջ, ձևերի աշխարհի անհամար դրսևորումների հետ ամեն մի հպման մեջ, անցորդի հպանցիկ հայացքի և աշխարհի մյուս ծայրում գտնվող հեռու–հեռավոր անծանոթի հայացքի մեջ, որ ծովափին նստած հեռվում հազիվ նշմարվող առագաստին է նայում:



Եվ երբ այդ ամենը տեսնված ու լսված, ապրված ու վերաիմաստավորված լինի, սովորի՛ր գործել. նվիրել քո սերը այն ամենին, ինչը շնչում և աճում է, ամենին, ինչն ապրում է անգիտակցական ձևերի անշտապ կյանքով, ընդհանրապես ամեն մի արարածի, ամեն մի լուսավոր երազանքի ու ձգտման: Օգնել քո մերձավորին, հենց այնպես, միայն այն բանի համար, որ նա ինչ–որ մեկի օգնության կարիքն ունի: Սովորի՛ր կատարել տվածդ խոստումը, չէ՞ որ դա կարող է ինչ–որ մեկի համար մեծ հույս ու երազանք լինել: Ապրի՛ր ազատ և ուրիշների ազատության նկատմամբ ոտնձգություն մի՛ արա, զսպի՛ր գրգռվածությունդ ու մի՛ ամաչիր կարեկցանքի կամ ուրախության քո արցունքներից: Մշտապես հիշի՛ր, որ ուժեղը չի վախենում թույլ երևալ, մի՛ վախեցիր ծիծաղելի կամ անճարպիկ, անխելք կամ նաիվ երևալ: Չէ՞ որ այդպիսին թվալ չի նշանակում այդպիսին լինել: Սովորի՛ր քչով բավարարվել, բայց ձգտել ավելիին: Մի՛ ապրիր երեկվա օրով, այն մեռել է, և լավագույն բանը, որ դու կարող ես անել դրա հետ այսօր, այս է. հասկանալ ու գիտակցել նրա բոլոր սխալները, որպեսզի դու դրանք ուղղես վաղը: Ապրի՛ր ներկայում հավատով և ուրախությամբ, ապագային նայի՛ր հավատով ու հույսով: Սովորի՛ր ամեն մի հայացքի պատասխանել ժպիտով, հանդգնությանը պատասխանել բարեսրտությամբ, անեծքներին՝ օրհնանքով, ատելությանը՝ սիրով: Նվիրի՛ր քո սերը բոլորին, ինչպես արևն է լուսավորում բոլորին՝ անկախ նրանց եկամուտների չափից ու ազգությունից, կրթությունից ու հասարակության մեջ գրաված տեղից, դավանանքից ու սեռից: Ահա այդժամ դու կդադարես այսպիսի անիմաստ հարցեր տալ և միայն ներողամտորեն կժպտաս այդպիսի բան լսելով և հիշելով, որ ինչ–որ ժամանակ, շատ վաղուց ինքդ էլ ես տառապել՝ պատասխանը փնտրելով...

Որովհետև դու ինքդ Աստված կդառնաս:

* * *

## ԴԺԳՈՀ ՄԱՐԴԻԿ

*(ծագումն անհայտ է)*

Մի մարդ դրախտ ընկավ: Նայեց շուրջը և տեսավ՝ բոլոր մարդիկ ուրախ են, երջանիկ, բաց, բարյացակամ: Իսկ շուրջն ամեն ինչ այնպես է, ինչպես սովորական կյանքում: Մարդը ման եկավ, զբոսնեց, ամեն ինչ նրան դուր եկավ: Եվ նա հրեշտակապետին ասաց.

— Իսկ կարելի՞ է տեսնել, թե դժոխքն ինչ է: Թեկուզ աչքի պոչով:

— Գնանք, ցույց տամ:

Նրանք եկան դժոխք: Մարդը նայեց ու տեսավ, որ այդտեղ առաջին հայացքից ամեն ինչ կարծես այնպես է, ինչպես և դրախտում էր. նույն սովորական կյանքն էր, միայն թե բոլոր մարդիկ չարացած էին, վիրավորված, երևում էր, որ նրանք վատ են զգում այդտեղ: Մարդը հրեշտակապետին հարցրեց.

— Այստեղ ամեն ինչ կարծես թե նույնն է, ինչպես դրախտում էր: Էլ ինչո՞ւ են սրանք բոլորն այսքան դժգոհ:

— Որովհետև նրանք մտածում են, որ դրախտում ավելի լավ է:

* * *

*(առակ Օշոյի շարադրմամբ)*

Մի մարդ ուժեղ հիվանդացել էր: Նրա հիվանդությունն այսպես էր դրսևորվում. մարդն ամբողջ ժամանակ զգում էր, որ իր աչքերն ուր որ է ասես դուրս կթռչեն խոռոչներից, իսկ ականջներում մշտական ձայն էր ղողանջում: Աստիճանաբար դա նրան կատաղության հասցրեց, որովհետև դա շարունակվում էր անընդհատ՝ օրվա մեջ քսանչորս ժամ... Նա չէր կարողանում քնել, չէր կարողանում աշխատել և դիմեց բժիշկներին:

Բժիշկներից մեկը խորհուրդ տվեց նրա ապենդիքսը հեռացնել, ապենդիքսը հեռացրին, բայց ոչինչ չփոխվեց: Մեկ այլ բժիշկ խորհուրդ տվեց հեռացնել բոլոր ատամները: Դարձյալ ոչինչ չփոխվեց, պարզապես այդ մարդը միանգամից ծերացավ և վերջ: Այժմ ինչ–որ մեկը խորհուրդ տվեց հեռացնել նշագեղձերը: Միլիոնավոր խորհրդատուներ կան, և եթե դուք սկսեք լսել նրանց, նրանք ձեզ կսպանեն: Նրա նշիկները հեռացրին, սակայն դարձյալ ոչինչ չփոխվեց: Այժմ նա դիմեց իրեն հայտնի լավագույն բժշկին:

Բժիշկը քննեց նրան և ասաց. «Ոչինչ անել հնարավոր չէ, որովհետև անհնար է գտնել հիվանդության պատճառը: Դուք կապրեք ամենաշատը ևս մի վեց ամիս: Ես պետք է անկեղծ լինեմ Ձեզ հետ, որովհետև այն ամենը, ինչ հնարավոր էր անել, արդեն արված է: Հիմա արդեն անհնար է որևէ բան անել»:

Մարդը դուրս եկավ բժշկի աշխատասենյակից և մտածեց. «Եթե ինձ ընդամենը վեց ամիս է մնում ապրելու, ապա ինչո՞ւ այդ վեց ամիսը լավ չապրել»: Նա ժլատ էր և երբեք լավ չէր ապրել, և ահա նա պատվիրեց ամենանոր ու լավ ավտոմեքենան, սքանչելի բունգալո գնեց, երեսուն կոստյում պատվիրեց, նա նույնիսկ կարգադրեց, որ վերնաշապիկները կարեն հատուկ իր չափով:

Նա եկավ դերձակի մոտ: Վերջինս նրա չափերը վերցրեց և ասաց. «Թևքերը երեսունվեց չափի են, օձիքը՝ տասնվեց»: Մարդն առարկեց և ասաց. «Ոչ թե տասնվեց, այլ տասնիհնգ, ես միշտ տասնիհնգ չափի օձիքով վերնաշապիկներ եմ հագնում»: Դերձակը նորից չափեց և ասաց. «Տասնվեց»: Մարդն ասաց. «Բայց ես միշտ տասնիհնգ եմ հագնում»: Դերձակն ասաց. «Դե լավ, ինչպես կուզեք, բայց ես Ձեզ ասեմ՝ այդ դեպքում Ձեր աչքերը դուրս են թռչելու իրենց բներից, իսկ ականջներում մշտապես ձայն եք լսելու»:

Եվ դա էր նրա հիվանդության պատճառը:

* * *

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻԿԸ

*(ներկայացնում է Պաուլո Կոելյոն)*

— Ո՞վ է լավագույն սուսերամարտիկը,— հարցրեց ռազմիկն իր ուսուցչին:

— Դո՛ւրս արի մենաստանի դարպասից,— պատասխանեց ուսուցիչը: — Այնտեղ ժայռ կա: Ես ուզում եմ, որ դու վիրավորես ժայռին:



— Բայց ինչի՞ համար անեմ դա,— հարցրեց աշակերտը:— Ժայռը չի պատասխանի:

— Լավ: Այդ դեպքում հարվածի՛ր նրան քո սրով,— ասաց ուսուցիչը:

— Ես դա էլ չեմ անի,— պատասխանեց աշակերտը:— Իմ թուրը կջարդվի: Իսկ եթե մերկ ձեռքերով գրոհեմ ժայռի վրա, ես կվնասեմ իմ մատներն ու ժայռին ոչ մի վնաս չեմ հասցնի: Դա այն չէ, ինչը ես հարցնում եմ: Ո՞վ է լավագույն սուսերամարտիկը:

— Լավագույնը նա է, ով ժայռի նման է: Սուրը պատյանից դուրս չբերելով՝ նա ցուցադրում է, որ ոչ ոք չի կարող իրեն հաղթել:

* * *

## Ո՞Վ Է ՀԵՂԻՆԱԿԸ

*(բուդդիստական առակ)*

Մի բուդդիստ վարպետ իր աշակերտների համար մի սքանչելի տեքստ ընթերցեց, որից բոլորը հուզվեցին: Աշակերտներն անմիջապես հարցրին.

— Ո՞վ է գրել դա:

— Եթե ես ասեմ, որ դա գրել է Բուդդան, ապա դուք ակնածանք կզգաք այդ տեքստի հանդեպ, ամեն առավոտ ծաղիկներ կդնեք ու կխոնարհվեք այդ տեքստի առաջ: Եթե ես ասեմ, որ դա գրել է պատրիարքը, ապա դուք մեծ պատկառանք կզգաք, բայց արդեն չեք խոնարհվի այնպես, ինչպես Բուդդայի դեպքում: Եթե ես ասեմ, որ հեղինակը վանական է, ապա դուք, թերևս, կշփոթվեք: Իսկ եթե իմանաք, որ տեքստը գրել է մեր խոհարարը, ապա պարզապես կծիծաղեք,— պատասխանեց ուսուցիչը:

* * *

## ԽԽՈՒՆՋԸ ԾԱՌԻ ՎՐԱ

*(չեն առակ)*

Վարպետին հարցրին՝ երբևէ նա հիասթափություն զգացե՞լ է այն բանից, որ իր ջանքերն ավելի քիչ պտուղներ են տալիս, քան նա կցանկանար: Ի պատասխան՝ վարպետը մի պատմություն պատմեց խխունջի մասին, որը ուշ գարնան քամոտ մի օր սկսեց բարձրանալ բալենու վրայով:

Հարևան ծառի վրայի ճնճղուկները, նրան նայելով, ի սրտե զվարճանում էին: Այնուհետև նրանցից մեկը մոտ թռավ խխունջին և հարցրեց.

— Է՜յ, դո՛ւ, մի՞թե չես տեսնում, որ այս ծառի վրա բալեր չկան:

Իր վերելքը չընդհատելով՝ խխունջն ասաց.

— Կլինեն, երբ ես հասնեմ այնտեղ:

* * *

## ՍՈՒԼՈՑԸ

*(առակ Օշոյի շարադրմամբ)*

Տոնակատարություն էր. հասիդները հավաքվել էին աղոթելու և հաղորդվելու, իրենց վարպետի հետ սաքսանգ ստանալու:

Մի մարդ եկել էր մտավոր հետամնաց երեխայի հետ: Նա մի փոքր անհանգստանում էր երեխայի պատճառով՝ հանկարծ ու մի բան չանի՞: Եվ նա հետևում էր երեխային:

Երբ աղոթքներն ավարտվեցին, տղան հորն ասաց.

— Ես սուլիչ ունեմ: Կարելի՞ է դրանով խաղամ:

— Հայրն ասաց.

— Ոչ մի դեպքում: Որտե՞ղ է քո սուլիչը:— Նա վախենում էր, որ երեխան չի ենթարկվի իր արգելքին:

Տղան հորը ցույց տվեց, թե որ գրպանում է գտնվում սուլիչը, և հայրը հետևում էր այդ գրպանին: Բայց երբ պարերն սկսվեցին, հայրը մոռացավ ամեն ինչի մասին և սկսեց պարել:

Երբ բոլորն սկսեցին աղոթել Աստծուն և պարել, տղան այլևս չկարողացավ զսպել իրեն: Նա հանեց սուլիչն ու որքան ուժ ուներ, փչեց: Բոլորը շոկի մեջ էին: Բայց Բաալ Շեմը մոտեցավ տղային, գրկեց նրան և ասաց.

— Մեր աղոթքները տեղ հասան: Առանց այս սուլոցի ամեն ինչ իզուր կլիներ, որովհետև սա միակ ինքնաբուխ բանն էր, որը կատարվեց այստեղ: Մնացած ամեն ինչը ծես էր:

* * *

## ԼՌՈՒԹՅՈՒՆ

*(ծագումն անհայտ է)*

Հոգնելով անհանգիստ ու աղմկոտ քաղաքից, որում ամեն ինչ շեղում էր մեդիտացիայից ու ինքնահայեցողությունից, մարդը որոշեց լուռ ու հանգիստ վայր փնտրել:

Նա գնաց անտառ, ուր ոչ ոք չկար, բայց չկարողացավ կենտրոնանալ, որովհետև նրան խանգարում էին ճպուռների ու ծղրիդների ճռռոցները: Նա խորացավ դեպի անտառի խորքը, բայց այնտեղ թռչուններն էին շատ բարձր երգում՝ շեղելով նրան ներքին ես–ի հետ կոնտակտից: Լռություն փնտրելով՝ մարդը մտավ քարանձավ. այնտեղ շատ լուռ էր, բայց կաթացող ջրի հնչյունները գրգռում էին նրան:

Այդժամ նա իր համար ձայնամեկուսացումով փոքրիկ մի քոթեջ պատրաստեց, փակեց բոլոր պատուհաններն ու դռները, բայց լիակատար լռության մեջ



ավելի ու ավելի բարձր էր հնչում. «թի՛կ–թա՛կ, թի՛կ–թա՛կ...»: Այդժամ նա ձեռքից պոկեց ժամացույցն ու պատին զարկելով՝ ջարդեց այն:

Նստեց, հանգստացավ, խոր շունչ քաշեց՝ գոհանալով, որ հիմա, վերջապես, լռություն կտիրի, բայց...

«Տո՛ւկ, տո՛ւկ, տո՛ւկ...»,— նրա սիրտն ավելի ու ավելի բարձր էր հնչում կրծքավանդակում:

* * *

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ

*(հնդկական առակ)*

Մի անգամ շաբաթ օրով մի մարդ, Աստծո պաշտամունքի մեջ ընկղմված լինելով, իր որդուն խնդրեց գնալ և մի ռուփիով մի քանի բանան գնել:

Որդին բարի տղա էր: Նա գնեց բանանները, բայց տունդարձի ճանապարհին մի կնոջ տեսավ իր երեխայի հետ. երկուսն էլ քաղցից հազիվ էին ոտքի վրա կանգնում: Քաղցած երեխան, բանանները տեսնելով, նետվեց դեպի դրանք, իսկ քաղցած մայրը, դա տեսնելով, նետվեց իր երեխայի հետևից ու բռնեց նրան, բայց նրանք երկուսն էլ տեղնուտեղը ուշաթափվեցին քաղցից:

Նրանց տառապանքները տեսնելով՝ երիտասարդը որոշեց, որ շատ ավելի լավ է կերակրել այդ քաղցածներին, քան բանանները տուն տանել: Նա բանանները տվեց մորն ու երեխային, հետո նրանց համար ջուր բերեց: Քաղցն ու ծարավը հագեցնելով՝ այդ երկուսը թեթևություն զգացին և իրենց երախտագիտությունը հայտնելով՝ ուրախությունից լաց եղան:

Պատանին դատարկաձեռն վերադարձավ տուն, բայց հոր տված հարցին, թե բանանները բերել է արդյոք, հաստատական պատասխան տվեց՝ ասելով, որ իր բերած բանանները սրբազան են. դրանք չեն կարող հոտել և դրանք տեսնել հնարավոր չէ: Որդին հորը բացատրեց, որ ինքն այդ բանաններով կերակրել է երկու սոված էակների, և միակ բանը, որ բերել է տուն, իր գործողության սրբազան պտուղներն են:

* * *

## ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ

*(սուֆիական առակ)*

Մահացած մարդը հանկարծ կենդանացավ ու սկսեց թխկթխկացնել դագաղի կափարիչին: Կափարիչը հանեցին: Մարդը նստեց:

— Ի՞նչ եք դուք անում այստեղ,— հարցրեց նա հավաքված ամբոխին:— Ես ողջ եմ:

Նրա բառերը լուռ անվստահությամբ ընդունվեցին: Վերջապես թաղմանը

ներկա գտնվողներից մեկն ասաց.

— Բարեկա՛մս, բժիշկներն ու քահանաները հաստատել են քո մահը: Նշանակում է` դու մեռած ես:

Եվ նրան պատվով թաղեցին:

* * *

## ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՄԱՍՏՆՈՒԹՅՈՒՆԸ

*(հասիդական առակ)*

Մի մարդ սուֆիստ միստիկ Բաալ Շեմին հարցրեց.

— Ի՞նչն է ավելի կարևոր և արժեքավոր. հարստությո՞ւնը, թե՞ իմաստնությունը:

Յարցնողն իր սեփական նկատառումներն ուներ այդ հարցի վերաբերյալ: Այդ պատճառով էլ Բաալ Շեմը ծիծաղեց և ասաց.

— Ինչ խոսք, առավել նշանակալիցն ու առավել արժեքավորը իմաստնությունն է:

Մարդն ասաց.

— Այդ դեպքում, Բաա՛լ Շեմ, ասացե՛ք` ինչու դու, ո՛վ իմաստուն մարդ, գնում ես հարուստ մարդկանց տները, բայց ես երբեք չեմ տեսել, որ հարուստ մարդիկ գան քո տուն:

Բաալ Շեմը ժպտաց և ասաց.

— Այո, իմաստունները գնում են հարուստների մոտ, որովհետև նրանք իմաստուն են և գիտեն հարստության արժեքը, իսկ հարուստները ընդամենը հարուստներ են և ոչինչ ավելին: Նրանք չեն կարող հասկանալ իմաստնության արժեքը:

* * *

## ԼԱՎԱԳՈՒՅՆՆ ՈՒ ՎԱՏԱԳՈՒՅՆԸ

*(քրիստոնեական առակ)*

Մի անապատականի ավագերեց ընտրեցին: Նա երկար ժամանակ հրաժարվում էր, բայց հավատակից եղբայրներն իրենցն էին պնդում: Այդժամ նա մտածեց. «Ես չգիտեի, որ արժանի եմ, ուրեմն իսկապես ես ինչ–որ լավ բաներ ունեմ»: Այդ ժամանակ նրան հայտնվեց հրեշտակն ու ասաց.

— Շարքայի՛ն վանական, ի՞նչ ես վեհացնում ինքդ քեզ: Այնտեղ մարդիկ մեղք էին գործել, և նրանց պատիժ էր հարկավոր, ահա այդ պատճառով էլ նրանք քեզ ընտրեցին, որովհետև քեզանից ավելի վատը չկար:



* * *

## ԳՈՌՈՉ ԱՌԱՋՆՈՐԴԸ

*(ներկայացնում է Ռոբերտ Կիյոսակին)*

Ժամանակին մի երիտասարդ քաջազուն էր ապրում, որն արագորեն *Վապակունունկ* (այս աշխարհում գոյություն ունենալու համար անհրաժեշտ ամեն ինչ անելու ունակություն) ձեռք բերեց: Ինչպես և պահանջում էր ավանդույթը, երիտասարդ քաջին ուսուցանում էին մի քանի ավագանիներ: Ուսուցիչներից յուրաքանչյուրը նրան սովորեցնում էր տիրապետել որևէ յուրահատուկ ունակության, որն անհրաժեշտ է *Վապակունունկի* հասնելու համար: Ուսուցիչներից ոչ ոք գլխի չընկավ նրա մոտ ձևավորել խոնարհությունը` այն հավելյալ մարդկային ունակությունը, որը մի գեղեցիկ օր կարող էր վճռորոշ դառնալ: Ուսուցիչներից յուրաքանչյուրը մտածում էր, որ ինչ–որ մեկ ուրիշը նրան արդեն սովորեցրել է դա:

Այնքան ժամանակ, քանի դեռ մեր քաջը հասուն տարիքի չէր հասել և ցեղի նկատմամբ իշխանությունն իր ձեռքը չէր վերցրել, ավագանիները չէին կռահում իրենց բացթողման մասին: Քաջազունը շատ հմուտ էր ու շատ գիտակ, նա հաճախ էր իր ուժը կիրառում անմտորեն ու առանց կարեկցանքի: Խոնարհությունից զուրկ լինելով` նա դարձավ համառ ու ոչ ճկուն` հրաժարվելով նոր բաներ սովորել:

Ավագանիները գաղտնի խորհրդակցություն գումարեցին: Ինչպե՞ս իրենք պետք է գլուխ հանեն նման ինքնահավան երիտասարդ առաջնորդից: Նրան խոնարհություն սովորեցնելու համար արդեն շատ ուշ էր: Նա միայն բարձրամտություն գիտեր, որը սնվում էր իր մասին կարծիքի բարձր մակարդակից, ինչը նրան ուսուցանել էին պատանի տարիքում: Նրանք չէին կարող սպանել նրան, քանի որ դա էլ ավելի վատ արարք կլիներ, քան նրա ինքնահավանությունն էր: Նրանք չէին կարող նաև նրան խնդրել հեռանալ, քանի որ մտավախություն ունեին իրենց վրա նրա ունեցած իշխանության առնչությամբ:

Գիշերային մի քանի գաղտնի խորհրդակցություններից հետո ավագները ծրագիր մշակեցին: Աշնանային մի ցուրտ առավոտ նրանք առաջնորդին հրավիրեցին իրենց խորհրդին: Նրանք առաջադրանք էին մտածել նրա համար: Դա դժվար առաջադրանք էր, քանի որ նրանք գիտեին, որ նա կընդունի այդպիսի մարտահրավերը: Նրանց ցեղին շարունակ հետապնդում էր բացառիկ խելացի գայլերի մի ոհմակ, որին առաջնորդում էր բծավոր, մեծ արու գայլը:

Ավագները քաջին ասացին, որ իրենց ցեղը հավերժ երախտապարտ կլինի նրան, եթե նա համաձայնվի գնալ ու սպանել այդ առաջնորդ գայլին: Նրանք հավելեցին, որ դա շատ ավելի լավ կդիտվի, եթե նա միայնակ կատարի այդ արարքը, և դա էլ ավելի կբարձրացնի նրա ստատուսը ցեղում: Ինքնահավան առաջնորդն, իհարկե, ընդունեց մարտահրավերը: Նա այդ գիշերն անցկացրեց խարույկի շուրջ նստած ցեղակիցների առջև` իր առաքելությամբ պարծենալով: Նրա բարձրամտությունը խանգարեց նրան կռահել ավագների խորամանկ ծրագիրը:

Յաջորդ առավոտյան՝ արևը ծագելուն պես, ցեղը հավաքվեց իրենց պատանի առաջնորդին հրաժեշտ տալու: Ցեղին հրաժեշտ տալուց հետո նա վստահորեն քայլեց ձյունածածկ դաշտավայրով: Յենց որ նա անհետացավ տեսադաշտից, ցեղն անմիջապես հավաքվեց ու արագորեն վերացրեց ճամբարը: Նրանք հավաքեցին իրենց ողջ ունեցվածքը, ընտանիքներն ու ընկերները միմյանց «ցտեսություն» ասացին, այնուհետև վերացրին ճամբարում եղած լինելու բոլոր հետքերը: Այնուհետև նրանք ցրվեցին, որպեսզի հետագայում միանան ուրիշ ցեղերի հետ:

Այդ ցեղն ընդմիշտ դադարեց գոյություն ունենալ:

* * *

«Խոնարհությունը ոչ այնքան արժանիք է, որքան անհրաժեշտ պայման սովորելու համար»:

*Իդրիս Շահ*

* * *

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՅՍԸ

Առանց իմ դռնից դուրս գալու
Ես կարող եմ իմանալ ամեն բան աշխարհում,
Առանց իմ պատուհանից դուրս նայելու
Ես կտեսնեմ երկինք տանող բոլոր ճանապարհները,
Որքան շատ ես ճամփորդում, այնքան քիչ ես իմանում,
Այնքան քիչ ես, իրոք, իմանում:

Առանց քո դռնից դուրս գալու
Դու կարող ես իմանալ ամեն բան աշխարհում,
Առանց քո պատուհանից դուրս նայելու
Դու կտեսնես երկինք տանող բոլոր ճանապարհները,
Որքան շատ ես ճամփորդում, այնքան քիչ ես իմանում,
Այնքան քիչ ես, իրոք, իմանում:

Ժամանի՛ր առանց մեկնելու,
Տե՛ս առանց նայելու,
Արա ամեն ինչն առանց անելու:

*Ջորջ Յարիսոն*

***Այս բանաստեղծության վերջին տողերը կարող են մշուշոտ թվալ: Թե ինչ են, իմ կարծիքով, նշանակում այդ տողերը, կարդացե՛ք հետևյալ առակում:***



***«Երբ փորձում ես օդը սեղմել քո բռունցքի մեջ, օդը հեռանում է քեզանից: Երբ փորձում ես հիշել, մոռանում ես: Երբ փորձում ես հասու լինել, այն դուրս է պրծնում: Եթե դու ցանկանում ես տիրապետել ամեն ինչին, ապա բա՛ց թող ամեն ինչը, մի՛ կառչի՛ր, մի՛ բռնվիր»:***

* * *

## ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

*(չեն առակ)*

Ժամանակն էր, որ Վարպետը ստուգեր իր աշակերտներին: Նա կանչեց նրանցից երեքին, սպիտակ թղթի թերթ վերցրեց, վրան քանաք կաթեցրեց ու հարցրեց.

— Ի՞նչ եք տեսնում:

Առաջինը պատասխանեց՝ սև բիծ, երկրորդը՝ բիծ, երրորդը՝ քանաք:

Վանականը լաց եղավ ու գնաց իր խուցը: Ավելի ուշ աշակերտները հարցրին.

— Դուք ինչո՞ւ լաց եղաք:

Վանականն ասաց.

— Ձեզանից ոչ մեկը սպիտակ թուղթը չտեսավ:

***«Յիրավի, շատ մարդիկ կան, որոնք այլ մարդկանց, իրերը, երևույթներն ու կյանքն ընկալել–գնահատելիս այդ առակի աշակերտների նման են վարվում՝ սևեռվում են միայն նրա վրա, ինչը վատն է, անառողջ է, սև է: Առողջ մարմինը տեսնել–ընկալելու փոխարեն միայն նրա վրայի խոցերն են տեսնում: Եվ երբ այսպիսի ընկալումներն արմատավորվում են մարդու մեջ, դա դառնում է սովորություն, մարդն սկսում է միայն այդ ձևով ընկալել կյանքը՝ ընդմիշտ համոզված լինելով, որ իր ընկալումը ճիշտ է, և ինքը միանգամայն իրավացի է իր գնահատականներում»:***

* * *

## ՄԻԱՅՆ ՔՈՆԸ

*(հնդկական առակ)*

Մի անգամ գուրու Նիտյանանդա սվամիի մոտ մի կին եկավ: Նա բացառիկ զգայուն էր, և նրան շատ էին տանջում աշխարհում տիրող սովը, բռնությունը, սպանությունները, դժբախտությունները և մնացած սարսափները: Նա գիտեր, որ Նիտյանանդային ճանաչող մարդիկ նրան Աստծո նման պաշտում են: Կինը նրան հարցրեց.

— Ինչո՞ւ աշխարհում այսքան շատ դժբախտություններ կան:

Պատասխանը նրան շատ տարօրինակ թվաց: Գուրուն ասաց.
— Փոստատարը քեզ բերում է միայն քո նամակները և ուրիշի նամակներ չի բերում:

* * *

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈԴՀԻՍԱԹՎԱ ՄԱՆՋՈՒՇՐԻԻ ՀԵՏ

*(չեն առակ)*

Բազմաթիվ տարիներ խաղաղ մեդիտացիայով զբաղվելով՝ ձեն վանականը հասկացավ, որ իրականում դեռ չի լուսավորվել: Գնալով Վարպետի մոտ՝ նա ասաց.

— Խնդրում եմ Ձեզ, թո՛ւյլ տվեք հեռանամ. ես լեռան գագաթին խրճիթ կգտնեմ ու կմնամ այնտեղ այնքան ժամանակ, մինչև ավարտեմ պրակտիկաս:

Վարպետը, իմանալով, որ նա հասունացել է լուսավորվելու համար, տվեց իր համաձայնությունը:

Լեռը բարձրանալիս վանականը հանդիպեց մի ծերունու, որը ներքև էր իջնում: Ծերունին մեջքին մի մեծ կապ փայտ էր կրում: Նա վանականին հարցրեց.

— Ո՞ւր ես գնում, վանակա՛ն:

Վերջինս պատասխանեց.

— Գնում եմ լեռան գագաթը. այնտեղ կնստեմ ու կսպասեմ լուսավորման կամ էլ կմեռնեմ:

Եվ քանի որ ծերունին շատ իմաստուն տեսք ուներ, վանականը ցանկություն զգաց հարցնել նրան.

— Ասացե՛ք, ո՛վ հարգարժան ծեր, իսկ Դուք որևէ բան գիտե՞ք լուսավորվելու մասին:

Ծերունին, որն իրականում բոդհիսաթվա Մանջուշրին էր (ասում են, որ նա հայտնվում է մարդկանց, երբ նրանք պատրաստ են լուսավորվելու), իր շալակից ցած գցեց փայտի կապը, որն ընկավ գետնին: Նույն ակնթարթին վանականը լուսավորվեց:

— Ուրեմն Դուք ուզում եք ասել, որ դա շատ պարզ բան է, ընդամենը հարկավոր է ազատվել և ոչ մի բանի չձգտել:

Այնուհետև այդ հենց նոր լուսավորյալ դարձած վանականը շրջվեց ծերունու կողմն ու հարցրեց.

— Լավ, իսկ հիմա ի՞նչ:

Ի պատասխան՝ ծերունին կռացավ, նորից շալակեց փայտի կապն ու քայլեց դեպի քաղաք:



* * *

## ՓԽՐՈՒՆ ՆՎԵՐՆԵՐ

*(ներկայացնում է Մարինա Շիրոչկինան)*

Ծեր և իմաստուն մի մարդ եկավ գյուղ և բնակություն հաստատեց այնտեղ: Նա սիրում էր երեխաներին և շատ ժամանակ էր անցկացնում նրանց հետ: Նա նաև սիրում էր նվերներ տալ երեխաներին, բայց միայն փխրուն իրեր էր նվիրում: Երեխաները որքան էլ որ ջանում էին զգույշ լինել, նրանց նոր խաղալիքները հաճախ էին ջարդվում: Երեխաները սաստիկ վշտանում էին ու դառնորեն լաց լինում: Որոշ ժամանակ էր անցնում, իմաստունը նրանց նոր խաղալիքներ էր նվիրում, բայց նախորդներից ավելի փխրուն խաղալիքներ:

Մի անգամ ծնողները չդիմացան և եկան նրա մոտ:

— Դու իմաստուն ես և միայն բարին ես ցանկանում մեր երեխաներին: Բայց ինչո՞ւ ես դու այդպիսի նվերներ տալիս նրանց: Նրանք ջանում են՝ որքան կարողանում են, բայց խաղալիքները, միևնույնն է, ջարդվում են: Մինչդեռ դրանք այնքան սքանչելի են, որ դրանցով չխաղալ ուղղակի անհնար է:

— Շատ քիչ թվով տարիներ կանցնեն,— ժպտալով բացատրեց ծերունին,— և ինչ–որ մեկը նրանց կնվիրի իր սիրտը: Միգուցե սա կօգնի՞ նրանց գոնե մի փոքր ավելի խնամքով վարվել այդ անգին պարգևի հետ:

* * *

## ՀԻՍՈՒՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

*(սուֆիական առակ)*

Մի անգամ մի քանի հրեաներ անարգում, հայհոյում էին Հիսուսին, երբ վերջինս անցնում էր նրանց թաղամասով: Բայց նա պատասխանում էր՝ նրանց բարօրության համար աղոթելով:

Ինչ–որ մեկը նրան հարցրեց.

— Դու աղոթում ես այս մարդկանց համար, մի՞թե դու նրանց հանդեպ զայրույթ չզգացիր:

Նա պատասխանեց.

— Ես կարող եմ ծախսել միայն այն, ինչ կա իմ դրամապանակում:

* * *

***«Դե, իսկ այն հարցը, թե ինչ կա մեզանից յուրաքանչյուրի դրամապանակի մեջ, և ինչու է պարունակությունը հենց այդպիսին, մեդիտացիայի նյութ է այնպես չէ՞»:***

* * *

## ՊԱՐԸ

*(սուֆիական առակ)*

Աշակերտը Վարպետից թույլտվություն խնդրեց մասնակցելու սուֆիստ վարպետների «պարին»:

Վարպետն ասաց.

— Երեք օր շարունակ ոչինչ մի՛ կեր: Այնուհետև թող պատրաստեն ամենահամեղ կերակուրները: Եթե այդքանից հետո դու նախընտրես «պարը», ապա կարող ես մասնակցել:

* * *

## ԽԱՅԹԸ

*(արևելյան առակ)*

Մի սուրբ մարդ հրաշքով սովորել էր խոսել մրջյունների լեզվով: Մի անգամ նա մոտեցավ մի մրջյունի, որն արտաքինից շատ ուսյալ տեսք ուներ և հարցրեց.

— Ի՞նչ տեսք ունի Ամենաբարձրյալը: Նա ինչ–որ բանով նմա՞ն է մրջյունի:

Մրջյունը պատասխանեց.

— Ամենաբարձրյալը: Ո՛չ, իհարկե: Բանն այն է, որ մենք՝ մրջյուններս, ընդամենը մեկ խայթոց ունենք, իսկ Ամենաբարձրյալը երկուսն ունի:

Դե, իսկ երբ ուսյալ մրջյունին հարցրին, թե ինչ է իրենից ներկայացնում դրախտը, նա հանդիսավորությամբ ասաց.

— Այնտեղ մենք գրեթե այնպիսին կլինենք, ինչպիսին Նա է, մենք երկու խայթոց կունենանք, միայն թե ավելի փոքր:

* * *

## ԻՆՉՈ՞Ւ ԵՍ ԵԿԵԼ

*(չեն առակ)*

Նշանավոր Վարպետի մոտ մենաստան եկած մի նորեկ հարցրեց վանականներից մեկին.

— Ինչո՞ւ վանքում Վարպետի հարևանությամբ ապրելն ինձ ոչինչ չի տալիս:

— Միգուցե պատճառն այն է, որ դու եկել ես նրանից Զեն սովորելու:

— Իսկ դու ինքդ ինչի՞ համար ես եկել:

— Որպեսզի տեսնեմ, թե նա ինչպես է կապում իր կոշիկների քուղերը:



* * *

## ԴՌՆԱՊԱՆԸ

*(սուֆիական առակ)*

Սուֆիստին հարցրին.

— Դուք ի՞նչ եք անում: Դուք մեզ՝ Ձեզանից սովորել ցանկացողներիս, հնարավորություն չեք տալիս պարապել գրքերով: Դուք ոչ մի ծես չեք ցուցադրում: Դուք չեք ցանկանում պատասխանել հարցերին: Դուք Ձեր հասցեին ուղղվող ո՛չ գովեստներին, ո՛չ էլ հայհոյանքներին ուշադրություն չեք դարձնում:

Նա պատասխանեց.

— Ես դռնապան եմ: Դռնապանը հետևում է, որ դուռը բաց լինի այն ժամանակ, երբ այն պետք է բաց լինի, և փակ մնա այն ժամանակ, երբ այն պետք է փակ լինի: Նա ներս է թողնում բոլոր նրանց և այն ամենը, ինչը պետք է ներս մտնի, և ներս չի թողնում այն ամենը, ինչը թույլատրված չէ: Եթե դուք ուզում եք, որ դռնապանը աշխատելու փոխարեն բռնցքահարի դուռը, էֆեկտներ հարուցող ժեստեր անի, հարուստ կամ աղքատ հագուստ կրի, կատարի խոստումները կամ վիճաբանությունների մեջ մտնի, ծևեր թափի, կաշառքներ վերցնի կամ քննարկումների մասնակցի, ապա դուք նա չեք, ով կարող է կառուցողական երկխոսության մեջ մտնել դռնապանի հետ:

* * *

## ՄԵԿ ԹԻԱԿՈՎ ՆԱՎԱԿԸ

*(սուֆիական առակ)*

Հասան անունով մի սուֆիստ դերվիշ էր ապրում: Մի գեղեցիկ օր, երբ նա աշակերտի հետ նավակ էր նստում, աշակերտը նրան հարցրեց.

— Ինձ համար հասկանալի է, որ գոյություն ունի ուրախությունը, քանի որ Աստված մեր Հայրն է, և, բնականաբար, Նա պետք է ուրախություն տա իր զավակներին: Բայց ինչո՞ւ գոյություն ունեն տխրությունը, դժբախտությունը:

Հասանը ոչինչ չպատասխանեց, միայն սկսեց մի թիակով թիավարել: Նավակն սկսեց պտտվել:

— Ի՞նչ ես անում,— բացականչեց աշակերտը:— Եթե դու միայն մեկ թիակով թիավարես, ապա մենք երբեք չենք հասնի մյուս ափը: Մենք շարունակ կպտտվենք նույն տեղում: Քո երկրորդ թիակը ջարդվե՞լ է, թե՞ ձեռքդ է ցավում: Տո՛ւր ես թիավարեմ:

— Իսկ դու շատ ավելի խելոք ես, քան կարծում էի,— պատասխանեց Հասանը:

* * *

## ԵՐԵՔ ՔՈՒՅՐԵՐՆ ՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

*(ծագումն անհայտ է)*

Լինում են, չեն լինում, երեք քույրեր են լինում: Նրանցից մեկը շատ ծույլ էր, ծույլերի ծույլը: Երկրորդը շատ չար էր, չարերի չարը: Երրորդը և՛ խելացի էր, և՛ գեղեցկուհի, և՛ ձեռքից ամեն ինչ գալիս էր, նրան նայելիս քեֆդ գալիս էր:

Մի առավոտ նրանց դարպասի մոտ մի սայլ կանգ առավ: Քույրերը դուրս եկան տեսնելու, թե ով է եկել: Սայլին անծանոթ տարեց մի կին էր նստած:

— Դու ո՞վ ես,— հարցրին քույրերը:

— Ես ճակատագիրն եմ, ձեր ամուսնանալու ժամանակը եկել է:

Ճակատագիրը նրանց նստեցրեց սայլին ու տարավ մարդու տալու:

Գնացին ու մտան առաջին գյուղը: Նայում են ու տեսնում. դաշտում մի ջահել տղա վար է անում, ու նրա ձեռքից ոչ մի գործ չի պրծնում: Եթե ինչ–որ բան է հարկավոր պատրաստել կամ նորոգել, բոլորը նրա մոտ են վազում:

— Այ սա քոնն է,— ասում է ճակատագիրն առաջին քրոջը:

Այդ քրոջն իջեցրին սայլից ու շարունակեցին գնալ:

Մտան հաջորդ գյուղը: Այդ գյուղում մի այնպիսի տղա է ապրում, որը ոչ մեկին չի մերժում օգնել: Բոլորի նկատմամբ բարի է: Էնքան լավն է, որ ամբողջ ժողովուրդն ուրախանում է նրանով:

— Այ սա քոնն է,— ասում է ճակատագիրը երկրորդ քրոջը:

Այդ քրոջն էլ իջեցրին ու շարունակեցին գնալ:

Մտան երրորդ գյուղը: Վերջին տան մոտ՝ ցեխի մեջ՝ ամենահին ավերակի մոտ, մի հարբած տիպ է պառկած:

Ճակատագիրը կանգնեցրեց սայլն ու ասաց.

— Այ սա էլ քոնն է:

— Բայց սա իմ ինչի՞ն է պետք,— աղաչեց երրորդ քույրը:— Ախր ես և՛ բարի եմ, և՛ լավն եմ, և՛ ձեռքիցս ամեն ինչ գալիս է: Իսկ դու էս տեսակ փեսացու ես տալիս ինձ: Հրեն, քույրերիս համար ինչպիսիններին գտար, իսկ ինձ համար ուրիշը չկա՞:

— Ուրիշները կան,— պատասխանեց ճակատագիրը, ապա, հոգոց հանելով, շարունակեց,— բայց սա առանց քեզ կկորչի:

* * *

## ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

*(ժամանակակից առակ)*

Մի երիտասարդ լիովին մսխեց իրեն ժառանգված ամբողջ կարողությունը: Ինչպես հաճախ է պատահում նման դեպքերում, նա, առանց գրոշի մնալով,



հայտնաբերեց, որ զրկվել է նաև բարեկամներից: Հուսահատվելով, չիմանալով, թե ինչ անի, նա մի Վարպետ գտավ ու նրան հարցրեց.

— Հիմա ի՞նչ է լինելու ինձ հետ: Ես այլևս ո՛չ դրամ ունեմ, ո՛չ էլ ընկերներ:

— Մի՛ անհանգստացիր և հիշի՛ր՝ քեզ հետ ամեն ինչ կարգին կլինի:

Երիտասարդի աչքերում հույսի կայծեր բռնկվեցին.

— Ես նորից կդառնա՞մ հարուստ:

— Չէ՛: Պարզապես դու կվարժվես անփող վիճակին ու միայնակությանը:

* * *

## ԱՍՏԾՈ ԿՐՊԱԿՈՒՄ

*(ծագումն անհայտ է)*

Մի կին երազում տեսավ՝ իբր խանութի վաճառասեղանի հետևում ինքը՝ Տեր Աստվածն էր կանգնած:

— Տե՛ր Աստված, այդ դո՞ւ ես,— ուրախությամբ բացականչեց կինը:

— Այո՛, ես եմ,— պատասխանեց Աստված:

— Իսկ ի՞նչ կարելի է գնել քեզանից,— հարցրեց կինը:

— Ինձանից կարելի է գնել ամեն ինչ,— եղավ պատասխանը:

— Այդ դեպքում տո՛ւր ինձ, խնդրում եմ, առողջություն, երջանկություն, սեր, հաջողություն և շատ դրամ:

Աստված բարյացակամորեն ժպտաց և պատվիրված ապրանքները բերելու համար գնաց դեպի օժանդակ կառույցը: Որոշ ժամանակ անց նա վերադարձավ թղթե փոքրիկ տուփով:

— Ամբողջը դա՞ է,— բացականչեց զարմացած ու հիասթափված կինը:

— Այո՛, ամբողջը սա է,— պատասխանեց Աստված:— Մի՞թե դու չգիտեիր, որ իմ խանութում միայն սերմեր են վաճառվում:

* * *

## ԿԱՐՃ ԱՌԱԿՆԵՐ

*(բուդդիստական)*

***Այս տեքստի հեղինակն ինձ անհայտ է: Հավանաբար սա ծաղկաքաղ է:***

1. Աշխարհիկ գործերը վերջ չունեն այն մորուքի պես, որը որքան շատ ես կտրում, այնքան ավելի արագ է աճում: Այդ պատճառով էլ առանց հապաղելու ձեռնամո՛ւխ եղեք Դհարմայի փորձի իրականացմանը:
2. Գիտակցում և անվրդովություն. ահա ամեն ինչի բանալին:
3. Երբ ես սովորեմ լողալ հոսանքին հակառակ, ապա կկարողանամ լողալ հոսանքի ուղղությամբ՝ առաջ անցնելով նրանից:

4. Մեր մտքում մեր երազանքները շատ ավելի գեղեցիկ են, քան իրականում, երբ նրանք իրականանում են:
5. Մարդկանց մեծամասնությունը ոչ միայն չեն ձգտի փորձել հասկանալ, այլ նաև կձգտեն տարհամոզել ձեզ այն բանում, ինչ դուք հասկացել եք (տեսել եք) մեդիտացիայի պրակտիկայում: Բայց եթե ձեր փորձառությունը ճշմարիտ է, եթե ձեր հավատն ամուր է, ապա ոչ ոք չի կարող տարհամոզել ձեզ ձեր փորձառության մեջ: Նաև մի՛ մոռացեք, որ այդպիսի մարդկանց հետ նաև չարժե վիճել:
6. Ես–ն ընդամենը մշտապես փոփոխվող գործընթացների զուգակցում է:
7. Ազատությունն այն է, երբ մարդը կախված չէ իր ես–ից:
8. Քանի դեռ կա տարաբաժանումը հաճելիի ու տհաճի միջև, կա տառապանքը: Այդ տարաբաժանման պատճառը կապվածությունն է:
9. Ոչ ոք չպետք է զոհաբերվի:
10. Ոչ մի սենյակ դատարկ չի լինի, եթե միտքը լիքն է: (Սա բանտում ես սովորում):
11. Եթե դուք լարը շատ ուժեղ ձգեք, ապա այն կկտրվի, եթե շատ թույլ ձգեք՝ նրանից երաժշտություն դուրս չի գա:
12. Չկա փրկություն առանց ամենայն կենդանականի հանդեպ կարեկցանքի:
13. Չկա որևէ բան, որը դրսից կարող է հարկադրել ձեզ տառապել. ամեն ինչ կախված է նրանից, թե մենք ինչպես ենք մեկնաբանում մեր փորձը: Այստեղից պարզ է դառնում մտքի ունեցած մեծ դերն այն բանում, թե մենք ինչ ենք զգում՝ տառապա՞նք, թե՞ երջանկություն:
14. Մի՛ կարծեք, թե Բուդդայի վիճակը ձեզանից դուրս է: Այն ներսում է, այնտեղ, ուր ոտքով չես հասնի: Դուք կհասնեք նրան՝ մաքրելով ձեր գիտակցությունը:
15. Ձեր տառապանքների միակ աղբյուրը ձեր սեփական արարքներն են: Մշտապես հետևե՛ք, թե ինչ եք անում, ինչպես եք վարվում:
16. Ձեռքում բռնած երաշտահավն ավելի նախընտրելի է, քան սոխակն անտառում: Ուրա՛խ եղեք նրանով, ինչ ունեք:
17. Ձեր բոլոր ուժերով ձգտե՛ք օգնել ուրիշներին: Եթե չեք կարող ուրախություն պարգևել, ապա գոնե մի՛ վնասեք: Սա բուդդիստական ամենակարևոր խրատներից մեկն է:
18. Նույնիսկ ամենաուժգին ամպրոպի որոտը դատարկ հնչյուն է: Ճիշտ այդպես հնչեղ փառքը մահվան ժամին դատարկ հնչյուն է դառնում: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ:
19. Սանձահարե՛ք ձեզ և դուք ավելի կատարյալ կդառնաք, ճանաչե՛ք ձեզ և դուք ազատագրման կհասնեք:
20. Ինքն իր մասին հոգալը բոլոր դժբախտությունների պատճառն է: Ուրիշների մասին հոգալը բոլոր–բոլոր բարիքների աղբյուրն է: Եթե ուզում եք իմաստուն լինել, ապա ուրիշների մասին ավելի շատ հոգ տարեք, քան ինքներդ ձեր:
21. Մարմնին հարկավոր է հոգ տանել մշտապես: Իրենց մարմինը բզկտողները հրեշների են նման: Ձեր գիտակցությունն ուրախ վիճակում պահեք, տխուր մտքեր այցելելիս անհապաղ հեռու քշեք դրանց: Յոգը չպետք է



չափից շատ ուտի, բայց նաև պետք չէ քաղցել. նա չպետք է չափից շատ քնի, բայց նաև հարկավոր է խուսափել անքնությունից: Միայն նա կարող է յոգ դառնալ, ով ամեն ինչում պահպանում է ոսկե միջինը: Ճիշտ դիետան հիմնականում այն է, որ խուսափես չափից շատ համեմունքներ ուտելուց: Սնունդը պետք է լինի պարզ, այն հարկավոր է ընդունել օրվա մեջ մի քանի անգամ: Դուք երբեք չպետք է ուժեղ քաղց զգաք: «Չի կարող յոգ դառնալ նա, ով չափից շատ է ուտում: Նա, ով չափից շատ է ծոմ պահում, նույնպես չի կարող յոգ դառնալ: Չի կարող յոգ լինել նա, ով չափից շատ է քնում, ճիշտ նույն կերպ նաև նա, ով չափից շատ է արթուն մնում»: Չի կարող հաջողության հասնել նա, ով ոչինչ չի անում, ճիշտ նույն կերպ նաև նա, ով չափից ավելի լարված է աշխատում: Համապատասխան սնունդ, համապատասխան վարժություններ, չափավոր քուն, չափավոր արթնություն. սրանք բոլորը հաջողության բաղկացուցիչներն են: Մենք ինքներս պետք է որոշենք, թե որքան սնունդ է հարկավոր, և ինչպիսին պետք է այն լինի: Ոչ ոք չի կարող մեր փոխարեն անել դա: Հարկավոր է խուսափել գրգռող սննդից... մենք չգիտենք, թե ինչպես փոխենք մեր սննդակարգը, երբ ճանապարհորդում ենք տարբեր վայրերով: Մենք մոռանում ենք, որ հենց սնունդն է տալիս մեր բոլոր կենսական ուժերը: Կերակուրն է կանխորոշում քանակն ու որակը այն էներգիայի, որը մեզ անհրաժեշտ է...
22. Իրերի ու երևույթների վերաբերյալ հայացքն ամեն ակնթարթ փոխվում է: Հայացքը փոխվելուն պես թվում է, թե ինքը՝ առարկան էլ փոխվեց: Դե՛ն նետեք հայացքներն ու դատողությունները, և այդժամ իրերի իսկական ճանաչումը կայցելի ձեզ:
23. Քննադատե՛ք ոչ թե ուրիշներին, այլ ինքներդ ձեզ: Հարբած մարդ տեսնելիս մի՛ դատապարտեք նրան. հիշե՛ք՝ նա դուք եք, միայն թե այլ կերպարանքով: Նա, ում ներսում խավար չկա, ուրիշների մեջ էլ խավար չի տեսնում: Շրջապատողների մեջ դուք տեսնում եք միայն այն, ինչը հենց ձեր մեջ կա: Այս ձևով դատելը ինքնակատարելագործման ամենահավաստի ճանապարհն է:
24. Բազմաթիվ հարցերի պատասխաններ՝ գոյություն ունի՞ արդյոք անմահ հոգի, գոյություն ունի՞ արդյոք աստված, գոյություն ունի՞ արդյոք Բարձրագույն Գիտակցություն, որն իշխում է այս Տիեզերքում, բանականության ոլորտից դուրս են: Բանականությունը երբեք չի կարող պատասխանել այս հարցերին: Այնուամենայնիվ, այդ բոլորը կարևոր է մեզ համար: Առանց այս հարցերի պատասխանների մարդկային կյանքն աննպատակ կլիներ:
25. Մշկայծյամը չգիտի, թե որտեղից է առաջանում այն հոտը, որը հենց իրենից է գալիս: Բայց հանկարծ նա հայտնաբերում է, որ հոտի աղբյուրն իրականում իր մեջ է: Ճիշտ նույն կերպ՝ աստվածներն ու սատանաները հենց մեր ներսում են:
26. Արտաքին բաները մենք տեսնում ենք մեր ներքին հոգեկան վիճակներին համապատասխան: Օրինակի համար վերցնենք պատուհանի մոտ սփռող

ծառը: Ահա անցնում է գողը: Ի՞նչ է նա տեսնում այդ ուրվագծում: Ոստիկանի: Երեխան տեսնում է հսկա ուրվական: Իր սիրելիին սպասող երիտասարդը, իհարկե, իր սիրեցյալին է տեսնում: Բայց ծառը ծառ է: Այն չի փոխվում: Ճիշտ նույն կերպ երբեք չի փոխվում նաև ինքը՝ Աստված, բայց մեր հիմարության պատճառով մենք մտածում ենք, որ Նա մարդ է, կամ փոշի է, աղբ, ոչնչություն:

27. Բայց ահա գալիս է փիլիսոփան, որպեսզի ելք ցույց տա այդ վիճակից և մեզ բացատրի, թե մենք իրականում ինչ ենք ներկայացնում մեզանից: Դուք կարող եք մտովի քննել նրա ասածները և դա հասկանալ մտածողության մակարդակում, բայց մտքի ըմբռնման և գիտակցման փորձի միջև մեծ տարածություն է ընկած: Շենքի նախագծի և բուն շենքի միջև մեծ տարբերություն կա:

28. Գոյություն ունի կարմա: Կախյալ մարդիկ, ենթարկվելով ցանկություններին, զայրույթին, հպարտությանը, վախին, սովորություններին և այլն, կախված են կարմայից, և նրանք հակում ունեն ռեակցիա տալ այդ հրամաններին: Մարդիկ, որոնք ռեակցիա չեն տալիս այդ հրամաններին, ազատ են: Սովորությունը նախկինում տված ռեակցիայի տպավորության վրա է հիմնված: Երբ նախկինում տրված ռեակցիայի օբյեկտը նորից է հայտնվում, մենք ենթագիտակցորեն ռեակցիա ենք տալիս: Սովորությունն էլ հենց կարման է:

29. Իմացողը չի խոսում, խոսողը չի իմանում: *(Լաո Ցզի):*

30. Նա, ով գիտելիքներ ունենալով հանդերձ իրեն այնպես է պահում, իբր չգիտի, բոլորից վեր է: Նա, ով գիտելիքներ չունենալով իրեն այնպես է պահում, իբր գիտի, հիվանդ է: *(Լաո Ցզի):*

31. Նա, ով իր քաջությունն իմանալով համեստություն է պահպանում, լեռնային առվակի պես դառնում է երկրում գլխավորը: *(Լաո Ցզի):*

32. Հաղթանակով իրեն փառաբանել նշանակում է ուրախանալ մարդկանց սպանությամբ: Ձախից շարվում են թևային հրամանատարները, աջում կանգնած է զորահրամանատարը: Ասում են, որ նրանց հարկավոր է դիմավորել թաղման ծեսով: Եթե շատ մարդկանց են սպանում, ապա այդ առթիվ հարկավոր է դառնորեն լաց լինել: Հաղթանակը հարկավոր է թաղման ծեսով դիմավորել: *(Լաո Ցզի):*

33. Նրա մոտ, ով իրենից ներկայացնում է Դաոյի մեծ կերպարը, գալիս է ողջ ժողովուրդը: Մարդիկ գալիս են, և նա նրանց վնաս չի հասցնում: Նա նրանց խաղաղություն է բերում, հանգստություն, երաժշտություն ու սնունդ: Նույնիսկ ճանապարհորդն է կանգ առնում նրա մոտ: Երբ Դաոն դուրս է գալիս բերանից, այն դառնում է անալի, անհամ: Այն անտեսանելի է, անլսելի է: Գործողության մեջ այն անսպառելի է: *(Լաո Ցզի):*

34. Ով շատ է խնայողություն անում, նա շատ բան կկորցնի: Ով շատ է կուտակում, նա մեծ կորուստներ կունենա: *(Լաո Ցզի):*

35. Ստեղծել ու չյուրացնել, արարել ու չպարծենալ, լինել ավագ ու չիրամայել, ահա թե ինչն է կոչվում խորագույն դէ: *(Լաո Ցզի):*

36. Եթե ձեր գիտակցությունը մնում է թափանցիկ, լայն և ուժեղ, ապա դուք ցանկացած պահի կարող եք կենտրոնացման միջոցով գիտակցության ակտիվ վիճակ բերել այն, ինչ դուք անում էիք, մտածում էիք, տեսնում էիք, դիտում էիք դրան նախորդած ցանկացած ժամանակում: *(Շրի Աուրաբինդո):*

37. Առօրյա կյանքի ընթացքում հարկավոր է չքշվել մտադրություններով ու մտավոր տարբեր ռեակցիաներով: Դրա համար հարկավոր է մի տեսակ կողքից նայել մտքերին:

38. Ոչ մի ոգեշնչում իրականում գոյություն չունի: Այն, ինչը մենք ոգեշնչում ենք անվանում, գիտակցության մեջ արդեն կուտակված ուժերի դրսևորումն է: Միայն պատահմամբ է խսկությունը լույսի բռնկման պես բացվում մեր առջև: Հաջողության գաղտնիքը նախկին աշխատանքի մեջ է:

39. Եթե բուդդիզմի մասին խոսենք առավել խտացված ձևով, ապա դա «վարքագիծ է, հայացք/մտածելակերպ և մեդիտացիա»: Բուդդիզմի ամբողջ մեծ ուսմունքն այս երեք բառի մեջ է ամփոփված:

40. Ֆիզիկական առողջության վիճակը ուղղակիորեն հոգեկան հանգստության առկայության կամ բացակայության հետ է կապված: Այդ պատճառով էլ այնպիսի անառողջ զգացումներ, ինչպես զայրույթը, չարությունը, խանդը, կրքոտ կապվածությունը, մոլորությունը, սաստիկ վատացնում են մեր ֆիզիկական վիճակը: Ոչ ոք չի ասի, որ ինքն այսօր սարսափելի չարացած է ու այդ պատճառով սքանչելի է զգում իրեն:

41. Ջգտե՛ք ոչ մեկին վնաս չպատճառել, նույնիսկ փոքրիկ միջատներին: Չէ՞ որ նրանք նույն զգացումներն ունեն, ինչ մենք: Նրանք նույնպես երջանկություն են ցանկանում և տառապանք չեն ցանկանում: Քանի որ նրանք այդքան փոքր են, մենք պետք է օգնենք նրանց: Այդ պատճառով էլ նրանց վնաս հասցնելը մարդկային բարոյականությունից ցածր բան է: Առօրյա կյանքում, խնդրում եմ, վնաս մի՛ հասցրեք այլ էակներին:

42. Կատարյալ վարքի հասնելու համար մենք պետք է ունենանք ճիշտ փիլիսոփայական հայացք և մեդիտացիայի կարողություն: Այսպիսով՝ փիլիսոփայական հայացքն ու մեդիտացիան կատարյալ վարքի հասնելու մեթոդներ են:

43. Մեր ես–ի զգացումի մեջ կուտակվող զայրույթի նկատմամբ հակաթույն է հետևյալը. փորձել ավելի շատ մտածել դիմացի մարդու վիճակի մասին: Դա թույլ է տալիս ընդլայնել ամբողջ իրավիճակի ընկալումը: Օրինակ, երբ մարդը վիրավորական ինչ–որ բան է ասում ձեզ, փորձեք հասկանալ, թե նա ինչու է այդպես անում: Դուք կնկատեք, որ նրան տիրել է զայրույթը: Դուք կտեսնեք, որ ոչ թե դուք, այլ նա է զայրույթի առաջին զոհը: Իր զայրույթից տառապելով՝ նա վիրավորական ինչ–որ բան է ասում ձեզ՝ այսպիսի հասկացումը կբարելավի ձեր վիճակը: Հակաթույնի հաջորդ մակարդակը հետևյալն է. հասկանալ, թե իրականում ով է հիմնախնդիր ստեղծողը: Այսպես. երբ կատվին փայտով ծեծում են, նա ատամներով կառչում է փայտից ու չարանում է նրա վրա: Նա մտածում է, որ ցավի պատճառը փայտն է: Բայց մենք՝ մարդիկս, հասկանում ենք, թե որքան հիմար է այդ կատուն: Չէ՞ որ փայտը չէ նրան ցավ հասցնում: Այսպես. երբ ինչ–որ մեկը վիրավորում է ձեզ, և դուք չարանում եք այդ մարդու վրա, որը զայրույթի իշխանության ներքո

է գտնվում, դուք նմանվում եք այդ կատվին: Մտածե՛ք, որ այդ մարդը պարզապես փայտ է ձեր նկատմամբ: Նրան զայրույթն է ղեկավարում և ստիպում որոշակի գործողություններ կատարել:

44. Եթե մենք ցանկանում ենք սքանչելի այգի ունենալ, ապա հարկավոր է ոչ թե պարզապես սպասել, այլ ստեղծել պատճառը: Նույնիսկ եթե մենք աղոթենք. «Ո՜վ Բուդդա, օգնի՛ր ինձ այդպիսի այգի ձեռք բերել»,— մենք ոչինչ չենք ստանա: Այգու համար պատճառներ են անհրաժեշտ՝ սերմեր ու լավ պայմաններ:
45. Զայրույթը վերացնելու ամենաարդյունավետ միջոցն այն է, որ այն օգտագործես սեփական հոգևոր զարգացման համար: Այդ դեպքում զայրույթը ոչ միայն չի վնասի մեզ, այլ նույնիսկ կօգնի զարգանալ:
46. Մեծ ծառը մեկ օրում չի աճել: Նա աճում է օր օրի՝ բազմաթիվ տարիների ընթացքում, գրեթե աննկատ ձևով և միայն դրանից հետո է մեծ դառնում: Երբ մենք ջրում, սնում ենք նրան, այն ավելի արագ է աճում: Բայց եթե մենք սկսենք ձգել ճյուղերից և ասել. «Ավելի արա՛գ աճիր»,— ապա մենք պարզապես արմատահան կանենք ծառը: Ճիշտ նույն կերպ է նաև նա, ով ձգտում է շատ արագ հասնել ինչ–որ անսովոր ունակությունների տիրապետելուն: Նա պարզապես արմատահան կանի իր հոգևոր առաջընթացի ծառը, որը հարկավոր է աճեցնել աստիճանաբար ու դանդաղորեն:
47. Այն ամենը, ինչ մենք ունենք՝ ընտանիք, համբավ, հարստություն, սքանչելի է: Բայց այդ ամենը, ինչպես նաև մեր մարմինը, մենք պետք է թողնենք այս կյանքի վերջում: Միայն արժանիքները, որոնք մենք կարողացել ենք ձեռք բերել մեր գիտակցության հոսքի մեջ, հաջորդ կյանք կտեղափոխվեն այդ հոսքի հետ միասին: Այդ պատճառով էլ միայն բարի արժանիքների զարգացումն (որոնք կբացահայտվեն նոր ծնունդից հետո) է երջանկության հիմքը կազմում: Իսկ մահը կարող է վրա հասնել ցանկացած պահի: Բոլորը գիտեն, որ մահը վաղ թե ուշ գալու է: Բայց նրա գալստյան ժամն անհայտ է: Այդ պատճառով էլ ցանկացած պահի հաջորդ կյանքին պատրաստվելը միանգամայն կարևոր է:
48. Մենք մշտապես ասում ենք՝ ես, հոգ ենք տանում այդ ես–ի մասին, բայց իրապես չգիտենք, թե դա ինչ է: Սակայն եթե մենք իսկապես ցանկանում ենք օգուտ բերել մեր ես–ին, մենք պետք է հստակ հասկանանք, թե դա ինչ է: Հակառակ դեպքում մենք կարող ենք ավելի շուտ վնաս բերել: Այսպես. եթե մենք ցանկանում ենք նորոգել ժամացույցը՝ չիմանալով, թե դա ինչ է ներկայացնում իրենից, ապա ավելի շուտ վերջնականապես կփչացնենք այն:
49. Երբ մենք վնասում ենք ուրիշներին, վնասում ենք մեզ: Երբ ուրիշներին բարիք ենք անում, բարիք ենք անում մեզ:
50. Երբ մեծ վարպետներն ուսուցանում էին Դհարման, նրանք ասում էին, որ Դհարման, Ուսմունքը հարկավոր է ընկալել որպես հայելի: Մենք նայում ենք հայելուն և տեսնում ենք մեր թերությունները: Դրանք տեսնելն ու ճանաչելն առաջին քայլն է ավելի իմաստուն դառնալու ճանապարհին: Եթե, օրինակ, ձեր դեմքը կեղտոտ է, և դուք չգիտեք այդ մասին, նայում եք շուրջը և տեսնում եք՝ ահա սա կեղտոտ է, ահա այն մյուսը նույնպես կեղտոտ է, ապա երբ դուք, վերջապես, նայում եք հայելուն և տեսնում, որ ձեր դեմքը նույնպես



կեղտոտ է, դուք սկսում եք անհարմար զգալ: Դուք կհասկանաք, որ հարկավոր է լվացվել, դառնալ մաքուր: Դուք կսկսեք անել դա: Այսպես. եթե դուք չեք նայում Ուսմունքի հայելուն, ապա դուք կարող եք չնկատել, չիմանալ ձեր թերությունները և ենթադրել, որ ամեն ինչ հիանալի է, իսկ իրականում դուք ներքին աղտոտվածություն կունենաք: Բայց եթե դուք դա տեսնեք Ուսմունքի հայելու մեջ և սկսեք լվացվել, ապա այդ դեպքում իսկապես կսկսեք առաջանալ դեպի ներքին մաքրումը, ներքին գեղեցկությունը: Դհամապադայում ասված է. «Հիմարը, որը հասկանում է իր հիմարությունը, արդեն իմաստուն է, իսկ հիմարը, որն իրեն իմաստուն է կարծում, ահա թե իսկապես հիմարն ով է»:

51. Մի՛ ձգտեք նրան, որ ամենահարուստ մարդը լինեք գերեզմանատանը: Դրա փոխարեն կատարելագործե՛ք ձեր ոգին:
52. Ինչո՞ւմն է մարդկային կյանքի արժեքավորությունը: Ի՞նչ հնարավորությունների ենք մենք տիրապետում: Ամենից առաջ դա գիտակցությունն է, մարդու խելքը: Ի տարբերություն կենդանիների՝ մենք ընդունակ ենք հիմնախնդրի հանդիպելիս ոչ թե պարզապես տառապելով ապրել դա, այլ ընդունակ ենք հետազոտել տառապանքը, հասկանալ, թե որոնք են դրա պատճառները: Մենք կարող ենք ուղիներ փնտրել այդ տառապանքը վերացնելու համար և վերացնել դրա պատճառները: Հենց դրանում է մարդկային կյանքի արժեքավորությունը:
53. Կարիք չկա, որ մենք մեռնենք՝ ավելի հաջող վայրում ծնվելու համար, կարիք չկա ինչ–որ տեղ գնալ՝ Բուդդային գտնելու համար, ամենը, որ հարկավոր է մեզ անել՝ աչքերը տրորել: *(Լամա Օլե Նիդալ)*:
54. Մարդիկ հիմնականում նույնիսկ չգիտեն էլ, որ իրենք խելք ունեն: Եթե նույնիսկ գիտեն էլ, որ այն կա, ապա չգիտեն, թե դրա հետ ինչ անեն: Իսկ եթե նույնիսկ գիտեն էլ, թե ինչ անեն, ապա իրենց ծուլության պատճառով ժամանակ չեն գտնում դրա համար: *(Լամա Օլե Նիդալ)*:
55. Վատ մարդը մարդկանց մեջ միայն վատն է տեսնում:
56. Երբ ինչ–որ մեկը զայրանում է քեզ վրա, ապա դա փորձություն է՝ ի վերուստ ուղարկված: Երբ դու ես ինչ–որ մեկի վրա զայրանում, ապա դա մեղք է: Այսպիսի ըմբռնումը զարգացնում է մետտան (բարյացակամությունը) և նպաստում գիտակցման ընդլայնմանը:
57. ԱՅՍՏԵՂ և ԱՅԺՄ. սա հիմնական զենքն է մտքի վնասակար վիճակների դեմ, այնպես, ինչպես զայրույթը, ագահությունը, վախը, հպարտությունը, ծուլությունը, զզվանքը և այլն: Եթե դուք դիտեք այդ վիճակները, այլ ոչ թե քշվեք տարվեք դրանցով, դուք ավելի երջանիկ կդառնաք:
58. Իմաստունը նման է դատարկ փչակի. նա գիտելիքներ չի պահում:
59. Դատողություններն ու փոխաբերությունները կույրին քիչ բան են տալիս լույսը հասկանալու համար:
60. Փորձը մեր միակ ուսուցիչն է: Մարդը վիրաբույժ չի դառնա, եթե դուք պարզապես անատոմիայի մի քանի գիրք տաք նրան կարդալու: Գիրքն ընդամենը մեզ մղում է ձգտել ավելի կատարյալ գիտելիք ստանալու: Գրքեր կարդալու անչափ մեծ կիրքը միայն ատրոֆիայի է ենթարկում մարդու բանա-

կանությունը: Ինչպե՞ս կարող է մարդը համարձակվել Աստծուն անսահման անվանել և միաժամանակ փորձել Նրան խցկել գրքի կազմի մեջ:

61. Սուրբ գրվածքներ կարդալը կարող է ընդամենը հետաքրքրություն բորբոքել տվյալ հարցի նկատմամբ և մտորումների թեմա ստեղծել: Հնարավոր է նույնիսկ մի փոքր աչքերը բացվեն: Բայց լիովին աչքերը բացելուն օգնում է միայն մեդիտացիայի փորձի միջոցով լուսավորվելը:

62. Իր զարգացման տվյալ փուլում մարդն ի զորու չէ հասկանալ «Աստվածայինը», բայց նա պետք է տրանսֆորմացնի իր գիտակցությունը ավելի բարձր մակարդակի անցնելու համար, գերգիտակցության մակարդակի, որում գիտելիքներն իրենք կբացվեն նրա առջև:

63. Մարզի՛ր Ոգին ու Մարմինը Ամեն Օր:

64. Կռվելը լավ չէ, միշտ ինչ–որ մեկը տառապում է:

65. Երբ մենք ձգտում ենք տեսնել ու միայն տեսնել, լսել ու միայն լսել, հոտոտել, համ զգալ, հպում զգալ ու միայն այդքանը. ճանաչել ու միայն ճանաչել, մենք դիտում ենք մեր ռեակցիաները, որոնք պայմանավորված են գնահատումներով ու կապվածությամբ:

66. Կարման այն արարքներն են, որոնք դու հիմա կատարում ես: Դրանք հետևանք կդառնան ապագայում:

67. Օգնի՛ր մարդկանց բարի գործերում (անհատույց), եթե չես կարող օգնել, ապա գոնե մի՛ վնասիր:

68. Եթե դուք մի մեթոդից մյուսը նետվեք, մի ճանապարհից մյուսը վազեք, ապա ոչ մի տեղ չեք հասնի: Մի մեթոդ ընտրե՛ք և ինչպես հարկն է, տիրապետե՛ք դրան: Այդ դեպքում այն ձեզ կհասցնի այնտեղ, որտեղ ուզում եք:

69. Ամեն ինչ ժամանակավոր է, ամեն ինչ գալիս և անցնում է, հետևաբար ոչ մի բան գոյություն չունի, ամեն ինչ պատրանք կամ Մայա է:

70. Կյանքի ուրախությունները ճանաչում ես այն ժամանակ, երբ զգում ես դրանց բացակայությունը:

71. Արձանիկներն ու մնացած ատրիբուտիկան հարկավոր են ոչ թե կռապաշտության համար, այլ մթնոլորտ ստեղծելու:

72. Երբ փորձում ես օդը սեղմել բռունցքիդ մեջ, այն հեռանում է քեզանից: Երբ փորձում ես հիշել, մոռանում ես: Երբ փորձում ես տեսնել–հասկանալ, այն դուրս է պրծնում: Եթե ցանկանում ես տիրապետել ամեն ինչին, ապա բաց թող ամեն ինչը, մի՛ կառչիր, մի՛ պահիր:

73. Մտքերը ինֆորմացիայի հետ աշխատելու գործիք են, իսկ մտադրությունները՝ թույն, բայց ոչ թե ֆիզիկական, այլ հոգեկան:

74. Գոհացի՛ր նրանով, ինչ ունես: Լավագույնը մի՛ ցանկացիր:

75. Նորեկը գալիս է իմաստունի մոտ և հարցնում. «Ո՞վ մեծ իմաստուն, պատասխանի՛ր ինձ, Աստված կա՞ արդյոք»: Իմաստունը պատասխանում է. «Դու պատասխանին պատրաստ չես: Հիմա դու այն չես հասկանա: Ես կպատասխանեմ քեզ հարյուր տոկոս ճշտությամբ, բայց դու նույնպես պետք է երկու հարցի պատասխանես. 1. Ի՞նչ է Աստված: 2. Ինչո՞վ է տարբերվում «կա»–ն «չկա»–ից»:

76. «Նա, ով հաղթել է ինքն իրեն, շատ ավելի է հաղթող, քան նա, ով հազար անգամ հազար մարդու է հաղթել ճակատամարտում: Ավելի լավ է հաղթել ինքն իրեն, քան բոլոր մնացած մարդկանց: Նա, ով ճակատամարտում հաղթել է ուրիշ մարդկանց, կարող է հաղթված լինել, բայց նա, ով հաղթել է իրեն և տիրապետում է իրեն, կմնա միշտ հաղթող»:

*Դհամմապադա*

* * *

## ԼՍԵԼ ԿՆՈՋԸ

*(ծագումն անհայտ է)*

Մի մարդ հարցրեց, թե ինչպես կարգավորի հարաբերություններն ընտանիքում:

— Դու պետք է սովորես լսել կնոջդ:

Մարդը լրջորեն ընդունեց Վարպետի խորհուրդը: Մի ամիս անց նա նորից եկավ նրա մոտ ու հայտնեց, որ սովորել է լսել յուրաքանչյուր բառը, որ կինն ասում է:

Վարպետը ժպտալով պատասխանեց.

— Իսկ հիմա գնա՛ տուն և սովորիր լսել յուրաքանչյուր բառը, որ նա չի ասում:

* * *

## ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

*(ծագումն անհայտ է)*

Նպարեղենի կրպակի տերը խիստ անտրամադիր էր. ասես դիտավորյալ կերպով իր կրպակի դիմաց՝ փողոցի մյուս կողմում, հսկայական սուպերմարկետ էր բացվել, նշանակում է՝ իր բիզնեսի վերջը եկել է: Սերնդեսերունդ կրպակը եկամուտի համեստ, բայց հուսալի աղբյուր էր, և նրան սպառնացող անխուսափելի սնանկացումը իսկական աղետ կդառնար ոչ միայն կրպակի ներկա տիրոջ, այլ նաև նրա ամբողջ ընտանիքի համար:

Վարպետը նրան ասաց.

— Եթե դու վախենում ես մրցակցից, ապա կատես նրան: Այդ ատելությունն էլ հենց քո կործանումը կդառնա:

— Բայց ի՞նչ անեմ,— հարցրեց գլուխը կորցրած առևտրականը:

— Ամեն առավոտ կանգնի՛ր քո կրպակի առջև ու օրհնի՛ր այն, ամենայն բարգավաճում ցանկացի՛ր նրան: Այնուհետև դեմքով շրջվի՛ր սուպերմարկետի կողմը և նույն բանն արա:

— Ի՞նչ: Օրհնեմ թշնամուս, որն ինձ սնանկացնելո՞ւ է:

— Նրա հասցեին ուղղված ցանկացած օրհնություն ետ կվերադառնա դեպի քեզ բարիքի տեսքով: Իսկ եթե չարիք ցանկանաս, ապա ցանկացած այդպիսի

ցանկություն կկործանի քեզ։

Կես տարի անց կրպակի տերը նորից եկավ Վարպետի մոտ ու հայտնեց. կատարվել էր այն, ինչից նա վախենում էր։ Կրպակը ստիպված էր եղել փակել։ Միայն թե այժմ նա սուպերմարկետի կառավարիչն էր դարձել, և գործերն ավելի լավ են գնում, քան երբևէ։

* * *

## ԿԱՊԻԿՆ ՈՒ ԹՌՉՈՒՆԸ

*(հնդկական առակ)*

Մի անտառում կապիկների հոտ էր ապրում։ Մի անգամ ձմռանը լրիվ ուժասպառ վիճակում մութն ընկնելիս նրանք լուսատտիկ տեսան։ «Սա կրակ է»,— մտածեցին նրանք։ Զգուշությամբ վերցրին լուսատտիկին, ծածկեցին չոր խոտով, և ձեռքերը, ուսերը, փորերն ու կուրծքը մոտեցնելով՝ սկսեցին քորել իրենց, ասես իրականում էին վայելում ցանկալի ջերմությունը։

Նրանց մեջ առանձնակի մրսած մի կապիկ կար։ Նա շարունակ փչում էր խոտին ու լիովին կլանված էր այդ գործով։ Այդժամ Սուչիմուխի անունով թռչունն, իր ճակատագրին հետևելով, ծառից իջավ նրա մոտ և ասաց.

— Թանկագի՛նս, մի՛ տանջվիր, սա կրակ չէ, լուսատտիկ է։

Իսկ կապիկը, նրա խոսքերին ուշադրություն չդարձնելով, շարունակում էր փչել ու փչել, թեև թռչունը բազմիցս փորձեց համոզել նրան։ Այդքան շատ բառերն ինչի՞ են պետք։ Կապիկի ականջին մոտենալով՝ թռչունն այնքան վրդովեցրեց նրան, որ կապիկն, ի վերջո, բռնեց նրան ու քարին խփելով՝ փշուր-փշուր արեց նրա կտուցը, աչքերը, պարանոցն ու գլուխը, այնպես որ Սուչիմուխի անունով թռչունը հեռացավ դեպի անգոյություն։

* * *

## ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*(չեն առակ)*

Մի անգամ աշակերտը հարցրեց Ուսուցչին.

— Ուսուցի՛չ, վերջերս ես ու ընկերներս քննարկում էինք անկեղծության ու բնականության թեման, բայց դրա արդյունքում իմ գլխում ամեն ինչ խառնվեց իրար։

Ուսուցիչը ժպտաց.

— Եվ ո՞րն է քո հարցը։ Ի՞նչն է խառնվել քո գլխում։

— Ամենագլխավորը, որը ես չեմ կարողանում հասկանալ, անկեղծության ու բնականության տարբերությունն է։ Իմ կարծիքով՝ դրանք նույն բանն են։

— Նույն բանը չեն,— ասաց Ուսուցիչը։— Անկեղծ մարդը կարող է և բնական չլինել, մինչդեռ բնականը միշտ անկեղծ է։

— Ների՛ր, Ուսուցի՛չ, ես դեռևս չհասկացա։



— Անկեղծ լինելիս դու չես թաքցնում զգացմունքներդ, մինչդեռ բնական լինելիս դու դրանց մասին չես մտածում։

* * *

## ՆՎԻՐԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

*(դաոսիստական առակ)*

Մի անգամ Մեծ քարանձավի երկնագույն սատանան որոշեց սուրբ դառնալ և փառաբանվել բարի գործերով։ Նա հագավ ամենագեղեցիկ զգեստները, իր ազգականներին ու ծանոթներին ուղարկեց աշխարհի չորս ծագերը, որպեսզի նրանք լուր տարածեն այն մասին, որ ինքը հանձն է առնում կատարել մարդկանց ամենանվիրական ցանկությունները։ Շուտով այն քարանձավի մոտ, որում ապրում էր սատանան, խոստացվածը ստանալ ցանկացող մարդկանց երկար հերթեր գոյացան։

Առաջին մարդը, որ հառնեց սատանայի դիմաց, աղքատ գյուղացի էր։ Նա դեռ չէր հասցրել դիմել սատանային, երբ վերջինս ասաց.

— Գնա՛ տուն։ Քո ցանկությունը կատարված է։

Գյուղացին վերադարձավ տուն, սկսեց փնտրել ոսկով ու արծաթով լի պարկերը, մեկ էլ հանկարծ ինչ տեսնի. իր տանն է մոտենում հարևանը, միայն թե նրա ուսերին սեփական գլխի փոխարեն վայրի խոզի գլուխ է, աչքերն է ոլորում ու ժանիքները չխկչխկացնում։ Գյուղացին սարսափեց. «Մի՞թե ես այսպիսի ցանկություններ ունեմ»։

Գյուղացուց հետո սատանային մոտեցավ մի ծեր կին՝ գոսացած ոտքերով մի տղամարդ շալակած։ Նա տղամարդուն իջեցրեց սատանայի ոտքերի մոտ և ասաց.

— Կատարի՛ր իմ որդու նվիրական ցանկությունը։ Մինչև կյանքիս վերջը երախտապարտ կլինեմ քեզ։

Սատանան նայեց տղամարդուն, ու... նրա ձեռքերն էլ գոսացան։

Ծեր կինը լաց եղավ ու բացականչեց.

— Ես ի՞նչ արեցիր դու, անիծյա՛լ։

Իսկ սատանան նրան ասաց.

— Իսկ ի՞նչ անեի, եթե նա մանկուց ցանկանում է, որ իր ձեռքերն էլ չորանան, որովհետև այդ ժամանակ դու չես կարողանա նրան ստիպել կողովներ գործել ու նրան քո ձեռքերով կկերակրես։

Ի՞նչ կարող ես անել։ Մայրը որդուն շալակն առավ ու վազելով դուրս փախավ քարանձավից, քանի դեռ նրա որդին էլի ինչ-որ բան չէր ցանկացել։

Ահա այդպես սատանան սուրբ դարձավ։ Նրա չար համբավը տարածվեց շուրջբոլորը։ Բայց դրանում նա ինքն է մեղավոր։ Ով-ով, բայց սատանան պետք է իմանա, որ նվիրական ցանկությունները միշտ չէ, որ ցանկալի են լինում։

* * *

## ԻՆՉՈՒՄՆ Է ՈՒԺԸ

*(ներկայացնում է Օլգա Բերեզինան)*

Մարդը փնտրում էր իրեն վաղուց տանջող հարցի պատասխանը. «Ի՞նչ է ուժը»: Նա իմացավ, որ իրենց կողմերում մի իմաստուն կա: Գնաց նա այդ փառաբանված այրի մոտ ու ի՞նչ տեսնի. ճգնավորի խղճուկ խրճիթի փոխարեն բարձրորակ մի տուն է, բակում երեխաներն են աղմկում... զարմացավ մարդը, քանզի նրա պատկերացմամբ ճշմարտությունը ճանաչածները լրիվ այլ ձևով են ապրում: Նա իրեն օգնելու խնդրանքով դիմեց տիրոջը:

Եվ իմաստունը պատասխան տվեց.

— Ուժ ձեռք բերել կարող ես ինքդ: Որոնի՛ր քո ուղին կամ գնա՛ նախնիներիդ ճանապարհով:

Մի մարդ կատարելության էր ձգտում, համառորեն ամեն օր մարզվում էր: Եվ նա ճանաչեց մարմնի ուժը:

Դժվարությունների առջև չընկրկելով՝ նա միայն առաջ էր ընթանում: Հաղթեց ինքն իրեն: Եվ ճանաչեց ոգու ուժը:

Մեծերի մտքերին հասու լինելով՝ նա սեփական կարծիք ձեռք բերեց: Եվ ճանաչեց նա գիտելիքների ուժը:

Սիրեց, խոնարհվեց իր սրտի երկրային տիրուհու առջև: Եվ ճանաչեց նա զգացմունքի ուժը:

Ձեռք բերելով տուն, ընտանիք, իր զավակին ձեռքերի վրա առնելով՝ նա ճանաչեց կյանքի ուժը:

Խաղաղված հոգով անորոշությանն ընդառաջ գնալով՝ նա չափսոսաց անցած կյանքի համար և ճանաչեց մահվան ուժը:

* * *

## ԱՅՆ, ԻՆՉԸ ՄԵՆՔ ԿՐՈՒՄ ԵՆՔ ՄԵԶ ՀԵՏ (Հինգ Շի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա-Իլյինան)*

Հինգ Շին հարուստ չէր, թեև ծաղկուն դպրոց ուներ, որում ողջ Չինաստանից նրա մոտ եկող բազմաթիվ պատանիներ էին ուսանում: Մի անգամ աշակերտներից մեկը նրան հարցրեց.

— Ուսուցի՛չ, քո փառքը թնդում է ամբողջ երկրով մեկ, դու կարող էիր հարուստ մարդ լինել, որը չգիտի, թե վաղվա հոգսն ինչ բան է: Դու ինչո՞ւ հարստության չես ձգտում:

— Ես ունեմ այն ամենը, ինչն անհրաժեշտ է կյանքի համար,— պատասխանեց Հինգ Շին:

— Բայց չէ՞ որ դու կարող էիր շատ ավելին ունենալ,— առարկեց աշակերտը:



— Իր շուրջն անհաշիվ բարիքներ կուտակող մարդը նման է այն ճամփորդին, որը ճանապարհին հավաքում է իրեն հանդիպող բոլոր արժեքավոր բաները, իսկ հետո կրում է այդ ամենը՝ իր շալակած բեռան աներևակայելի ծանրության տակ ճկռելով: Դե, իսկ երբ նա, թվում է, թե հասել էր իր նպատակին, պարզվեց, որ նրա ճանապարհը փակում էր բարձր մի պատ, որն անպայմանորեն հարկավոր էր անցնել, բայց հնարավոր չէր ո՛չ շրջանցել, ո՛չ էլ ջարդել այն: Պատն անցնելու միայն մի միջոց կար. հարկավոր էր անցնել դրա վրայով՝ ընդամենը դեն նետելով այն ամենը, ինչ նա կրում էր իր հետ: Բայց մարդն ուրիշ ընտրություն չուներ, այդ պատճառով էլ նա պատի մոտ թողեց այն ամենը, ինչն այդքան դժվարությամբ քարշ էր տալիս իր շալակին:

Հինգ Շին փոքրիկ դադար տվեց, հետո շարունակեց.

— Մենք դատարկ ձեռքերով ենք այս աշխարհ գալիս և հեռանում ենք նրանից՝ թողնելով այն ամենը, ինչ կուտակել էինք: Ուրեմն ի՞նչ իմաստ ունի հավաքել այն, ինչն անհրաժեշտ չէ, զուտ ագահությունից դրդված՝ իմանալով, որ հետո հարկ կլինի ոչ միայն անասելի ծանր բեռ կրել իր վրա, այլ նաև դեն նետել դա ճանապարհի վերջում: Ավելի լավ չէ՞ թեթևորեն անցնել իր ճանապարհը:

* * *

## ԾԱՆՐ ԲԵՌԸ

*(արևելյան առակ)*

Մի գող գնում էր անապատով ու շալակին թալանված գանձերով տկճոր էր կրում: Եվ ծանր էր նրա բեռը:

Նա երկար քայլեց կիզիչ արևի տակ՝ տառապելով ծարավից ու իր թանկագին բեռի ծանրությունից: Եվ որքան հեռու էր գնում, այնքան ավելի ուժգին ու ուժգին էր նրան տանջում ծարավը, այնքան ավելի ուժգին ու ուժգին էր ճնշում ծանր բեռը՝ քամելով նրանից վերջին ուժերի մնացորդները: «Դեն նետիր գանձերով տկճորը,— խորհուրդ տվեց ներքին ձայնը,— միգուցե թեթևանալով դու կկարողանաս հասնել ջրին ու կենդանի կմնաս»: Բայց չէր լսում գողն իր ներքին ձայնին ու իր գանձերի տակ կռացած՝ համառորեն շարունակում էր ուժերը վատնել:

Եվ ահա, երբ վերջին ուժերը պատրաստ էին լքել նրան, և նա հյուծվածությունից վայր էր ընկնելու, գողը ոչ հեռու մի տկճոր տեսավ, որը, հավանաբար, նրանից առաջ այդ վայրերով անցած մի ճամփորդ էր թողել: Իր վերջին ուժերը հավաքելով՝ գողն ուրախությամբ նետվեց դեպի տկճորը՝ որպես ջուր խմելու իր վերջին հույսը: Բայց տկճորը բացելով՝ նա դրանում ոչ մի կաթիլ ջուր չգտավ. տկճորը բերնեբերան լցված էր գանձերով:

* * *

## ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

*(ներկայացնում է Պաուլո Կոելյոն)*

Աֆրիկացի շամանն իր աշակերտի հետ անցնում էր ջունգլիներով: Շամանն առաջնորդում էր աշակերտին: Թեև նա շատ ծեր էր, բայց արագ էր գնում, մինչդեռ աշակերտը բազմիցս վայր ընկավ: Երիտասարդ աշակերտն ամեն անգամ վայր ընկնելուց հետո վեր էր կենում և հայհոյելով դավաճան հողին՝ թքում էր իր ընկած տեղի վրա ու շարունակում էր հետևել ուսուցչին:

Երկար ճանապարհ անցնելուց հետո նրանք հասան սրբազան վայրը: Առանց կանգ առնելու շամանը միանգամից ետ դարձավ:

— Դուք այսօր ինձ ոչինչ չսովորեցրիք,— հերթական անգամ վայր ընկնելուց հետո ասաց աշակերտը:

— Ես քեզ ինչ-որ բան էի սովորեցնում, բայց դու չհասկացար դա,— ասաց շամանը:— Ես փորձում եմ սովորեցնել, թե դու ինչպես պետք է վարվես կենսական սխալների հետ:

— Եվ ինչպե՞ս պետք է ես վարվեմ դրանց հետ:

— Ճիշտ նույն կերպ, ինչպես քո այս անկումների,— պատասխանեց շամանը:— Քո ընկած վայրն անիծելու փոխարեն դու պետք է փորձես հայտնաբերել այն, ինչ ընդհանրապես ստիպեց քեզ վայր ընկնել:

* * *

## ԵՐՋԱՆԻԿ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ (Հինգ Չի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա-Իլյինան)*

— Ի՞նչ է երջանիկ ամուսնությունը, — մի անգամ հարցրեց Յանգ Լին իր ուսուցչին:— Դա այն է, երբ տղամարդու համար տանը հարմարավետություն կա, նա լավ է զգում իր կնոջ հետ և նա չի՞ մտածում ազատության մասին:

— Ոչ,— պատասխանեց Հինգ Չին,— հաջող ամուսնությունն այն է, երբ նրանց երկուսի համար էլ տանը հարմարավետություն կա, նրանք լավ են զգում իրար հետ, և նրանք ազատ են:

* * *

## ԿԱՍԿԱԾԱՄՏՈՒԹՅՈՒՆ (Հինգ Չի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա-Իլյինան)*

Մի անգամ Հինգ Չիին հարցրին, թե որն է ամենամեծ կասկածամտությունը: Ուսուցիչն ասաց.



— Ամենամեծ կասկածամտությունն այն է, երբ դու, հայելու առջև կանգնած, նայում ես ինքդ քեզ ու մտածում ես, որ դիմացինդ բացահայտորեն ինչ-որ բան է նյութում քո դեմ:

* * *

## ԱՌԱԿ ԱՌՆԵՏԻ ՄԱՍԻՆ (Հինգ Չի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա-Իլյինան)*

Մի անգամ Հինգ Չին երազում մի փոքրիկ, չարությունից փշաքաղված առնետ տեսավ: Առնետը՝ հետևի թաթիկների վրա սողալով, մոտեցավ ուսուցչի ոտքերին ու ծվծվաց.

— Մա՛րդ, դու ինչո՞ւ ես շրջապատողներին պատմում քո անպետք առակները: Մի՞թե չես տեսնում, որ շողոքորթ այցելուների ոտնաձայները քո տանը գրգռում են մեզ՝ առնետներիս, որ ներքևում ենք ապրում: Ավելի լավ չէ՞, որ լռես ու լռության մեջ ապրես, իսկ ավելի լավ է՝ նաև խավարում: Այդ դեպքում մենք կկարողանանք համարձակորեն մակերես դուրս գալ ու շրջել քո տանը:

Հինգ Չին վերցրեց շվաբրն ու առնետին վանեց իրենից հետևյալ խոսքերով.

— Ըստ երևույթին քեզ՝ առնետիդ համար, ավելի հեշտ է օտարի իմաստությունն անպետք համարել, իսկ մարդկանց՝ շողոքորթներ, քան թե հենց քեզ վրա հայացք ձգել: Թեև,— շարունակեց իմաստունը,— ամեն մարդ չէ, որ քաջություն կունենա խոստովանել սեփական ոչնչությունը, ուր մնաց թե առնետը կարողանար անել դա:

Առավոտյան արթնանալով՝ Հինգ Չիի առաջին գործն այն եղավ, որ նա գնաց ու կատու գնեց իր համար:

* * *

## ԱՌԱԿ ԵՐԵՔ ԱՐԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Հինգ Չի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա-Իլյինան)*

Մի անգամ զբոսանքից վերադառնալով՝ Հինգ Չին հանդիպեց իր երեք աշակերտներին, որոնք բուռն կերպով ինչ-որ բան էին քննարկում: Նրանց մոտենալով՝ իմաստունը հարցրեց.

— Ինչի՞ մասին եք դուք վիճում:

Աշակերտներն ասացին.

— Ուսուցի՛չ, մենք փորձում էինք պարզել, թե մարդու երեք ամենաասարսափելի արատները որոնք են:

— Եվ ի՞նչ եզրակացության հանգեցիք:

— Մենք որոշեցինք, որ ամենաասարսափելի արատները հետևյալներն են. լինել կույր, խուլ և համր,— պատասխանեց աշակերտներից մեկը:

— Դուք ասացիք ընդամենը կեսն այն բանի, ինչ պետք է ասեիք,— պատասխանեց Ձինգ Շին:

— Կե՞սը,— զարմացան աշակերտները:— Բայց չէ՞ որ մենք բոլոր երեք արատներն էլ թվարկեցինք:

— Այո՛, բայց դուք մոռացաք նշել, որ ավելի սարսափելի արատ չկա, քան ուրիշի դժբախտության նկատմամբ կույր հոգին, օգնության խնդրանքների նկատմամբ խուլ սիրտը և համր անտարբերությունը, որը հաշտվում է դրա հետ:

* * *

## ԱՌԱԿ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (Հինգ Շի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա–Իլյինան)*

Մի անգամ Ձինգ Շին իր աշակերտներից մեկի հետ նստած էր ոչ մեծ, բայց չափազանց գեղատեսիլ լճի ափին: Օդը հագեցած էր բնության նուրբ բուրմունքներով, քամի գրեթե չկար, և ջրամբարի հայելային մակերևույթն աներևակայելի հստակությամբ անդրադարձնում էր շրջակա ամեն ինչը: Բնության կատարելությունը, նրա բալանսավորվածությունն ու մաքրությունը ակամա մտքեր էին ծնում ներդաշնակության մասին: Այդ պատճառով էլ մի որոշ ժամանակ անց Ձինգ Շին դիմեց իր աշակերտին.

— Յանգ Լի, քո կարծիքով ե՞րբ կառաջանա լիակատար ներդաշնակություն մարդկային հարաբերություններում:

Պատանի և հետաքրքրասեր Յանգ Լին, որ հաճախ էր ուղեկցում ուսուցչին զբոսանքների ժամանակ, սկսեց մտորել: Որոշ ժամանակ անց բնության և լճի մեջ նրա արտացոլանքի նույնականությանը նայելով՝ նա ասաց.

— Ինձ թվում է, որ մարդկանց միջև հարաբերությունների ներդաշնակությունը կառաջանա այն ժամանակ, երբ բոլոր մարդիկ նույն կարծիքին կհանգեն, նույն ձևով կմտածեն, ասես մեկը մյուսի անդրադարձումը կդառնա: Այդ դեպքում ո՛չ տարաձայնություններ, ո՛չ էլ վեճեր չեն լինի,— երազկոտ ասաց աշակերտն ու տխրությամբ ավելացրեց,— բայց մի՞թե դա հնարավոր բան է:

— Ո՛չ,— մտածկոտ պատասխանեց Ձինգ Շին,— դա հնարավոր բան չէ և ոչ էլ պետք է, որ այդպես լինի: Այդ դեպքում ոչ թե ներդաշնակություն կառաջանա, այլ մարդու լիակատար դիմազրկում, նրա ներքին ես–ի, անհատականության կորուստ: Մարդիկ ոչ թե միմյանց անդրադարձումը, այլ, ավելի շուտ, միմյանց ստվերը կդառնան:

Փոքր–ինչ լռելով՝ իմաստունն ավելացրեց.

— Մարդկային փոխհարաբերություններում ներդաշնակությունը միայն այն ժամանակ հնարավոր կդառնա, երբ յուրաքանչյուր ոք կձգտի ոչ թե կարծիքների միասնականության կամ ուրիշներին ընդօրինակելու, այլ կձգտի հարգել սեփական անհատականությունն արտահայտելու ուրիշների իրավունքը:



* * *

## ԱՌԱԿ ՆԱՐՆՋԻ ՄԱՍԻՆ (Հինգ Շի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա–Իլյինան)*

Մի անգամ Ձինգ Շիի աշակերտներ Յանգ Լին և Ջժաո Ցզենը մոտեցան ուսուցչին և խնդրեցին քննել իրենց վեճը: Աշակերտները չէին կարողանում լուծել այն հարցը, թե զրույցի ընթացքում ինչպես է հարկավոր պատասխանել զրուցակցի հարցերին: Յանգ Լին ասաց.

— Ուսուցի՛չ, ես կարծում եմ, որ ավելի լավ է զրուցակցի հարցերին պատասխանել անհապաղ, իսկ հետո, եթե սխալ ես թույլ տվել, ուղղել սխալդ, քան թե զրուցակցին ստիպել չափազանց երկար սպասել պատասխանի:

Ի պատասխան նրա ասածի՝ Ջժաո Ցզին առարկեց.

— Ո՛չ, ընդհակառակը, հարկավոր է մանրակրկիտորեն կշռադատել քո պատասխանը, հաշվի առնել յուրաքանչյուր մանրուք և դետալ: Թող դրա համար որքան ասես ժամանակ պահանջվի, գլխավորն այն է, որ միանգամից ճիշտ պատասխանը տրվի:

Ի պատասխան՝ Ձինգ Շին մի հյութալի նարինջ վերցրեց ձեռքն ու առաջին աշակերտին դիմելով՝ ասաց.

— Եթե դու զրուցակցիդ նարնջի առաջին կեսը չմաքրած վիճակում տաս ուտելու և միայն դրանից հետո կեղևը մաքրելով՝ տաս երկրորդ կեսը, կարող է այնպես պատահել, որ զրուցակիցդ առաջին կեսի դառնությունը ճաշակելով՝ դեն կնետի երկրորդ կեսը:

Այնուհետև Ձինգ Շին դիմեց երկրորդ աշակերտին.

— Դո՛ւ, Ջժաո՛ Ցզի, իհարկե, զրուցակցիդ դառը նարնջով չես կերակրի: Ընդհակառակը, դու երկար ժամանակ ու հանգամանորեն կմաքրես այն՝ ջանադրաբար կեղևի բոլոր մանրագույն ջղերը առանձնացնելով պտղամսից: Բայց, վախենամ, որ քո զրուցակիցը կարող է հեռանալ՝ չսպասելով խոստացված հյուրասիրությանը:

— Ուրեմն ինչպե՞ս պետք է վարվենք,— միաբերան հարցրին աշակերտները:

— Ինչ–որ մեկին նարինջներ հյուրասիրելուց առաջ սովորեք այնպես մաքրել դրանք, որ զրուցակցին չկերակրեք ո՛չ կեղևի դառնությամբ, ո՛չ էլ զուր սպասումով,— պատասխանեց Ձինգ Շին,— դե, իսկ քանի դեռ չեք սովորել անել դա, ապա վստահե՛ք այդ գործընթացը նրան, ում պատրաստվում եք հյուրասիրել… Ու մի բան ևս,— մի փոքր հապաղելուց հետո ավելացրեց նա,— ավելի հաճախ նարինջներ մաքրե՛ք ինքներդ ձեզ համար:

* * *

## ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՍԸ (Հինգ Շի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա–Իլյինան)*

Մի անգամ Յանգ Լին Ուսուցչին խնդրեց պարզաբանել մարդկային համբերության բնույթը և այն, թե առաքինի այրն ինչպես պետք է վարվի մարդկային էության այդ դրսևորման հետ: Աշակերտի հարցը լսելով՝ Հինգ Շին դատարկ մի թաս վերցրեց ու դրեց աշակերտի ծնկներին՝ միաժամանակ ջրով լի կուժը նրա ձեռքը տալով: Նա աշակերտին նախ հրահանգեց փակել աչքերն ու աստիճանաբար ջրով լցնել թասը, ապա ասաց նրան.

— Ուրիշ մարդու համբերությունը փորձելիս դու կուրորեն լցնում ես նրա թասը, որն, այնուհանդերձ, քո ծնկների վրա է գտնվում: Այդ պատճառով էլ դու չգիտես, թե այն երբ կլցվի, և ջուրը քեզ վրա թափելու ռիսկին ես ենթարկում քեզ:

Շարունակելով դանդաղորեն լցնել թասը՝ աշակերտն ասաց.

— Նշանակում է՝ առաքինի այրը չպե՞տք է լցնի ուրիշի համբերության թասը:

— Ոչ միայն դա,— պատասխանեց Հինգ Շին,— քո իսկ սեփական ծնկները պաշտպանելն առանձնապես մեծ առաքինություն ու արժանիք չէ:

— Ուրեմն էլ ի՞նչ պետք է անի նա,— տարակուսանքով հարցրեց աշակերտը:

Հինգ Շին նրա ծնկների վրայից վերցրեց ջրով լցված թասն ու նրա պարունակությունը կժի մեջ դատարկելով՝ ասաց.

— Առաքինի այրը պետք է նաև հետևի այն բանին, որ իր իսկ թասը, որը դիմացինի ծնկներին է դրված, երբեք չլցվի:

* * *

## ՈՒՍՈՒՑՉԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ (Հինգ Շի)

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա–Իլյինան)*

Մի անգամ աշակերտները Հինգ Շիին հարցրին, թե որն է նրա՝ որպես Ուսուցչի գլխավոր խնդիրը:

Իմաստունը ժպտալով ասաց.

— Վաղը դուք կիմանաք այդ մասին:

Հաջորդ օրը աշակերտները հավաքվեցին, որպեսզի միասին ժամանակ անցկացնեն լեռան ստորոտին, որին տեղացիները Անմահ լեռ, Սյան Յուէ էին կոչում: Վաղ առավոտյան աշակերտները հավաքեցին իրերը, որոնք կարող էին նրանց հարկավոր լինել ճանապարհին և ուղևորվեցին դեպի Սյան Յուէ լեռան ստորոտը, որտեղ նրանք նախկինում չէին եղել:

Ճաշի ժամին, հոգնած ու քաղցած, նրանք մի գեղատեսիլ բլուրի հասան և հանգստանալու համար դադար տալով՝ որոշեցին բրինձ ու աղի վարունգ ճաշակել, որոնք իր հետ վերցրել էր Ուսուցիչը: Հարկ է նշել, որ իմաստունը բանջարեղենին առատորեն աղ էր լցրել, այդ պատճառով էլ որոշ ժամանակ անց նրանք ծարավեցին: Բայց, հակառակի պես, պարզվեց, որ իրենց հետ վերցրած ամբողջ ջուրն արդեն վերջացել էր: Այդժամ աշակերտները վեր կացան ու սկսեցին շուրջը նայել՝ քաղցրահամ աղբյուր որոնելով:



Միայն Հինգ Շին վեր չկացավ տեղից ու չմասնակցեց որոնումներին: Այդպես էլ աղբյուր չգտնելով՝ աշակերտները որոշեցին հետ վերադառնալ, բայց այդ պահին իմաստունը ոտքի ելավ ու նրանց մոտենալով՝ ասաց.

— Ձեր փնտրած աղբյուրն ա՛յ այն բլուրից այն կողմ է գտնվում:

Աշակերտներն ուրախությամբ շտապեցին դեպի այդ բլուրը, գտան աղբյուրը և իրենց ծարավը հագեցնելով՝ վերադարձան Ուսուցչի մոտ՝ նրա համար ևս ջուր բերելով իրենց հետ: Հինգ Շին հրաժարվեց ջրից՝ ցույց տալով իր ոտքերի մոտ գտնվող անոթը: Այդ անոթը գործնականում լիքն էր ջրով:

— Ուսուցի՛չ, բայց ինչո՞ւ դու միանգամից մեզ ջուր չտվեցիր խմելու, եթե ջուր կար քեզ մոտ,— պնդեցին աշակերտները:

— Ես իմ գործն էի կատարում,— պատասխանեց իմաստունը:— Սկզբից ես ձեզ մոտ ծարավ արթնացրի, որն ստիպեց ձեզ աղբյուր որոնել, ճիշտ այնպես, ինչպես ես ձեզ մոտ գիտելիքների ծարավ եմ արթնացնում: Այնուհետև, երբ դուք արդեն հուսահատվեցիք, ես ձեզ ցույց տվեցի, թե որ կողմում է գտնվում աղբյուրը՝ այդպիսով աջակցություն ցուցաբերելով ձեզ: Դե, իսկ ինձ հետ ավելի շատ ջուր վերցնելով՝ ես ձեզ օրինակ ցույց տվեցի այն բանի, որ ցանկալին չափազանց մոտ կարող է լինել, հարկավոր է ընդամենը նախապես հոգալ այդ մասին՝ թույլ չտալով, որ պատահականությունը կամ մոռացկոտությունն ազդեն ձեր ծրագրերի վրա...

— Նշանակում է Ուսուցչի գլխավոր խնդիրն այն է, որ ծարավ առաջացնի, աջակցություն ցուցաբերել տա և ճիշտ օրինա՞կ ցույց տա,— հարցրին աշակերտները:

— Ոչ,— ասաց Հինգ Շին,— Ուսուցչի գլխավոր խնդիրն այն է, որ աշակերտի մեջ մարդկայնություն ու բարություն դաստիարակի,— նա ժպտաց ու շարունակեց,— և ինձ համար ձեր բերած ջուրն ինձ հուշում է, որ ես իմ գլխավոր գործն առայժմ ճիշտ եմ կատարում:

* * *

## ԱՍՏԾՈՒՆ ՀԱՆԳԻՍՏ ԹՈՂ

*(ներկայացնում է Էնթոնի դե Մելլոն)*

Ամեն անգամ, երբ քարոզիչը հիշատակում էր Աստծուն, Վարպետն ասում էր.

— Հանգի՛ստ թող Աստծուն:

Մի անգամ քարոզչի համբերությունը սպառվեց:

— Ես միշտ էլ կասկածում էի, որ դու աթեիստ ես,— բղավեց նա,— ես ԻՆՉՈ՞Ւ պետք է Աստծուն հանգիստ թողնեմ: ԻՆՉՈ՞Ւ:

Վարպետը համբերատար կերպով մի առակ պատմեց նրան.

— Քահանան եկել էր մի այրու մոտ, որպեսզի մխիթարի նրան ամուսնու մահից հետո:
— Տես, թե ինչ արեց քո Աստվածը,— բղավեց կինը:
— Մահը չի ուրախացնում Աստծուն, դո՛ւստր իմ: Նա սգում է քեզ հետ միասին:
— Այդ դեպքում Նա ինչո՞ւ է թույլ տալիս, որ այս բանը լինի,— խստորեն հարցրեց կինը:
— Մենք չգիտենք դա, քանզի Աստված Գաղտնիք է:
— Այդ դեպքում որտեղի՞ց գիտես, որ մահը չի ուրախացնում Նրան,— շարունակեց ողբալ կինը:
— Դե... կարելի է այդպես... ենթադրել:
— ՍՍԿՎԻ՛Ր,— գոռաց այրին,— հանգի՛ստ թող Աստծուն:

* * *

## ԷԹԻԿԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՑ

*(ծագումն անհայտ է)*

Դուք ճանաչում եք մի հղի կնոջ, որն արդեն ութ երեխա ունի: Նրանցից երկուսը կույր են, երեքը՝ խուլ, մեկը՝ մտավոր թերզարգացած, իսկ ինքը՝ կինը, հիվանդ է սիֆիլիսով: Դուք նրան խորհուրդ կտա՞ք արդյոք աբորտ անել:

Բայց այդ հարցին պատասխանելուց առաջ նախ պատասխանե՛ք այս մյուս հարցին:
Համաշխարհային առաջնորդի ընտրություններ են անցկացվում, և ձեր ձայնը վճռորոշ նշանակություն ունի:

Թեկնածուների կարճ բնութագրերը.

Ա. Կապված է քաղաքական գործիչների հետ, որոնց բռնացրել են խարդախության մեջ, մշտապես խորհրդակցում է աստղագուշակի հետ, երկու սիրուհի ունի, ծխամորճ է ծխում և օրական 8 –10 մարտինի է խմում:

Բ. Երկու անգամ հեռացրել են ծառայությունից. սովորություն ունի քնել մինչև կեսօր, ինստիտուտում բռնացրել են օփիում օգտագործելիս, ամեն երեկո մեկ շիշ վիսկի է խմում:

Գ. Պատերազմի հերոս, բուսակեր, հազվադեպ գարեջուր է խմում, չի ծխում, ամուսնական որևէ կապ չի հաստատել:

Ո՞ւմ եք դուք ընտրում: Պատասխանեցի՞ք:



Այդ դեպքում ևս երկու խոսք թեկնածուների մասին:
Ա. Ուինսթոն Չերչիլ
Բ. Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ
Գ. Ադոլֆ Հիտլեր

Այ հիմա դուք պատրաստ եք պատասխանել առաջին հարցին: Եթե դուք խորհուրդ տվեցիք աբորտ անել, ապա դուք հենց նոր սպանեցիք Լյուդվիգ վան Բեթհովենին:

* * *

## ԳՏԻ՛Ր ՊԱՏՃԱՌԸ

*(ծագումն անհայտ է)*

— Դու ինչո՞ւ ես անընդհատ աղոթում:
— Որովհետև աղոթքն ինձ ազատում է ծանրությունից:
— Այո՛, սովորաբար դա հենց այդպես էլ կատարվում է:
— Իսկ դրանում ի՞նչն է վատ:
— Այն, որ դու շեղվում ես գլխավորից ու չես տեսնում այն, թե ով է այդ ծանրությունը գցում քեզ վրա:

* * *

***«Ապրելու Արվեստը» շարքի 5–րդ հատորյակում («Լավ է») «Գերված առյուծը» վերնագրով մի առակ կարող եք գտնել: Դա իմ ամենասիրած առակներից մեկն է: Ես այնքան շատ հավանեցի այդ առակը, որ որոշեցի շարունակություն հորինել այդ պատմության համար և այն վերնագրել «Ցանկապատի կառուցվածքը»: Բայց քանի որ շարունակությունը կարող է հասկանալի դառնալ միայն սկիզբը ընթերցելուց հետո, ապա ստորև նորից եմ զետեղում «Գերված առյուծը» պատմությունը, որից հետո կարող եք ընթերցել իմ կողմից հորինված շարունակությունը՝ «Ցանկապատի կառուցվածքը» վերնագրով:***

* * *

## ԳԵՐՎԱԾ ԱՌՅՈՒԾԸ

*(ծագումն անհայտ է)*

Մի առյուծ գերի էր ընկել, և նրան համակենտրոնացման ճամբար նետեցին: Ի զարմանս իրեն՝ նա այնտեղ բազմաթիվ ուրիշ առյուծներ տեսավ, որոնք տարիներով տառապում էին տանջարաններում: Ոմանք այնտեղի մշտական բնակիչներ էին, քանի որ այնտեղ էին ծնվել: Մի որոշ ժամանակ անց նա ծանոթա-

ցավ առյուծների ճամբարի սոցիալական պայմանների հետ: Առյուծները խմբավորումների էին բաժանվել:

Մի խումբը հասարակական գործիչներից էր կազմված, երկրորդը գործարարներին էր միավորում, երրորդը՝ մշակույթի գործիչներին, քանի որ այդ խումբն իր առջև նպատակ էր դրել մանրակրկիտորեն հետևել ավանդույթներին, սովորույթներին, այն ժամանակվա մշակույթին, երբ առյուծներն ազատ էին: Որոշ խմբավորումներ կրոնական էին, նրանք ամենից առաջ հավաքվում էին այն բանի համար, որ սրտառուչ երգեր երգեն ջունգլիների ապագայի մասին, երբ ոչ մի տեղ այլևս ցանկապատներ չեն լինի: Այլ խմբերում բնածին գրականագետներ ու արտիստներ էին ընդգրկված: Նաև հեղափոխական խմբավորումներ կային, որոնք հավաքվում էին, որպեսզի քննարկեն զավթիչների կամ այլ խմբավորումների դեմ ապստամբությունների մանրամասները: Այստեղ ու այնտեղ խռովություններ էին բռնկվում, մի խմբավորումը ոչնչացնում էր մյուսին. երբեմն բոլոր պահապանները զոհվում էին, և նրանց փոխարինելու էին գալիս ուրիշները:

Իր շուրջը նայելով՝ նորեկը մի առյուծ տեսավ, որն ամբողջությամբ մտածումներին տրված՝ նստած էր: Դա միայնակ առյուծ էր, նա ոչ մի խմբավորման չէր պատկանում և մնացածներից հեռու էր պահում իրեն: Նրա պահվածքը բոլորի հիացմունքն էր հարուցում, բայց, միևնույն ժամանակ նաև թշնամանքը, քանի որ նրա ներկայությունը վախ և սեփական ուժերի նկատմամբ կասկածներ էր արթնացնում:

Առյուծը նորեկին ասաց.

— Ոչ մի խմբավորման մեջ մի՛ մտիր: Այդ ապուշներն ինչով ասես զբաղվում են, բացի արժեքավոր գործից:

— Դու ի՞նչը նկատի ունես,— հարցրեց նորեկը:

— Ես նկատի ունեմ ցանկապատի կառուցվածքն ուսումնասիրելը:

**Ուրիշ ոչ մի բան, բացարձակապես ոչ մի բան որևէ նշանակություն չունի:**

* * *

## ՑԱՆԿԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

*(Գերված առյուծը 2)*

Միայնակ առյուծի ասածն անչափ մեծ տպավորություն գործեց նորեկի վրա: Մի որոշ ժամանակ մտորելուց հետո նա միայնակ առյուծին հարցրեց.

— Որքան հասկացա, դու վաղուց ես ուսումնասիրում ցանկապատի կառուցվածքը: Եվ ի՞նչ եզրակացության ես դու եկել քո ուսումնասիրությունների արդյունքում:

— Ես այն եզրակացությանն եմ հանգել,— պատասխանեց միայնակ առյուծը,— որ բոլոր մեծ ցանկապատները մեր ներսում են:



* * *

Մարդուց կարելի է խլել ամեն ինչ, բացի մի բանից՝ մարդու վերջին ազատությունից. ընտրել սեփական վերաբերմունքը ցանկացած հանգամանքների նկատմամբ. ընտրել սեփական ուղին:

*Վիկտոր Ֆրանկլ*

* * *

## ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՍԵՐԸ: ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*(ներկայացնում է Ալեքսեյ Օնեգինը)*

Մի անգամ մի մարդ եկավ Սողոմոնի մոտ այն պահին, երբ վերջինս զվարճանում էր որսի բազեի հետ և ասաց.

— Թագավո՛ր, օգնի՛ր ինձ, ես տրտմության մեջ եմ: Երեկ ես ազատեցի իմ ստրուկներին, իսկ այսօր նրանք քարեր նետեցին իմ տան վրա:

Թագավորն ուշադրությամբ նայեց նրան, ապա հարցրեց.

— Դու ինչո՞ւ ազատեցիր քո ստրուկներին:

Խորհրդի համար եկածն այսպես պատասխանեց.

— Ինձ հարուստ ժառանգություն է բաժին հասել, և ես որոշեցի ազատել ստրուկներից նրանց, ում հետ ես անցկացրել եմ իմ մանկությունը: Ես մտածում էի երջանիկ դարձնել նրանց:

Այդժամ Սողոմոնը հարցրեց.

— Իսկ քեզ ո՞վ է ասել, որ ազատությունը երջանկությունն է, իսկ երջանկությունը ազատությունն է:

Նաև ասաց նա.

— Նայի՛ր այս գիշատիչ բազեին: Թեև նրան վանդակում են պահում, որսի ժամանակ նա տեր ու տիրակալ է: Եթե նա չցանկանա որս անել, ապա ոչ ոք չի կարող ստիպել նրան անել դա և, միևնույնն է, երեկոյան նա իր ճագարը կստանա: Նա կարող է ազատորեն թռչել հեռանալ, և ոչ ոք չի կարող հետ պահել նրան: Դա նշանակում է, որ նա ինձ հետ է, քանի որ ինքն է ցանկանում դա: Նրա համար ազատությունը երջանկություն չէ, նրա համար ազատությունը կյանք է:

Եվ ավելացրեց նա.

— Ուրիշ թռչուն էլ կա՝ հավը: Օր օրի նա շրջում է բակում ու ձվեր է ածում: Եթե նրան բաց թողնես տափաստանում, ապա ազատությունից կխենթանա, իսկ մեկ օր անց կսատկի: Նրա համար ազատությունը երջանկություն չէ, նրա համար ազատությունը մահ է:

Հարցրեց այդժամ հուսահատ խնդրատուն.

— Այդ դեպքում ո՞րն է իմաստությունը:

Եվ պատասխանեց Սողոմոնը.

— Տիրոջ իմաստությունն այն է, որ նա բազեներին տարբերի հավերից: Առաջիններին դու կկործանես անազատությամբ, երկրորդներին՝ ազատություն տալով:

Եվ կրկին ասաց նա.

— Բազեներ քիչ կան, հավեր՝ շատ, բայց հարկավոր է պահպանել և՛ նրանց, և՛ մյուսներին:

Մարդը պատասխանեց.

— Ես հասկացա քեզ, ո՛վ թագավոր:

— Այժմ գնա՛ և այսուհետև կարողացի՛ր տարբերել մեկը մյուսից:

Խնդրատուն մինչև գետին խոնարհում կատարեց ու մտորումների մեջ ընկած՝ դուրս եկավ:

* * *

## ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՍԵՐԸ: ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*(ներկայացնում է Ալեքսեյ Օնեգինը)*

Մի անգամ մի մարդ եկավ Սողոմոնի մոտ և նրան ասաց.

— Թագավո՛ր, օգնի՛ր ինձ: Ամեն անգամ, երբ ես ստիպված եմ լինում ընտրություն կատարել, ես չեմ կարողանում հանգիստ քնել՝ պատեպատ եմ խփվում, տառապում ու մտածում եմ, թե արդյոք հենց այն արեցի, ինչ պետք էր անել: Ի՞նչ անեմ ես:

Եվ պատասխանեց իմաստուն թագավորը.

— Ընտրություն գոյություն չունի:

Նաև հարցրեց նա.

— Դու կնետվեի՞ր գետը, եթե խեղդվող երեխա տեսնեիր:

— Իհարկե, թագավո՛ր,— պատասխանեց խնդրատուն:

Այժմ Սողոմոնն ասաց.

— Եվ երեկ, և այսօր, և վա՞ղը:

— Այո՛,— եղավ պատասխանը:

Եվ ասաց Սողոմոնը.

— Այ, տեսնո՞ւմ ես, ընտրություն գոյություն չունի: Ինչի՞ միջև ընտրություն կատարել, եթե դու նախապես՝ դեռևս գործողությունը կատարելուց առաջ, գիտես, թե ինչպես ես վարվելու: Ցանկացած իրադարձություն մանրամասնորեն պատկերացնելով՝ դու միանգամից կիմանաս՝ ինչ անես: Ամեն անգամ դու կընտրես լավագույնը քեզ համար և միատեսակ հանգամանքներում դու միշտ միատեսակ կվարվես՝ և՛ երեկ, և՛ այսօր, և՛ վաղը:

Ու նաև ասաց Սողոմոնը.

— Միակ տեղը, որում մենք ընտրություն կարող ենք կատարել, մեր սիրտն է: Փոխի՛ր քեզ, և այդ դեպքում այն, ինչը դու առանց մտածելու կանեիր երեկ, վաղը քեզ արդեն լավագույն տարբերակ չի թվա: Միմիայն այդ դեպքում դու կկարողանաս այլ կերպ վարվել: Այնպես որ, գնա՛ խաղաղությամբ և իմացի՛ր, որ ամենը, ինչ էլ դու անելու լինես, հնարավոր լավագույն գործողությունը կլինի քեզ համար:

Խնդրատուն մինչև գետին խոնարհում կատարեց ու դուրս եկավ և դրանից հետո հանգիստ քնում էր:



* * *

## ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՍԵՐԸ: ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*(ներկայացնում է Ալեքսեյ Օնեգինը)*

Մի մարդ եկավ Սողոմոնի մոտ այն պահին, երբ վերջինս հանգստանում էր այգում, և ասաց.

— Թագավո՛ր, ես շատ եմ տառապում, օգնի՛ր ինձ: Իմ տառապանքները նրանից են, որ ես շատ սկզբունքային եմ:

Թագավորը հետաքրքրությամբ նայեց նրան և հարցրեց.

— Դու ի՞նչն ես սկզբունք անվանում:

— Իմ սկզբունքներն այն առաքինություններն են, որոնցից ես ետ չեմ կանգնում: Ես երբեք չեմ ստում ու երեսպաշտություն չեմ անում, այդ պատճառով էլ կրքերի մեր այս աշխարհում չեմ կարողանում ճանաչման հասնել:

Այժմ Սողոմոնը հարցրեց.

— Ասում ես՝ երբեք ետ չե՞ս կանգնում: Բայց դու արդեն ստեցիր ինձ, հենց հիմա, հենց այստեղ: Մի՞թե հնարավոր է ինչ–որ բան չանելու երդում տալ, երբ ստույգ հայտնի է, որ աշխարհում ամեն ինչ իր սահմանն ունի:

Նաև ասաց թագավորը.

— Ես տեսնում եմ, որ դու կստես, եթե քեզ կտտանքների ենթարկեն, որովհետև ավելի ամուր մարդիկ էլ են նահանջել ցավի առջև: Եվ ես տեսնում եմ, որ դու երեսպաշտություն կանես, եթե դրանից կախված լինի հարյուրավոր երեխաների կյանքը, քանզի քո աչքերի խորքում խղճահարություն ու տառապանք կա թաքնված:

Ու նաև հարցրեց Սողոմոնը.

— Դու ինչպե՞ս կարող ես ստել թագավորին և դրանից հետո ճշմարտության ջատագով կոչվել:

Խնդրատուն հայացքը ներքև հառեց, բայց պատասխանեց հաստատուն կերպով.

— Եվ ի՞նչ անեմ ես, թագավո՛ր, որպեսզի քո աչքին չնվաստանամ:

Սողոմոնը ի պատասխան՝ հարցրեց նրան.

— Մի՞թե չարիքը, որ հանուն սկզբունքի է գործվում, պակաս չափով է նախատինքի արժանի: Ո՛չ, և նույնիսկ հակառակը, քանզի այն նախապես մտածված, ծրագրավորված էր ու սառը սրտով էր գործվել:

Ու նաև ասաց Սողոմոնը.

— Մի՞թե բարիքը, որ հանուն սկզբունքի է գործվում, ավելի մեծ չափով է հավանության արժանի: Ո՛չ, և նույնիսկ հակառակը, որովհետև այն գործվել էր սովորության համաձայն, հանգամանքների բերումով, սառը սրտով: Դե, ուրեմն, դե՛ն նետիր սկզբունքներդ, քանզի դրանցից օգուտ չի լինի, այլ միայն վնաս կտան դրանք: Ամեն անգամ նորովի՛ վարվիր և արա՛ այն, ինչ կթելադրեն քո սիրտն ու քո բանականությունը: Միայն այդ ժամանակ դու կկարողանաս բարիք արարել բաց աչքերով և միայն այդ դեպքում դու կկարողանաս առաքինի կոչվել: Գնա՛ և նոր կյա՛նք սկսիր:

Խնդրատուն խոնարհվեց մինչև գետին ու գնաց լուսավորված:

* * *

## ՃԻՇՏ ՃԱՆԱՊԱՐՀԸ

*(ներկայացնում է Օլգա Բեգմիրնայան)*

Ծերունին իր աշակերտի հետ գնում էր անտառով: Շուտով նրանք խոչընդոտի հանդիպեցին՝ սրընթաց գետակ, որի վրայով կամրջակ էր գցված: Իսկ կամրջակի կողքին ծուռումուռ բնով հին ծառ էր ընկած:

— Ուսուցի՛չ,— պատկառանքով ծերունուն դիմեց երիտասարդը,— ես ո՞ր ճանապարհն ընտրեմ՝ հե՞շտը, թե՞ դժվարը:

Ծերունին վեհորեն պատասխանեց.

— Երբ ճանաչում ես Ուսմունքը, միայն դժվար ճանապարհն է պտուղներ տալիս:

Պատանին ծանր հոգոց հանեց ու բարձրացավ լպրծուն ծառաբնի վրա:

Ծերունին հետաքրքրությամբ նայում էր, թե երիտասարդն ինչպես է անցնում մյուս ափը՝ փտած ճյուղերը կոտրատելով ու յուրաքանչյուր վայրկյան ընկնելու վտանգին ենթարկելով իրեն: Երբ պատանին վերջապես մյուս ափ դուրս եկավ, ծերունին հանգիստ քայլելով անցավ կամրջակի վրայով:

— Ո՞նց թե,— վրդովվեց աշակերտը,— բա Ուսմունքն ուր մնաց:

— Եվ միայն վարպետության հասնելով ես գիտակցում, որ միայն հեշտ ճանապարհն է ճշմարտության հանգեցնում,— խորամանկորեն քմծիծաղ տվեց ծերունին:

* * *

## ՍԻՐՈ ՉԱՓԸ

*(արևելյան առակ)*

Լեռնային արահետի վրա երկու իշխան հանդիպեցին: Եվ քանի որ նրանք ընկերներ էին ու վաղուց չէին տեսնվել, որոշեցին միասին ճաշել: Ծառաների հետ միասին նրանք դուրս եկան մի բաց տեղանք ու տեղավորվեցին: Լեռներ, աղբյուրներ, խորոված, գինի... լավ էր: Եվ նրանց մեջ սիրո մասին տղամարդկային խոսակցություն սկսվեց: Խոսեցին այն մասին, թե իրենցից ով է ընդունակ ավելի մեծ սեր առաջացնել իր հանդեպ՝ այն ենթատեքստով, թե իրենցից ով է ավելի շատ արժանի սիրո: Այդժամ իշխաններից մեկը կանչեց իր ծառային և ասաց.

— Դու ինձ սիրո՞ւմ ես:

— Իհարկե, սիրում եմ, տե՛ր:

— Ուժգի՞ն ես սիրում:

— Իհարկե, տե՛ր:

— Այդ դեպքում հանուն ինձ նետվի՛ր այս անդունդը:



— Ուրախությամբ, տե՛ր:

Ծառան վազեց, նետվեց ներքև ու ջարդուխուրդ եղավ:

Երկրորդ իշխանը մոտ կանչեց իր հավատարիմ ծառային և ասաց.

— Դու ինձ սիրո՞ւմ ես:

— Իհարկե, սիրում եմ, տե՛ր:

— Շա՞տ ես սիրում:

— Իհարկե, տե՛ր:

— Այդ դեպքում հանուն ինձ նետվի՛ր այս անդունդը:

Ծառան թափավազք հավաքեց, բայց անդունդի ամենաեզրին կանգ առավ:

— Ինչպե՞ս թե, դու ինձ խայտառակեցիր, մի՞թե ես հոգ չեմ տարել քո, քո ընտանիքի մասին, մի՞թե ես արժանի չեմ քո երախտագիտությանը: Դու ստեցիր, դու ինձ չե՞ս սիրում:

— Սիրում եմ, տե՛ր: Բայց ես քեզ սիրում եմ մինչև այստեղ:

Եվ նա մատնացույց արեց անդունդի եզրը:

* * *

## ԱՇԱԿԵՐՏԵԼՈՒ ԻՄԱՍՏԸ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

Վարպետին հարցրին, թե նա ինչ է անում իր աշակերտների համար:

— Իսկ ի՞նչ է անում քանդակագործը վագր քանդակելու համար: Նա մարմարի մի մեծ բեկոր է վերցնում և նրանից հեռացնում է այն ամենը, ինչ վագրի նման չէ:

Հետագայում նա աշակերտներին բացատրում էր.

— Իմ խնդիրն է ձեզանից հեռացնել այն ամենը, ինչը ձեր էությունը չէ՝ բոլոր մտքերը, զգացմունքները, վարքի ստերեոտիպերը, ձեր էության վրա բռնանալը, որոնք դուք ձեր անցյալից եք ժառանգել:

* * *

*(ծագումն անհայտ է)*

Մի վանական ծերունուն ասաց.

— Միշտ չէ, որ հեշտությամբ կարողանում ես ըմբռնել, թե որն է քո պարտքը:

— Ընդհակառակը, շատ հեշտ է,— պատասխանեց ծերունին:— Դա այն է, ինչը դու ամենից քիչ ես ցանկանում անել:

* * *

## ԵՐԿՈՒ ՁԿՆՈՐՍ

*(ճապոնական առակ)*

Երկու ձկնորս, ափին նստած, կարթով ձուկ էին որսում: Նրանցից մեկը ձուկը ձկան ետևից դուրս է քաշում ջրից, իսկ մյուսը ոչ մի ձուկ չի կարողանում որսալ: Եվ ահա, այն ձկնորսը, որի մոտ որսը չի ստացվում, հուսահատությամբ հարցնում է մյուսին.

— Ինչո՞ւ քեզ մոտ ստացվում է, իսկ ինձ մոտ՝ ոչ: Չէ՞ որ մենք երկուսս էլ նույն տեղում ենք նստած, նույնպիսի կարթեր ու խայծ ենք օգտագործում: Ինչո՞ւմն է բանը:

Երկրորդը նրան պատասխանում է.

— Ամբողջ գաղտնիքն այն է, որ դու ՇԱՏ ԵՍ ՑԱՆԿԱՆՈՒՄ ձուկ որսալ: Այդ պատճառով էլ մեկ ժամանակից շուտ ես կարթը քաշում քեզ, մեկ ուշացնում ես քաշելը, դրա համար էլ չի կպչում... Իսկ ես պարզապես որսում եմ:

* * *

*(ծագումն անհայտ է)*

Շաոլին վանքի Ու–շույի ակադեմիա տարիքն առած մի չինուհի ժամանեց, որն ամբողջ կյանքում ապրել էր Ամերիկայում և տարեց հասակում որոշել էր հասու դառնալ «ներքին արվեստին» և չան («չանը» «ձենի» չինական տառադարձությունն է— Դ.Ա.) բուդդայականության իմաստության բացահայտումներին:

Առաջին բանը, ինչին նա բախվեց, զարմանալիության աստիճանի պարզ կենսապայմաններն էին, որոնք չէին համապատասխանում այն հարմարավետությանը, ինչին նա սովոր էր. բազմահարկ քնատեղերով սենյակներ, ջեռուցման բացակայություն նույնիսկ ձմռանը, բարքերի պարզություն և անհնասոսկալին. մի քանի հոգու համար նախատեսված զուգարան՝ առաստաղից կախված աղոտ լամպով: Բայց, ինչպես պարզվեց, դա դեռևս վատագույնը չէր: Մի քանի օրից այրվեց նաև այդ աղոտ լամպը, և հսկա քարե շինությունը թաղվեց սառը խավարի մեջ: Ամաչելով լամպը փոխելու խնդրանքով անձամբ դիմել վանահորը՝ նա ավագ աշակերտներից մեկին խնդրեց այդ մասին հայտնել Ուսուցչին:

Աշակերտը վազեց վանահոր մոտ.

— Ուսուցի՛չ, մեր հյուրը խնդրում է նոր լամպ կախել, այնտեղ ոչինչ չի երևում:

— Բայց ի՞նչ կա այնտեղ նայելու,— տարակուսանքով ուսերը թոթվեց Ուսուցիչը:— Նա, ինչպես միշտ, փորձում է տեսնել ոչ այն, ինչի համար եկել է:

Աշակերտը, քահ–քահ ծիծաղելով, մեծ լուսավորման հասավ:

Ամերիկացի չինուհին հենց նույն օրը լքեց վանքը:



* * *

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒՄ

*(ծագումն անհայտ է)*

Մի իմաստուն գնում էր ճանապարհով, հիանում էր աշխարհի գեղեցկություններով ու ուրախանում կյանքով: Հանկարծ նա անտանելի ծանր բեռան տակ կռացած մի դժբախտ մարդու տեսավ:

— Դու ինչո՞ւ ես այդպիսի տառապանքների դատապարտում քեզ,— հարցրեց իմաստունը:

— Ես տառապում եմ իմ զավակների ու թոռների երջանկության համար,— պատասխանեց մարդը:— Իմ պապի հայրն ամբողջ կյանքում տառապել է պապիս երջանկության համար, պապս տառապել է իմ հոր երջանկության համար, հայրս տառապել է իմ երջանկության համար, և ես էլ իմ ամբողջ կյանքում տառապելու եմ, միայն թե իմ երեխաներն ու թոռները երջանիկ լինեն:

— Իսկ ձեր գերդաստանում գոնե մեկ հոգի երջանիկ եղե՞լ է,— հարցրեց իմաստունը:

— Ո՛չ, բայց իմ երեխաներն ու թոռներն անպայման երջանիկ կլինեն,— պատասխանեց դժբախտ մարդը:

— Անգրագետը չի կարող կարդալ սովորեցնել, իսկ խլուրդը չի կարող արծիվ դաստիարակել,— ասաց իմաստունը:— Սովորի՛ր սկզբից ինքդ երջանիկ լինել, այդ ժամանակ կհասկանաս նաև, թե երեխաներիդ ու թոռներիդ ինչպես երջանիկ դարձնես:

* * *

*(ծագումն անհայտ է)*

Առաջինն ասաց. «Երջանկությունն այն է, երբ շատ աշխատանք ու շատ սեր կա. այդժամ աշխատանքը մղում է դեպի սերը, իսկ սերն աշխատանք է ծնում»:

Երկրորդն ասաց. «Ստից բաներ են. երջանկությունն այն է, երբ չկան ո՛չ դասեր, ո՛չ տնային հանձնարարություններ, ո՛չ աշխատանք, ո՛չ արձակուրդ, այլ կան միայն գարունը, ամառը, ձմեռը և աշունը, որոնք կարելի է անընդհատ նկարել ներկերով, վրձիններով, փորագրիչներով, փետուրով՝ գիշեր ու զոր և առանց հանգստանալու»:

Երրորդն ասաց. «Երջանկությունն այն է, երբ կարելի է լիքը–լիքը գաղափարներ հորինել և դրանք տարածել շուրջբոլորը՝ չհոգալով այն մասին, որ դրանք կարող են չիրականանալ»:

Չորրորդն ասաց. «Երջանկությունն այն է, երբ փրկում ես, օգնում ես, կենաց–մահու կռիվ ես տալիս հանուն ճշմարիտ գործի, պաշտպանում ես և նվերներ ես անում»:

Եվ միայն հինգերորդն էր լռում: Քանի որ նա վախենում էր խոստովանել, որ

իր երջանկությունն էր խժռել այն ամենը, ինչ ստեղծում ու ձեռք են բերում մնացած չորսը:

Մարդի՛կ, հիշե՛ք. եթե ձեր կյանքում ինչ–որ բան չի ստացվում, ապա դա նշանակում է, որ ձեր կողքին կամ ձեր ներսում հինգերորդ է հայտնվել:

* * *

## ՋԵԲՐԱՆ ԽԱԼԻԼ ՋԵԲՐԱՆ «ՄԱՐԳԱՐԵՆ»

*(հատվածներ էսսեից)*

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Այնուհետև հարցրեց հողագործը.

— Ասա՛ մեզ աշխատանքի մասին:

Եվ ի պատասխան՝ նա ասաց.

— Դուք աշխատում եք, որպեսզի չկտրվեք Երկրից ու նրա Հոգուց:

Քանզի անբան լինել նշանակում է օտար դառնալ տարվա եղանակներին և դուրս գալ կյանքի երթից, որ իր ամբողջ վեհությամբ և հպարտ խոնարհությամբ ընթանում է դեպի անսահմանություն:

Երբ դուք աշխատում եք, դուք ֆլեյտա եք, որի սրտում ժամանակի շշունջը երաժշտության է վերածվում:

Ձեզանից ո՞վ կցանկանար համր ու անմռունչ եղեգն դառնալ, երբ շուրջն ամեն ինչ երգում է ներդաշնակության մեջ:

Ձեզ միշտ ասել են, որ աշխատանքն անեծք է և աշխատանքը դժբախտություն է:

Իսկ ես ասում եմ ձեզ. երբ դուք աշխատում եք, դուք կատարում եք Երկրի ամենավաղնջական երազանքի մի մասը,

Որ նախանշվել է ձեզ համար այն ժամանակներում, երբ այդ երազանքը ծնունդ է առել,

Եվ աշխատելով՝ դուք իսկապես սիրում եք Կյանքը:

Իսկ սիրել Կյանքը աշխատանքի միջոցով նշանակում է մոտենալ Կյանքի խորագույն գաղտնիքին:

Բայց եթե ձեր տառապանքներում դուք դժբախտություն եք Ծնունդը կոչում և մարմնի մասին հոգալը՝ անեծք, որը գրված է ձեր ճակատներին,

Ապա ես կպատասխանեմ. ձեր ճակատներին քրտինքից բացի ուրիշ ոչ մի բան չի կարող ջնջել նախանշվածը:

Նաև ասել են ձեզ, իբր Կյանքը խավար է, և դուք ձեր հոգնածության մեջ կրկնում եք այն, ինչ ասել են հոգնածները:

Իսկ ես ասում եմ. Կյանքն իրականում խավար է, երբ չկա ձգտում:

Ամեն ձգտում կույր է, երբ չկա գիտելիք:

Ամեն գիտելիք իզուր է, երբ չկա աշխատանք,



Ամեն աշխատանք անպտուղ է, երբ չկա սեր.

Եվ երբ դուք սիրով եք աշխատում, դուք ձեզ միացնում եք ինքներդ ձեզ հետ ու Աստծո հետ:

Իսկ ի՞նչ է նշանակում սիրով աշխատել:

Դա հագուստ կարելն է իր սրտի թելերից այնպես, ասես այդ հագուստները քո սիրելին է հագնելու:

Դա տուն սարքելն է այնպիսի ջանքով, ասես այդ տանը քո սիրելին է ապրելու:

Դա քնքշանքով սերմեր ցանելը և ուրախությամբ բերքը հավաքելն է այնպես, ասես պտուղները ճաշակելու է քո սիրելին:

Դա այն ամենը, ինչ դու անում ես, քո ոգու շնչառությամբ լցնելն է

Եվ իմանալը, որ բոլոր օրհնված ննջեցյալները քո կողքին կանգնած նայում են:

Հաճախ եմ ես լսել՝ ինչպես եք դուք ասում ասես քնի մեջ. «Նա, ով մարմար է քանդակում և քարի մեջ իր հոգու կերպարն է ձեռք բերում, ավելի վեհ է նրանից, ով հող է վարում: Եվ նա, ով ծիածան է որսում, որպեսզի մարդու տեսքով տեղափոխի դա կտավի վրա, ավելի վեհ է նրանից, ով սանդալներ է հյուսում»:

Բայց ես ասում եմ ձեզ ոչ թե քնի մեջ, այլ միջօրեի հստակ արթնության, որ քամին զրուցում է հզոր կաղնու հետ նույնքան քնքշորեն, որքան և խոտի նրբագույն ցողունների հետ:

Եվ միայն նա է մեծ, ով երգի է վերածում քամու ձայնը, որ նրա սիրուց ավելի քնքուշ է դառնում:

Աշխատանքը սեր է՝ տեսանելի դարձած:

Եթե դուք չեք կարողանում սիրով ջանք թափել, այլ աշխատում եք միայն զզվանքով, ապա ավելի լավ է թողնեք ձեր աշխատանքը, նստեք տաճարի դարպասների մոտ ու ողորմություն խնդրեք նրանցից, ովքեր ուրախությամբ են աշխատում:

Եթե դուք անտարբերությամբ եք հաց թխում, ապա ձեր հացը դառն է և միայն կիսով չափ է հագեցնում մարդու քաղցը:

Եթե դուք ոչ բարի զգացումով եք խաղողը ճմռում, ապա այն թունավորում է գինին:

Եթե նույնիսկ դուք երգում եք հրեշտակների նման, բայց չեք սիրում երգել, ապա դուք մարդկանց ականջներին թույլ չեք տալիս լսել օրվա ձայներն ու գիշերվա ձայները:

### ԲԱՐՈՒ ԵՎ ՉԱՐԻ ՄԱՍԻՆ

Եվ քաղաքի ավագներից մեկը խնդրեց.

— Ասա՛ մեզ Բարու և Չարի մասին:

Եվ նա պատասխանեց.

— Ձեր ներսում եղած բարու մասին կարող եմ ես խոսել, բայց ոչ չարի մասին: Քանզի ինչ է չարը, եթե ոչ քաղցից ու ծարավից բզկտվող բարին:

Հիրավի, երբ բարին քաղցում է, նա նույնիսկ մութ անձավներում է սկսում կերակուր փնտրել և երբ ծարավում է, նույնիսկ հոտած ջուր է խմում:

Դուք բարի եք, երբ ինքներդ ձեզ հետ մնացած եք լինում: Բայց երբ ինքներդ ձեզ

հետ մնացած չեք լինում, դուք չար չեք:

Քանզի լքված տունը գողերի որջ չէ, այն ընդամենը լքված տուն է:

Առանց ղեկի նավը նա կարող է աննպատակ թափառել նենգ կղզիների միջև, բայց ջրասույզ չլինել:

Դուք բարի եք, երբ ձգտում եք տալ ինքներդ ձեզանից: Բայց դուք չար չեք, երբ ձեզ համար շահ եք որոնում: Քանզի երբ դուք ձգտում եք շահ ստանալ, դուք ընդամենը արմատ եք, որ կառչում է հողին և ծծում է նրա կուրծքը:

Հիրավի, պտուղը չի կարող արմատին ասել. «Եղի՛ր այնպիսին, ինչպիսին ես եմ՝ հասուն, հյութեղ և իր առատությունից հավերժորեն տվող»:

Քանզի պտղի համար տալը պահանջմունք է, ինչպես ստանալը պահանջմունք է արմատի համար:

Դուք բարի եք՝ քնից լիովին արթնանալով, բայց դուք չար չեք, երբ քնած եք, և ձեր լեզուն դատարկություն է բլբլում:

Եվ նույնիսկ թլվատ խոսքը կարող է ամրացնել թույլ լեզուն:

Դուք բարի եք, երբ քաջաբար, վստահ քայլվածքով եք ընթանում դեպի ձեր նպատակը:

Բայց դուք չար չեք, երբ կաղալով եք գնում դեպի այն: Նույնիսկ նրանք, ովքեր կաղում են, հետ չեն գնում: Բայց դուք՝ ուժեղնե՛ր և արագնե՛ր, կաղ մի ձևացեք կաղերի առջև՝ համարելով դա բարիք:

Հաշիվ չկա ձեր բարի գործերին, բայց դուք չար չեք նաև այն ժամանակ, երբ դուք բարի չեք: Դուք ընդամենը անգործությանն եք տրվում և ծուլանում եք: Ափսոս, որ եղնիկները չեն կարող կրիաներին ճարպկություն սովորեցնել:

Ձեր էությունը հսկայի էություն է: Ձեր բարությունը դեպի հսկայի՝ ձեր այդ էությունն ուղղված ձեր մղումի մեջ է, և այդ մղումը ձեզանից յուրաքանչյուրի մեջ առկա է:

Միայն թե ոմանց մոտ այդ մղումը բուռն հորձանք է, որ ընթանում է դեպի լեռնային լանջերի ու անտառի երգերի խորհուրդը իր մեջ ամփոփած ծովը: Իսկ մյուսների մոտ այն մանր առվակ է, որ ճյուղերի բաժանվելով ու գալարահոս ընթանալով՝ ավելի շուտ է սպառվում, քանափ կհասներ:

Բայց թող նա, ով շատ բաներ է տենչում, չհարցնի նրան, ով քչով է բավարարվում. «Ինչո՞ւ ես դու հապաղում և տատանվում»:

Քանզի նա, ով իսկապես բարի է, չի հարցնի մերկին. «Ո՞ւր է քո հագուստը»,— և չի հարցնի անտունին. «Ի՞նչ է եղել քո տունը»:

* * *

## ՀԱՅԵԼԻՆ ԵՎ ԷԿՐԱՆԸ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

Վարպետն աշակերտներին թույլ տվեց մի որոշ ժամանակ ապրել իր կողքին: Դրանից հետո իրենք պետք է հոգային իրենց մասին:

Նորեկը հարցրեց, թե Վարպետն ինչու է հետևում այդ կանոնին:



— Վարպետը հայելի է, որն անդրադարձնում է շրջապատող աշխարհը և քեզ: Երբ դու տեսնես իրականությունը, հայելին հարկ կլինի հեռացնել, որպեսզի քո երկրպագության պատճառով այն էկրանի չվերածվի:

* * *

## Ո՞ՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

*(ծագումն անհայտ է)*

Երկու երիտասարդ լսեցին իրենց շրջանում ապրող Մեծ Իմաստունի մասին: Նրանք գնացին նրա մոտ և խնդրեցին Աշակերտ վերցնել իրենց: Իմաստունը համաձայնեց: Այդժամ նրանք հարցրին Նրան.

— Իսկ ինչո՞վ էիր դու զբաղվում Մինչև Լուսավորյալ Դառնալդ:

— Ջուր էի կրում Իմ Տիրոջ համար:

— Իսկ ինչո՞վ ես դու զբաղվում Լուսավորյալ Դառնալուց Հետո:

— Ջուր եմ կրում Իմ Տիրոջ համար:

— Տարբերությունը ո՞րն է,— հարցրին նորահայտ աշակերտները:

— Տարբերությունն այն է, որ առաջ ես Իմ Տիրոջ համար ջուրը կրում էի չհասկացվածության զգացումով, դատապարտելով, դժգոհությամբ, գրգռվածությամբ, անբարյացակամությամբ, իսկ հիմա ես Դա Անում եմ ՍԻՐՈՎ,— պատասխանեց Իմաստունը:

* * *

## ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

*(ներկայացնում է Էնտոնի դե Մելլոն)*

Մի ֆիրմայի տնօրեն Վարպետին հարցրեց, թե որն է հաջող կյանքի գաղտնիքը:

— Յուրաքանչյուր օր մեկ մարդու երջանիկ դարձրու,— հետևեց պատասխանը:

Մեկ րոպե անց Վարպետն ավելացրեց.

— Մանավանդ, երբ այդ մարդը դու ինքդ ես:

* * *

## ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ

*(ներկայացնում է Ալեքսանդր Վիժենկոն)*

Մի մարդ ճգնավորին հարցրեց.

— Ովքե՞ր են ավելի շատ՝ վիրուկնե՞րը, թե՞ բարեպաշտ կանայք:

— Նախ ասա՝ ինձ, դու սիրե՞լ ես:

— Ո՛չ:

— Այդ դեպքում բարեպաշտ կանայք ավելի շատ են:

Մեկ ուրիշ մարդ նրան նույն հարցը տվեց.

— Իսկ դու սիրե՞լ ես:

— Սիրել եմ,— եղավ պատասխանը:

— Այդ դեպքում,— պատասխանեց ճգնավորը,— փուկներն ավելի շատ են:

Եվ երրորդ մարդը եկավ նրա մոտ ու խնդրեց պատասխանել այդ նույն հարցին: Ճգնավորն այդ մարդուն խնդրեց նրա կնոջն իր մոտ բերել: Երբ սիրահարները երկուսով եկան, ճգնավորը պատասխանեց.

— Փուկներ ընդհանրապես չկան:

* * *

## ԱՐԺԱՆԻՔՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(սուֆիպրական առակ)*

Մի աշխարհիկ մարդ սուֆիստին գանգատվում էր անօրեն մարդկանց ճնշումից:

— Ամբողջ կյանքում ես տառապում եմ մարդկային չարությունից ու պղծությունից,— տրտնջաց նա:— Այս մեկը նախատեց ինձ ու անարդարացի դատապարտեց, այն մյուսը գործի մեջ տակս փորեց, այս մեկը խաբեց ինձ, այն մյուսը իր եկամուտը չկիսեց ինձ հետ...

Գանգատներն անվերջանալի հոսանքի պես հաջորդում էին մեկը մյուսին: Սուֆիստը նրան չընդհատելով լռում էր: Վերջապես բողոքողը լռեց՝ իր հարցը տալով. «Հիմա ես ի՞նչ անեմ»:

— Մի՛ նմանվիր այն հիմարներին, որոնք իրենց հետ ապրող ու շփվող մարդկանց մեջ միայն սխալները, բացթողումներն ու չարությունն են տեսնում,— պատասխանեց սուֆիստը:— Այդ անմիտներն ուշադրություն չեն դարձնում մարդկանց արժանիքներին: Նրանք այն ճանճերի նման են, որոնք առողջ մարմնի վրա միայն խոցերին են նստում–կպչում:

* * *

## ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑԸ

*(պատմական առակ)*

50–ական թվականների սկզբին Ալբերտ Էյնշտեյնը, Նյու Յորքի իր բնակարանում հասարակությունից մեկուսանալով, շարունակում էր աշխատել Դաշտի ընդհանուր տեսության ստեղծման վրա: Նրա կյանքը մոտենում էր ավարտին, և նա հոգ էր տանում, որպեսզի իր ժամանակը արդյունավետորեն ծախսի: Այդ պատճառով էլ տան ծառայողը նախանձախնդրորեն պահպանում էր նրա



հանգստությունը՝ կատարելով Էյնշտեյնի անբեկանելի պահանջը. «Ոչ մի այցելուի ներս չթողնել»:

Բայց մի գեղեցիկ օր հայտնի չէ, թե ինչ ձևով, նրա սենյակ մի անծանոթ երիտասարդ ներխուժեց և ներկայանալով որպես լրագրող՝ խնդրեց հարցազրույց տալ իրեն:

«Ի՜նչ ահավոր լկտիություն»,— մտածեց Էյնշտեյնը և ցանկանում էր տեղնուտեղը դուրս վռնդել նրան: Բայց մտորելով՝ նա որոշեց արժանին հատուցել նրա պրոֆեսիոնալիզմին՝ իր լրագրողական պարտքը կատարելու գործում խոչընդոտները հաղթահարելու նրա կարողությանը:

— Ես համաձայն եմ Ձեզ հարցազրույց տալ, երիտասա՛րդ, բայց պայմանով, որ Դուք ընդամենը մեկ հարց կտաք ինձ,— չոր տոնով ասաց Էյնշտեյնը:

— Ես ընդամենը մեկ հարց ունեմ Ձեզ,— ուրախացած բացականչեց երիտասարդ լրագրողը:— Իմ հարցը հետևյալն է. Դուք ի՞նչ հարց կտայիք ինքներդ Ձեզ, հարգարժան Ալբե՛րտ Էյնշտեյն:

Էյնշտեյնն, իր բազմոցին նստելով, երկարատև ու խոր լռության մեջ ընկղմվեց: Նրա ծխամորճը հանգավ, իսկ աչքերը փակվել էին: Լրագրողը իրար խառնվեց. այս ի՞նչ կատարվեց ծերուկի հետ, միգուցե հարկավոր է օգնությո՞ւն կանչել: Բայց Էյնշտեյնը դանդաղորեն ուղղվեց և ուղիղ նրա աչքերի մեջ նայելով՝ ասաց.

— Երիտասա՛րդ, ամենագլխավոր հարցը, որը ես կտայի ինքս ինձ, հետևյալն է. արդյոք Տիեզերքը մեր նկատմամբ բարեկամակա՞ն է: Որովհետև այդ հարցի պատասխանից է կախված՝ մենք պատե՞ր կանգնեցնենք, թե՞ կամուրջներ գցենք:

* * *

## ՋՐԻ ԲԱԺԱԿԸ

*(ծագումն անհայտ է)*

Մի իմաստուն, բացի ջրի մի բաժակից, ուրիշ ոչինչ չուներ: Մի անգամ նա մի տղայի տեսավ, որը ձեռքի ափով էր ջուր խմում: Եվ դեն նետեց բաժակը...

* * *

## ԱՆՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՔ Է

*(ներկայացնում է Անդրեյ Յակուշևը)*

Ինչ–որ տեղ Արևելքում ունևոր մի մարդ էր ապրում: Եվ նա տասը կին ուներ: Նա սիրում էր նրանց բոլորին, հոգ էր տանում նրանց մասին: Նա գիտեր իր կանանց ցանկություններն ու պահանջմունքները, իր հնարավորությունների սահմաններում բավարարում էր դրանք: Իսկ նրա կանայք ագահ ու չար էին: Նրանք

ամուսնացել էին, որովհետև կարգն էր այդպես պահանջում, երեխաներ էին ծնում միայն այն բանի համար, որպեսզի ուրիշները մատով ցույց չտան իրենց: Նրանք կռվում էին իրար հետ՝ պայքարելով բոլորի մեջ առաջնության հասնելու համար, իսկ ամուսնու նկատմամբ նրանց հարգանքը զուտ երևութական էր:

Բայց ահա իշխանությունը փոխվեց Արևելքում: Այդ մարդուն սկսեցին անբարոյական կոչել այն պատճառով, որ նա մի կին ունենալու փոխարեն տասը կին ուներ: Նրա բոլոր կանանց ազատություն տվեցին, և նրանք գնացին իրենց համար ամուսին փնտրելու: Բայց բոլորը չէ, որ կարողացան գտնել: Իսկ նրանք, ովքեր գտան, դժբախտ կյանքով էին ապրում, որովհետև ամեն մի տղամարդ չէ, որ պատրաստ էր օտարի երեխայի դաստիարակել, դե իսկ կռվշտուքի ու խառնակչության սովոր կանայք նույն բանը շարունակում էին նոր ամուսինների հետ:

Դե, իսկ ունևոր մարդուն հարկադիր աշխատանքի ուղարկեցին՝ ինչ է թե նա ինչ–որ սեփականություն ուներ:

Եվ ահա նա, բարաքի իր մահճակալին նստած, տրտմության մեջ էր ընկել:

— Ի՞նչ ես տխրել,— հարցրեց հարևան մահճակալի ծերունին:

— Ախր տեսնո՞ւմ ես, թե ինչ է ստացվում: Ամբողջ կյանքս ապրեցի՝ ձգտելով միայն լավ բաներ անել իմ կանանց համար, իսկ հիմա ինձ ասում են, թե անբարոյական եմ: Նշանակում է՝ ես դրախտ չեմ ընկնի իմ անառակության պատճառով:

— Իզուր ես վշտանում քեզ համար,— պատասխանեց ծերունին:— Ես քեզ հիշում եմ և քո ընտանիքին էլ եմ հիշում: Դու քո կանանց սիրում էիր, բոլորն էլ դա տեսնում էին: Սիրո մեջ ապրող մարդը չի կարող դրախտ չընկնել: Դու ավելի լավ է քո կանանց համար տխրիր: Այ նրանք քեզ երբեք չեն սիրել: Իսկ չսիրելուց ավելի մեծ մեղք աշխարհում չկա:

Եվ մարդը սկսեց մտածել այդ մասին: Եվ լաց եղավ՝ հիշելով իր կանանցից յուրաքանչյուրին և իրենից ունեցած նրա ամեն մի երեխային: Եվ նրա կանայք դժոխք չընկան, որովհետև նրա սերն ավելի ուժեղ էր, քան նրա կանանց անսիրությունը:

* * *

## ՊԱՅՔԱՐ ՈՒՐՎԱԿԱՆԻ ԴԵՄ

*(չին առակ)*

Մի երիտասարդ կին ծանր հիվանդացել էր և մեռնելիս ամուսնուն ասաց.

— Ես այնպես եմ քեզ սիրում, որ չեմ ցանկանում երբեք լքել քեզ: Ուրիշ կնոջ մոտ մի՛ գնա: Եթե դու անես դա, ապա ես ուրվականի տեսքով կվերադառնամ քեզ մոտ ու մշտապես կանհանգստացնեմ քեզ:

Շուտով նա լքեց այդ աշխարհը: Ամուսինը երեք ամիս կատարում էր նրա կամքը, բայց հետո հանդիպեց մեկ ուրիշ կնոջ և սիրեց նրան: Նրանք որոշեցին ամուսնանալ:

Նշանդրեքից անմիջապես հետո նախկին կնոջ ուրվականը սկսեց հայտնվել:



Ամեն գիշեր նա նախատում էր նրան այն բանի համար, որ նա չի կատարում իր խոստումը: Ի հավելումն դրա՝ ուրվականը նաև շատ խորաթափանց էր. նա ճշգրիտ թվարկում էր այն ամենը, ինչ կատարվում էր ամուսնու և նրա սիրելիի միջև: Երբ էլ նա իր նոր կնոջը նվեր տար, ուրվականը ճշգրիտ նկարագրում էր այն: Ուրվականը նույնիսկ կրկնում էր նրանց միջև կայացած բոլոր զրույցները, և դա այնպես էր գրգռում տղամարդուն, որ նա չէր կարողանում քնել: Ինչ–որ մեկը հուշեց նրան դիմել գյուղից ոչ հեռու ապրող ձենի վարպետին: Ի վերջո, հուսահատվելով, դժբախտ ամուսինը գնաց վարպետից օգնություն հայցելու:

— Ուրեմն քո նախկին կինն ուրվական է դարձել և գիտի այն ամենը, ինչ դու անում ես,— եզրակացրեց վարպետը:— Ինչ ես խոսում, ինչ ես նվիրում սիրելիիդ՝ այդ ամենը գիտի: Դա պետք է որ շատ գիտուն ուրվական լինի: Այդպիսի ուրվականով հպարտանալ է պետք: Հենց որ նա հաջորդ անգամ նորից հայտնվի, նրա հետ պայմա՛ն կապիր: Ասա՛, որ քանի որ նա ամեն բան գիտի, և քանի որ նրանից ոչինչ թաքցնել հնարավոր չէ, եթե նա կարողանա պատասխանել քո մի հարցին, ապա դու խոստանում ես նշանը ետ տալ ու մենակ մնալ:

— Եվ ի՞նչ հարց պետք է ես տամ,— հարցրեց տղամարդը:

Վանականը պատասխանեց.

— Մի լիքը բուռ սոյայի հատիկներ վերցրո՛ւ և նրան հարցրու, թե քանի հատիկ կա քո բռի մեջ: Եթե նա չկարողանա պատասխանել, դու կհասկանաս, որ նա ընդամենը քո երևակայության պտուղն է և այլևս չի անհանգստացնի քեզ:

Գիշերը կնոջ հոգու հայտնվելուն պես ամուսինը շողոքորթեց նրան՝ ասելով, որ նա ամեն ինչ գիտի:

— Իհարկե,— պատասխանեց ուրվականը,— ես գիտեմ նաև այն, որ դու այսօր ձենի վարպետի մոտ ես եղել:

— Դե, եթե այդքան շատ բան գիտես, ապա ասա՛, թե քանի հատիկ կա բռիս մեջ,— պահանջեց ամուսինը:

Ոչ ոք չկար, որ պատասխաներ. ուրվականն անհետացել էր:

* * *

## ԲԱՐՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ

*(ծագումն անհայտ է)*

Մի ընտանիք ծովափին անցկացնում էր իր հանգիստը: Երեխաները լողանում էին ծովում և ավազից պալատներ էին կառուցում: Հանկարծ հեռվում փոքրիկ մի պառավ երևաց: Նրա սպիտակ մազերը ծածանվում էին քամուց, հագուստը կեղտոտ ու պատառոտված էր: Նա ինքն իրեն ինչ–որ բան էր քրթմնջում ավազի վրայից ինչ–որ առարկաներ հավաքելով ու պայուսակում տեղավորելով: Ծնողները կանչեցին երեխաներին և հրահանգեցին հեռու մնալ այդ պառավից: Երբ նա ավազներից ինչ–որ բան վերցնելու համար շարունակ կռանալով անցնում էր ընտանիքի մոտով, ժպտում էին նրանց, բայց ոչ ոք չէր պատասխանում նրա ողջույնին:

Շատ շաբաթներ անց նրանք իմացան, որ փոքրիկ պառավն իր ամբողջ կյանքը նվիրել էր այն բանին, որ լողափերից հավաքի ապակու բեկորները, որոնց վրա երեխաները կարող էին կտրել իրենց ոտքերը:

* * *

## ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

*(ներկայացնում է Էնթոնի դե Մելլոն)*

— Ինչո՞ւմն է քո հանգստության գաղտնիքը:
— Անխուսափելին լիովին ընդունելու մեջ,— պատասխանեց Վարպետը:

* * *

## ԱՌԱՆՑ ԿՈՒՅՍԻ ՄԱՍԻՆ

*(Հինգ Շի)*

Մի անգամ Հինգ Շիի մոտ մի երիտասարդ եկավ, որը պատրաստվում էր ամուսնանալ, և հարցրեց.
— Ուսուցի՛չ, ես ցանկանում եմ ամուսնանալ, բայց անպայմանորեն միայն կույս աղջկա հետ: Ասա՛, ես իմաստո՞ւն եմ վարվում:
Ուսուցիչը հարցրեց.
— Իսկ ինչո՞ւ անպայման կույսի հետ:
— Այդպես ես վստահ կլինեմ, որ իմ կինն առաջինի է:
Ուսուցիչը վեր կացավ տեղից և երկու խնձոր բերեց՝ մեկն ամբողջական էր, մյուսը կծած: Եվ պատանուն առաջարկեց փորձել դրանք:
Վերջինս վերցրեց ամբողջական խնձորը և կծեց. խնձորը որդնած էր: Նա վերցրեց կծած խնձորը և նրանից էլ կծեց, բայց կծած խնձորն էլ էր փտած: Պատանին տարակուսանքով հարցրեց.
— Ուրեմն ես ինչպե՞ս պիտի կին ընտրեմ:
— Սրտով,— պատասխանեց Ուսուցիչը:

* * *

## ԼԱԲԻՐԻՆԹՈՍ

*(ծագումն անհայտ է)*

Մի թագավոր հրամայեց պալատի մանրատախտակե հատակին կավիճով խճճված մի լաբիրինթոս նկարել: Այնուհետև նա կանչեց բոլոր պալատականներին և ասաց.



— Ով կարողանա բոլորից արագ անցնել այս լաբիրինթոսի միջով, ես նրան կնշանակեմ նախարար: Պալատականներից մեկը դուրս պրծավ բազմության միջից և արագորեն վազեց լաբիրինթոսի պատերի վրայով՝ ոչ մի ուշադրություն չդարձնելով նկարին:
Թագավորը ծիծաղեց և նրան հրամայեց հեռանալ պալատից:
— Բայց չէ՞ որ ես բոլորից արագ կատարեցի առաջադրանքը,— ասաց պալատականը,— ուրեմն ինչո՞ւ դու ոչ միայն նախարար չես նշանակում ինձ, այլև հրամայում ես հեռանալ քեզանից:
Թագավորը հրամայեց մի ոչխար բերել պալատ: Ծառաները բերեցին ոչխարին, կանգնեցրին լաբիրինթոսի սկզբում, իսկ վերջում մի խուրձ խոտ դրեցին: Ոչխարը վազեց դեպի խոտը՝ ոչ մի ուշադրություն չդարձնելով նկարին: Եվ թագավորն ասաց.
— Այս ոչխարը մանրատախտակի վրայով քեզանից ավելի արագ անցավ: Մի՞թե դա նշանակում է, որ ես սրան պետք է նախարար նշանակեմ:
— Ուրեմն ահա թե որն է պատճառը, որ ցանկացած որոշում մեզ մոտ այսքան դանդաղորեն է կայացվում,— իրար մեջ փսփսացին ծառաները:

* * *

## ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՂՈՒ ՎՐԱ

*(սուֆիական առակ)*

Մի մարդ եկավ մեծ ուսուցիչ Բահաուդդին Նախշբանդի մոտ և նրա օգնությունն ու խորհուրդը հայցեց Ուսմունքին հասու դառնալու ուղու վերաբերյալ:
Բահաուդդինը նրան պատվիրեց հրաժարվել հոգևոր պարապմունքներից և անհապաղ հեռանալ իր տնից:
Բարեսիրտ այցելուն սկսեց բողոքել Բահաուդդինի այդպիսի որոշման դեմ:
— Դու ապացույց կստանաս,— ասաց իմաստունը:
Այդ պահին մի թռչնակ թռչելով հայտնվեց սենյակում և սկսեց այս ու այն կողմ թռչելով պատեպատ խփվել՝ չիմանալով, թե ինչպես դուրս պրծնի այդտեղից:
Սուֆիստը սպասեց այնքան, մինչև թռչնակը նստեց սրահի միակ պատուհանի մոտ, այնուհետև ուժեղ ծափ զարկեց: Տագնապած թռչնակը պատուհանից ուղիղ դուրս թռավ դեպի ազատություն:
Այդժամ Բահաուդդինն ասաց.
— Այդ թռչնակի համար իմ ծափը շոկի, մինչև իսկ վիրավորանքի պես մի բան էր, համաձայն չե՞ս:

* * *

## ԿԱՅԾՔԱՐՆ ՈՒ ՀՐԱՀԱՆԸ

*(Լեոնարդո դա Վինչի)*

Մի անգամ հրահանից ուժեղ հարված ստանալով՝ կայծքարը վրդովված դիմեց իրեն վիրավորողին.

— Ինչի՞ համար այդպես հարձակվեցիր ինձ վրա: Ես քեզ չեմ ճանաչում և չեմ էլ ուզում ճանաչել: Դու, հավանաբար, ինչ-որ մեկի հետ շփոթում ես ինձ: Խնդրեմ, հանգի՛ստ թող իմ կողերին: Ես ոչ մեկին չարիք չեմ պատճառում:

— Դատարկ տեղը մի՛ զայրացիր, հարևա՛ն,— ի պատասխան՝ ժպտալով մրմնջաց հրահանը:— Եթե դու մի փոքր համբերություն ունենաս, ապա շուտով կտեսնես, թե ես ինչ հրաշք եմ դուրս կորզելու քեզանից:

Այդ խոսքերը լսելով՝ կայծքարը հանգստացավ և սկսեց համբերատար դիմանալ հրահանի հարվածներին: Եվ, վերջապես, նրանից կրակ ժայթքեց, որ ընդունակ էր իսկական հրաշքներ գործելու: Այդ ձևով կայծքարի համբերությունն ըստ արժանվույն փոխհատուցվեց:

Պատմությունը նրանց համար ասվեց, ովքեր սկզբից վարանում են ուսանել: Բայց եթե համբերությունդ հավաքես ու ձգտում դրսևորես, ապա իմացության ցանված սերմերն անպայման բարի ծիլեր կտան: Ուսանելու արմատը դառն է, սակայն պտուղը՝ քաղցր:

* * *

## ԱԾԵԼԻՆ

*(Լեոնարդո դա Վինչի)*

Մի վարսավիր արտասովոր գեղեցիկ ածելի ուներ: Ածելին նաև իրեն հավասարը չուներ գործի մեջ: Մի անգամ, երբ վարսավիրանոցում հաճախորդներ չկային, իսկ տերն ինչ-որ տեղ էր գնացել, ածելին մտածեց գնալ աշխարհը տեսնելու և իրեն ցույց տալու: Սուր սայրը ագուցարանից դուրս բերելով, ինչպես սուսերն են պատյանից հանում, և հպարտորեն ձեռքերը կանթելով՝ նա գարնանային լավ օրով դուրս եկավ զբոսանքի:

Ոտքը շեմից դուրս դնելուն պես վառ արևն սկսեց փայլփլել նրա պողպատյա հղկված սայրին, և բակի տների պատերի վրա ուրախ վազվզեցին արևի շողերի անդրադարձումները: Այդ չտեսնված տեսարանից կուրանալով՝ ածելին այնպիսի աննկարագրելի ցնծության մեջ ընկավ, որ տեղնուտեղը անսահման գոռոզությամբ լցվեց:

— Մի՞թե այսպիսի հոյակերտությունից հետո ես պետք է վարսավիրի մոտ վերադառնամ,— բացականչեց ածելին:— Ոչ մի դեպքում: Իմ կողմից լրիվ խելագարություն կլինի կործանել իմ կյանքը՝ այդ անտաշ բռիների օճառած այտերն ու ծնոտները մաքրելով: Մի՞թե իմ քնքուշ սայրի տեղն այդ սափրիչի մոտ



գտնվելն է: Բնավ ոչ: Ես կթաքնվեմ նրանից որևէ ծածուկ վայրում:

Այդ պահից ի վեր նրա հետքը կորավ:

Ամիսներն անցնում էին: Վրա հասավ անձրևոտ աշունը: Մենակությունից ձանձրանալով՝ այդ թշվառը որոշեց դուրս գալ իր կամավոր բանտարկությունից և մաքուր օդ շնչել: Նա զգուշորեն սայրը դուրս հանեց ագուցարանից և հպարտորեն նայեց շուրջը: Բայց, ո՜վ սարսափ: Այդ ի՞նչ էր կատարվել: Քնքուշ սայրը կոպտացել էր ժանգոտ սղոցի նմանվելով և այլևս չէր անդրադարձնում արևի ճառագայթները:

— Ինչո՞ւ ես գայթակղության տրվեցի,— դառնորեն լաց եղավ ածելին:— Որքա՜ն էր ինձ փայփայում և հոգ տանում բարի վարսավիրը: Ինչպե՜ս էր նա ուրախանում ու հպարտանում իմ աշխատանքով: Իսկ հիմա՞: Օ՜, աստվա՛ծ իմ, այս ի՞նչ եմ դարձել ես. սայրս մթնել է, դարձել քարթ-քարթ ու պատվել զզվելի ժանգով: Ես կործանված եմ, և ինձ համար փրկություն չկա:

* * *

## ՉՐՈՒՅՑ ԱՍՏԾՈ ՀԵՏ

*(ներկայացնում է Նիլ Դոնալդ Ուոլշը)*

Կար-չկար, մի ժայռ կար, որ լեցուն էր անհամար ատոմներով, պրոտոններով, նեյտրոններով ու մատերիայի ենթաատոմային մասնիկներով: Այդ մասնիկներն անընդհատ շարժվում էին ըստ որոշակի ծրագրի, և նրանցից յուրաքանչյուրն ինչ-որ «ժամանակի» ընթացքում հասնում էր «այստեղից» «այնտեղ», բայց այնքան արագորեն, որ բուն ժայռը կատարելապես անշարժ էր թվում: Նա պարզապես կար: Նա բացարձակապես անշարժ կանգնած էր՝ ըմբոշխնելով արևը, ներծծելով անձրևը:

— Այդ ի՞նչ է շարժվում իմ ներսում,— հարցրեց ժայռը:

— Այդ դու ես,— հեռվից պատասխանեց Զայնը:

— Ե՞ս,— նորից հարցրեց ժայռը:— Բայց չէ՞ որ դա անհնար է: Ես բացարձակապես չեմ շարժվում: Դա բոլորին էլ տեսանելի է:

— Այո՛, բայց հեռվից,— համաձայնեց Զայնը:— Այստեղից՝ որոշակի հեռավորությունից, թվում է, թե դու միաձույլ ես, հանդարտ ու անշարժ: Բայց երբ ես մոտենում եմ, երբ ես շատ ուշադիր նայում եմ այն բանին, ինչ փաստորեն կատարվում է, ապա տեսնում եմ, որ այն ամենը, ինչը Դու ես հանդիսանում, շարժվում է: Այդ ամենը, որոշակի ծրագրի համաձայն, անհավատալի արագությամբ շարժվում է ժամանակի ու տարածության մեջ, և դա ստեղծում է Քեզ «ժայռ» անունը կրող առարկայի տեսքով: Եվ դա քեզ հրաշք է դարձնում: Դու միևնույն ժամանակ և՛ շարժվում ես, և՛ չես շարժվում:

— Բայց այդ դեպքում այդ երկուսից ո՞րն է պատրանք,— հարցրեց ժայռը:— ժայռի միասնականությունն ու հանգստի վիճա՞կը, թե՞ Նրա մասնիկների մասնատվածությունն ու շարժումը:

— Ի պատասխան՝ Զայնն ասաց.

— Այդ դեպքում ո՞րն է պատրանք. Աստծո միասնությունն ու հանգստի վիճա՞կը, թե՞ Նրա մասնիկների մասնատվածությունն ու շարժումը:

* * *

## ՇՐՋԱՊԱՏՈՂՆԵՐԻ ԱՆԶԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ։ ՀԻՆԳ ՇԻ

*(ներկայացնում է Յուլյա Դուբինկինա–Իլյինան)*

Մի անգամ Հինգ Շիի համագյուղացիներից մեկը նրա հետ զրույցի ժամանակ գանգատվեց, որ իրեն շրջապատող մտերիմ մարդիկ իրենց էությամբ այնքան չոր ու այնքան անզգա են, որ չեն կարողանում հասկանալ իր պրոբլեմներն ու ապրումները, իսկ ինքը չի համարձակվում նրանց ասել այդ մասին։

Ավելի ուշ, երբ նրանք արդեն ուրիշ բանի մասին էին խոսում, Հինգ Շին տրորեց նրա ոտքը։ Գյուղացին մի պահ ընդհատեց խոսքը, բայց ոտքը չազատեց ու իմաստունին ոչինչ չասելով՝ շարունակեց իր պատմությունը։ Այդ ժամանակ իմաստունն ավելի մեծ ուժով սկսեց սեղմել նրա ոտքը։ Տղամարդը հոգոց հանեց, բայց այդպես էլ դիտողություն չարեց իմաստունին։ Ինչ–որ ժամանակ անց Հինգ Շին դեռ շարունակում էր սեղմել զրուցակցի ոտքը, և վերջինս, այլևս չդիմանալով՝ վրդովված հարցրեց.

— Ուսուցի՛չ, ինչո՞ւ ես կանգնել իմ ոտքին, ախր ցավում է, չէ՞։

— Կներես,— ոտքն արագորեն հեռացնելով՝ ասաց իմաստունը,— ես չգիտեի, որ դա քեզ անհանգստացնում է, չէ՞ որ դու լռում էիր։

* * *

## ԵՐԵԽԱՆ ԵՎ ԳՈՂԸ

*(հասիդական առակ)*

Ռեբե Զուսյան Անիպոլից գնաց այցելելու իր ռեբե–ուսուցիչ Դով Բերին՝ Մեժիրիչցի Մագգիդին։

— Ռեբե՛, ես լսել եմ,— ասաց Զուսյան,— իբր Աստծուն ծառայելու տասը պատվիրաններ գոյություն ունեն, բայց ես դրանց մասին ոչ մի բան չգիտեմ։ Ահա և եկել եմ քեզ մոտ՝ դրանք սովորելու հույսով։

— Ես ինքս քեզ սովորեցնել չեմ կարող,— պատասխանեց Դով Բերը,— բայց ես ճանաչում եմ նրանց, ովքեր շատ լավ կարող են սովորեցնել դա։

— Եվ ովքե՞ր են դրանք,— զարմացած հարցրեց աշակերտը։

— Առաջին երեք սկզբունքները դու կարող ես սովորել երեխայից, իսկ մնացած յոթը՝ գողից։

Եվ քանի որ աշակերտն իր ամբողջ տեսքով լիակատար տարակուսանք էր արտահայտում, Մագգիդը բացատրեց.

— Երեխայից դու հեշտությամբ կսովորես երեք բան. ուրախանալ առանց պատճառի, ոչ մի րոպե իզուր տեղը չվատնել, բարձրաձայն պահանջել այն, ինչ դու ցանկանում ես։ Իսկ գողից կսովորես հետևյալ յոթ բաները. իր աշխատանքը թաքուն կատարել, եթե գործդ մեկ գիշերում չես ավարտել, վերադառնալ



դրան հաջորդ գիշերը, սիրել արհեստակից եղբայրներին, նպատակին հասնելու համար իր կյանքը վտանգի ենթարկել, պատրաստ լինել քո ողջ ունեցածը փոխել թվում է, թե ամենաչնչին, բայց նոր ծեռքբերման հետ, չվախենալ ոչ մի տեսակ խոչընդոտներից, հավատարիմ մնալ իր արհեստին՝ մտքով անգամ չանցկացնելով փոխարինել այն մեկ ուրիշով։

* * *

## ԿՅԱՆՔԸ ՊԱՐԶ Է

*(առակ Օշոյի շարադրմամբ)*

Ապրելը շատ պարզ է։ Նույնիսկ ծառերն են ապրում, ակնհայտորեն կյանքը պարզ է։

Ինչո՞ւ է այն մեզ համար այդքան բարդ։ Որովհետև մենք նրա մասին տեսություններ ենք ստեղծում։ Կյանքի ամենակենտրոնում լինելու, կյանքի ինտենսիվության ու կրքի մեջ լինելու համար հարկավոր է դեն նետել բոլոր կենսափիլիսոփայությունները։ Այլապես դուք հավերժորեն կթափառեք սեփական խոսքերի մշուշում։

Հազարոտնուկի մասին հայտնի պատմությունը գիտե՞ք։

Մի գեղեցիկ առավոտ, երբ, հավանաբար, հազարոտնուկը երջանիկ էր, ու նրա սիրտը երգում էր... ջրափոսի եզրին մի գորտ էր նստել, որը, հավանաբար, փիլիսոփայական հակումներ ուներ։ Նա հարցրեց.

— Մի րոպե սպասի՛ր։ Դու ուղղակի հրաշքներ ես գործում։ Հարյուր ոտք։ Դու ինչպե՞ս ես կառավարում դրանք։ Ո՞ր ոտքն է առաջինը քայլ անում, ո՞րը՝ երկրորդը, ո՞րը՝ երրորդը և այդպես շարունակ մինչև հարյուրերորդ ոտքը։ Մի՞թե դու երբեք չես խառնվում։ Ինչպե՞ս է դա քեզ հաջողվում։

— Ես երբեք դրա մասին չեմ մտածել,— պատասխանեց հազարոտնուկը,— թո՛ւյլ տուր մտածեմ։

Եվ նա տեղնուտեղը սայթաքեց ու վայր ընկավ։ Նա խառնվեց իրար՝ հարյուր ոտք։ Ինչպե՞ս գլուխ հանես դրանից։

Փիլիսոփայությունը կաթվածահար է անում։ Կյանքը փիլիսոփայության կարիք չի զգում, կյանքն ինքնաբավ է։ Նրան ոչ մի հենակներ պետք չեն, նա ոչ մի հենափայտի, ոչ մի լրացուցիչ աջակցության կարիք չի զգում։ Նա ինքնաբավ է։

* * *

## ՀԻՇԻ՛Ր ԲԵԿՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*(Հինգ Շի)*

Մի անգամ Հինգ Շին Յանգ Լիի հետ զրուցում էր մարդու համար կարևոր մի ունակության մասին, այն է՝ իր սրտում սանձել զայրույթը և թույլ չտալ իրեն

ցածրանալ մինչև վրեժը: Ուսուցչին ուշադրությամբ լսելով՝ Յանգ Լին ամաչելով խոստովանեց, որ առայժմ ի վիճակի չէ ներել իր թշնամիներին, թեև անկեղծորեն ձգտում է դրան:

— Ես մի թշնամի ունեմ,— գանգատվեց աշակերտը,— և կցանկանայի ներել՝ նրան, բայց առայժմ ոչ մի կերպ չեմ կարողանում սրտիցս արմատախիլ անել գայրույթը:

— Ես կօգնեմ քեզ,— ասաց Հինգ Շին՝ դարակից վար բերելով ճաքած թեյնիկը:— Վերցրո՛ւ այս թեյնիկն ու վարվի՛ր դրա հետ այնպես, ինչպես կցանկանայիր վարվել քո թշնամու հետ:

Յանգ Լին, թեյնիկը վերցնելով, անվստահորեն շուռումուռ էր տալիս ձեռքերում՝ չհամարձակվելով որևէ գործողություն կատարել: Այդժամ իմաստունն ասաց.

— Այս հին թեյնիկն ընդամենը իր է, սա մարդ չէ, մի՛ վախեցիր հիմա դրա հետ վարվել այնպես, ինչպես կցանկանայիր վարվել քո թշնամու հետ:

Այդժամ Յանգ Լին թեյնիկը բարձրացրեց գլխից վեր և ուժգնությամբ շպրտեց հատակին, այնպես, որ թեյնիկը, մանր բեկորների բաժանվելով, ցրիվ եկավ հատակին:

Հինգ Շին նայեց փշրված անոթի բեկորներով սփռված հատակին և ասաց.

— Տեսնո՞ւմ ես ինչ ստացվեց: Թեյնիկը ջարդելով՝ դու չազատվեցիր նրանից, այլ ընդամենը բազմաթիվ բեկորների վերածեցիր, որոնց վրա դու կամ քեզ շրջապատող մարդիկ կարող են կտրելով վիրավորել ոտքերը: Այդ պատճառով էլ ամեն անգամ, երբ գայրույթը քո սրտից դուրս նետելու ուժ չես գտնի քո մեջ, հիշի՛ր այդ բեկորների մասին,— ասաց Հինգ Շին և մի փոքր հապաղելով՝ ավելացրեց,— իսկ ավելի լավ է ձգտես թույլ չտալ ճեղքեր առաջանան այնտեղ, որտեղ դրանք չպետք է լինեն:

* * *

## ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Արդեն իմ վարպետի մահվանից հետո ես բարեկամացա մեդիտացիայի, միստիկայի և յոգայի մերօրյա մեծագույն վարպետներից մեկի՝ Ջուջոմ Ռինպոչեի հետ:

Մի անգամ նա իր կնոջ հետ Ֆրանսիայում ավտոմեքենայով ինչ–որ տեղ էին գնում՝ հիանալով գյուղական վայրերի գեղատեսիլ տեսարաններով: Ճանապարհին անցնում էր ծաղիկներով զարդարված, թարմ ներկված ցանկապատով գերեզմանոցի կողքով: Ջուջոմ Ռինպոչեի կինն ասաց. «Ռինպոչե՛, նայի՛ր, թե ամեն բան որքան խնամված ու մաքուր է Արևմուտքում: Նույնիսկ դիակների թաղման համար նախատեսված տեղերն ուղղակի անթերի են: Արևելքում նույնիսկ տները, որոնցում մարդիկ են ապրում, բոլորովին էլ այսքան մաքուր չեն»:

— Հա,— պատասխանեց Ջուջոմը,— ճիշտ ես ասում. սա շատ քաղաքակիրթ



երկիր է: Նրանք այսքան սքանչելի կացարաններ ունեն մեռած դիակների համար: Բայց մի՞թե դու չես նկատել, թե նրանք որքան սքանչելի կացարաններ ունեն նաև կենդանի դիակների համար:

Ամեն անգամ այս դեպքը հիշելիս ես մտածում եմ այն մասին, թե որքան դատարկ ու ապարդյուն կարող է լինել կյանքը, երբ այն հարատևության ու մշտականության կեղծ հավատի վրա է հիմնված լինում:

* * *

## ՈՐՏԵՂԻ՞Ց ԺԱՄԱՆԱԿ ԳՏՆԵԼ ՄԵԴԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

*(ծագումն անհայտ է)*

Մի լուսավորյալ Գուրու աշակերտ ուներ, որին հանձնարարել էր ամեն օր որոշակի ժամանակամիջոց տրամադրել մեդիտացիա անելուն:

Գուրուի մոտ զրուցելու գալիս աշակերտն ամեն անգամ գանգատվում էր. «Օ՜, իմ Գուրու: Ես ամեն ինչ անում եմ այնպես, ինչպես դու ասում ես: Բայց դե մեդիտացիա անելու համար ես բացարձակապես ժամանակ չեմ ունենում... ամեն օր աշխատում եմ արևածագից մինչև մայրամուտ, հազիվ հասցնում եմ հաց ուտել ու կնոջս ու երեխաներիս ուշադրություն հատկացնել... ի՞նչ անեմ ես»:

Ի վերջո, նա իր պատասխանն ստացավ.

— Դու ամեն օր զուգարան ես գնում, չէ՞: Փակի՛ր աչքերդ ու մտովի ասա մանտրան այն ընթացքում, քանի դեռ բնական կարիքներդ ես հոգում:

Շուտով աշակերտը լուսավորման հասավ:

* * *

## ԲԱՐՈՒԹՅՈՒՆ

*(սուֆիստական առակ)*

Ուսուցիչն աշակերտին նամակ տվեց՝ հրահանգելով բացել այն իր մահվանից հետո և նամակը ցույց տալ իրեն փոխարինողին: Նամակում ասված էր. «Ես վատ էի վերաբերվում այս աշակերտին»: Երբ աշակերտը լսեց նամակի բովանդակությունը, լցվեց թախիծով և ասաց.

— Նա այնքան մեծահոգի էր, որ իմ նկատմամբ իր բարությունը նրան դաժանություն էր թվում աշխարհի Մեծագույն Բարության համեմատությամբ:

Մոտ մեկ տարի անց փոխարինողը նորից աշակերտին հրավիրեց իր մոտ և նրան խնդրեց ևս մեկ անգամ մեկնաբանել նամակը:

— Այժմ ես հասկանում եմ,— ասաց աշակերտը,— որ «վատ էի վերաբերվում» բառերը բացարձակապես ճիշտ էին: Սովորաբար մարդիկ այն ժամա-

նակ են բարյացակամ վերաբերմունք դրսևորում, երբ նրանք ավելի արժեքավոր բան չեն ունենում տալու: Մեզ ի՞նչ, թե Գանձեր Շնորհողը բարի է կամ չար: Եթե սուլթանի ստրուկը ոսկի է բաժանում, ապա ի՞նչ նշանակություն ունի՝ բաժանելիս նա ժպտո՞ւմ է, թե՞ խոժոռվում: Ինչ–որ մեկը, լավագույն մղումներից ելնելով, կարող է քաղցրավենիք առաջարկել: Մինչդեռ բժիշկը այն դեղամիջոցն է կիրառում, որը բուժում է՝ անկախ նրանից, թե այդ դեղը մարդկանց դա՞ռն է թվում, թե՞ քաղցր:

* * *

## ԿԱՐՃ ԿԱՆԳԱՌ

*(ժամանակակից առակ)*

Ուղևորությունից վերադառնալուց հետո Վարպետը իր հետ կատարված մի պատմություն պատմեց, որը, ինչպես ինքն էր կարծում, կարող էր բուն կյանքին վերաբերող փոխաբերություն լինել:

Կարճ կանգառի ժամանակ նա մտավ մոտակա հարմարավետ սրճարանը: Ճաշացանկում ախորժալի ապուրներ, սուր համեմունքներ ու այլ գայթակղիչ ճաշատեսակներ կային: Վարպետն ապուր պատվիրեց:

— Դուք այդ ավտոբուսի՞ց եք,— քաղաքավարությամբ հարցրեց պատվարժան տեսքով մատուցողուհին:

Վարպետը գլխով հաստատական շարժում արեց:

— Այդ դեպքում ապուր չկա:

— Իսկ դարչինի սոուսով շոգեխաշած բրի՞նձ:

— Ոչ, եթե Դուք այդ ավտոբուսից եք: Դուք միայն սենդվիչներ կարող եք պատվիրել: Ես իմ ամբողջ առավոտը ծախսել եմ ճաշատեսակների պատրաստման վրա, իսկ Դուք ամենաշատը տասը րոպե ունեք ուտելու համար: Ես չեմ կարող թույլ տալ Ձեզ ուտել մի կերակուր, որի համը Դուք չեք կարող գնահատել ժամանակ չունենալու պատճառով:

* * *

***Ինչպես հայտնի է, անհաջողություններից ու ձախորդություններից ոչ ոք ապահովագրված չէ: Անհաջողությունների դեպքում ամենատարածված ռեակցիան տխրությունն է, հուսահատությունը, ընկճվածությունը, զայրույթն ու ագրեսիան: Իսկ հնարավո՞ր է արդյոք անհաջողությունը հաջողության վերածել: Ինքնե՛րդ որոշեք: Իսկ հաջորդ երեք առակները թող որպես հուշում ծառայեն այդ կապակցությամբ:***



* * *

## ՍԱՏԿԱԾ ԷՇԸ

*(իրեական առակ)*

Մոյշան մի ծեր գյուղացուց հարյուր դոլարով էշ գնեց: Գյուղացին էշին պետք է բերեր հաջորդ օրը: Ինչպես և պայմանավորվել էին, գյուղացին հաջորդ օրը ներկայացավ, բայց առանց էշի:

— Ներեցե՛ք, բայց էշը սատկեց,— ասաց ծերունին:

— Այդ դեպքում վերադարձրե՛ք իմ հարյուր դոլարը:

— Չեմ կարող, ես արդեն ծախսել եմ այդ փողը:

— Լավ, այդ դեպքում էշն ի՛նձ տուր:

— Բայց Դուք ի՞նչ եք անելու,— զարմացած հարցրեց գյուղացին:

— Ես վիճակախաղով կխաղարկեմ դա:

— Բայց Դուք չեք կարող սատկած էշ խաղարկել:

— Հավատացե՛ք՝ կարող եմ: Ես պարզապես ոչ ոքի չեմ ասի, որ էշը սատկած է:

Մեկ ամիս անց գյուղացին հանդիպեց Մոյշային:

— Այն սատկած էշն ի՞նչ եղավ:

— Ես խաղարկեցի այն, ինչպես և ասում էի: Ես հատը երկու դոլարով վիճակախաղի հինգ հարյուր տոմս վաճառեցի և արդյունքում 998 դոլար շահույթ ստացա:

— Եվ ի՞նչ, ոչ ոք չբողոքե՞ց:

— Միայն մի տղա: Նա, ով շահել էր էշը: Նա շատ էր զայրացել: Դե, ես էլ պարզապես վերադարձրի նրա երկու դոլարը:

* * *

## ՀԻՎԱՆԴ ԵՐԵԽԱՆ

*(Ջիմ Դորանի «Դաշնամուրն ափին» գրվածքից)*

Մի պրոֆեսիոնալ գոլֆ խաղացող լուրջ մրցաշարում հաղթելուց հետո մեկնեց ակումբից: Ավտոմեքենայի կայանատեղում նա մի հիվանդ կնոջ հանդիպեց, որը հայտնեց, որ իր երեխան հիվանդ է և պառկած է հիվանդանոցում: Այդ կինը փող չուներ և գոլֆիստին խնդրեց լուրջ հիվանդությամբ տառապող իր երեխային օգնելու համար իրեն տալ այն դրամի մի մասը, որը գոլֆիստը շահել էր մրցաշարում հաղթելով: Մարզիկին այդ պատմությունը խորապես հուզեց, և նա կնոջը տվեց իր շահած ամբողջ գումարը, որպեսզի դրանով վճարեն վիրահատության համար և փրկեն երեխային:

Մեկ թե երկու օր անց գոլֆիստը վերադարձավ իր ակումբը և այդ պատմությունը պատմեց ակումբում ներկա գտնվող որոշ մարդկանց: Ոմանք ասացին.

— Օ՜, ո՛չ: Քեզ խաբել են: Այդ կինն արդեն մի քանի անգամ այդպես է վար-

վել: Մեզ համար շատ տհաճ է, որ դու հերթական զոհն ես դարձել: Այդ պատմությունն ընդամենը խայծ էր, որպեսզի նա տիրանար քո գումարներին:

Գոլֆիստը հարցրեց.

— Ուրեմն իրականում ոչ մի հիվանդ երեխա էլ չկա՞:

Նրանք ասացին.

— Իհարկե չկա:

Այդժամ գոլֆիստն ասաց.

— Սա ամենալավ նորությունն էր ամբողջ շաբաթվա ընթացքում:

* * *

*(ծագումն անհայտ է)*

Մի ուսուցիչ իր աշակերտին կարգադրեց երեք տարվա ընթացքում վճարել յուրաքանչյուրին, ով կվիրավորի կամ կնեղացնի իրեն:

Բարեխիղճ աշակերտը կատարեց իր ուսուցչի հանձնարարությունը:

Ժամանակը լրանալուց հետո ուսուցիչն ասաց. «Հիմա գնա՛ դեպի կյանք ու նոր իմաստություն ճանաչիր»:

Աշակերտը մեկ ուրիշ վայր գնաց ու հանդիպեց մի Իմաստունի, որը հայհոյանքներ էր տեղում բոլոր նրանց հասցեին, ովքեր հանդիպում էին իր ճանապարհին: Աշակերտին նույնպես բաժին հասավ այդ հայհոյանքներից:

Բայց նա, ի պատասխան, միայն ծիծաղեց:

— Դու ինչո՞ւ ես ծիծաղում, չէ՞ որ ես վիրավորեցի քեզ,— հարցրեց Իմաստունը:

Աշակերտը պատասխանեց.

— Երեք տարի շարունակ ես վճարում էի ինձ ուղղված հայհոյանքների համար, իսկ դու անվճար ես տալիս դրանք:

— Մտի՛ր քաղաք,— ասաց Իմաստունը,— այն քոնն է:

* * *

## ՄԵՆՔ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

*(ներկայացնում է Էնթոնի դե Մելլոն)*

Ի պատասխան այն հարցին, թե լուսավորվելն ինչի հետ կարելի է համեմատել, Վարպետն ասաց.

— Պատկերացրո՛ւ, որ դու անապատում ես գտնվում և հանկարծ զգում ես, որ ինչ–որ մեկը քեզ է նայում:

— Ո՞վ է նայում:

— Ժայռերը, նաև ծառերը, նաև լեռները:

— Սահմռկեցուցիչ զգացում է:

— Ընդհակառակը, ուրախալի զգացում է: Բայց քանի որ այդ զգացողությու-



նը մարդու համար անսովոր է, նա ցանկանում է ետ փախչել՝ դեպի մարդկանց սովորական աշխարհը՝ իր աղմուկներով, գրույցներով, ծիծաղով. այն աշխարհը, որը մեզ կտրել է Բնությունից և Իրականությունից:

* * *

## ԿԻՆ ԼԻՆԵԼ

*(ժամանակակից առակ)*

Մի կին Վարպետին գանգատվում էր իր ճակատագրից:

— Դու ինքդ ես պատասխանատու քո ճակատագրի համար:

— Մի՞թե ես պատասխանատու եմ այն բանի համար, որ կին եմ ծնվել:

— Կին լինելը ճակատագիր չէ: Դա քո կոչումն է: Իսկ քո ճակատագիրը կախված է նրանից, թե դու ինչպես կտնօրինես այդ կոչումը:

* * *

## ԱՆՀՆԱՐ Է

*(ծագումն անհայտ է)*

«Անհնար է»–ն ընդամենը բարձրագոչ խոսք է, որի տակ թաքնվում են փոքր մարդիկ: Նրանց համար ավելի հեշտ է ապրել սովորական դարձած աշխարհում, քան փոխել այդ աշխարհը:

«Անհնար է»–ն փաստ չէ, այլ ընդամենը կարծիք:

«Անհնար է»–ն դատավճիռ չէ, մարտահրավեր է:

«Անհնար է»–ն իրեն ստուգելու հնարավորություն է:

«Անհնար է»–ն չի նշանակում, թե միշտ այդպես է լինելու:

... Եվ անհնարը հնարավոր է:

* * *

## ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

*(ծագումն անհայտ է)*

Պլատոնը շատ ընկերներ ուներ, և նրանք բոլորն ասում էին.

— Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է:

Դրանից տխրած՝ Պլատոնն ի վերջո պատրաստվեց գնալ ճշմարտությունը որոնելու և երկար ժամանակ բացակայեց:

Երբ նա վերադարձավ, ընկերները գինի էին խմում ու երգեր երգում:

Յոգնած, կեղտոտ ու ծերացած Պլատոնը հարցրեց.

— Ուրեմն ձեզ համար ո՞վ է ավելի թանկ. բարեկա՞մը, թե՞ ճշմարտությունը։

Եվ նրա ընկերները համառորեն ու համբերատարությամբ կրկնեցին.

— Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է։

Պլատոնը հոգոց հանեց, թքեց, ուսից ցած բերեց պարկն ու այն թափ տալով՝ ճշմարտությունը դատարկեց սեղանին։ Խեցամանները շրխկոցով փշրվեցին, գինին հոսեց սեղանի վրայով։

— Դե՞,— հարցրեց Պլատոնը։

Ընկերները մռայլված լռում էին։

Յետո նրանցից մեկը խոժոռված ասաց.

— Յեռացի՛ր, Պլատո՛ն։ Դու այլևս մեր ընկերը չես։

* * *

## 15 ՊԱՏՃԱՌ

*(ծագումն անհայտ է)*

1. Այս աշխարհում առնվազն 5 մարդ կա, ովքեր այնքան ուժեղ են քեզ սիրում, որ ընդունակ են մեռնել հանուն քեզ։
2. Ամենաքիչը 15 մարդ շատ թե քիչ չափով սիրում են քեզ։
3. Միակ պատճառը, որի համար ինչ–որ մեկը չի սիրում քեզ, այն է, որ նա ցանկանում է լինել այնպիսին, ինչպիսին դու ես։
4. Թեկուզ լոկ քո ժպիտը ուրախացնում է ինչ–որ մեկին, նույնիսկ եթե նա չի սիրում քեզ։
5. Ամեն գիշեր ինչ–որ մեկը քնելուց առաջ մտածում է քո մասին։
6. Ինչ–որ մեկի համար դու մի ամբողջ աշխարհ ես։
7. Ինչ–որ մեկը չէր կարողանա ապրել առանց քեզ։
8. Դու առանձնահատուկ և անկրկնելի մարդ ես։
9. Ինչ–որ մեկը, որի մասին դու նույնիսկ չգիտես էլ, սիրում է քեզ։
10. Նույնիսկ, երբ դու ամենամեծ հիմարությունն ես անում, դրանից ինչ–որ լավ բան է ստացվում։
11. Երբ դու մտածում ես, թե աշխարհը քեզանից երես է թեքել, տե՛ս՝ ավելի շուտ այդ դու ես երես թեքել նրանից։
12. Երբ դու ինչ–որ բան ես ցանկանում, բայց մտածում ես, թե չես կարողանա հասնել դրան, դու ավելի շուտ չես էլ հասնի դրան։ Բայց եթե հավատում ես քեզ, ապա վաղ թե ուշ դու կստանաս այն, ինչ ցանկանում ես։
13. Ավելի հաճախ հիշի՛ր այն հաճոյախոսությունների մասին, որոնք ասում են քեզ։ Մոռացի՛ր չար խոսքերն ու ծաղրը։
14. Միշտ ազնվորեն մարդկանց ասա այն, ինչ դու մտածում ես նրանց մասին. քեզ համար ավելի հեշտ կլինի, եթե նրանք իմանան դա։
15. Եթե դու լավագույն ընկեր ունես, մի՛ մոռացիր նրան ասել, թե նա որքան շատ բան է նշանակում քեզ համար։



* * *

## ՄԱՐԴԸ ԵՎ ՆՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

*(ծագումն անհայտ է)*

Ժամանակով մի մարդ էր ապրում, որը ցանկանում էր հասնել այն ամենին, ինչն իր ուժերի սահմաններում էր։ Այդ ցանկությունը նրա տեսիլքն էր։ Նա ուտում, խմում, քնում և ապրում էր՝ կլանված մեն–միակ երազանքով. մեռնել՝ հասնելով այն ամենին, ինչին ի վիճակի էր հասնել։

Նրա առջև այնքան շատ հնարավորություններ էին փռված, որ նա նույնիսկ դժվարանում էր որոշել իր նպատակները։ Նա զգում էր, որ բավական է ինքն իսկապես ցանկանա,՝ և ամբողջ աշխարհն իրեն կպատկանի։ Երբեմն նույնիսկ հենց իրեն էին վախեցնում այն ուժերը, որոնք մղվում էին նրա մտքերում և սրտում։ Նա ոչ թե պարզապես վստահ էր, այլ գիտեր, որ իր պոտենցիալն անսահման է։ Նա գիտեր, որ կարող է այնպիսի իշխանության հասնել, որը կմթագներ հնագույն տիրակալների հզորությունը. նա գիտեր, որ կարող է այնպիսի գրքեր գրել, որոնք կցնցեին գալիք սերունդներին. նա գիտեր, որ կարող է այնպիսի գյուտեր ներմուծել աշխարհ, որոնք ընդմիշտ կփոխեն միլիոնավոր մարդկանց կյանքը։ Նա իր մեջ ուժ էր զգում, և այդ ուժն անսահման էր։

Միայն մի խոչընդոտ կար նրա ճանապարհին. այդպիսի պոտենցիալի տիրելով, բայց ընդամենը մեկ կյանք ունենալով՝ նա պետք է որոշեր, թե հատկապես ինչ ձևով կիրառի իր բոլոր ընդունակությունները։ Եվ այդ հիմնախնդրից նա, հիրավի, չէր կարողանում գլուխ հանել։ Որոշում կայացնելն անասելի բարդ էր, որովհետև ցանկացած ընտրություն կատարելը հանգեցնում էր անվերադարձ կորսված հնարավորությունների։ Այդ հիմնախնդրի շուրջ խորհրդածելով՝ նա համալսարան ընդունվեց, կրթություն ստացավ, սկսեց աշխատել, ամուսնացավ ու երեխաներ ունեցավ։

Եվ իր ժամանակի յուրաքանչյուր ազատ րոպեն նա անցկացնում էր այն մասին մտածելով, թե դեպի ուր պետք է ուղղի իր ամբողջ հզորությունը։ Ու թեև նա այդ հզորությունը չէր կիրառում աշխատանքում, նրա ուժը չէր կարող աննկատ մնալ։ Նա հաջողության էր հասնում բոլոր բներում, ինչին ձեռնամուխ էր լինում, և նրա հետ աշխատող յուրաքանչյուր մարդ հարգում էր նրան։ Եվ նա մտածում էր. «Նույնիսկ դժվար է պատկերացնել, թե ես ինչի կարող եմ հասնել, երբ կենտրոնանամ այն բանի վրա, ինչը որ կընտրեմ»։

Ժամանակն անցնում էր, և նա ծերանում էր։ Որոշ ճանապարհներ, որոնց մասին նա երազում էր, այժմ արդեն անմատչելի էին։ Բայց նա նախկինի պես կարող էր շատ բաների հասնել։ Եվ նա շարունակում էր լարված խորհրդածել, աշխատել, երեխաներին մեծացնել, ամենօրյա հոգսերից գլուխ հանել և ապրել՝ իմանալով, որ իր պոտենցիալն անսահման է։ Եվ նրան շրջապատողներից շատերը նույն կարծիքին էին, որովհետև նրա հնարավորությունները չէին կարող չնկատվել շրջապատողների կողմից։

Մի անգամ նա շուտ վերադարձավ տուն, որովհետև սուր ցավ զգաց սրտի շրջանում։ Մի կերպ ոտքերը քարշ տալով՝ նա մտավ լոգարան՝ զգալով, որ բայ-

լելն ավելի ու ավելի է դժվարանում: Նա նայեց հայելուն: Հայելում նա ճերմակած մի ծերունի տեսավ: Ու թեև նրա աչքերը կարմրած ու հոգնած էին, նրանցում ճառագում էր չօգտագործված պոտենցիալը: Նա նայեց այդ աչքերին ու հանկարծ մի պարզ ճշմարտություն գիտակցեց: Եվ այդ պահին ցավը նորից շամփրեց նրա սիրտը: Եվ սիրտն ընդմիշտ դադարեց բաբախել: Բոլորը հեծկլտում էին, նույնիսկ նրանք, ովքեր շատ քիչ էին ճանաչում նրան: Կորստի ցավը միայն ավելի էր ուժեղանում այն բանից, որ նրանք գիտեին, թե ինչ հսկայական պոտենցիալ մեռավ նրա հետ միասին: Այո՛, նա ոչ մի կերպ չէր կարողանում որոշում կայացնել, բայց ի՞նչ կկատարվեր, եթե նա կայացներ որոշումը: Անսահման պոտենցիալի նրա զգացողությունը չէր կարող հիմքեր չունենալ: Եթե նա բնագավառ ընտրեր, ապա ամեն ինչի կհասներ այդ բնագավառում: Նրա կյանքը կարող էր շողարձակող կոթողի վերածվել, որը կոգեշնչեր գալիք սերունդներին: Նրանք հեկեկում էին, հեկեկում ու հեկեկում:

Եվ նրանք չգիտեին, թե նա ինչ հասկացավ մահվանից մեկ ակնթարթ առաջ: Մինչդեռ նրա ըմբռնած ճշմարտությունը շատ պարզ էր: Մարդիկ ընդամենը շողոքորթում են իրենց՝ կարծելով, թե իրենք ինչ-որ նպատակների չհասան լոկ այն պատճառով, որ իրենց խանգարեցին հանգամանքները: Բայց դա զուտ պատրանք է: Քո կյանքի ցանկացած պահին, քանի դեռ դու առողջ ես և ճակատագիրը քեզ պատերազմի, հանցագործությունների ու բնության ուժերի պտտահողմի մեջ չի նետել, դու միշտ հասնում ես այն ամենին, ինչին կարող ես հասնել: Պարզապես քեզ մոտ բացակայում է ինչ-որ բան, որն անհրաժեշտ է այն նպատակին հասնելու համար, ինչին դու այդպես էլ չհասար. բացակայում է տաղանդը, ունակությունը, կամքի ուժը, գերակայությունները կամ ուրիշ ինչ-որ բան: Քեզ դա դուր է գալիս թե ոչ, գիտակցում ես դու դա թե ոչ, բայց այդ ինչ-որ բանը պարզապես բացակայում է քեզ մոտ: Դու կարծում ես, թե ընդունակ էիր ավելիին, և միայն անհաղթահարելի խոչընդոտները քեզ խանգարեցին հասնել բարձունքներին: Բայց իրականում այն, ինչին դու չես հասնում, հենց այն է, ինչին դու չես կարող հասնել:

*Այս առակն անչափ ուսանելի է, և անձամբ ինձ շատ է դուր գալիս: Բայց սա այն սակավաթիվ դեպքերից է, երբ պարզապես չեմ կարող իմ նկատառումները չհայտնել: Լիովին համաձայն լինելով առակի հիմնական մտքի հետ՝ կարծում եմ՝ թեմայի կարևոր մի ասպեկտ, այնուամենայնիվ, առակում բաց է թողնված: Խոսքը ժամանակային հեռանկարի մասին է: Եթե կա նպատակ, որին այսօր մարդը չի հասնում, դա դեռ չի նշանակում, թե նա ապագայում դրան հասնել չի կարողանա: Մարդը մշտապես աճում, զարգանում է (խոսքս նրանց մասին չէ, ովքեր, իրենց կյանքի որոշ պահից սկսած, այլևս դադարում են աճել): Մեր աճելու հետ միասին աճում, զարգանում են նաև մեր կարողությունները, ունակությունները: Այսօր մենք այն չենք, ինչ էինք տասը տարի առաջ: Այսօր մենք հեշտությամբ լուծում ենք այնպիսի խնդիրներ, որոնք տասը տարի առաջ հաստատ չէինք կարողանա լուծել: Հիշե՛ք ինքներդ ձեզ: Մի՞թե դուք այսօր անհամեմատ ավելի հզոր չեք, քան, օրինակ՝ դպրոցահասակ տարիքում: Այնպես որ, ապագայում մենք կկարողանանք հասնել այն նպատակներին, որոնց այսօր չենք կարողանում հասնել: Մանավանդ, եթե վերլուծենք մեր գործունեությունը, հայտնաբերենք այդ «պակասող ինչ-որ բանը» և նպատակասլաց ձևով զարգացնենք դա: Տաղանդները, ունակությունները, կամքի ուժը, գերակայությունները որոշելու ունակությունը և բազմաթիվ այլ ունակություններ հաստատ հնարավոր է և պետք է զարգացնել: Սա իմ համոզմունքն է: Իսկ ի՞նչ եք մտածում դուք այս կապակցությամբ:*



* * *

## ԱՆԼՈՒԾԵԼԻ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Մի ուսանող դասախոսության ժամանակ քնել էր: Մինչ նա քնած էր, դասախոսը գրատախտակին մի խնդիր ձևակերպեց: Նա ասաց, որ այդ խնդիրը ոչ ոք չի կարող լուծել, որովհետև այն անլուծելի է: Բոլոր ուսանողները նայեցին խնդրին, համաձայնվեցին, որ այն անլուծելի է և դասախոսության ավարտից հետո հեռացան դահլիճից՝ նույնիսկ չարտագրելով խնդրի պայմանները: Քնած ուսանողն արթնացավ, մտածեց, որ այդ խնդիրը հանձնարարված է որպես տնային առաջադրանք, արտագրեց այն, գնաց տուն և լուծեց:

* * *

*(ծագումն անհայտ է)*

Կարելի՞ է արդյոք մեկ րոպեում հասու դառնալ ճշմարտությանը:
— Իհարկե, կարելի է,— պատասխանեց Վարպետը:
— Բայց չէ՞ որ մեկ րոպեն չափազանց քիչ է:
— Դա հիսունինը վայրկյանով ավելի շատ է, քան պետք է:
— Այդ դեպքում տարիներ տևող հոգևոր որոնումներն ինչի՞ համար են:
— Աչքերը բացվելու համար հնարավոր է պահանջվի անգամ ամբողջ կյանքը: Իսկ տեսնելու համար մեկ ակնթարթն էլ բավական է:

* * *

## ՏԱՐԲԵՐ ԱՐԺԵՔՆԵՐ

*(հնդկական առակ)*

Մի գյուղում Պոդո անունով մի երիտասարդ էր ապրում: Այդ գյուղում հին, կիսավեր մի վանք կար: Աստծո արձանիկը, որին անցյալում երկրպագում էին, անհետացել էր, և վանքը ներկայումս լոկ չղջիկների օթևանի էր վերածվել:

Մի գիշեր գյուղի բնակիչներն ապշանքով լքված վանքում հնչող զանգակնե-

րի, գոնգերի ու խեցիների ձայներ լսեցին։ Բոլորը՝ տղամարդիկ, կանայք ու երեխաները, վազեցին դեպի այնտեղ։ Նրանք մտածում էին, որ ինչ–որ մեկը աստծո նոր պատկեր է բերել վանք և ճրագները վառելով, ծաղիկներ, պտուղներ ու սուրբ ջուր բերելով՝ երեկոյան արարողությունն է կատարում։ Նրանք բոլորը, ձեռքերը ծալած, տաճարի դռների մոտ կանգնած, երկյուղածությամբ ունկնդրում էին վանքից լսվող հնչյունները։ Նրանցից մեկը, որ մնացածներից ավելի հետաքրքրասեր էր, որոշեց ներս մտնել։ Ի զարմանս իրեն՝ նա այնտեղ տեսավ Պոդոյին, որը հնչեցնում էր զանգակներն ու փչում էր խեցե փողը, բայց հատակն այնտեղ առաջվա պես կեղտոտ էր, և բեմի վրա էլ աստծո ոչ մի պատկեր չկար։ Ներս մտածը գոչեց.

— Ո՜վ Պոդո։ Ախր տաճարում Մադհավա (աստծո մարմնավորում) չկա։ Ինչո՞ւ ես խեցեփողը փչելով՝ այս ամբողջ աղմուկը բարձրացրել։ Նայի՛ր, ախր դու նույնիսկ չես մաքրել տաճարը, չես հեռացրել կեղտը և հատակը չես լվացել Գանգեսի սուրբ ջրով։

* * *

## Ո՞ՒՐ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ

*(առակ Օշոյի շարադրմամբ)*

Մի աթեիստ քահանային հարցրեց. որովհետև այդ օրվա քարոզի ժամանակ քահանան ասել էր, որ Աստծուն հավատացող և առաքինի գործեր կատարող մարդիկ դրախտ են ընկնում, իսկ Աստծուն չհավատացողները, մեղավորները՝ դժոխք։ Աթեիստը ձեռք բարձրացրեց և ասաց.

— Պարո՛ն, այդ դեպքում հարկավոր է մի հարց պարզել։ Ի՞նչ է կատարվում այն մարդկանց հետ, ովքեր չեն հավատում Աստծուն, բայց առաքինի գործեր են կատարում, որտե՞ղ են նրանք ընկնում։ Եվ ի՞նչ է կատարվում նրանց հետ, ովքեր հավատում են Աստծուն, բայց մեղքեր են գործում, նրա՛նք ուր են ընկնում։

Քահանան, բնականաբար, շփոթվեց։ Եթե ասի, որ առաքինի մարդիկ դժոխք կընկնեն միայն այն պատճառով, որ չեն հավատում Աստծուն, ապա դա սխալ է թվում։ Այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի առաքինի լինել։ Եթե ասի, որ դրախտ են ընկնում մարդիկ, որոնք հավատում են Աստծուն և, այնուամենայնիվ, մեղքեր են գործում, այդ դեպքում ընդամենը հավատամք ունենալը բավական է։ Այդ դեպքում Աստծուն չեն հետաքրքրում քո գործողությունները։ Դու կարող ես սպանել, կարող ես Չինգիզ խան կամ Ադոլֆ Հիտլեր լինել, միայն թե հավատաս Աստծուն։

Մինչդեռ Ադոլֆ Հիտլերը հավատում էր Աստծուն, Չինգիզ խանը նույնպես հավատում էր. հազարավոր մարդկանց գազանաբար սպանելուց առաջ ամեն առավոտ նա Ղուրան էր կարդում։

Քահանան, հավանաբար, շատ զգայուն, զգոն մարդ էր. նա ասաց.

— Խնդրում եմ, ինձ ժամանա՛կ տուր։ Սա շատ դժվար հարց է։ Ես հաջորդ կիրակի կպատասխանեմ։



Այդ յոթ օրերը քահանայի համար իսկական դժոխք էին. նա ոնց էլ փորձում էր, ոչինչ չէր ստացվում։ Կիրակին եկավ, և նա գիտեր, որ աթեիստը կգա պատասխանի ետևից, բայց եթե ինքը չգնար, ապա դա նվաստացուցիչ կլիներ։ Եվ նա ժամանակից մի փոքր շուտ եկավ և աղոթեց Հիսուս Քրիստոսին.

— Օգնի՛ր ինձ։ Ես Քո ծառան եմ, ես Քո անունից էի խոսում։ Հիմա օգնի՛ր ինձ, մի ակնա՛րկ տուր։

Քրիստոսին աղոթելով՝ նա յոթ օր չէր քնել՝ օր ու գիշեր շարունակ մտածելով։ Նա քնեց Հիսուսի արձանի առջև ու երազ տեսավ։ Երազում նա մի գնացք տեսավ, որը պատրաստվում էր մեկնել դրախտ։ Նա ցատկեց այդ գնացքի մեջ և ասաց.

— Սա շատ լավ է, ինչո՞ւ ես ինքս չգնամ այնտեղ ու իմ աչքերով չտեսնեմ։ Եթե ես դրախտում տեսնեմ Ադոլֆ Հիտլերին, Չինգիզ խանին ու Թամերլանին, հարցը կլուծվի։ Կամ եթե ես տեսնեմ Սոկրատին, որն Աստծուն չէր հավատում, բայց ամենաառաքինի մարդկանցից մեկն էր, եթե տեսնեմ Գաուտամա Բուդդային, որը չէր հավատում Աստծուն, բայց երկրի վրա երբևէ ապրած ամենաաստվածակերպ մարդկանցից մեկն էր, ապա հարցը կլուծվի։

Նա շտապեց գնացք նստել, և գնացքը շարժվեց։ Նա հասավ դրախտ։ Նա մի փոքր զարմացած ու մտահոգ էր, որովհետև դրախտն ամբողջովին ոչ դրախտային տեսք ուներ. այն շատ թախծոտ էր, տխուր ու դժգույն՝ ոչ մի ուրախություն, ոչ մի արևոտ բան, ոչ մի երաժշտություն։ Նա այնքան շատ էր լսել հրեշտակների մասին, որոնք շարունակ տավիղ են նվագում, երգում ու պարում են։ Մինչդեռ այստեղ ոչ մի տավիղ, ոչ մի երգեցողություն, ոչ մի պար չկար։ Ընդամենը հիմար տեսքով մի քանի սրբեր էին փոշոտ ծառերի տակ։

Նա հարցուփորձ արեց, մոտեցավ կայարանի պետին ու ասաց.

— Այստեղ ինչ–որ սխալմունք չկա՞։ Սա իսկապե՞ս դրախտն է։

— Այո՛, սա դրախտն է,— պատասխանեց վերջինս։

— Բայց սա ավելի շատ դժոխքի է նման,— ասաց քահանան։— Իսկ դժոխք գնացող որևէ գնացք չկա՞։ Ես կցանկանայի դժոխքն էլ տեսնել, որպեսզի հնարավոր լիներ համեմատել։

Նրա համար տեղ պահեցին, և նա մեկնեց դժոխք. և ավելի շատ զարմացավ, քան դրախտը տեսնելիս։ Այստեղ շատ ուրախություն էր, այստեղ երաժշտություն էր հնչում ու երգեր էին երգում, ամեն ինչ արևոտ ու պայծառ էր։ Մարդիկ աշխատում էին, նրանց աչքերում լույս կար։ Ոչ մի սատանա, ոչ մի դժոխային կրակ, ոչ ոք ոչ ոքի չի տանջում՝ ոչ մի նման բան չկա։ Եվ նա ասաց.

— Սա ավելի շատ դրախտի է նման։

Եվ կայարանի պետը պատասխանեց.

— Այո՛, իսկապես շատ նման է, բայց նախկինում ամեն ինչ շատ նման էր այն ամենին, ինչպես քո սուրբ գրքերն են նկարագրում։ Բայց այն ժամանակից ի վեր, ինչ այստեղ հայտնվեցին Բուդդան, Մահավիրան ու Սոկրատը, ամեն ինչ վերափոխվեց։

* * *

## ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Ես քարեր եմ գցում ջրի մեջ:
Նայում եմ, թե օղակները ջրի երեսին
Ինչպես են ծնվում ու մարում:
Եվ դա դուր է գալիս ինձ...

* * *

## ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

*(Պաուլո Կոելյո)*

Լույսի ռազմիկը զգույշ է նրանց հետ, ովքեր կարծում են, իբր գիտեն ճանապարհը:

Նրանք մշտապես այնքան վստահ են որոշումներ կայացնելու իրենց ընդունակության վրա, որ չեն հասկանում այն հեգնանքը, որով ճակատագիրը վերաբերվում է նրանցից յուրաքանչյուրի կյանքին: Եվ երբ անխուսափելին ծեծում է դուռը, նրանք վրդովվում են:

Լույսի ռազմիկը երազանքներ ունի: Դրանք նրան տանում են առաջ:

Բայց նա երբեք սխալ չի գործի՝ մտածելով, որ ճանապարհը հեշտ է և դուռը՝ լայն: Նա գիտի, որ Տիեզերքը գործում է նույն կերպ, ինչպես գործում է ալքիմիան. «Solve et coagula», ասում են իմաստունները: «Այն իրավիճակին համապատասխան, որում հայտնվել ես, կենտրոնացրո՛ւ կամ փոշեցրի՛վ արա քո էներգիան»:

Կա գործելու ժամանակ և կա ժամանակ, երբ հարկավոր է ընդունել հանգամանքներն այնպիսին, ինչպիսին դրանք կան: Ռազմիկը գիտի տարբերությունը:

* * *

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ ԸՍՏ ԻՐ ՀԱՎԱՏԻ

Հեթանոսն ու քրիստոնյան հարևաններ էին:

Քրիստոնյան ամբողջ կյանքում սանձում էր ցանկությունները, ջանասիրաբար աղոթում էր, մուրացկաններին փող էր բաժանում՝ ինքը սոված մնալով, երբ մի երեսին խփում էին, մյուս երեսն էր դեմ տալիս, մի խոսքով՝ տանջվում ու տառապում էր:

Իսկ հեթանոսը դաշտում Զաջ աստծուն էր ողջունում ու ապրում էր իր հաճույքի համար:



Եվ ահա մի օր նրանք երկուսն էլ մեռան ու դրախտ ընկան: Քրիստոնյան նայում է ու ի՞նչ տեսնի. հեթանոսն Աստծո հետ նույն սեղանի շուրջն է նստած, իսկ իրեն ստիպում են ամանները լվանալ:

Ասում է.

— Տե՛ր Աստված: Ախր նա ոչ մի բան չէր պահպանում: Իսկ դու նրան քեզ հետ սեղա՞ն ես նստեցնում:

Իսկ Աստված ասում է.

— Որովհետև նա ամբողջ կյանքում իրեն աստծո թոռ էր համարում, իսկ դու քեզ՝ ստրուկ: Յուրաքանչյուրին ըստ իր հավատի:

* * *

## ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ԻՍԿԱՊԵՍ ՀԱՐԿԱՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ, ԵՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ

*(Ռ. Ֆուլհեմ)*

Այն ամենը, ինչ իսկապես հարկավոր է իմանալ կյանքի մասին, ես մանկապարտեզում եմ սովորել: Ես իմաստություն գտա ոչ թե գիտելիքների լեռան ամենաբարձր գագաթին, այլ կիրակնօրյա դպրոցի ավազարկղի մեջ: Ահա թե ինչ սովորեցի ես.

Կիսվի՛ր քո ողջ ունեցածով, ազնվորե՛ն խաղա, մի՛ կռվիր, իրերը դիր այնտեղ, որտեղից վերցրել ես, քեզանից հետո հավաքի՛ր սենյակը, ուրիշինը մի՛ վերցրու, ներողությո՛ւն խնդրիր, եթե որևէ մեկին նեղացրել ես, ձեռքերդ լվա ուտելուց առաջ, զուգարանում քեզանից հետո ջուրը բա՛ց թող, տաք կաթն ու թխվածքաբլիթը լավ կերակուր է, ապրի՛ր հավասարակշռության մեջ՝ մի քիչ սովորի՛ր, մի քիչ մտածի՛ր, մի քիչ նկարի՛ր, երգի՛ր, պարի՛ր, խաղա՛ և աշխատի՛ր ամեն օր, քնի՛ր ճաշից հետո: Տանից դուրս գալուց հետո պահպանե՛ք ճանապարհային երթևեկության կանոնները, ձեռք ձեռքի տվե՛ք և միասի՛ն եղեք: Նկատե՛ք հրաշքները:

Ի՞նչ եմ ուզում ասել. ցանկացած մեծ իմաստություն շատ պարզ է:

* * *

## ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Երկու հոգի նայում են ներքև: Մեկը ջրափոսն է տեսնում, մյուսը՝ նրանում արտացոլված աստղերը:

Յուրաքանչյուրին իրենը:

* * *

## ԵՎ ԼԱՎ ԷՐ

*(ծագումն անհայտ է)*

Մի անգամ երեկոյան ավտոբուսով տուն վերադառնալիս նա նստեց ավտոբուսի վերջում, իսկ տոմսավաճառ աղջիկն ավտոբուսի սկզբնամասում էր նստած: Ու հանկարծ նա հասկացավ, որ չի կարող թույլ տալ, որ աղջիկը վեր կենա ու մոտենա իրեն: Նա ինքը վեր կացավ տեղից ու անցավ ամբողջ ավտոբուսի միջով: Այն մի քանի վայրկյանների ընթացքում, քանի դեռ նա վճարում էր տոմսի համար, աղջկա հայացքից հասկացավ, որ ինքն անսահման իրավացի էր:

Եվ շատ լավ էր...

* * *

## ԻՆՉՈ՞Ւ ՍԱԿԱՐԿԵԼ

*(ծագումն անհայտ է)*

Տաշքենդում էի: Զբոսնում էի, շուրջս նայում: Այդպես զբոսնելով հայտնվեցի շուկայում: Անցնում եմ շարքերի միջով, նայում եմ: Տեսնեմ՝ մի պապի խոշոր, հասած, ուղղակի հոյակապ խաղող է վաճառում:

— Ի՞նչ արժի խաղողը,— հարցնում եմ:

Ծերուկը գինն ասաց: «էժան է»,— մտածեցի ես ու անմիջապես ձեռքս տարա գրպանս՝ դրամ հանելու: Մեկ էլ տեսնեմ՝ պապի դեմքի արտահայտությունը փոխվեց, ու նա ձեռքը թափ տվեց.

— Փող մի՛ հանիր, չեմ ծախում:

— Ինչո՞ւ:

Ձայն չի հանում: Ես էլ եմ լռում, փորձում եմ հասկանալ: Այդ պահին մի կին է մոտենում, պապին խաղողի գինն ասում է, կինն սկսում է սակարկել, մի երկու րոպեից համաձայնության են գալիս, պապին կշռում է խաղողը, հետո մի բան էլ ավելացնում է արդեն կշռած խաղողին ու տալիս կնոջը: Ես այլևս ոչինչ չեմ հասկանում:

— Պապի՛,— ասում եմ ես,— ասե՛ք տեսնեմ, ի՞նչը այն չէ: Ինչո՞ւ ինձ խաղող չեք վաճառում, իսկ այն կնոջը քաշից էլ մի բան ավել տվեցիք: Ախր ես նույնիսկ չսակարկեցի:

Աքսակալը չարախնդորեն կկոցեց աչքերը, շոյեց մորուքը.

— Այ հենց դրա համար էլ քեզ չտվեցի:— Նա լռեց:— Դու դեռ ջահել ես: Հասկացի՞ր. ես այս խաղողն աճեցրել եմ: Աշխատանք եմ թափել, քրտինք եմ թափել, ջրել եմ, հավաքել եմ, հիմա ծախում եմ: Ձեռքս չի գնում, որ տամ: Իսկ իմ դիմացի մարդը փող է աշխատել: Հավանաբար դժվարությամբ է աշխատել, այդ փողերը նրան հեշտությամբ չեն տրվել: Նա նույնպես չի ուզում իր դրամը տալ: Մենք գնի համար կսակարկենք, հետո համաձայնության կգանք, որ երկուսիս համար էլ վիրավորական չլինի, և այդ դեպքում նրա փողն ինձ երջանկություն կբերի, նա հաճույքով կտա իր դրամը: Իսկ ես էլ քաշից ավել խաղող կտամ նրան, որպեսզի նա նույնպես լավ զգա իրեն:

Պապին ևս մեկ չարախինդ հայացք ձգեց ինձ վրա.

— Իսկ նա, ով չի սակարկում, այդ մարդը դրամը չի գնահատում: Կամ այդ դրամը հեշտությամբ է տրվել նրան, կամ էլ գողացել է. դրանք վատ փողեր են, դրանք չպետք է հեշտությամբ տրվեն մարդուն: Ու այդ փողերն ինձ երջանկություն չեն բերի: Ավելի լավ է՝ ես գործ չունենամ էդ տեսակ փողերի հետ:

Ես հասկացա:

— Պապի՛,— ասում եմ,— ինչքա՞ն կէժանացնես:

* * *

## ՄԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

*(ծագումն անհայտ է)*

Մեծ Երկրից հեռու ընկած մի կղզու վրա մարդիկ էին ապրում՝ միանգամայն անսովոր մարդիկ: Նրանք անհաջողությունները դիմավորում էին առանց հայհոյելու, նրանք առանց բռունցքների էին լուծում պրոբլեմները, նրանք միմյանց հյուր էին գնում առանց թույլտվության, նրանք դռները բաց էին թողնում, նրանք երեխաներ էին ծնում և, այդ ամենով հանդերձ, երջանիկ էին: Երեխաները վազվզում էին փողոցներում, ամենապարզունակ խաղերն էին խաղում, մշտապես ժպտում էին: Մեծահասակները չէին մռթմռթում իրենց պետերի վրա, գոհ էին կյանքում իրենց ունեցած տեղով, ամբողջ ժամանակ ժպտում էին: Ծերունիներն իսկական կառավարիչ էին ընդունում, չէին մտածում մոտալուտ մահվան մասին, ամբողջ ժամանակ ժպտում էին: Բնությունը վարձահատույց էր լինում նրանց, նա հրաշալի եղանակ էր պարգևում, հարուստ բերքահավաքներ, պայծառ ու ջերմ արև, տաք ու արագահոս անձրևներ, գեղեցկագույն ամպրոպ, կապույտ երկնային ծով: Մարդկանց ու բնության միջև անխզելի կապ կար...

Նրանց կառավարիչը, կոչենք նրան «x», սիրալիր հոգու տեր մարդ էր, նա ճանաչում էր պետության մեջ բոլոր մարդկանց ու յուրաքանչյուրին առանձին վերցրած, և նրան ընտրել էին որպես անարատի, մաքուր մարդու: «x»–ն ամեն օր հանդես էր գալիս ելույթով, բայց ոչ թե թղթից կարդում, այլ սրտից բխող խոսք էր ասում, նրա ճառերում երախտագիտություն էր բնության հանդեպ, յուրաքանչյուր առանձին մարդու հանդեպ, Երկնքի, ընտանիքի հանդեպ: Նրա ճառերում ոչ մի կաթիլ կշտամբանք, չարացածություն, ափսոսանք չկար: Պետությունն ապրում էր առանց խնդիրների, առանց հոգսերի: «x»–ն ամեն օր ինչ–որ մեկին հյուր էր գնում, միգուցե մերձենում էր իր ժողովրդի հետ... չէ՛, պարզապես նա հաճույքով ապրում էր, ինչպես և մնացած բնակիչները:

Անհոգ կյանքի համար Երկինքը նրանց պարգևատրում էր բոլոր ցանկությունների իրականացմամբ: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր մարդ մահվանից առաջ երջանիկ էր լինում՝ գիտակցելով իր կյանքի տրամաբանական ավարտը, երբ

իրականացել են բոլոր ցանկությունները, երբ բոլոր նպատակները ձեռք են բերված, երբ ոչ մեկին չարիք չես պատճառել... Նրանք հաճույք էին ստանում կյանքից... Բայց... մի անգամ Մեծ Երկրի խելքին փչեց, որ հարկավոր է ինչ–որ կղզի հայտնաբերել... Նրանք փնտրելու համար նավարկության մեկնեցին և, բնականաբար, մեր կղզին էլ գտան... Բնակիչները նրանց դիմավորեցին ուրախությամբ, բայց նաև զարմանքով... Դե իսկ նրանք բնակիչներին դիմավորեցին միայն մի ցանկությամբ՝ հնարավորին չափ շուտ դրանց բոլորի վերջը տալ ու հաջորդ կղզին իրենցով անել... Կարելի է պատկերացնել այդ տեսարանը... Երկու բազմություն կանգնած է, նրանցից մեկի աչքերում երջանկություն է, ուրախություն, բարություն... իսկ մյուսի մոտ՝ միայն չարություն.. Կարծում եմ՝ իմաստ չունի մանրամասնորեն պատմել այն մասին, թե հետո ինչ եղավ... առանց դրա էլ հասկանալի է... Կպատմեմ արդյունքների մասին: Պարոն «x»–ի պետությունը հանձնվեց օտարականների բազմության ճնշման տակ... Բայց այդ բազմությանը կարեկցանք ասած բանը հայտնի չէր... Նրանք ոչնչացրին ամեն ինչ: Նրանք այդ սիրալիր, անմեղ մարդկանց վերածնեցին ու դարձրին իրենց նման՝ չար, անողոք, անպիտան, նույնիսկ ոչ թե մարդիկ, այլ էակներ... Արդյունքում՝ մինուս բազմաթիվ դրախտային մարդիկ, պլյուս բազմաթիվ զավակներ դժոխային կյանքի...

Հիմա մեզ՝ դրախտայինի ու դժոխայինի միջև գտնվող փոխզիջումներիս, կարող է թվալ, թե այդպիսի մարդիկ չկան, ո՛չ դրախտային, ո՛չ էլ դժոխային... բայց մենք սխալվում ենք... Պարոն «x»–ի պետության հետ կատարվածից հետո Երկինքը հասկացավ, որ մարդկանց միջև այդպիսի հակադրություն չպետք է լինի... Երկինքը սկսեց համահարթեցնել մարդկությանը, ինչ–որ միջին մի բանի բերել... Եվ հիմա այդ գործընթացը շարունակվում է... Քանի դեռ կան հանցագործներ, քանի դեռ կան տերտերներ, այդ համահարթեցումը կշարունակվի... Բայց Երկինքն իրենը կանի... և ժամանակը կգա... ժամանակն առանց չարության, ժամանակն առանց բարության... ժամանակը, երբ ամեն մեկը միայն ինքն իր հետ է... երբ չի լինի հայհոյանք, չեն լինի աղոթքներ, չեն լինի բառեր... կլինեն միայն մտքեր... մտքեր ոչ մի բանի մասին...

* * *

## ԽՈՐՀՈՒՐԴ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Հավատակից եղբայրներից մեկը եկավ ծերունու մոտ ու ասաց.

— Աբբա, ասա՝ ինձ, ինչպե՞ս փրկվեմ:

Ծերունին նրան պատասխանեց.

— Եթե ցանկանում ես փրկվել, ապա ինչ–որ մեկի մոտ գնալիս մի՛ սկսիր խոսել, քանի դեռ քեզ չեն հարցրել:

Եղբայրը, այս խոսքերից ապշած, խոնարհվեց ծերունուն և ասաց.

— Հիրավի, ես գրքեր շատ եմ կարդացել, բայց այսպիսի խրատ դեռ չէի ստացել:

Ու գնաց՝ մեծ օգուտ ստանալով:



* * *

## ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

*(սուֆիական առակ)*

Երկու ընկեր անտառով գնալիս երկու հակ գործվածք գտան: Ընկերներից մեկն անմիջապես վերցրեց հակերն ու հրաժարվում էր կիսվել ընկերոջ հետ:

— Ո՞նց թե,— վրդովվեց երկրորդ ընկերը,— ախր մենք երկուսով տեսանք այս հակերը, ուրեմն արդարն այն կլինի, որ մենք սա երկու հավասար մասի բաժանենք. մի հակը քեզ, մյուսը՝ ինձ:

Բայց նրա ընկերը հրաժարվում էր լսել այդ հորդորները՝ ասելով, որ ամբողջ գործվածքը միայն իրեն է պատկանում, և նա չի պատրաստվում որևէ մեկի հետ կիսել այն: Նա, ով ձեռնունայն մնաց, առաջարկեց դիմել դատարան:

Քաղաք հասնելով՝ նրանք գնացին դատարան: Տուժածը (հայցվորը) պատմեց կատարվածի հանգամանքները՝ պահանջելով արդարացի որոշում կայացնել. գործվածքը հավասար բաժանել: Պատասխանողը հաստատեց գտնելու հանգամանքները, բայց հայտարարեց, որ հավակնում է ամբողջ գործվածքին:

Դատավորը հարցրեց հայցվորին.

— Ես ճի՞շտ հասկացա, որ դու հավակնում ես մեկ հակ գործվածքին, իսկ մյուսը համաձայն ես տալ պատասխանողին:

— Այո՛— պատասխանեց հայցվորը:

Դատավորը շարունակեց.

— Այսպիսով՝ տվյալ դեպքում վեճի առարկա է միայն մեկ հակ գործվածքը: Իսկ քանի որ դուք երկուսդ էլ հավակնում եք դրան, ես որոշում եմ այդ հակը կիսել ձեր երկուսի միջև:

Այդպես ի կատար ածվեց արդարադատությունը:

***Ակամա մտաբերում եմ հայտնի հոգեբան Ն. Կոզլովի խոսքերն այս կապակցությամբ: Նա ասում էր. «Արդարությունը կյանքի դպրոցի ցածր դասարանների հասկացություն է»: Այո՛, կյանքը երբևէ պարտավորություն չի ստանձնել արդարացի լինել: Ոչ էլ որևէ մեկին այդպիսի խոստում է տվել:***

* * *

## ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ հարգված մի քաղաքացի եկավ Սողոմոնի մոտ այն ժամանակ, երբ վերջինս հիանում էր ջրափոսում ճողփացող ձկներին նայելով, և ասաց.

— Թագավո՛ր, ես շփոթմունքի մեջ եմ: Իմ կյանքի ամեն մի օրը նման է նախորդին, և ես չեմ տարբերում արևածագը մայրամուտից և այլևս երջանիկ չեմ:

Սողոմոնը մտորեց և ասաց.

— Շատերը կերազեին քո տեղում լինել, քո տունն ունենալ, քո այգիներն ու հարստությունը:

Նաև հարցրեց իմաստուն թագավորը.

— Իսկ ինչի՞ մասին ես դու երազում:

Պատասխան տվեց խնդրատուն.

— Սկզբից ես երազում էի ստրկությունից ազատագրվելու մասին: Յետո ես երազում էի, որ իմ առևտուրը եկամուտ բերի: Իսկ հիմա ես չգիտեմ ինչի մասին երազեմ:

Այդժամ Սողոմոնն ասաց.

— Երազանք չունեցող մարդը այս լճակում լողացող ձկների պես է: Նրանց կյանքի ամեն մի օրը նման է նախորդին, նրանք արևածագն ու մայրամուտը չեն տարբերում և երջանիկ չեն:

Նաև ավելացրեց թագավորը.

— Միայն թե ի տարբերություն ձկների՝ դու ինքդ ես քեզ բանտարկել քո լճակում: Եթե քո կյանքում բարի նպատակ չկա, դու աննպատակ թրև կգաս քո տանը և մեռնելիս կհասկանաս, որ իզուր ես ապրել: Եթե նպատակ կա, ամեն անգամ քայլ անելիս դու կիմանաս. այն մոտեցրե՞ց քո նպատակին, թե՞ հեռացրեց, և դա ազարտով ու կյանքի հանդեպ կրքով կլցնի քո ներսը:

Այցելուն կնճռոտեց ճակատն ու արտաբերեց.

— Նշանակո՞ւմ է դա արդյոք, որ ամեն անգամ իմ մի նպատակին հասնելով՝ ես պետք է հաջորդը փնտրեմ, ամեն անգամ, երբ իմ մի երազանքն իրականանա, ես պետք է նոր երազանք պահեմ և միայն որոնման մեջ երջանկություն կգտնեմ:

Եվ պատասխանեց թագավորը.

— Այո:

* * *

## ԱՅՆ, ԻՆՉ ՊԵՏՔ Է

*(սուֆիստական առակ)*

Մի անգամ սուֆիստ Վարպետն ու իր աշակերտներն օթևան էին փնտրում գիշերելու համար: Բայց մոտակա գյուղի բնակիչները նրանց շառլատանների տեղ դրեցին ու հեռու քշեցին, այնպես որ նրանք ստիպված էին անտառում գիշերել:

Ընթրիքի ժամանակ նրանք հանեցին իրենց սննդի պաշարի վերջին փշրանքները, և Վարպետը երախտագիտության աղոթք կարդաց:

— Ուսուցի՛չ,— հարցրին աշակերտները,— բայց դու ինչի՞ համար ես երախտագիտություն հայտնում Աստծուն: Այսօր նա մեզ ո՛չ հաց տվեց, ո՛չ էլ օթևան, և հիմա մեր շուրջը միայն գայլերն են ոռնում: Էլ ինչո՞ւ երախտագիտություն հայտնել:

— Ես դա չգիտեմ,— պատասխանեց Վարպետը:— Ես միայն մի բան գիտեմ. նա մեզ տվեց հենց այն, ինչը մեզ հիմա ամենից շատ է պետք:



* * *

## ՀԵՔԻԱԹ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ...

*(ծագումն անհայտ է)*

Աստվածներն արարեցին Մարդուն ու բանականություն շնորհեցին նրան պատգամելով իմաստնաբար օգտագործել այն: Մարդը հպարտացավ իր հստակ գիտակցությամբ: Նա եկավ թռչունների մոտ և ասաց.

— Ես ամենախելացին եմ, ես ձեր տիրակալն եմ լինելու:

Շիկահավը ծիծաղեց և ասաց.

— Քանի որ այդքան խելոք ես, սովորի՛ր թռչել, այդ ժամանակ քեզ որպես մեր տիրակալ կճանաչենք:

Մարդը աղեղ հնարեց ու սպանեց շիկահավին: Եվ թռչունները երես թեքեցին նրանից:

Մարդը եկավ անտառի գազանների մոտ և ասաց.

— Ես ամենախորամանկն ու ամենախելացին եմ, դուք ծառայելու եք ինձ, անտառի՛ արարածներ:

Գայլը պատասխանեց.

— Քո հոտառությունը թույլ է, ականջներդ վատ են լսում, նաև արագ վազել չես կարողանում: Միայն քո հպարտությունն է ավելի շատ, քան մեր բոլորինը: Կատարելագործվի՛ր և արի՛ որպես արժանավոր:

Մարդը թակարդ հնարեց ու որսաց գայլին: Այդպես նա գազաններին ևս վանեց իրենից:

Մարդը եկավ գետափ ու ճառով դիմեց ձկներին.

— Ես ամենաուժեղն ու խելացին եմ ցամաքում, և դուք՝ ջրային էակներ, ինձ պետք է ենթարկվեք:

Թառափը գլուխը ջրից դուրս հանեց ու ի պատասխան՝ մռթմռթաց.

— Դու նույնիսկ հինգ րոպե չես կարող ջրի տակ ապրել, ինչպե՞ս ես պատրաստվում մեր տիրակալը լինել:

Մարդը ուռկան հնարեց ու թառափին ջրից դուրս քաշեց ափ: Մնացած ձկները սարսափահար լողացին դեպի խորքերը:

Այդժամ մարդը եկավ աստվածների մոտ և ասաց.

— Ես ամենախելացին եմ, խորամանկն ու ուժեղը, ես բոլոր թռչուններին, գազաններին ու ձկներին հնազանդեցրել եմ: Ինձ աստվա՛ծ դարձրեք:

Եվ պատասխանեց Նա, ով բոլոր կրտսեր ոգիների, բոլոր կենդանի արարածների Տիրակալն է.

— Սովորի՛ր սիրել և այդ ժամանակ արժանի կլինես:

Մարդը հնարեց աթեիզմն ու սպանեց Աստծուն:

* * *

## ԱՌԱՆՑ ՁԱՆՔԵՐԻ ՀԱՂԹՈՂԸ

Սրի հանրահայտ վարպետ Յունահարո Բոկուդենը մեծ նավակով ճամփորդում էր Բիվա լճի վրայով: Ուղեկիցներից մեկը՝ երիտասարդ ու բռնկուն մի սամուրայ, նրան մենամարտի հրավիրեց.

— Ո՞րն է ձեր դպրոցը,— քամահրանքով հարցրեց պատանի ֆանֆարոնը:

— Առանց ջանքերի հաղթողների դպրոցն է,— հանգիստ պատասխանեց Բոկուդենը:

Մնացած ուղևորներին չվնասելու նպատակով նա առաջարկեց մենամարտել լճի կենտրոնում գտնվող փոքրիկ կղզյակի վրա: Երբ նավակը լողալով մոտեցավ կղզյակին, մենամարտերի սիրահարն առաջինը ափ ցատկեց: Իսկ Բոկուդենը վերցրեց թիակն ու ետ հրվեց ափի քարից: Նավակը լողալով սկսեց հեռանալ կղզյակից:

— Առանց ջանքերի հաղթելու դպրոցն այս է,— ամփոփեց Բոկուդենը, որը չէր ցանկանում զուր տեղը այդ ոչ խելամիտ մարդու արյունը թափել:

* * *

## ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՆՈՒԹ

*(ծագումն անհայտ է)*

Ես աչքերիս չհավատացի՝ խանութի վրայի ցուցանակը տեսնելով. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՆՈՒԹ»:

Վաճառողուհին շատ քաղաքավարի կերպով հետաքրքրվեց, թե ինչպիսի ճշմարտություն եմ ես ցանկանում գնել՝ մասնակի՞, թե՞ լիակատար: Ինչ խոսք, ես՝ լիակատարը: Ես չեմ ընդունում ոչ մի կեղծիք, ոչ մի տեսակի արդարացումներ, հետին թվով արվող ոչ մի բացատրություններ: Ուզում եմ, որ իմ ճշմարտությունը լինի հստակ և չաղավաղված: Վաճառողուհին ինձ ուղարկեց խանութի մյուս ծայրը:

Այնտեղ ինձ ցույց տվեցին գնացուցակը:

— Գինը շատ բարձր է,— ասաց վաճառողը:

— Եվ ո՞րն է այդ գինը,— հարցրի ես՝ որոշելով ցանկացած գնով ձեռք բերել ամբողջ ճշմարտությունը:

— Գինը Ձեր հանգստությունն է,— հետևեց պատասխանը:

Ես ծանր սրտով դուրս եկա փողոց: Ես նախկինի պես ցանկանում էի վստահ լինել այն բանում, որ իմ կերտած աշխարհայացքը ճշմարիտ է:



* * *

## ՔԱՂԱՔՆ ՈՒ ՎԻՇԱՊԸ

*(ծագումն անհայտ է)*

Մի վիշապ հայտնվեց ու փակեց քաղաքին ջուր մատակարարող ակունքը: Ջրի դիմաց նա բնակիչներից պահանջեց ամենագեղեցիկ աղջիկներին, թանկարժեք իրեր, այլևայլ ընծաներ:

Ամեն տարի քաղաքի երիտասարդներից ամենախիզախը գնում էր նրա դեմ կռվելու, բայց վիշապը միշտ հաղթում էր:

Այդպես շարունակվեց շատ տարիներ, մինչև քաղաքում հայտնվեց Իմաստունը: Իմանալով ողբերգության մասին՝ նա ընտրեց ճշմարտասեր մի պատանու և սկսեց ուսուցանել նրան: Իմաստունը հիմնական ուշադրությունը հատկացնում էր բարոյական, հոգևոր դաստիարակությանը, ապա սովորեցրեց նրան նաև ռազմական արվեստը:

Պատանին առնականացավ, եկավ վիշապի դեմ կռվելու նրա ժամանակը, և նա հաղթեց:

Ցնծացող քաղաքացիներն ապշել էին, երբ քարանձավում՝ վիշապի ապարանքի կողքին, հայտնաբերեցին բազում վիշապների դիակներ: Մարդիկ հասկացան, որ ամեն տարի հաղթում էր իրենց մարտիկը, սակայն նա գայթակղվում էր վիշապի արքայական ապրելակերպով, քաղաքի վրա ունեցած նրա անսահմանափակ իշխանությամբ, և ինքն էր վերածվում վիշապի՝ դավաճանելով քաղաքին, ընկերներին, ծնողներին:

Եվ էլի շատ բաներ նրանք հասկացան...

* * *

## ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԸ

*(հրեական առակ)*

Մի հյուրասեր մարդ մի անգամ երեք օրով հյուր էր գնացել իր ընկերոջը: Երբ նա պատրաստվում էր հեռանալ, տանտերը նրանից ներողություն խնդրեց այն բանի համար, որ ինքը չկարողացավ նրան ընդունել ինչպես որ հարկն էր:

— Շատ լավ,— ասաց հյուրը,— երբ դու գաս ինձ մոտ, ես քեզ ավելի լավ կընդունեմ:

Շուտով առիթը եղավ, և նրա ընկերը հյուր եկավ: Ի զարմանս իրեն՝ հյուրը տանը ոչ մի առանձնակի պատրաստություն չնկատեց: Տանտերն զգաց հյուրի տարակուսանքը և ասաց.

— Ես քեզ խոստացել էի, որ ավելի լավ կընդունեմ քեզ, քան դու ընդունեցիր ինձ: Դու ինձ վերաբերվում էիր որպես օտարի. մանրակրկիտ նախապատրաստվել էիր իմ այցելությանը, իսկ ես քեզ ընդունեցի որպես իմ ընտանիքի անդամի:

* * *

## ԽՐՏՎԻԼԱԿԸ

*(Ջիբրան Խալիլ Ջիբրան)*

Մի անգամ ես խրտվիլակին հարցրի.

— Մի՞թե չես զզվել այս լքված դաշտի կենտրոնում կանգնելուց:

Եվ ի պատասխան՝ լսեցի.

— Ագռավներին վախեցնելն այնքան խորը և մեծ ուրախություն է, որ ես երբեք չեմ զզվի:

— Ճշմարիտ է ասված,— մի փոքր խորհելով՝ ասացի ես,— այդ ուրախությունն ինձ էլ է ծանոթ:

— Դա միայն նրան է ծանոթ, ով դարմանով է լցված,— մրմնջաց խրտվիլակը:

Այն ժամանակ ես հեռացա՝ չիմանալով, թե ինչ մտածեմ. նա ցանկանում էր շողոքորթե՞լ ինձ, թե՞ ստորացնել:

Մի տարի անցավ: Խրտվիլակն այդ ընթացքում փիլիսոփա դարձավ:

Եվ երբ ես նորից անցնում էի նրա մոտով, ես տեսա, թե երկու ագռավ ինչպես են բույն հյուսում նրա գլխարկի տակ:

* * *

## ԻՆՔՆ ԻՐԵՆ ԹՇՆԱՄԻ

*(ծագումն անհայտ է)*

Ինչ–որ մեկը ծածուկ կերպով սկսել էր մոլախոտ ցանել ցորենի արտում այն ժամանակ, քանի դեռ տերն ու ծառաները քնած էին: Ծառաները փութով նետվեցին արմատախիլ անելու դրանք, բայց տերն ասաց, որ բերքահավաքի ժամանակ հնարավոր կլինի ավելի արդյունավետ ձևով հատիկներն առանձնացնել որոմից:

Ծառաները խորհրդակցեցին և ասացին միմյանց.

— Ավելի լավ կլիներ հենց հիմա վերացնեինք մոլախոտերը, քան սպասեինք, բայց մենք պետք է ենթարկվենք մեր տիրոջը նույնիսկ այն դեպքում, երբ նա իրավացի չէ: Իսկ մինչ այդ, եկե՛ք փորձենք պարզել, թե այդ ինչ թշնամի է վնաս պատճառում մեր տիրոջը, որն այդքան բարի է բոլորի նկատմամբ և այսպիսի պատժի արժանի չէ:

Նրանք առանց աղմուկ բարձրացնելու սկսեցին հարցուփորձ անել, որոնեցին շրջակա բոլոր տարածքներում, բայց ոչ ոքի չգտան. նրանք ոչ մի թշնամի չհայտնաբերեցին: Ծառաներից մեկը գիշերը գաղտնի այցելությամբ եկավ ծառայապետի մոտ և ասաց.

— Սը՛ր, ներեցե՛ք ինձ, բայց ես այլևս չեմ կարող թաքցնել իմ գաղտնիքը: Ես գիտեմ, թե ով է այն թշնամին, որը մոլախոտի սերմեր է ցանում, ես տեսել եմ այդ մարդուն:

Ծառայապետն ի պատասխան զարմացավ և խիստ վրդովվեց: Բայց ծառային պատժելուց առաջ նա նրան հարցրեց, թե ինչու վերջինս ավելի շուտ չէր գալիս իր մոտ:

— Ես չէի համարձակվում,— լաց եղավ ծառան:— Ես հիմա էլ վախով եմ համարձակվել գալ ու պատմել դա Ձեզ: Ես արթուն էի այն գիշեր, երբ սերմերը ցանում էին, ես տեսա այն մարդուն, որն անում էր դա: Նա անցավ իմ կողքով, նա կարծես թե արթուն էր, բայց, այնուամենայնիվ, քնած էր: Նա, ըստ երևույթին, չճանաչեց ինձ, բայց ես ճանաչեցի նրան:

— Եվ ո՞վ էր դա,— մեծ հուզմունքով հարցրեց ծառայապետը:— Ասա ինձ, որ նա իր պատիժն ստանա:

Ծառան կախեց գլուխը: Ի վերջո նա ցածր ձայնով ասաց.

— Դա հենց ինքը՝ տերն էր:

Եվ նրանք երկուսով համաձայնվեցին ոչ մի մարդու որևէ բան չասել այդ մասին:

* * *

## ՏՂԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

*(դաոսիստական առակ)*

Դեղին Տիրակալ Հուան–Դին մեկնեց այցելելու Տայ–Քվեին, որն ապրում էր Չու Ցզի լեռան վրա: Նա դեռ չէր հասել Սյանչեն քաղաքին, երբ ճանապարհը կորցնելով՝ մոլորվեց, և չկար որևէ մեկը, որ ճանապարհը ցույց տար:

Վերջապես կայսրին մի տղա հանդիպեց, որը ձիերին էր արածեցնում:

— Դու չգիտե՞ս արդյոք, թե ինչպես կարելի է հասնել Չու Ցզի լեռը,— հարցրեց նրան Դեղին Տիրակալը:

Տղան պատասխանեց, որ գիտի ճանապարհը և նույնիսկ գիտի, թե որտեղ է ապրում Տայ–Քվեն:

«Ի՜նչ անսովոր տղա է»,— Հուան–Դին:— Նա որտեղի՞ց գիտի, մենք հենց Տայ–Քվեի մոտ ենք գնում: Միգուցե արժե՞ նրան հարցնել, թե ես ինչպես կառավարեմ իմ այս Անդրերկնային թագավորությունը:

— Անդրերկնային կյանքը հարկավոր է թողնել այնպիսին, ինչպիսին այն կա,— պատասխանեց տղան:— Ուրիշ ի՞նչ պետք է անել դրա հետ:

— Իրոք որ Անդրերկնայինի կառավարումը քո հոգսը չէ,— մրմնջաց Հուան Դին: Այնուամենայնիվ, ասա՛ խնդրեմ, ես ի՞նչ պետք է անեմ:

Փոքրիկ հովիվը չէր ցանկանում պատասխանել, բայց կայսրը կրկնեց իր հարցը:

— Աշխարհը կառավարելն ավելի բարդ չէ, քան ձիերին արածեցնելը,— այդժամ ասաց տղան:— Դրա համար բավական է վերացնել այն ամենը, ինչը վտանգավոր է ձիերի համար: Ամբողջը դա է: Ճիշտ նույն ձևով հարկավոր է կառավարել նաև Անդրերկնային աշխարհը:

Կայսրը խոր խոնարհվեց տղային, նրան «երկնային խորհրդատու» կոչեց և հեռացավ:

***

## ԱՌԱԿ ԲԵՌԱՆ ՄԱՍԻՆ

*(Տատյանա Բոգաչովա)*

Ճանապարհով մի ճամփորդ էր գնում: Նա շալակած բեռ էր կրում: Նա այնքան երկար էր գնում, որ արդեն մոռացել էր, թե որտեղից է սկսել իր ուղին և դեպի ուր է գնում: Նաև մոռացել էր, թե ինչպես էր առաջացել իր բեռը: Նա նաև չգիտեր, թե այն իր ինչին է պետք: Պարզապես ճանապարհի ընթացքում նա սովորել էր իր բեռանը և նրան հարազատ էր համարում: Բեռը ծանր էր, և ճամփորդը շարունակ մտածում էր. «Ժամանակը կգա, և ես ցած կնետեմ այն, այդ ժամանակ կուղղեմ հոգնած մեջքս և կկարողանամ շարունակել գնալ որպես ազատ մարդ»: Բայց ժամանակն անցնում էր, իսկ ճամփորդը շարունակ կրում ու կրում էր այդ ծանրությունը: Հիմա նա միայն այն մասին էր մտածում, որ հանկարծ չսայթաքի, ցեխի մեջ չխրվի, ոտքը քարին չառնի, չէ՞ որ բեռան հետ միասին ընկնելը վտանգավոր էր: Ամեն անգամ, երբ նրա վիճակն անտանելի էր դառնում, և նա չէր կարողանում առաջ գնալ, նա պատրաստ էր լինում ցած գցել բեռը, բայց ամեն անգամ կասկածները բզկտում էին նրան. բեռան հետ նա պաշտպանված էր զգում իրեն: Մի անգամ ուժերը գրեթե լիովին լքեցին նրան, և նա որոշեց իրականացնել իր երազանքը: Նա բեռը ցած նետեց, և թեթևանալու փոխարեն սարսափի ճիչ դուրս թռավ նրա կրծքից. քանի դեռ նա համբերում էր, այդ ընթացքում վերածվել էր սապատավորի:

* * *

## ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Մի դասախոսության ժամանակ հարգարժան պրոֆեսորը հարցրեց.

— Ձեր մեջ հավատացյալ մարդիկ կա՞ն արդյոք:

Մի քանի մարդ ոտքի կանգնեց:

— Մենք քիմիայի մեր պարապմունքի ժամանակ ուսումնասիրելու ենք նյութեր, որոնք կարող ենք տեսնել, շոշափել և փորձել: Իսկ այ աստծո հետ նույն բանն անել հնարավոր չէ, հետևաբար Նա գոյություն չունի: Այժմ կարող եք նստել:

Ուսանողները նստեցին, բայց նրանցից մեկը շարունակում էր կանգնած մնալ:

— Դուք ինչ–որ բա՞ն եք ուզում,— հարցրեց դասախոսը:



— Ասացե՛ք, պրոֆեսո՛ր, Դուք տեսե՞լ եք Ձեր ուղեղը,— հարցրեց ուսանողը:

— Ո՛չ:

— Դուք երբևէ շոշափե՞լ եք այն:

— Ո՛չ,— տարակուսած պատասխանեց պրոֆեսորը:

— Իսկ Դուք փորձե՞լ եք այն:

— Ո՛չ:

— Այդ դեպքում, միգուցե, Դուք այն չունե՞ք:

* * *

## ՈՋՆԻՆԵՐԸ

*(ըստ Արթուր Շոպենհաուերի)*

Շատ ցուրտ ձմեռ էր, և ոզնիներն իրենց բնում ցրտից սկսեցին շատ մոտ տեղավորվել միմյանց, որպեսզի ավելի տաք լինի:

Բայց որքան մոտ էին նրանք տեղավորվում, այնքան ավելի շատ էին միմյանց ծակում իրենց փշերով:

Այդժամ նրանք սկսեցին հեռանալ իրարից, բայց ցուրտը նրանց ստիպեց նորից մոտենալ իրար:

Նորից մոտենալով՝ նրանք դարձյալ մեկմեկու փշերին էին դեմ առնում: Եվ նորից հեռանում էին:

Այդպես շարունակվեց այնքան ժամանակ, մինչև նրանք գտան այն հեռավորությունը, որի դեպքում նրանք այնքան հեռու չէին միմյանցից, որ ցուրտ լիներ, և այնքան մոտիկ չէին, որ փշերով ծակեին միմյանց:

Եվ հենց այդ հեռավորությունը կոչեցին ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ԼԱՎ ՎԱՐՔԱԳԾԵՐ:

* * *

## ԺՊԻՏԸ

*(ըստ Ֆրենկ Իրվինգ Ֆլեթչերի)*

Ժպիտը ոչինչ չարժե, բայց շատ բան է տալիս:

Նա հարստացնում է նրանց, ովքեր այն ստանում են՝ ընդսմին չաղքատացնելով նրանց, ովքեր այն նվիրում են:

Այն մի քանի ակնթարթ է տևում, բայց երբեմն հիշողության մեջ մնում է հավերժ:

Ոչ ոք այնքան հարուստ չէ, որ առանց դրա յոլա գնա, և չկա այնպիսի մի աղքատ, որը դրանից չհարստանա:

Այն երջանկություն է ստեղծում տանը, գործնական հարաբերություններում բարյացակամության մթնոլորտ է ստեղծում և ընկերների համար որպես նշանաբան է ծառայում:

Այն հանգստություն է հոգնածների համար, միևնույն ժամանակ բնության ստեղծած լավագույն հակաթույնն է անախորժությունների դիմաց:

Եվ, այնուամենայնիվ, այն հնարավոր չէ գնել, հնարավոր չէ խնդրելով կորզել, հնարավոր չէ ո՛չ պարտքով տալ, ո՛չ էլ գողանալ, քանզի այն ինքն իրենով ոչ մի բանի համար պիտանի չէ, քանի դեռ այն չեն պարգևել:

Ոչ ոք դրա կարիքն այնպես չի զգում, ինչպես նրանք, ովքեր այլևս ոչինչ չունեն, որը կկարողանային տալ:

Գործերը ցանկացած բառերից ավելի բարձր են հնչում, և Հ․ ժպիտն ասում է. «Դուք ինձ դուր եք գալիս, դուք ինձ երջանիկ եք դարձնում: Ես ուրախ եմ ձեզ տեսնել»:

* * *

## ՈՂՋՈՒՅՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

*(ծագումն անհայտ է)*

Նայի՛ր այս օրվան:
Չէ՞ որ նրանում ամփոփված է կյանքը, կյանքի բուն էությունը:
Նրա այս կարճ հատվածի վրա են ընկած
Մեր գոյության բոլոր–բոլոր ճշմարտություններն ու էությունները.
Աճելու երանությունը,
Գործողության հոյակապությունը,
Ձեռքբերման հոյակապությունը:
Չէ՞ որ երեկվա օրն ընդամենը երազ է,
Իսկ վաղվա օրը՝ լոկ աղոտ տեսիլք:
Եթե այսօրվա օրը լավ է ապրված,
Ապա երեկվա օրը մեզ երջանիկ երազ է թվում,
Իսկ յուրաքանչյուր վաղվա օր՝ հույսի տեսիլք.
Կոչում եմ ձեզ ապրել այսօրվա օրով:
Սա էլ հենց ողջույնն է արշալույսին:

* * *

## ԲԱՑԱՌԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

*(Ռիկ Ջոյների «Ղեկավարումը, մենեջմենթը և հաջողության հինգ բաղկացուցիչները» գրքից)*

Մեծ առաջնորդները կարողանում են իրենց անհաջողությունները վերածել օգուտի՝ ավելի բարձր արդյունքների հասնելու համար: Սովորաբար մենք մեր սխալների վրա ավելի լավ ենք սովորում, քան մեր հաջողությունների: Նրանք,



ովքեր առանց անհաջողությունների դառնությունը ճաշակելու են հաջողության գագաթներին հասնում, նախվության ու մակերեսային որոշումների են հակված: Այդպիսի մարդիկ մշտապես գիտեն բոլոր հարցերի պատասխանները: Իսկական առաջնորդներն ավելի շատ հակված են լինում լսել զրուցակցին, քան խոսել և մշտապես լիակատար հասկացման են ձգտում: Գնահատե՛ք Աբրահամ Լինքոլնի՝ Ամերիկայի մեծագույն առաջնորդներից մեկի կենսագրության ստորև ներկայացվող պատմական փաստերը:

1831թ. բիզնեսում անհաջողության մատնվեց:
1832թ. օրինաստեղծ մարմինների ընտրություններում պարտվեց:
1833թ. նորից անհաջողության մատնվեց բիզնեսում:
1836թ. նյարդային ցնցում տարավ:
1838թ. օրինաստեղծ օրգանների նախագահի պաշտոնի ընտրություններում չանցավ:
1840թ. ընտրություններում դարձյալ պարտություն կրեց:
1843թ. կոնգրեսի ընտրություններում չանցավ:
1848թ. դարձյալ չանցավ կոնգրեսի ընտրություններում:
1855թ. սենատի ընտրություններում չանցավ:
1856թ. չընտրվեց որպես փոխնախագահ:
1858թ. դարձյալ չընտրվեց սենատում:
1860թ. ընտրվեց պրեզիդենտի պաշտոնում, պահպանեց ազգի միասնականությունը:

Դժվար չէ հավատալ, որ այդ մարդը կարողացավ հաղթահարել այդ բոլոր ճգնաժամային իրավիճակներն ու դրանց հետ կապված լարումները: Աբրահամ Լինքոլնը տառապում էր նաև այն ժամանակ, երբ նախագահ էր դարձել: Վերը նշված ցուցակը ցուցադրում է նրա տոկունությունը: Այդ մարդը լավ գիտեր, թե ինչ է անհաջողությունը, բայց երբեք չէր հանձնվում:

* * *

## ՏԱՏԻ ԽՐԱՏՆԵՐԸ ԹՈՌՆՈՒԿՈՒՆ

*(ծագումն անհայտ է)*

— Տատի՛կ, ես ինչպե՞ս իմանամ, որ սիրահարված եմ:
— Շատ պարզ ձևով, թոռնուհի՛ս: Դու հիշո՞ւմ ես, թե ինչպես ծանոթացաք:
— Իհարկե: Ես հիշում եմ ոչ միայն մեր ծանոթանալը, այլ նաև մեր բոլոր հանդիպումները. ինչպես մենք առաջին անգամ ժպտացինք իրար, ինչպես առաջին անգամ միմյանց ձեռքը բռնեցինք, ինչպես համբուրվեցինք: Գիտե՞ս, տա՛տ, ես նույնիսկ հիշում եմ ամեն–ամեն–ամեն ինչ, ինչի մասին ես պատմել եմ նրան, նրա որ կատակների վրա եմ ծիծաղել, ինչպես էի պատրաստվում ամեն մի հանդիպման. ինչ էի հագնում, որպեսզի դուր գամ նրան: Սա սե՞ր է, տատի՛կ:
— Չէ՛, թոռնուհի՛ս: Սերն այն է, երբ հիշում ես, թե նա ինչ էր հագնում ձեր

հանդիպումների ժամանակ։ Իսկ եթե քեզ ես հիշում, ապա դա սիրահարվածություն է։ Տիկնիկներդ արկղերի մեջ դնելու ժամանակն է, սիրելիս։

* * *

— Բոլոր տղամարդիկ նույնն են։ Տա՛տ, հերիք է նա առաջին անգամ ինձ ասի «ողջույն», և ես արդեն գիտեմ, թե նա ինչպես կպահի իրեն հետագայում, ինչ անեկդոտներ կպատմի, ինչպես կժպտա, ինչպես կհպվի ինձ, ինչպես կգժտվի ինձ հետ ու կհեռանա։

— Դու իրավացի չես, սիրունս։ Բոլոր տղամարդիկ տարբեր են։ Պարզապես մեզ դուր են գալիս իրար նման տղամարդիկ։ Քեզ համեստ, «տնական» տղամարդի՞կ են դուր գալիս։ Այդ դեպքում ինչո՞ւ ես բողոքում, որ դարձյալ ձանձրալի տիպի ես հանդիպել, որը չի ցանկանում տնից որևէ տեղ գնալ։ Եթե դու «ընկերախմբի հոգի» տիպի տղամարդ ես ընտրել, ապա մի՛ զարմացիր, որ ստիպված ես լինելու նրան կիսել իր ընկերների, իսկ հաճախ նաև զուգահեռ ընկերուհիների հետ։ Եթե ռոմանտիկներին ես սիրում, ապա պատրաստ եղիր ոչ միայն մոմերի, բանաստեղծությունների և շամպայնի, այլ նաև պարբերաբար կրկնվող դեպրեսիաների և անհետացումների, որոնք նա կբացատրի որպես «ստեղծագործական ճգնաժամեր»։ Եթե ընտրում ես տղամարդ, որի հետ քեզ կզգաս ինչպես «քարե պատի ետևում», ապա մի՛ զարմացիր, որ չես կարողանալու այդ պատերի մեջ դեպի ազատությունը տանող դուռ գտնել։ Կանայք նման տղամարդկանց են ընտրում, իսկ հետո զարմանում են, որ նրանք բոլորն էլ նույնն են։

* * *

## ՈՎ ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ

*(արևելյան առակ)*

Աշակերտներից մեկը մշտապես քննադատում էր բոլորին։ Վարպետը նրան ասաց.

— Եթե կատարելություն ես փնտրում, ապա ձգտի՛ր փոխել քեզ, այլ ոչ թե ուրիշներին։ Ավելի հեշտ է սանդալներ հագնել, քան ամբողջ ճանապարհը գորգերով պատել։

* * *

## ՑԱՏԿԵԼ Է ՀԱՐԿԱՎՈՐ

*(բուդդիստական առակ)*

Վարպետն աշակերտին ասաց.

— Լիովին մոռացի՛ր քո անցյալի մասին և դու լուսավորյալ կդառնաս։



— Ես այդպես էլ անում եմ, միայն թե աստիճանաբար,— պատասխանեց աշակերտը։

— Աստիճանաբար կարելի է միայն աճել։ Լուսավորվելն ակնթարթային է։

Ավելի ուշ Վարպետը բացատրեց.

— Դու պետք է ցատկես։ Փոքրիկ քայլերով անդունդն անցնել հնարավոր չէ։

* * *

## ԱՆՄԵՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵՂՔԸ

*(առակ Օշոյի շարադրմամբ)*

Ես մի պատմություն եմ լսել. մի անգամ ռուս մեծ թագավորներից մեկը՝ Պետրոսը, գնացել էր այցելելու իր բանտը։ Սովորաբար նա տարին մեկ անգամ այցելում էր բանտ. ընդ որում, նա կարող էր որևէ մեկին ազատ արձակել։ Եթե նա ցանկանում էր որևէ մեկին ազատել, ոչ ոք չէր կարող առարկել նրան։ Եվ այսպես՝ նա բանտախցից բանտախուց էր մտնում, իսկ բոլոր հանցագործները՝ մեծ հանցագործներ, մարդասպաններ, նրան ասում էին.

— Ողորմա՛ծ տեր, մենք անմեղ ենք։ Մենք անարդարացիորեն ենք նստած այստեղ։ Ինչ-որ մեկ ուրիշն է արել դա։ Գթա՛ մեզ։

Միայն մի մարդ, որը մեղադրվում էր սպանության մեջ և ցմահ բանտարկության էր դատապարտված, ասաց.

— Տե՛ր թագավոր, ես հանցագործ եմ։ Ես սպանություն եմ կատարել։ Եվ ես չեմ կարծում, որ նույնիսկ ցմահ բանտարկությունն ինձ համար բավարար պատիժ կլինի։

Պետրոսն ասաց.

— Անհապաղ ազա՛տ արձակեք այդ խաբեբային. նա կփչացնի մնացածներին։ Բոլորն անմեղ են, բացի այդ խաբեբայից։

Այդ մարդուն անհապաղ ազատ արձակեցին։

Անմեղությունն ամեն ինչ ընդունում է։ Անխառն անմեղությունը ոչինչ չի ժխտում։ Եթե դուք հանցագործ եք, ապա ձեր ամբողջ բանականությունն աշխատելու է այն բանի համար, որպեսզի ազատվի հանցագործության հետ կապ ունենալուց։ Եթե դուք ընդունում եք ձեր մեղքը, դուք արդեն նրանից դուրս եք։

* * *

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՈՆՆ Է

*(ծագումն անհայտ է)*

— Դա անհնար է,— ասաց Պատճառը։

— Դա խելահեղություն է, անմտություն,— ասաց Փորձը։

— Դա անօգուտ է,— նկատեց Հպարտությունը։

— Փորձի՛ր...— շշնջաց Երազանքը։

* * *

## ԱՍՏՎԱԾՆ ՈՒ ՄԱՐԴԸ

*(ծագումն անհայտ է)*

Մարդը շշնջաց. «Տե՛ր Աստված, խոսի՛ր ինձ հետ»:
Ու մարգագետնի խոտերը երգում էին:
Բայց մարդը չէր լսում:
Այդ ժամանակ մարդը գոչեց. «Աստվա՛ծ, խոսի՛ր ինձ հետ»:
Եվ որոտը կայծակի հետ անցան երկնքով:
Բայց մարդը չէր լսում:
Մարդը շուրջը նայեց և ասաց. «Աստվա՛ծ, թո՛ւյլ տուր ինձ տեսնել քեզ»:
Եվ աստղերը պայծառ փայլում էին:
Բայց մարդը չէր տեսնում:
Մարդը նորից բացականչեց. «Աստվա՛ծ, ինձ տեսի՛լք ցույց տուր»:
Եվ գարնանը նոր կյանք ծնվեց:
Բայց մարդը չնկատեց դա:
Մարդը հուսահատված լաց եղավ. «Դիպչի՛ր ինձ, Աստվա՛ծ, և իմա՛ց տուր, որ այստեղ ես»:
Եվ այդժամ Աստված իջավ ու հպվեց մարդուն:
Բայց մարդն իր ուսի վրայից քշեց թիթեռին ու գնաց հեռու...

* * *

## ՆԱՄԱԿ ԼԱՎ ՄԱՐԴՈՒՆ

*(ծագումն անհայտ է)*

Եթե ամբողջ մարդկությունը կրճատելով դարձնենք 100 բնակիչ ունեցող մի գյուղ՝ ընդմին պահպանելով բոլոր տոկոսային հարաբերակցությունները, ապա այդ գյուղի բնակչության պատկերն այսպիսին կլինի.

57 ասիացի, 21 եվրոպացի, 14 ամերիկացի (հյուսիսային և հարավային), 8 աֆրիկացի: 52–ը կլինեն կին, 48–ը՝ տղամարդ, 70–ը կլինեն ոչ սպիտակամորթ, 30–ը՝ սպիտակամորթ, 89–ը՝ հետերոսեքսուալ, 11–ը՝ հոմոսեքսուալ, 6 մարդ կտիրի համաշխարհային հարստության 59%–ին և բոլոր վեցն էլ կլինեն ԱՄՆ–ից, 80–ը բնակարանային բավարար պայմաններ չեն ունենա:

70–ը կլինեն անգրագետ, 50–ը կտառապեն մշտական թերսնումից, 1–ը (ընդամենը մեկը) կունենա բարձրագույն կրթություն:

Եթե աշխարհին նայենք այս տեսանկյունից, ապա պարզ կդառնա, որ համեռաշխության, փոխըմբռնման, հանդուրժողության, կրթության պահանջը շատ մեծ է: Մտածի՛ր այդ մասին:

Եթե դու այսօր առավոտյան առողջ ես արթնացել, ապա դու ավելի երջանիկ ես, քան 1 միլիոն մարդիկ, որոնք չեն ապրի մինչև հաջորդ շաբաթ:

Եթե դու երբեք պատերազմ, բանտարկության միայնակություն, կտտանքների հոգեվարք կամ քաղց չես ճաշակել, ապա դու ավելի երջանիկ ես, քան 500 միլիոն մարդ այս աշխարհում:

Եթե դու կարող ես գնալ եկեղեցի (սինագոգ) առանց վախի և բանտարկության կամ մահվան սպառնալիքի, ապա դու ավելի երջանիկ ես, քան 3 միլիարդ մարդ այս աշխարհում:

Եթե քո սառնարանում ուտելիք կա, դու հագնված ես, տանիք կա քո գլխավերևում և անկողին ունես, ապա դու ավելի հարուստ ես, քան այս աշխարհում ապրող մարդկանց 75 %–ը:

Եթե դու բանկային հաշիվ ունես, դրամապանակումդ դրամ կա և մի քիչ էլ մանր ունես պահոցում, ապա դու աշխարհում ապրող ապահովված մարդկանց 8 %–ին ես պատկանում:

Դու կարդում ես այս տեքստը, դու կրկնակի օրհնված ես, որովհետև

ինչ–որ մեկը մտածել է քո մասին.
դու այն 2 միլիարդ մարդկանց թվում չես, ովքեր կարդալ չգիտեն:

Ինչ–որ մեկն ինչ–որ ժամանակ ասել է.

«Աշխատի՛ր այնպես, ասես քեզ դրամ հարկավոր չէ,
սիրի՛ր այնպես, ասես քեզ ոչ ոք երբևէ ցավ չի պատճառել,
պարի՛ր այնպես, ասես քեզ ոչ ոք չի նայում,
երգի՛ր այնպես, ասես քեզ ոչ ոք չի լսում,
ապրի՛ր այնպես, ասես երկրի վրա դրախտ է...»:

* * *

## ՄԱՐԴՈՒ ԲՆՈՒՅԹԸ

*(ծագումն անհայտ է)*

Մահապատժի ի կատար ածման առավոտյան երեք դատապարտվածների հարցնում են.

— Ո՞րն է ձեր վերջին ցանկությունը:

Դե, առաջինը մտածեց և ասաց.
— Ես կուզեի դրանից առաջ ջրով կոկորդս թրջեի, որ այդքան սարսափելի չլինի:
— Հարց չկա,— պատասխանում են պահապանները,— կանենք:

Երկրորդն ասաց.
— Լավ կլիներ՝ ինձ կին տային: Դե, ցանկացած կին: Մի ժամով:
— Դժվար բան ես ասում,— պատասխանեցին պահապանները:— Դե լավ, մի բան կանենք, կճարենք: Այստեղ ամեն տեսակ կանայք կան:

Իսկ երրորդն ասաց.
— Ես ուզում եմ, որ իմ հետույքին ծնկով զարկեն:
— Այ քեզ բան,— հռհռացին պահապանները:— Դե լավ, որ ուզում ես, կխփենք: Վերջին ցանկությունն օրենք է:

Նրան թիկունքով կանգնեցրին իրենց կողմն ու մի լավ աքացի հասցրին հետույքին: Դատապարտյալը ցավից «Ա՜խ» արեց, տեղից վեր թռավ, առաջին պահապանի մռութին հասցրեց, երկրորդի մռութին հասցրեց, չանթեց նրանցից մեկի թուրը, բոլորին թրատեց, դուռը պոկեց ու դուրս թռավ: Այն մյուս երկուսն էլ նրա ետևից:

Նրանք կանգ առան անտառում, որ շունչները տեղը բերեն: Այն երկուսը հարցրին.
— Համա թե տիպն ես... լսի՛ր, ինչո՞ւ միանգամից այդպես չարեցիր:
— Մարդու բնույթն է այդպիսին, տղե՛րք,— պատասխանեց նա:— Մինչև քամակին կարգին աքացի չտան, ոչ մի բան չի ուզի անել:

* * *

## ՀԱԿՈՒՄՆԵՐ

*(ծագումն անհայտ է)*

Մի անգամ աշակերտները եկան ծեր ուսուցչի մոտ ու նրան հարցրին.
— Ինչո՞ւ վատ հակումները հեշտությամբ են տիրում մարդուն, իսկ բարի հակումներն, ընդհակառակը, դժվարությամբ են տիրում նրան և կայուն ձևով չեն արմատակալում նրա մոտ:
Ծերունին, ի պատասխան, հարցրեց.
— Ի՞նչ կլինի, եթե առողջ սերմը թողնեն արևի տակ, իսկ հիվանդ սերմը թաղեն հողում:
— Բարի հունդը, որն առանց հողի է թողնված, կմեռնի: Իսկ վատ հունդը կծլարձակի, կաճի ու չար պտուղներ կտա,— պատասխանեցին աշակերտները:
— Մարդիկ այդպես են վարվում. փոխանակ ծածուկ բարի գործեր կատարեն և հոգու խորքում աճեցնեն բարի տարերքները, նրանք դա ցուցադրում են և այդպիսով կործանում այդ հունդերը: Իսկ իրենց թերությունններն ու մեղքերը, որպեսզի ուրիշները չտեսնեն դրանք, մարդիկ թաքցնում են հոգու խորքերում: Այնտեղ դրանք աճում են ու կործանում մարդուն հենց իր սրտում:
Դե, ուրեմն, դուք իմաստո՛ւն եղեք:
Աշակերտները երախտագիտություն արտահայտեցին ուսուցման համար ու հեռացան մտորումների մեջ:

* * *

## ՇԱՐՈՒՆԱԿԻ՛Ր ՓՈՐԵԼ

*(առակ Օշոյի շարադրմամբ)*

Մի անգամ Ջալալիդդին Ռումին՝ սուֆիստ մեծ միստիկը, իր աշակերտներին տարավ մի դաշտ, որտեղ բազմաթիվ ամիսներ շարունակ մի ֆերմեր փործում էր ջրհոր փորել: Աշակերտներն այնքան էլ չէին ցանկանում գնալ այդ վայրը. իմաստը ո՞րն է: Այն ամենը, ինչը վարպետը ցանկանում էր ասել, կարող էր ասել նաև այստեղ: Բայց Ջալալիդդինն իրենն էր պնդում.
— Եկե՛ք ինձ հետ: Առանց դա դուք չեք կարողանա հասկանալ այն, ինչի մասին ես խոսում եմ:
Պարզվեց՝ ֆերմերը հետևյալն էր անում. մի տեղում սկսելով փորել՝ նա հետո հինգ–տասը քայլ հեռանում էր և սկսում էր նորից փորել: Ջուր չգտնելով՝ նա սկսում էր նոր տեղում փորել: Ֆերմերն արդեն ութ փոս էր փորել և անցել էր իններորդին:
Ռումին իր աշակերտներին ասաց.
— Այս ապուշին մի՛ նմանվեք: Եթե նա իր ամբողջ եռանդն ուղղած լիներ մեկ ջրհոր փորելուն, ապա վաղուց արդեն ջուր գտած կլիներ, որքան էլ որ այն խորը լիներ: Նա անօգուտ վատնել էր իր եռանդը:
Մնացածները ճիշտ նույն բանն են անում: Դու սկսում ես, մի փոքր առաջ ես շարժվում, կանգ ես առնում, հետո որոշ ժամանակ կամ նույնիսկ տարիներ անց նորից ես սկսում շարժվել: Դու շարժումդ մի փոքր այլ ծայրից ես սկսում: Այդ վայրիվերումները վտանգավոր են: Սեփական ջանքերը հարկավոր է կենտրոնացնել և մեկ անգամ սկսելով վարպետի հետ, որին դու վստահում ես, որում Բուդդայի մարմնավորումն ես տեսնում, այլևս չի կարելի ետ վերադառնալ: Շարունակի՛ր փորել, եթե դրա համար նույնիսկ ամբողջ երեսուն տարի պահանջվի:

* * *

## ՔԱՅԼՔ ՍՊԻՏԱԿ ՔԱՌԱԿՈՒՍՈՎ

*(չեն առակ)*

Մի անգամ՝ շատ վաղուց, սուսերամարտի վարպետի մոտ մի պատանի եկավ և նրան խնդրեց իրեն սրերով մարտնչել սովորեցնել: Վարպետը համաձայնեց և բակում սպիտակ ներկով մի մեծ քառակուսի նկարելով՝ ասաց.

— Քայլի՛ր այս քառակուսով:

Աշակերտը ասիական համառությամբ գործի անցավ և օր օրի հետևից ամեն օր ութ ժամ, քայլում էր այդ քառակուսու վրայով: Բայց կես տարի անց նրա համբերությունն էլ սկսեց սպառվել: Նա նորից մոտեցավ ուսուցչին և ասաց.

— Վարպե՛տ, ես եկել եմ սրամարտ սովորելու, բայց մինչ այժմ անիմաստ դոփում եմ այս քառակուսու վրայով...

— Իսկ դու դեռ չե՞ս հասկացել, թե ինչպես պետք է սրամարտես,— բացականչեց վարպետը:— Այդ դեպքում շարունակի՛ր քայլել այդ քառակուսու վրայով:

Եվ դարձյալ պատանին կես տարի շարունակ քայլում էր բակում, մինչև նրա համբերությունը լիովին սպառվեց:

— Վե՛րջ, ուսուցի՛չ, ես գնում եմ,— ասաց նա:

— Բայց ինչո՞ւ,— զարմացավ վարպետը,— դու հաջողությունների ես հասնում:

— Ես եկել եմ սրամարտի համար, այլ ոչ թե այդ քառակուսու վրայով քայլելու:

— Իսկ դու դեռևս չե՞ս հասկացել, թե ինչպես է պետք մարտնչել սրերով,— հարցրեց ուսուցիչը:

Այդ բառերն ասելով՝ նա պատից երկու սուր իջեցրեց: Դրանք ոչ թե մարզվելու համար նախատեսված փայտե սրեր էին, այլ պողպատյա, ածելու պես սուր սուսերներ: Նա մեկը տվեց պատանուն, մյուսն՝ ինքը վերցրեց: Աշակերտը ոչ հմուտ կերպով բռնեց սուսերի կոթից:

— Իսկ հիմա,— ասաց վարպետը,— հիշի՛ր քո այն ներքին վիճակը, որում դու գտնվում էիր այդ քառակուսու վրայով քայլելիս:

Նույն ակնթարթին աշակերտի հայացքը կանգ առավ և դադարեց որևէ բան արտահայտել: Ուսուցիչը բարձրացրեց սուսերն ու ամբողջ թափով հարվածեց աշակերտին, բայց վերջինս ակնթարթորեն ետ մղեց հարվածն իր սուսերով: Ուսուցիչը նորից ու նորից հարվածներ էր տեղում, բայց նրա սուսերն իր ճանապարհին նորից ու նորից դեմ էր առնում աշակերտի սուսերին: Այդժամ ուսուցիչն իջեցրեց իր զենքն ու նորից հարցրեց.

— Դե՞, հիմա դու հասկացա՞ր, թե ինչպես է հարկավոր մարտնչել սուսերով:



* * *

## ՀԻՍՈՒՍՆ ՈՒ ՆԻԿՈԴԻՄՈՍԸ

*(ծագումն անհայտ է)*

Երուսաղեմը համալսարանների քաղաք էր. մարդիկ հեռավոր երկրներից գալիս էին Հրեաստան, որպեսզի կրթություն ստանան: Երուսաղեմում ուսյալ այրեր ու աստվածաբաններ շատ կային: Նրանք սիրում էին փիլիսոփայել, դատողություններ անել կյանքի իմաստի, Աստծո մասին:

Սակայն այդ ուսյալ այրերից և ոչ մեկը չէր գալիս Հիսուսին լսելու: Ո՞րն էր պատճառը: Հավանաբար նրանք մտածում էին, որ իրենց ամեն ինչ հայտնի է: Նրանք կարդացել էին բոլոր իմաստուն գրքերը և ծանոթ էին անցյալից եկող բոլոր իմաստություններին: Նրանք սքանչելի հիշողություն ունեին: Եվ երբ նրանց տեղեկություններ էին հասնում Հիսուսի քարոզների մասին, հավանաբար նրանք ծիծաղում էին և ասում, որ այդպես չի լինում: Իսկ երբ նրանց հարցնում էին. «Ինչո՞ւ եք այդպես կարծում»,— նրանք պատասխանում էին. «Որովհետև այդպես երբեք չի եղել»: Կյանքի նրանց իմացությունը հենվում էր անցյալից վերցված գիտելիքների վրա: Նրանք առաջ չէին նայում:

Միայն մի մարդ կար... և այն պատճառով, որ նա միակն էր, նրա անունը հիշել են և հասցրել մինչև մեր օրերը: Նա համալսարանի պրոֆեսոր էր. նրա անունը Նիկոդիմոս էր: Բայց նույնիսկ նա չէր կարողանում հավաքել իր քաջությունը և ցերեկով գալ Հիսուսի մոտ: Նա մտածում էր. «Մարդիկ ի՞նչ կմտածեն»: Չէ՞ որ նա աստվածաբանության պրոֆեսոր էր և պետք է հարցեր տար կրթություն չունեցող մի երիտասարդի, որը երբեք համալսարանում չէր սովորել:

Այդ պատճառով էլ նա եկավ գիշերով, երբ բոլորն արդեն քնած էին: Քնած էին նույնիսկ Հիսուսի աշակերտները: Նա արթնացրեց Հիսուսին և ներկայացավ.

— Ես աստվածաբանության պրոֆեսոր եմ. իմ անունը Նիկոդիմոս է: Խնդրում եմ, ների՛ր ինձ այն բանի համար, որ խանգարեցի քունդ: Ես ուզում եմ քեզ հարցնել Ուղու մասին:

— Մի՛ անհանգստացիր այն բանի համար, որ խանգարել ես իմ քունը, որովհետև ես հիմա քո ավելի խոր քունն եմ խանգարելու: Դու հարցնում ես Ուղու մասին, բայց Ուղին արիություն է պահանջում: Իսկ դու վախկոտ ես: Դու վախեցար ցերեկով գալ: Դու մտածեցիր. «Ի՞նչ կմտածեն մարդիկ»:

Նիկոդիմոսը նրան ասաց.

— Դու իրավացի ես, ես ընդունում եմ քո ասած խոսքերը, դրանք արդարացի են: Բայց ասա՝ ինչպե՞ս կատարել առաջին քայլը Ուղու վրա:

Հիսուսը նրան ասաց.

— Խիզախ մարդու առաջին քայլն այս է. նա պետք է ընդունի, որ ինքը ոչինչ չգիտի, և որ իր ամբողջ իմացությունը փոխառնված է:

***Այս առակը ևս մեկ օրինակն է այն բանի, թե ինչպես տարբեր կրոնները կամ ուսմունքները միևնույն բանն են ասում, միևնույն իրողությունն են վեր հանում,***

*քանի որ իրականությունը միակն է, իսկությունը միակն ու ոչ մեկի մենաշնորհը լինել չի կարող:*

*Ուղու վրա առաջին քայլն ըմբռնելուց հետո հարկավոր է լիովին մի կողմ թողնել փոխառնված իմացությունը և նորից ՍԵՓԱԿԱՆ իմացություն ձևավորել, սեփական վերաբերմունք մշակել կյանքի հանդեպ: Այդ փոխառնված իմացությունը մի կողմ թողնելու վերաբերյալ հիշեցնեմ հայտնի դաոսիստական իմաստությունը, որը տեղ էր գտել այս ժողովածուների երկրորդ հատորյակում.*

*Մի անգամ Կոնֆուցիոսը հարցրեց Լաո Ցզիին.*
*— Ինչի՞ց սկսել ճշմարիտ ուղին:*
*Վերջինս պատասխանեց.*
*— Քո գիտակցությունը պատկերացրո՛ւ որպես մաքուր թուղթ:*

* * *

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՍՏԾՈ ՀԵՏ

*(ծագումն անհայտ է)*

Մի անգամ երազում տեսա, իբր ես հարցազրույց եմ վերցնում Աստծուց:
— Ուրեմն դու ցանկանում ես հարցազրո՞ւյց վերցնել ինձանից, — հարցրեց Աստված ինձ:
— Եթե դու ժամանակ ունես,— ասացի ես...
Աստված ժպտաց.
— Իմ ժամանակը հավերժությունն է: Ի՞նչ հարցեր էիր ուզում ինձ տալ:
— Ամենից շատ քեզ ի՞նչն է զարմացնում մարդկանց մեջ:
Եվ Աստված պատասխանեց.
— Նրանց ձանձրացնում է մանկությունը, նրանք շտապում են մեծ դառնալ, իսկ հետո երազում են նորից երեխա դառնալ:
Նրանք հանուն դրամ աշխատելու կորցնում են առողջությունը... իսկ հետո կորցնում են դրամը՝ վերականգնելով առողջությունը:
Նրանք այնքան շատ են մտածում ապագայի մասին, որ մոռանում են ներկան այն աստիճան, որ չեն ապրում ո՛չ ներկայում, ո՛չ էլ ապագայում:
Նրանք այնպես են ապրում, կարծես երբեք չեն մեռնելու, իսկ մեռնում են այնպես, ասես երբեք չեն էլ ապրել:
Նա իմ ձեռքն առավ իր ձեռքի մեջ, և մենք որոշ ժամանակ լռում էինք...

Եվ այդ ժամանակ ես հարցրի.
— Որպես ծնող՝ կյանքի ո՞ր դասերը դու կցանկանայիր, որ յուրացնեին քո զավակները:

Թող իմանան, որ անհնար է ստիպել որևէ մեկին սիրել իրենց: Այն ամենը, ինչ նրանք կարող են անել, այս է. թույլ տան իրենց լինել սիրելի:



Թող իմանան, որ լավ բան չէ իրեն ուրիշների հետ համեմատելը:
Թող սովորեն ներել՝ գործնականով զարգացնելով այդ ունակությունը:
Թող հիշեն, որ սիրելի մարդուն հնարավոր է վիրավորել ընդամենը մի քանի վայրկյանի ընթացքում, բայց այդ վերքերը բուժելու համար կարող են երկար տարիներ պահանջվել:
Թող հիշեն, որ հարուստը ոչ թե նա է, ով ավելի շատ ունի, այլ նա, ով ավելի քչի կարիք ունի:
Թող իմանան, որ կան մարդիկ, որոնք նրանց շատ են սիրում, պարզապես նրանք դեռ չեն սովորել արտահայտել իրենց զգացմունքները:
Թող գիտակցեն, որ երկու մարդ կարող են նայել միևնույն բանին... բայց տարբեր ձևով տեսնել այդ բանը...
Թող իմանան, որ միմյանց ներելը դեռ բավական չէ, հարկավոր է ներել նաև ինքն իրեն:

— Շնորհակալ եմ քո ժամանակի համար,— երկչոտ ասացի ես:— Կա՞ էլի ինչ-որ բան, որ դու կուզենայիր փոխանցել քո զավակներին:

Աստված ժպտաց և ասաց.
— Թող իմանան, որ ես այստեղ իրենց համար եմ... միշտ:

* * *

## ԽՈՋԱ ՆԱՍՐԵԴԻՆԻ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

— Ի՞նչ անեմ այն դեպքերում, երբ ես չեմ զգում Աստծո ներկայությունը,— Խոջային հարցրեց հարևանը:
— Զգա՛ Նրա ժամանակավոր բացակայությունը՝ որպես Աստվածային պարգև,— առաջարկեց իմաստունը:

— Ի՞նչ է կրոնը,— Խոջա Նասրեդինին հարցրին աշակերտները:
— Դա Կյանքի ճանապարհն ասֆալտապատելու փորձ է,— պատասխանեց Նասրեդինը:

— Խոջա Նասրեդինին հարցրին.
— Պե՞տք է արդյոք զարգացնել մարմնի ճկունությունը:
— Եթե մի ոտքով գնում ես կյանքի ճանապարհով, իսկ մյուս ոտքով՝ հոգևոր ուղով, ապա շատ արագ շպագատ կնստես,— պատասխանեց իմաստունը:

Մի անգամ Խոջա Նասրեդինին հարցրին.
— Ինչպե՞ս կարելի է եսասիրությունը զուգակցել ալտրուիզմի հետ:
— Շատ պարզ,— պատասխանեց իմաստունը:— Նայե՛ք երկրագնդին, թե նա ինչպես է պտտվում իր առանցքի շուրջը և միաժամանակ նաև Արևի շուրջը:

— Իսկ դու չե՞ս վախենում երբևէ բացահայտ հիմարություն անելուց,— Խոջա Նասրեդինին հարցրեց հռետորը։

— Մտքի (բանականության, խելքի) և ոչ մտքի այն կողմում հայտնվելուց հետո դա այլևս դադարում է հիմնախնդիր լինելուց,— որպես գաղտնիք նրան հաղորդեց մեծ իմաստունը։

Մի անգամ Խոջա Նասրեդինին հարցրին.

— Ճի՞շտ է արդյոք, որ դու մեծ իմաստուն ես և մշտապես հավերժության մեջ ես լինում։

— Երբեմն,— խնամքով ճշտեց Խոջան։

* * *

## ԵՐԵՔ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԵՐԸ

*(հնդկական առակ)*

Թագավորը սովորաբար երեք հարց էր տալիս իր մոտ եկող յուրաքանչյուր մարդու։ Առաջին հարցը. ո՞վ է մարդկանցից լավագույնը։ Երկրորդը. ո՞րն է լավագույն ժամանակը։ Երրորդը. ո՞ր գործողությունն է լավագույնը։ Թագավորը շատ էր ուզում իմանալ այդ երեք հարցերի պատասխանները։

Մի անգամ նա գնաց անտառ և երկար թափառում էր բլուրներով ու դաշտերով։ Նա բարձրացավ աշրամ (սրբավայր, մենաստան) և որոշեց մի փոքր հանգստանալ այնտեղ։ Երբ նա ներս մտավ, սադհուն (ճգնավոր) մրգեր էր լվանում, բայց ճանապարհից հոգնած ճամփորդին տեսնելով՝ ընդհատեց իր գործը, շտապեց մոտենալ թագավորին և նրան մի քիչ միրգ ու պաղ ջուր տվեց։ Բայց այդ պահին աշրամ արնաքամ լինող վիրավոր մի մարդ բերեցին, և սադհուն անմիջապես նետվեց դեպի նա, լվաց նրա վերքերն ու խոտաբույսերից պատրաստած բուժիչ թուրմ տվեց նրան։ Ընդսմին, նա քնքուշ խոսքեր էր ասում, որոնք հանգստացնում էին վիրավորին։

Հեռանալուց առաջ թագավորն իր երախտագիտությունը հայտնեց սադհուին, և վերջինս օրհնեց նրան։ Բայց թագավորին դեռևս հուզում էին այն երեք հարցերը, և նա ցանկանում էր իմանալ, թե սադհուն կկարողանա՞ արդյոք լուսավորել իրեն։ Սադհուն ասաց, որ բոլոր երեք հարցերի պատասխաններն այն գործողությունների մեջ էին, որոնց ականատեսը դարձավ թագավորը քիչ առաջ։ Երբ թագավորը հայտնվեց աշրամում, սադհուն մրգեր էր լվանում, որը նրա պարտականությունն էր։ Թագավորին տեսնելով՝ նա թողեց իր աշխատանքը, մոտեցավ թագավորին և նրան մրգեր ու ջուր տվեց, ինչը բարի ավանդույթն էր պահանջում, քանի որ թագավորը նրա հյուրն էր։ Այդ ժամանակ աշրամում հայտնվեց վիրավոր մարդը, և սադհուն, ընդհատելով իր ծառայությունը թագավորին, սկսեց օգնություն ցույց տալ այդ մարդուն։

Նա, ով ձեզանից օգնություն է խնդրում, հենց լավագույն մարդն է ձեզ համար այդ պահին։ Եթե ձեր օգնությունն ու ծառայությունը թեթևություն են բերում



մարդուն, ապա դա էլ հենց ձեր լավագույն աշխատանքն է։ Ժամանակը, երբ դուք ինչ-որ օգտակար բան եք անում, հենց ամենաարժեքավորն է բոլոր ժամանակներից։

* * *

## ՍԵՎԱՄՈՐԹ ՍՏՐՈՒԿՆ ՈՒ ՇՈՒՆԸ

*(սուֆիական առակ)*

Ոմն Աբդուլլա Իբն Ջաֆար այգի ուներ և մի անգամ որոշեց գնալ այնտեղ զբոսնելու։

Խաղողի թփի մոտով անցնելիս նա մի սևամորթ ստրուկի հանդիպեց։ Վերջինս հացի կտորը ձեռքին կքանստած էր, իսկ նրա առջև շուն էր նստած։

Աբդուլլան տեսավ, թե ինչպես ստրուկը մի պատառ հաց նետեց շանը, և վերջինս կերավ այն։ Այնուհետև նա նորից մի կտոր հաց նետեց շանը։ Հետո նորից ու նորից։

Աբդուլլան հարցրեց.

— Քեզ օրական ինչքա՞ն հաց են տալիս։

— Սա ամենն է, ինչ ես ունեմ,— պատասխանեց ստրուկը։

— Եվ դու ինչո՞ւ ես դա տալիս շանը,— հարցրեց Աբդուլլան։

— Շներն այստեղ հազվագյուտ բան են,— ասաց ստրուկը։— Այս մեկը հեռու վայրերից է եկել այստեղ և երևում է՝ սոված է։ Դրա համար էլ ես որոշեցի հացը նրան տալ։

— Իսկ դու ի՞նչ ես ուտելու այսօր,— շարունակում էր հարցնել առատաձեռն Աբդուլլան։

— Ես կդիմանամ,— պատասխանեց ստրուկը։

Եվ Աբդուլլա Իբն Ջաֆարը մտածեց. «Այս վայրերում ես փառաբանված եմ իմ առատաձեռնությամբ, և, այնուամենայնիվ, այս ստրուկը գերազանցեց ինձ»։

Եվ Աբդուլլան խաղողի այգին նվիրեց նրան՝ նախապես ազատությունը վերադարձնելով ստրուկին։

* * *

## Ի՞ՆՉ Է ՍԵՐԸ

*(ըստ Օմար Խայամի)*

Իմաստուն տեսա ու հարցրի նրան.
«Ասա՛, սերն ի՞նչ է»։ Նա ասաց. «Ոչինչ»։
«Բայց գիտեմ՝ բազում գրքեր են գրված։
Մի տեղ գրած է՝ հավերժություն է,
Մեկ ուրիշ գրքում՝ լոկ ակնթարթ է։

Նա մերթ խանձում է, մերթ հալեցնում է...
Ասա՛, սերն ի՞նչ է»: «Ամբողջը մարդն է»:
Ուղիղ նայեցի ես նրա դեմքին.
«Քեզ ո՞նց հասկանամ. ոչի՞նչ, թե՞ ողջն է»:
Ասաց ժպտալով. «Դու ինքդ արդեն
պատասխան տվիր».
«Ողջը կամ ոչինչ», աստ չկա միջին:
*(թարգմանությունը՝ ըստ կազմողի)*

* * *

## ԱՐՁԱԳԱՆՔ

*(ծագումն անհայտ է)*

Մի անգամ հայր ու որդի լեռներն էին բարձրացել: Տղեկը, քարափին զարնվելով, բացականչեց.
— ԱԱԱԱԱԱԱԱ...
Ու զարմանքով լսեց.
— ԱԱԱԱԱԱԱԱ...
Տղան հարցրեց.
— Դու ո՞վ ես:
Ի պատասխան.
— Դու ո՞վ ես:
Այդպիսի պատասխանից զայրանալով՝ տղան գոռաց.
— Վախկոտ:
Եվ ի պատասխան՝
— Վախկոտ:
Տղան դիմեց հորը.
— Ի՞նչ է կատարվում:
Հայրը ժպտաց և ասաց.
Ուշադի՛ր լսիր ինձ:
Հայրը գոռաց լեռանը.
— Ես քեզ հարգում եմ:
Նրան ի պատասխան՝
— Ես քեզ հարգում եմ:
— Դու լավագույնն ես:
Ի պատասխան՝
— Դու լավագույնն ես:
Տղան շարունակում էր զարմացած մնալ, և հետո հայրը նրան բացատրեց.
— Այս երևույթը «արձագանք» է կոչվում, բայց, ճիշտն ասած, սա կոչվում է կյանք... Նա քեզ հետ է վերադարձնում այն ամենը, ինչ դու ասում և անում ես:



* * *

## ԵՐԵՔ ՀԱՐՑ

*(հոգեբանական առակ)*

Մի երիտասարդ, փորձելով իր հարցերին պատասխաններ գտնել, փնտրում էր այնպիսի մարդկանց, որոնք կարող էին տալ այդ պատասխանները: Մի անգամ նա մի ուսյալ մուսուլմանի հանդիպեց և նրան տվեց այդ հարցերը.
Աստված գոյություն ունի՞: Եթե այո, ապա ցո՛ւյց տուր ինձ նրան (ուրվագծերը):
Ի՞նչ է ճակատագիրը:
Եթե Սատանան կրակից է արարված, ապա ինչո՞ւ նա պետք է դժոխքում հայտնվի, որտեղ բոլորը կրակի մեջ են: Չէ՞ որ դա նրան ցավ չի պատճառի: Մի՞-թե Ալլահն այդ մասին չի մտածել:
Ուսյալ մարդը հանկարծ ուժեղ ապտակ հասցրեց նրան:
Երիտասարդը, ոչինչ չհասկանալով, հարցրեց.
— Դու ինչո՞ւ զայրացար ինձ վրա:
Ուսյալ այրը պատասխանեց.
— Ես չեմ զայրացել քեզ վրա, պարզապես դա քո հարցերի պատասխանն էր:
— Ո՞նց հասկանամ:
— Դու ի՞նչ զգացիր իմ հարվածելուց հետո:
— Իհարկե, ես ցավ զգացի:
— Ուրեմն դու հավատում ես, որ ցավը գոյությո՞ւն ունի:
— Այո՛:
— Այդ դեպքում ինձ ցո՛ւյց տուր դա (ուրվագծերը):
— Ես չեմ կարող:
— Սա քո առաջին հարցի պատասխանն է... Հիմա ասա՛, երեկ դու երազում տեսե՞լ ես, որ ես քեզ ապտակ եմ հասցնում:
— Ո՛չ:
— Դու երբևէ մտածե՞լ ես, որ դու կարող է ինձանից ապտակ ստանաս:
— Ո՛չ:
— Սա ճակատագիրն է... ինչո՞վ է ծածկված իմ ձեռքը, որը ապտակ հասցրեց քեզ:
— Մաշկով:
— Իսկ քո դե՞մքը:
— Մաշկով:
— Ուրեմն դու ցա՞վ զգացիր:
— Այո՛, ուժեղ ցավ:
— Սա քո երրորդ հարցի պատասխանն է:

* * *

## ՄՐԲՈՒԹՅՈՒՆ

*(Էնտոնի դե Մելլո)*

Մի քարոզչի, որը շարունակ կրկնում էր. «Հարկավոր է Աստծուն ներս թողնել սեփական կյանքի մեջ», Վարպետն ասաց. «Նա միշտ այնտեղ է եղել: Մեր խնդիրը դա ընբռնելն է»:

* * *

## ԼՌՈՒԹՅՈՒՆ

*(Էնտոնի դե Մելլո)*

Մեծ թվով մարդկանց այցելությունների հոսքի պատճառով մենաստանում հաճախ շատ աղմկոտ էր լինում: Դա գրգռում էր աշակերտներին, բայց ոչ Վարպետին: Թվում էր, թե ժխորն ու լռությունը նրան հավասար չափով դուր էին գալիս:

Աղմուկից նեղվող աշակերտներին նա մի անգամ ասաց.

— Լռությունը ոչ թե ձայների բացակայությունն է, այլ էգոյի բացակայությունը:

* * *

## ԵԹԵ

*(Աբայ)*

Եթե երբևէ պատիվդ չես կորցրել,
Եթե շռայլորեն ես ապրել մարդկանց համար,
Եթե թշնամին ճանաչել է քո քաջությունն ու առաքինությունը,
Եթե հավատարիմ ես եղել քո ընկերությանը,
Եթե բոլորը վստահել են քեզ,
Եթե չես մոլորվել ճամփաների խաչմերուկներում,
Եթե հենց ինքդ չես հակառակվել քո ճակատագրին,
Եթե ապրել ես՝ ջերմացնելով սրտերը,
Եթե սիրահարվել ես ամբողջ հոգով,
Եթե տալիս տվել ես ամբողջը, մինչև վերջ
Եվ ստանալուց հետո մի բան էլ ավել ես վերադարձրել,
Եթե լեռնանցքը խիզախությամբ ես կտրել–անցել,
Եթե այլևս ապրելու ուժ չի մնացել,
Եթե երբևէ չես ցանկացել մեռնել,
Ուրեմն որպես մարդ ես ապրել:

*(ռուսերենից թարգմ.՝ ըստ կազմողի)*



* * *

## ԲԱՆՏ

*(ծագումն անհայտ է)*

Մի անգամ մի հանցագործի բանտ նստեցրին: Բանտախցի ոչ մեծ վանդակաճաղով պատված լուսամուտից երևում էր փողոցը:

Ամեն առավոտ հանցագործը վանդակաճաղերի ետևից նայում էր փողոցին, և դրանով անցնող յուրաքանչյուր մարդու վրա ծիծաղում էր բարձրաձայն քրքջալով: Ու ամեն անգամ նա ավելի ու ավելի մեծ ուժգնությամբ էր քրքջում:

Բանտախցի պահապանը զարմացած էր: Մի անգամ նա չդիմացավ և հարցրեց բանտարկյալին.

— Լսի՛ր, այս ամեն օրվա ծիծաղդ ինչի՞ համար է: Ինչի՞ վրա ես ծիծաղում:

Բանտարկյալը պատասխանեց.

— Ի՞նչ հիմար հարցեր ես տալիս: Դուք կույր եք: Ես ծիծաղում եմ նրանց վրա, ովքեր այնտեղ են: Չե՞ք տեսնում, որ նրանք նույնպես բանտարկյալներ են և վանդակաճաղերի ետևում են գտնվում:

* * *

## ՍԻՐԵՔ

*(Սթիվեն Քովիի «Հաջողակ մարդկանց յոթ հմտությունները» գրքից)*

Իմ սեմինարներից մեկի ժամանակ, երբ ես պատմեցի պրոակտիվության (***Պրոակտիվությունը նախաձեռնողությունն է, երբ մարդը չի սպասում արտաքին ազդեցությունների, որպեսզի սկսի անել այն, ինչ անհրաժեշտ է: Հակադիր հասկացությունը ռեակտիվությունն է: Ծր.՝ կազմողի***) կոնցեպցիայի մասին, ունկնդիրներից մեկը մոտեցավ ինձ.

— Սթիվե՛ն, ինձ դուր է գալիս այն, ինչ Դուք ասում եք: Բայց դե իրավիճակները շատ տարբեր են լինում: Որպես օրինակ՝ բերեմ իմ ընտանեկան կյանքը: Ես ու կինս այլևս միմյանց հանդեպ առաջվա զգացմունքները չունենք: Հավանաբար, ես նրան այլևս չեմ սիրում, դե, նա էլ ինձ չի սիրում: Ես ի՞նչ կարող եմ անել սրա կապակցությամբ:

— Ի՞նչ է, բոլորովի՞ն ոչ մի զգացմունք չի մնացել,— հարցրի ես:

— Հենց այդպես,— տեղնուտեղը հաստատեց նա:— Իսկ մենք երեք երեխա ունենք, մեզ անհանգստացնում է նրանց ճակատագիրը: Դուք ի՞նչ խորհուրդ կտաք ինձ:

— Սիրե՛ք նրան,— պատասխանեցի ես:

— Բայց ես ասում եմ՝ ոչ մի զգացմունք չի մնացել:

— Սիրե՛ք նրան:

— Չէ՛, Դուք չհասկացաք: Ոչ մի սեր այլևս չկա:

— Այդ դեպքում սիրե՛ք նրան: Եթե զգացմունքը վերացել է, ապա Դուք լավ պատճառ ունեք նրան սիրելու համար:

— Բայց ինչպե՞ս սիրեմ, եթե չեմ սիրում:

— Լսե՛ք, բարեկա՛մս, «սիրելը» բայ է, որը նշանակում է գործողություն: Սեր–զգացմունքը սեր–գործողության պտուղն է: Դե, ուրեմն սիրե՛ք նրան: Ծառայե՛ք նրան: Զոհաբերե՛ք Ձեզ: Լսե՛ք նրան: Ապրումակցում ունեցե՛ք նրա հետ: Գնահատե՛ք նրան: Աջակցե՛ք: Դե ի՞նչ, Դուք պատրա՞ստ եք սիրել նրան:

* * *

## ԱՍՏՎԱԾ ՏԱ՛ ԱՄՈՒՍԻՆԴ ԼԻՆԵՄ

*(ղազախական առակ)*

1937 թիվն էր: Մի ղազախ՝ գյուղսովետի ծառայող, աշխատանքից վերադառնալով, երեխաների հետ նստած ընթրիքին էր սպասում: Պատուհանից այն կողմ արդեն մթնշաղ էր իջել, և տանտերը, վարագույրը փակելով, կնոջը գրգռվածությամբ ասաց.

— Ի՞նչ եղավ քո ընթրիքը: Դե բե՛ր...

— Սպասի՛ր,— պատասխանեց կինը:— Ի՞նչ ես շտապում: Աստված տա, կուտենք:

— Ի՞նչ ես դու էլ, է՛... Աստված հա Աստված,— ջղայնացավ ամուսինը:— Տա, չտա: Քեզ ասում են՝ ուտելիքը բե՛ր ուտենք. առանց որևէ մեկին հարցնելու:

— Յոգուդ մեղք մի՛ արա,— կերակուրը սեղանին դնելով՝ ասաց կինը:— Ասա՛ փառք Ալլահին:

— Չէ մի,— հաշտվողաբար ասաց ամուսինը՝ գդալը ձեռքն առնելով:

Այդ պահին բակից կանգ առնող ավտոմեքենայի շարժիչի բնորոշ ձայն հնչեց, և մեկ րոպե անց դուռը ծեծեցին:

— ՆԿՎԴ–ի օպերլիազոր,— ներկայացավ համազգեստով մարդը:— Իրերդ վերցրո՛ւ: Գնում ենք:

Ընտանիքի գլխավորին, հազարավոր ու հազարավոր բացարձակապես ոչ մի բանում որևէ մեղք չունեցող այլ մարդկանց նման, տարան կեղծ ամբաստանության հիման վրա և ուղարկեցին ստալինյան մահվան ճամբարներ, որտեղից գործնականում ոչ ոք չէր վերադառնում:

Նրա կինն անընդհատ լաց էր լինում, շարունակ սպասում էր ու սպասում: Անցավ մեկ տարի, երկու, երեք: Յարկավոր էր ապրել ու երեխաներին մեծացնել: Կինը կամաց–կամաց վարժվեց այրու իր դերին:

Բայց, ո՛վ հրաշք: Երկար ու ձիգ տասը տարիներ անցնելուց հետո մի գիշեր նրա պատուհանը զգուշորեն թակեցին:

— Ո՞վ է,— կերոսինի լամպը վառելով՝ ներսից հարցրեց կինը:

— Աստված տա՝ ամուսինդ լինեմ,— մթության միջից հնչեց ծանոթ ձայնը:



* * *

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄ

*(ծագումն անհայտ է)*

Ես վաղուց էի պատրաստվում դրա մասին թեկուզ ինչ–որ բան գրել, թեկուզ մի երկու տող, մի երկու բառ: Ինձ մի բան է խանգարում. ես երջանիկ եմ, ամբողջովին, առանց «բայցի», «բացառության» և «բացիի»: Բայց երբեմն, երբ միանգամից քնել չի ստացվում, ես փորձում եմ որսալ այդ տարօրինակ զգացումը, որը նախկինում առաջանում էր ինձ մոտ: Այդ քաղցր, թեթև, գրեթե անկշռելի տխրությունը: Տխրությունը, որից սիրտդ մարմրում է, որից նրա զարկերն ավելի հուշիկ ու հանդարտ են դառնում. տխրությունը, որի ժամանակ գիշերով պատուհանից դուրս նայելիս ուզում ես մեռնել, երբ թվում է, թե կրծքիդ տակ այդպիսի կսկծալի զգացում ունենալով՝ ուղղակի անհնար է ապրել մինչ առավոտ: Ես փորձում եմ որսալ այդ զգացումը՝ ճշգրիտ չիմանալով էլ, թե դա իմ ինչին է պետք: Դա ինձ պետք էլ չէ, երբ կողքիս սիրելի մարդն է, երբ ես ինձ լավ եմ զգում, բայց երբեմն, հին հիշողության իներցիայով, երբ բնակարանում լռություն է տիրում, երբ արևը գնում է քնելու, ես բռնում եմ այդ զգացումի պոչից, ինչպես ճարպիկ թռչունին կբռնեն, իսկ նա շարունակ խույս է տալիս ինձանից, դուրս է պրծնում, սեղանից թռչում է պատուհանագոգին, թևածում է առաստաղի տակ, և իմ ուսին միայն երջանկությունն է նստում: Ես ուրախությամբ պառկում եմ քնելու՝ գոհ մնալով այն բանից, որ այդ զգացումն ինձ չի տրվում: Բայց ես գոնե գրեմ դրա մասին, որպեսզի ընդմիշտ թաղեմ դա: Իմ երջանկության մասին ես վախենում եմ գրել. թվում է՝ մի բառ կասես, և նա նեղանալով ուրիշների մոտ կթռչի: Երջանկությունս չեմ ուզում կիսել ուրիշների հետ, ուզում եմ թաքցնել այն իմ կրծքի վրա և թաքուն շոյել ու հոգ տանել նրա մասին: Իսկ իմ տխրությունը ես ցանկացած անցորդի կտամ: Դրանից բացի, նաև դժվար է այն պահել իր մոտ: Տխրությունը սուրճ, սիգարետներ, անքնություն ու հաճելի անկախ միայնակություն է պահանջում: Ես այդպիսի միջոցներ չունեմ:

Ես ճշգրիտ չգիտեմ, թե նախկինում իմ տխրությունն ինչպիսին էր, ինչից էր: Ես դա հնարե՞լ եմ, թե՞ նա իսկապես գոյություն ուներ: Այդպես քնքուշ ու դատարկ: Այն ժամանակ, երբ ես ատում էի իմ տունն ու սիրում էի օտար տները, ատում էի ցերեկներն ու սիրում էի գիշերները, ատում էի թեյն ու սիրում էի սուրճը, ատում էի սեփականությունն ու սիրում էի միայնակությունը, երբ ես երջանիկ էի այն բանից, որ ոչ մի կերպ չէի կարողանում մինչև վերջ երջանիկ լինել, ատում էի հանդիպումներն ու սիրում էի հրաժեշտները, ատում էի ինձ ու սիրում էի երկար գրույցները, ատում էի տրամվայներն ու սիրում էի մետրոն: Եվ ես ինքս՝ այդ ամենի մեջ այդպես թռուցիկ–անցողիկ ու անդադրում–անհանգրվան լինելով:

Միգուցե մի օր կգա, երբ ես նորից կհանդիպեմ իմ տխրությանը: Ես կողջունեմ նրան, ասես մենք չէինք էլ բաժանվել և կգնամ զբոսնելու անձրևի տակ: Ես

դարձյալ ինչ–որ թեթև, տարօրինակ զգացումների իշխանության ներքո կլինեմ, ես նրան՝ իմ տխրությանը, կշտամբանքի ոչ մի բառ չեմ ասի: Որովհետև ես նորից երջանիկ կլինեմ, բայց արդեն այլ ձևով, այն պատճառով, որ ոչ մի կերպ չեմ կարողանա մինչև վերջ երջանիկ լինել:

* * *

## ԱՄՊԵՐԸ

*(հեղինակն անհայտ է)*

Երկնքով երկու փոքրիկ ամպեր էին լողում՝ սպիտակ, թեթև, փափկամազ:
Անծայրածիր օդային օվկիանոսում նրանք լողում էին կողք կողքի, բայց ամեն մեկն իր ճանապարհով:
Եվ հանկարծ, չգիտես թե որտեղից, հայտնվեց չարաճճի քամին: Այս կողմից փչեց, այն կողմից փչեց:
Ամպիկներն, ասես անտեսանելի մի մագնիսի ազդեցությամբ, սկսեցին ձգվել դեպի իրար: Թվում էր՝ ուր որ է, նրանք միաձուլվելով կդառնան մի միասնական մեծ Ամպ:
Ամպիկներն արդեն պատկերացնում–տեսնում էին, թե ինչպես են իրենք միավորվում, լցվում ուժով ու հզորությամբ:
Ինչպես են իրենց քնքուշ ու փափուկ քուլաները միահյուսվում՝ մարդկանց երևակայությունը գրգռող ֆանտաստիկ ֆիգուրներ կազմելով:
Ինչպես են միասին տրվում գրգանքի՝ արևի քնքուշ ճառագայթների ներքո, որոնք ամբողջովին ներթափանցում են նրանց ներսը, լցնում Սիրով ու Ջերմությամբ:
Բայց չարաճճի Քամին դեռ իր խաղը չէր ավարտել...
Այդ խենթուկն սկսեց պտտվել, պտտվել ամպիկների շուրջը:
Արագ... ավելի արագ.. ավելի ու ավելի արագ...
Նա անցավ նրանց միջով, փչեց տարբեր կողմերից՝ մեկ աջից, մեկ ձախից, մեկ վերևից, մեկ ներքևից վրա տալով, քանդելով դեռևս չամրացած, իրար հետ չկապված օդեղեն քուլաները:
Ամպիկներն, այդ անսանձելի հոսանքից քշվելով, երկնքով մեկ այս ու այն կողմ շպրտվեցին:
Նրանք փորձում էին դիմակայել Քամուն, իրենց սպիտակ, քնքուշ թաթիկները մեկնում էին իրար: Բայց ուժերն անհավասար էին...
Եվ...
Անծայրածիր երկինքը տարածվել էր երկրի լայնարձակ եզերքների վրա:
Անամպ և Անհողմ:



* * *

## ՋԵԲՐԱՆ ԽԱԼԻԼ ՋԵԲՐԱՆԻ ԱՍՈՒՅԹՆԵՐԻՑ

Յոթ անգամ ես գարշեցի իմ հոգուց.
Առաջին անգամ, երբ տեսա, որ նա նվաստացավ՝ բարձունքների հասնելու համար:
Երկրորդ անգամ, երբ նկատեցի, որ նա կաղում է հաշմվածների ներկայությամբ:
Երրորդ անգամ, երբ նրան դժվարի ու հեշտի միջև ընտրության հնարավորություն տրվեց և նա ընտրեց հեշտը:
Չորրորդ անգամ՝ երբ նա չարիք գործեց և ի արդարացումն իրեն ասաց, որ ուրիշներն էլ են այդպես վարվում:
Հինգերորդ անգամ՝ երբ նա իր թուլության պատճառով համբերելով՝ համբերությունը որպես ուժ ներկայացրեց:
Վեցերորդ անգամ՝ երբ նա քամահրանքով շրջվեց այլանդակ դեմքից՝ չհասկանալով, որ դա իր դեմքերից մեկն է:
Եվ յոթերորդ անգամ՝ երբ նա գովերգ էր երգում էր և կարծում էր, թե դա արժանիք է:

* * *

## ԱՆՁՐԵՎՆԵՐԻ ՄԵՋՈՒՆ

*(ծագումն անհայտ է)*

Մի գյուղում քսան օր շարունակ հորդառատ անձրև էր տեղում: Կաթիլները հոսում էին տանիքների վրայից, գյուղի հողե ճանապարհներին ջրափոսեր էին կազմում, թմբկահարում էին անցորդների անձրևանոցներին: Բոլորը սարսափելի հոգնել էին այդ եղանակից, և ճնշված վիճակում, գլխահակ՝ ջանում էին խուսափել հանդիպող մարդկանցից: Ամբողջ գյուղը լավ եղանակի սպասման մեջ էր ընկղմված: Միայն գյուղի ծայրին ապրող մի ծերունի կար, որ շատ զվարթ տեսք ուներ: Թվում է, նա նույնիսկ ուրախ էր այդ անձրևների համար: Մի մարդ նրան հարցրեց.
— Ինչու՞ ես ուրախանում, մարդ աստծո: Արդեն քանի օր է՝ երկինքը լաց է լինում...
Ծերուկը ծիծաղեց ու իր հերթին հարցով դիմեց այդ մարդուն.
— Այսպիսի եղանակին տնից դուրս գալով դու ի՞նչ ես տեսնում քո առջև:
— Ո՞նց թե ինչ եմ տեսնում: Ամպեր եմ տեսնում, անձրև, և, իհարկե, ջրափոսեր: Իսկ դո՞ւ ուրիշ բա՞ն ես տեսնում, ինչ է:
— Իսկ ես կաթիլների արանքների մաքուր օդն եմ տեսնում, ջրափոսերի արանքների չոր գետինն եմ տեսնում, և ամպերի արանքներում երկնքի բաց մա-

սերն եմ տեսնում: Իսկ շուտով նաև ծիծաղը կտեսնեմ,— ծիծաղելով ասաց ծերունին ու ինքն իրեն ժպտալով գնաց իր ճանապարհով:

* * *

## ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏ
*(ծագումն անհայտ է)*

Մի անգամ ամերիկյան դպրոցներից մեկում այսպիսի մի դեպք կատարվեց: Նոր ընդունված ուսուցչուհիներից մեկը մի դասարան ստանձնեց: Ուսումնական տարվա ավարտին այդ դասարանն ուսման առաջադիմության առումով դպրոցում լավագույնն էր: Երբ դպրոցի տնօրենն այդ կապակցությամբ իր հիացմունքն էր արտահայտում, ուսուցչուհին շփոթված ասաց. «Բայց ախր դրանում որևէ առանձնահատուկ բան չկա: Չէ՞ որ ինձ այն դասարանը բաժին ընկավ, որն աբողջովին միայն ինտելեկտուալ օժտված երեխաներից էր բաղկացած»:

Տնօրենը զամացավ. «Ինչո՞ւ եք այդպես մտածում: Այդ դասարանի երեխաները ամենասովորական երեխաներ են»:

Պարզվեց, որ իր ապագա աշակերտների ցուցակն առաջին անգամ աչքի անցկացնելիս ուսուցչուհին յուրաքանչյուր ազգանվան դիմաց եռանիշ թիվ էր տեսել: Ուսուցչուհին մտածել էր, որ այդ թիվն ինտելեկտի գործակիցն է՝ IQ-ն, որն այդ ժամանակ չափում էին ամերիկյան դպրոցականների մոտ: Առանց բացառության բոլոր աշակերտների մոտ ցուցանիշները միջինից բարձր էին. ուսուցչուհին ուրախացավ և համույքով գործի անցավ: Ինչպես հետագայում պարզվեց, ազգանունների դիմաց գրված թվերը... դպրոցի հանդերձարանում աշակերտների անհատական պահարանիկների համարներն էին: Բայց արի ու տես, որ աշակերտների հաջողությունները միանգամայն իրական էին. այդ հաջողությունները հաստատվել էին անկախ թեստերի և այլ մանկավարժներ կողմից:

Մենք սովոր ենք մտածել, թե մարդուն գնահատում են ելնելով այն բանից, թե նա ինչպիսին է: Բայց հակառակը նույնպես ճիշտ է. միանգամայն որոշակի չափով մարդիկ այնպիսին են, ինչպիսին նրանց համարում են ուրիշները: Եթե դուք համոզված եք, որ ինչ-որ մեկը բարի է, կարեկից և արձագանքող, ապա ժամանակի ընթացքում նա իսկապես ավելի բարի, կարեկից ու արձագանքող կդառնա, քան նախկինում էր: Այս օրինաչափությունն ինքնաիրացվող մարգարեություն անունն է ստացել:

Յոգեբանական մի գիտափորձի ժամանակ ուսանող երիտասարդների երկու խմբի խնդրել էին 10 րոպե զրուցել ուսանողուհիների հետ: Տղաների մի խմբին համոզել էին, որ իրենց ընկերուհիները շատ լավիկն են, իսկ մյուս խմբին հակառակն էին ասել, թեև իրականում երկու խմբերում էլ աղջիկներն ամենասովորական, ստանդարտ արտաքին ունեին: Եվ ահա թե ինչ պարզվեց. իրենց զրուցակցուհիների գրավչության մեջ համոզված տղաներն ավելի բարյացակամ ու սիրալիր էին վերաբերվում նրանց. ընդ որում այդ խմբի աղջիկները զրույցների



ընթացքում ավելի շփվող էին և հումորի հակված: Այսպիսով, գիտափորձը ցույց տվեց, որ եթե շրջապատողներն ինչ-որ մեկին համարում են գրավիչ, ապա այդ մարդիկ իրենց պահում են համապատասխան ձևով՝ ավելի ազատ են պահում իրենց, ուշադրության նշաններ են ցույց տալիս և այլն: Իր նկատմամբ ցուցաբերվող դրական վերաբերմունքին համապատասխան՝ մարդն իր կողմից նույնպիսի դրական պատասխան վարք է դրսևորում: Դրանից նրա վարքը ավելի անկաշկանդ ու շահեկան է դառնում: Երբ շփումը բավական երկար է տևում, վարքից հետո կարող են փոխվել նաև ներքին հատկանիշները:

Այստեղից հետաքրքիր գործնական եզրակացություններ են բխում: Եթե մեզ հետ շփվող մարդկանց մասին մենք մտածում ենք, որ նրանք ավելի լավն են, քան իրականում կան, ապա նրանք ավելի լավը կդառնան: Եվ ընդհակառակը, եթե մենք նրանց թերագնահատում ենք, ապա նրանք կփոխվեն դեպի վատը: Այդ պաճառով էլ կատարելապես սխալ է այն համոզմունքը, իբր մարդուն փոխելու լավագույն ճանապարհը անընդհատ նրա բացթողումներն ու թերությունները գնելն ու մշտապես նրան մատնացույց անելն է: Անհամեմատ ավելի շատ բանի կարելի է հասնել, եթե մարդուն վերաբերվենք այնպես, ասես նա արդեն իսկ տիրապետում է ցանկալի դրական որակներին:

* * *

## ԸՆԴԱՄԵՆԸ ԴԻՏԵԼ
*(հնդկական առակ)*

Այնտեղ, որտեղ հիմա Բոմբեյն է գտնվում, ժամանակին մի ճգնավոր էր ապրում՝ շատ սուրբ մի մարդ: Բոլոր հանդիպողները նրան հարգում էին իր մաքուր բանականության, մտքի համար. շատերը պնդում էին, որ նա պետք է որ լիովին ազատագրված լինի: Լսելով, թե մարդիկ ինչ են մտածում իր մասին, այդ մարդը բնականաբար սկսեց մտածել. «Միգուցե ես իսկապե՞ս լիովին ազատագրվել եմ»: Բայց որպես ազնիվ մարդ, նա մանրակրկիտ ստուգեց իրեն և հասկացավ, որ իր բանականության, իր մտքի մեջ դեռևս անմաքրության հետքեր կան: Ինքնին հասկանալի է, որ այնքան ժամանակ, քանի դեռ այդ հետքերը կային, նա չէր կարող կատարյալ սրբության աստիճանի հասնել: Այդ պատճառով էլ նա իրեն պատվող մարդկանց հարցնում էր. «Ներկայումս չկա՞ արդյոք էլի ինչ-որ մեկը, որի մասին խոսում են որպես լիովին ազատագրված մարդու»:

— Օ, այո, պարոն,— պատասխանում էին նրան,— Գաուտամա անունով մի վանական կա, որին Բուդդա են ասում. նա Սավաթիիում է ապրում: Յայտնի է, որ նա լիովին ազատագրվել է. և նա սովորեցնում է այն մեթոդը, որի միջոցով կարելի է ազատագրման հասնել:

«Ես պետք է գնամ նրա մոտ»,— որոշեց վանականը,— և նրանից սովորեմ լիովին ազատագրված դառնալու միջոցը»: Եվ նա Բոմբեյից ոտքով ճանապարհ ընկավ՝ կտրելով ամբողջ կենտրոնական Յնդկաստանը: Վերջապես նա հասավ Սավաթիի. հիմա այդ քաղաքը գտնվում է հյուսիսային Յնդկաստանի Ութթար-Փ-

րադեշ նահանգում: Սավաթհի հասնելով՝ նա գնաց Բուդդայի մեդիտացիոն կենտրոն ու հարցրեց, թե որտեղ կարող է գտնել նրան:

— Նա դուրս է եկել,— պատասխանեց վանականներից մեկը,— գնացել է քաղաք սննդամթերիքի ետևից: Սպասիր այստեղ, հանգստացիր ճանապարհից հետո, նա շուտով կվերադառնա:

— Չէ, ես սպասել չեմ կարող, ժամանակ չունեմ: Ցույց տուր ինձ այն ճանապարհը, որով նա գնացել է ու ես կգնամ նրան փնտրելու:

— Դե լավ, եթե քեզ այդպես է պետք, ապա ահա այն ճանապարհով է նա գնացել: Փորձիր նրան գտնել ճանապարհին:

Զուր տեղը ոչ մի րոպե չկորցնելով ճգնավորը գնաց վանականի ցույց տված ճանապարհով և շուտով արդեն քաղաքի կենտրոնում էր: Այնտեղ նա մի վանական տեսավ, որը ողորմության թասը ձեռքին՝ տնից տուն էր անցնում: Այդ վանականին շրջապատող խաղաղության ու ներդաշնակության զարմանալի մթնոլորտը ճգնավորին հուշեց, որ դա էլ հենց Բուդդան է, և անցորդներին հարցնելով պարզեց, որ այդպես էլ կա:

Ճգնավորը տեղնուտեղը, հենց փողոցի մեջտեղում մոտեցավ Բուդդային, մինչև գետին խոնարհվեց ու գրկեց նրա ոտքերը: «Պարոն,— մրմնջաց նա,— ինձ ասացին, որ դուք լիովին ազատագրված մարդ եք և սովորեցնում եք ազատության հասնելու ուղին: Խնդրում եմ, ինձ սովորեցրեք այդ մեթոդը»:

Բուդդան պատասխանեց. «Այո, ես սովորեցնում եմ այդպիսի մեթոդ և դա կարող եմ սովորեցնել քեզ: Բայց այս վայրը և պահը հարմար չեն դրա համար: Գնա և սպասիր ինձ իմ մեդիտացիոն կենտրոնում: Ես շուտով կվերադառնամ և կսովորեցնեմ քեզ»:

— Օ, ոչ պարոն, ես չեմ կարող սպասել:

— Նույնիսկ կես ժա՞մ:

— Ոչ, պարոն, չեմ կարող: Ո՞վ գիտե: Բա որ հանկարծ կես ժամվա մեջ մեռնե՞մ: Կամ դուք մեռնեք: Կես ժամից կարող է նաև մեռնել ձեր հանդեպ իմ վստահությունը, և այդ ժամանակ ես չեմ կարողանա սովորել այդ մեթոդը: Պարոն, հիմա ամենահարմար ժամանակն է: Խնդրում եմ ձեզ, հիմա սովորեցրեք ինձ:

Բուդդան նայեց նրան ու տեսավ. «Այո, այդ մարդը քիչ ժամանակ ունի. նա կմեռնի մի քանի րոպե անց: Հարկավոր է դհաման տալ նրան այժմ և այստեղ»: Բայց ինչպե՞ս սովորեցնել դհամման փողոցի կենտրոնում կանգնած լինելով: Բուդդան ընդամենը մի քանի խոսք արտաբերեց, բայց այդ խոսքերում ամբողջ ուսմունքն էր. «Թող քո տեսնելու մեջ միայն տեսնել լինի, և ուրիշ ոչինչ. քո լսելու մեջ միայն լսել՝ և ընդամենը. քո հոտառության, համը զգալու, շոշափելու մեջ՝ զուտ հոտառություն, համ զգալ և շոշափում. քո ճանաչողության մեջ՝ միայն ճանաչում և ընդամենը»: Դա նշանակում է, որ երբ զգացական ապրման վեց օրգաններից ցանկացածի վրա հպում է կատարվում, ապա չպետք է լինի ոչ գնահատական, ոչ էլ պայմանավորված ճանաչողություն: Եթե ճանաչումը սկսում է որևիցե ապրում գնահատել որպես լավ կամ վատ, ապա մեր կողմից կուրորեն տրվող ռեակցիայի պատճառով մենք աշխարհին այլասերված լույսի ներքո ենք տեսնում: Ցանկացած տիպի պայմանավորվածություններից մեր մտածողությունը ազատելու համար անհրաժեշտ է դադարեցնել նախկին ռեակցիաների հիման վրա արվող գնահատումները, և գիտակցել-ճանաչել՝ չգնահատելով և ռեակցիա չտալով:



Ճգնանավորն այն աստճանի մաքուր մտածողության տեր մարդ էր, որ այդ սակավաթիվ խոսքեր-կողմնորոշումները նրան բավական էին: Հենց այդտեղ, ճանապարհի եզրին, նա նստեց և ուշադրությունը կենտրոնացրեց իր ներքին ռեալության վրա: Ոչ գնահատելով, ոչ ռեակցիա տալով, նա պարզապես դիտում էր իր ներսում կատարվող փոփոխությունների պրոցեսը: Եվ այն մի քանի րոպեների ընթացքում, որոնք նրան մնացել էին ապրելու, նա հասավ վերջնական նպատակին և լիովին ազատագրված դարձավ:

# ՄԻ ՔԻՉ ԷԼ ՀՈՒՄՈՐ

Սիրելի՛ ընթերցող, չեմ կասկածում, որ դուք սիրում եք հումորը՝ այդ փրկարար օղակը կյանքի ալեբախումներում: Սխալ է կարծել, թե իմաստությունը միայն լրջության հետ է համատեղվում: Ծիծաղը նաև լրջություն է և իմաստություն: Հաճախ ամենալուրջ բաները հենց կատակով են ասվում: Ստորև ներկայացվող իմաստալից զվարճապատումները, բնականաբար, միայն ծիծաղելու համար չեն, այլ նաև մտածելու:

## ԱՍՏԾՈ ՆԱՄԱԿՆԵՐԸ

*(ծագումն անհայտ է)*

Նոր տարուց առաջ Աստված հրեշտակներից մեկին ուղարկեց երկիր, որպեսզի վերջինս իմանա, թե մարդիկ ինչպես են պահում իրենց:

Հրեշտակը վերադարձավ և զեկուցեց. մարդկանց 95%–ը վատ է պահում իրեն, միայն 5%–ն է նորմալ պահում իրեն:

Աստված մեկ այլ հրեշտակի էլ ուղարկեց, որպեսզի վերջինս ճշտի իրավիճակը: Երկրորդ հրեշտակը վերադարձավ և հաստատեց. «Այո՛, դա ճշմարտություն է, 95%–ն իրեն շատ վատ է պահում, իսկ 5%–ը՝ տանելի»:

**Այժմ Աստված իրենց լավ պահող մարդկանց քաջալերելու և իր աջակցությունն առաջարկելու նպատակով նրանց նամակներ ուղարկեց:**

Գիտե՞ք, թե ինչ էր գրված այդ նամակներում:

**Չգիտե՞ք:**

**Ուրեմն դո՞ւք էլ չեք ստացել:**

* * *

*Կանանց և տղամարդկանց տրամաբանություն*

Նախ կանանց տրամաբանության մասին:

Մի կին իր ամուսնուց գանգատվում է ընկերուհուն.

— Լսի՛ր, ամուսինս այնքան հաճախ է ինձ դավաճանում, որ նույնիսկ չգիտեմ էլ՝ երեխաներս իրենի՞ց են, թե՞ ոչ:

Իսկ այժմ տղամարդկային տրամաբանության մասին:

Մի տղամարդ որոշել էր ամուսնանալ ու երկար ժամանակ մտածում էր, թե իրեն սիրահարված երեք աղջիկներից որին կնության առնի: Նա որոշեց յուրաքանչյուրին 5000 դոլար տալ և տեսնել, թե նրանք ինչ կանեն այդ գումարի հետ:

Առաջինը թանկարժեք զգեստներ ու հագուստներ գնեց, լավագույն կոսմետիկա, գեղեցկության էլիտար սրահ գնաց. մի խոսքով՝ ամեն ինչ արեց իդեալական տեսք ունենալու համար և ասաց. «Ես շատ եմ սիրում քեզ և ուզում եմ բոլորն իմանան, որ քաղաքի ամենագեղեցիկ կինը քո կինն է»:



Երկրորդը ամբողջ գումարը ծախսեց իր պոտենցիալ ամուսնու վրա՝ նրա համար գնելով գեղեցիկ նոր կոստյումներ, վերնաշապիկներ, ավտոմեքենայի գործիքներ և ասաց. «Ամենագլխավորն ինձ համար դու ես, այդ պատճառով էլ ես ամբողջ գումարը քեզ վրա ծախսեցի»:

Երրորդը գումարը ներդրեց գործի մեջ, ևս 5000 դոլար վաստակեց և ամբողջը վերադարձրեց տղամարդուն՝ ասելով. «Ես քեզ շատ եմ սիրում: Ես սա արեցի, որպեսզի դու հասկանաս, որ ես խելացի եմ և վատնող չեմ»:

Տղամարդը մտածեց և ամուսնացավ նրա հետ... ում կուրծքն ամենամեծն էր:

* * *

## ՖԵՐՄԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

*(ծագումն անհայտ է)*

Ֆլորիդայում ապրող տարեց մի մարդ արդեն շատ տարիներ ֆերմա էր տնօրինում: Ֆերմայի հետնամասերում արհեստական լճակ կար, որի մոտ պտղատու ծառեր էին աճում, պիկնիկներ անցկացնելու համար սեղաններ էին տեղադրված ու էլի նման բաներ: Լճակը լողալու համար էր կառուցված:

Մի երեկո ծերունի ֆերմերը որոշեց քայլել մինչև լճակը, որտեղ արդեն վաղուց չէր եղել և ստուգել, թե գործերն այնտեղ ինչ վիճակում են: Իր հետ նա մի մեծ դույլ վերցրեց, որպեսզի մրգեր բերի դրանով: Լճակին մոտենալով՝ նա ուրախ ճիչեր ու բարձր ծիծաղ լսեց: Մոտենալով նա տեսավ, որ լճում լողացող մի քանի երիտասարդ աղջիկներ են ուրախանում: Նրան տեսնելով՝ աղջիկները բղավեցին ու լողացին դեպի լճակի հեռավոր կողմը:

Աղջիկներից մեկը, ֆերմերին ձայն տալով, ասաց.

— Մենք դուրս չենք գա ջրից, մինչև դու չհեռանաս այստեղից:

Ծերուկը խոժոռվեց.

— Ես նրա համար չեմ եկել այստեղ, որպեսզի նայեմ, թե դուք ոնց եք տկլոր լողանում, և ոչ էլ նրա համար եմ եկել, որ ձեզ առանց հագուստների դուրս քշեմ ջրից:— Դույլը բարձրացնելով՝ նա շարունակեց:— Ես պարզապես եկել եմ այստեղ, որ կերակրեմ ալիգատորին...

* * *

## ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

*(քրիստոնեական առակ)*

Քահանայի մոտ մի մարդ եկավ ու գանգատվեց, որ իր հեծանիվը կորել է: Այժմ քահանան ասաց.

— Որդյա՛կ, հավաքի՛ր բոլոր ծխականներին և նրանց համար մեկիկ–մեկիկ կարդա՛ Աստծո բոլոր պատվիրանները, իսկ «Մի՛ գողացիր»–ը թող ամենավերջում և ուշադիր հետևի՛ր նրանց բոլորին: Գողություն կատարածը կամ կամաչի

ու կխոստովանի, կամ էլ ինչ–որ ձևով կմատնի իրեն:

Մեկ օր էլ չէր անցել, երբ ուրախությունից փայլող մարդը վազելով ետ եկավ քահանայի մոտ.

— Տե՛ր հայր, դու հանճար ես,— ասաց նա:— Ես հավաքեցի մարդկանց, սկսեցի կարդալ պատվիրանները ու երբ հասա «Մի՛ շնացիր»–ին, միանգամից հիշեցի, որ հեծանիվս թողել եմ սիրուհուս մոտ:

* * *

## ԲԱՌԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ

*(ծագումն անհայտ է)*

Մի կին իր փոքրիկ տղայի հետ գնացել էր ունկնդրելու, այսպես կոչված, սրբի: Քարոզի կեսին տղան սկսեց անհանգիստ շարժումներ անել, այնուհետև բարձրաձայն ասաց. «Չիշիկ եմ ուզում անել»:

Սուրբն, ինչ խոսք, շատ բարկացավ. այսպիսի աշխարհիկ բան՝ այսպիսի սուրբ վայրում: Նա ասաց.

— Երեխային սովորեցրե՛ք, թե ինչպես պահի իրեն: Հակառակ դեպքում նրան այստեղ մի՛ բերեք: Սա ոչ միայն անպարկեշտ բան է, այլև վիրավորական է:

Կինը խնդրեց.

— Չե՞ք ասի, թե ինչպես սովորեցնեմ նրան:

— Կարելի է փոխարինող բառ գտնել: Թող ասի. «Ես ուզում եմ երգել», իսկ Դուք կհասկանաք:

Կինն այդպես էլ սովորեցրեց երեխային:

Մի տարի հետո այնպես եղավ, որ սուրբն այցելեց այդ կնոջը և նրա մոտ հյուր էր: Ինչ–որ պահի կինը գնաց քաղաք իր հիվանդ մորն այցելելու, այնպես որ սուրբը մնաց երեխայի հետ: Գիշերվա կեսին երեխան արթնացրեց սրբին և ասաց.

— Ես ուզում եմ երգել:

Այդ ժամանակ սուրբն արդեն մոռացել էր փոխարինման մասին:

— Ուզում ես երգե՞լ: Հիմա երգելու ժամանակ չէ:

— Բայց ես ամեն գիշեր երգում եմ: Նույնիսկ երկու անգամ,— առարկեց տղան:

— Համա թե հիմարն ես,— ասաց սուրբը,— ցերեկն են երգում, այլ ոչ թե գիշերը: Մի՛ անհանգստացրու ինձ, լռի՛ր ու գնա՛ քնելու:

Մի քանի րոպե անց երեխան նորից ետ եկավ.

— Ես չեմ կարող քնել: Ու եթե Դուք ինձ թույլ չտաք, ապա ես Ձեզ ասում եմ, որ դա իրեն–իրեն կկատարվի:

— Ի՞նչ երգել,— մռթմռթաց սուրբը,— նաև հարևաններին կարթնացնես: Գնա քնի՛ր:

— Ես չեմ կարող քնել,— պատասխանեց տղան,— դրա համար ես նախ պիտի երգեմ:

— Դե լավ,— համաձայնեց սուրբը,— երգի՛ր, միայն թե ուղիղ իմ ականջին ու շատ կամաց:

Դե, տղան էլ «երգեց»: Այդ ժամանակ սուրբը հիշեց փոխարինումը:



* * *

## ԿՐԿՆԱՊԱՏԿԵՑ ԳԻՆԸ

*(հնդկական առակ)*

Մի մարդ փչացած մի ժամացույց տարավ ժամագործի մոտ: Վերջինս ասաց, որ ժամացույցը շատ հին է, և որ դրա նորոգումը շատ թանկ կարժենա՝ ժամացույցի սկզբնական գնից երկու անգամ ավելի թանկ: Ժամացույցի տերն ասաց, որ ինքն ուզում է ժամացույցը նորոգվի՝ թեկուզ և այդ գնով:

Ժամագործը սկսեց մտածել, որ եթե տերը պնդում է, որ այդ դարն ապրած ժամացույցը նորոգվի, այդ ժամացույցը նրան երջանկություն է բերում: Նա հին դետալների փոխարեն նորերը տեղադրեց, նորոգեց ժամացույցն ու տվեց տիրոջը:

Երբ ժամագործը խնդրեց տալ նորոգման գումարը, պատվիրատուն նրան երկու ուժգին ապտակ հասցրեց: Այդ տեսարանին ականատես մարդիկ բռնեցին նրան և տարան ոստիկանատուն, որտեղ նա պետք է բացատրություն տար, թե ինչու ծեծեց ժամագործին:

Ժամացույցի տերն ասաց, որ իրեն ասվել էր, որ ժամացույցի նորոգման դիմաց ինքը պետք է վճարեր երկու անգամ ավելի մեծ գումար, քան ինքը ժամանակին վճարել էր ժամացույցը ձեռք բերելիս: Եվ քանի որ նա ժամացույցը ոչ թե գնել էր, այլ մի մարդուց վերցրել էր՝ նրան մի ապտակ հասցնելով, ապա հիմա երկու ապտակ հասցրեց ժամագործին:

* * *

## ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ

*(առակ Նասրեդինի մասին)*

Մի անգամ՝ աշխարհով մեկ թափառելիս, Խոջա Նասրեդինը հասավ մի գյուղակի, որում չափից դուրս ժլատ մարդիկ էին ապրում: Մոլլան ամեն տեսակ ճիշտ ու սուտ խոսքերով փորձում էր նրանցից կերակուր պոկել, բայց նրանք բոլորը նրան հեռու էին քշում: Այդժամ Մոլլան խելագար ձևացավ և գյուղի փողոցներով անցնելով՝ գոռում էր.

— Ուտել եմ ուզում: Ուտել եմ ուզում: Ինձ հաց, քաղցրավենիք ու գոմա՛ղբ տվեք: Թրի՛ք տվեք, հաց ու շաքար: Ես այդ ամբողջը կուտեմ: Ուտելի՛ք տվեք:

Որոշելով զվարճանալ՝ մարդիկ բերեցին Մոլլայի ասածները: Արմունկներով իրար հրհրելով՝ նրանք սկսեցին իրար մեջ ծիծաղել:

— Եկե՛ք տեսնենք, թե այս խելառը շաքարի մեջ լցրած թրիքը ոնց է ուտելու՝ հացո՞վ, թե՞ առանց հացի:

Մոլլան կերավ բոլոր մթերքները, բայց թրիքին ձեռք չտվեց:

— Էս ի՞նչ ես անում,— հիասթափված հարցրին գյուղացիք:— Չէ՞ որ խոստացել էիր թրիքն ուտել:

— Ինչ–որ շատ կասկածելի տեսք ունի սա,— թրիքը մատնացույց անելով՝ պատասխանեց Նասրեդինը:— Ինձ թվում է՝ դուք սա թունավորել եք: Սկզբից ինքնե՛րդ փորձեք, այդ դեպքում ես էլ չեմ հրաժարվի:

* * *

## ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՆԵՐԻ ՎՐԱ

Պլատոնականություն: Ես հիշեցի: Ես մատներ ունեմ:

Նեոպլատոնականություն: Ես մատներ ունեմ: Բայց ես չէ, որ հիշեցի դա:

Ատոմիզմ: Մատները կան, միայն թե շատ փոքրիկ են, և դրանք շատ–շատ են:

Կինիկներ: Մատները կան: Բայց հանուն ինչի՞:

Ստոիցիզմ: Մատներն անխուսափելի են:

Հուդայականություն: Իմ մատները մատներն են բոլոր մատանց:

Զրրադաշտիզմ: Կան ձախ մատներ, կան աջ մատներ, և դրանք հավասար են:

Հինդուիզմ: Ամեն մատին մեկական կարմա:

Բուդդիզմ: Մատներն անցավոր են, ուրեմն էլ ում են դրանք պետք:

Կոնֆուցիականություն: Մատներ: Պարզապես մատներ:

Դաոսիզմ: Մատներից ոչ մի տեղ չես փախչի:

Քրիստոնեություն: Մատները հինգն են, բայց ափը հո միակն է:

Միջնադարյան փիլիսոփայություն: Մատներն անըմբռնելի են:

Վերածննդի փիլիսոփայություն: Բայց դե մատները կա՞ն:

Իսլամ: Չկան մատներ՝ իմ մատներից բացի:

Սենսուալիզմ: Եթե հարվածես մատներիդ ու դրանք ցավեն, ապա դրանք կան, իսկ եթե չցավեն, ուրեմն չկան:

Իդեալիզմ: Մատները կան, որովհետև ես մտածում եմ, որ դրանք կան:

Սուբյեկտիվ իդեալիզմ: Այ, հիմա կդադարեմ մտածել մատների մասին, ու դրանք կանհետանան:

Ագնոստիցիզմ: Մատները գոյություն ունեն, բայց դե փորձի՛ր ապացուցել դա:

Մատերիալիզմ: Մատները գոյություն ունեն, այդ պատճառով էլ ես մտածում եմ դրանց մասին:

Դիալեկտիկական մատերիալիզմ: Ձախ և աջ մատների միասնություն և պայքար:

Ռացիոնալիզմ: Մատները կան: Դրանք չեն կարող չլինել:

Սկեպտիցիզմ: Ով կարող է գլուխ հանել այդ մատներից:

Դետերմինիզմ: Նայած թե ինչ մատներ են:

Լուսավորչականություն: Իսկ դու ի՞նչ ես արել քո մատների համար:

Հեգելականություն: Մատները կան: Բայց հայտնի չէ, թե ինչպես:

Նիցշեականություն: Չարժե երկար նայել իր մատներին, թե չէ մի անգամ նրանք կնայեն քեզ:

Մարքսիզմ: Դա ոնց որ երկու մատը:

Մարքսիզմ–լենինիզմ: Դա ոնց որ երկու մատով դիպչես ասֆալտին:

Իռացիոնալիզմ: Իսկ մատները կա՞ն արդյոք:

Էքզիստենցիալիզմ: Ինչ-որ տեղ ես մատներ ունեի:



# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ «ԱՊՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ» ԳՐՔԱՇԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ես շնորհակալություն հայտնելու համար չէ, որ զանգահարել եմ Ձեզ: Պարզապես փաստն եմ նշում. այս գիրքը շատ անհրաժեշտ է, քանի որ անչափ ուսանելի է: Նրանում ամեն ինչ ասված է: Ընդ որում, պարզ և մատչելի ձևով: Իմ կարծիքով՝ ցանկացած մարդ, ով իմանա այս գրքի մասին, անպայման կկարդա այն»:

***Կարեն, Վանաձոր***

«Կարդացել եմ առակների Ձեր ժողովածուների երեք հատորները: Պատրաստվում եմ չորրորդը կարդալ: Շատ անհրաժեշտ գիրք է և շատ օգտակար: Այսպիսի գրքեր մեր գրադարաններում շատ պետք է լինեն»:

***Նունե, Երևան***

«Կարդացել եմ առակների ժողովածուների երկրորդ հատորը: Շատ շնորհակալություն: Իմ սեղանի գիրքն է դարձել: Շատ եմ հավանել և հաճախ վերընթերցում եմ: Գիրքն՝ ուսանելի է, մտորումների է մղում: Խնդրում եմ առաջին և երրորդ հատորներից երեքական օրինակ ուղարկեք ինձ՝ Երևանում բնակվող քրոջս միջոցով»:

***Օֆելյա, Լոս Անջելես***

«Ես ընդամենը 10 օրով եմ եկել Հայաստան, բայց առաջին գործս եղավ Ձեզ հետ հանդիպելը և առակների մասին զրուցելը: Առակների ժողովածուներն ինձ ուղարկել էր քույրս, որն ուսանում է Երևանի համալսարանում: Շատ սիրեցի այս առակներն ու պատմությունները: Անպայման շարունակեք այս գործը»:

***Սևակ Թումանյան, Լիբանան***

«Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ հիանալի մտահղացման համար: Առակների ներկայացված ընտրանին ոչ միայն հետաքրքիր, այլ նաև անհրաժեշտ է մեր հասարակության համար: Դա մի հիանալի ծաղկաքաղ է, որն ընդգրկում է բոլոր ժամանակների ու ժողովուրդների իմաստությունը: Ասեմ նաև, որ ընթերցել եմ բոլոր հինգ հատորներն ու խորհուրդ տվել բոլոր մտերիմներիս կարդալ դրանք: Մեր ամբողջ ընտանիքն է ընթերցում Ձեր գրքերը»:

***Հովհաննես, Երևան***

«Ես այս առակների ժողովածուների ամենամեծ պրոպագանդիստներից եմ: Արդեն հինգ օրինակ միայն նվիրել եմ մտերիմներիս և ծանոթներիս»:

***Կարեն, Երևան***

«Անընդհատ վերընթերցում եմ առակները: Ցանկացած էջից բացում եմ հատորներից որևէ մեկը և սկսում եմ կարդալ: Հաճախ միևնույն առակը վերընթերցելիս նոր իմաստներ ու ասելիք ես հայտնաբերում, որը մինչ այդ չէիր նկատել»:

*Հրանտ, Աշտարակ*

«Շատ շնորհակալություն գրքաշարի համար: Այսպիսի գրքեր քիչ կան: Սրանք կյանքին շատ մոտ գրքեր են, որոնք մեծ ազդեցություն ունեն: Անպայման շարունակեք այս շարքը: Նաև ցանկանում էի պարզել, թե ինչ նոր գրքերի վրա եք աշխատում»:

*Սամվել, Երևան*

«Ցանկացա իմ հիցմունքն ու երախտագիտությունն արտահայտել «Ապրելու արվեստը» գրքաշարի կապակցությամբ: Ունեմ շարքի բոլոր հատորները: Իմ սեղանի գրքերն են: Անչափ օգտակար են, շատ են օգնում այլ տեսանկյունով նայել բազմաթիվ հարցերի: Նաև խոր հոգեկան բավարարվածություն են պարգևում: Երբ մտածում եմ մտերիմներիս համար նվեր ընտրելու մասին, գալիս եմ այն համոզման, որ այս գրքերից ավելի լավ նվեր պարզապես չկա: Արդեն բազմաթիվ օրինակներ նվիրել եմ ծանոթներիս ու մտերիմներիս»:

*Նունե, Արտաշատ*



## Ամբողջ գրքաշարի համար օգտագործված գրականություն


1. Պրոննիկով Վ. Ա., Լադանով Ի. Դ., Ճապոնացիները, Եր., 1989:
2. Փիլիսոփայական բառարան, Մ. Մ. Ռոզենտալի խմբ., Եր., 1975:
3. И. Вагин. Умейте мыслить гениально, СПб, изд–во "Питер", 2001.
4. И. Вагин. Выиграй у судьбы в рулетку, СПб, изд–во "Питер", 2000.
5. **Хайям О.** Сад истин. Рубаи. М.: Изд–во Эксмо, 2003. Поэтический перевод Ирины Евсы. Переводы, иллюстрации, тексты — Издательство «Око», 2003.
6. **Кукушкин С. А., Ганус Г. А.** Притчи. Ведический поток. — Обнинск: ООО «Росток», 2001.
7. **Байрамов Э.** Духовные сказки мусульман. М.: ФАИР–ПРЕСС, 2002.
8. **Ошо.** Любовь. Свобода. Одиночество. СПб.: ИД «Весь», 2002.
9. Притчи человечества. /Сост. В. В. Лавский. Мн.: Лотаць, 2001.
10. Если ты не осёл, или Как узнать суфия. Суфийские анекдоты. /Сост. Константинов С. В., Смирнова Л. В. СПб.: ИД «Весь», 2003. Лисовский П.П., 2003.
11. **Ошо.** Осознанность. Ключ к жизни в равновесии. СПб.: ИД «Весь», 2002.
12. Простое и сложное в программировании. /Авт. предисл. Е. П. Велихов. М.: Наука, 1988.
13. Зеркало совершенства: истории странствующих суфиев. М.: Изд–во Эксмо, 2002.
14. **Коэльо П.** Мактуб. Перевод с английского П. В. Соколов.
15. **Бах Р.** Иллюзии, или приключения мессии, который мессией быть не хотел. Перевод М. Шишкина. Самара: «Кредо», 1992.
16. **Чжуан–Цзы.** Даосские каноны. /Пер., вступит. ст., коммент. В. В. Малявина. М.: ООО «Издательство Астрель»: ООО «Издательство АСТ», 2002.
17. **Гессе Герман.** Игра в бисер. /Пер. Д. Каравкиной и Вс. Розанова. М.: «Художественная литература», 1969.
18. **Коэльо П.** Дьявол и сеньорита Прим. /Пер. А. Богдановский. М.: «София», 2002.
19. **Норбеков М. С.** Опыт дурака, или Ключ к прозрению: Как избавиться от очков. М.: ООО «Издательство Астрель», 2004.
20. **Кэрролл Ли.** Притчи Крайона. Перев. с англ. М.: Издательский дом «София», 2004.
21. **Норбеков М. С.** Где зимует кузькина мать, или Как достать халявный миллион решений? М.: ООО «Издательство АСТ», 2004.
22. Суфии: Восхождение к истине. М.: Изд–во Эксмо, 2003.
23. **Шах И.** Невидимая газель. М.: Издательство «Сампо», 2001.
24. **Шах И.** Наблюдение за покровом. М.: Издательство «Сампо», 2001.
25. **Форстейтер М.** Даосские притчи /М. Форстейтер; Пер. с англ. А. Волкова. М.: Издательский дом «София», 2003.

26. **Ганус Г. А., Кукушкин С. А.** Наука побеждать. Притчи. М.: «Путь Истины», 2003.
27. **Шах И.** Мудрость идиотов / Идрис Шах. — Пер. с англ. М.: ФАИР–ПРЕСС, 2003.
28. Дзенские притчи. Пенза: «Алмазное сердце», 2003.
29. **Рамеш С. Балсекар.** Так уж случилось, что... Беседы и притчи мастера адвайты / Перев. с англ. М.: Издательский дом «София», 2004.
30. Притчи от Ошо. Пенза: «Алмазное сердце», 2004.
31. **де Мелло Энтони.** Молитва лягушки. Сборник рассказов–медитаций. Перев. с англ. О. Вишмидта. К.: «София», 2004; М.: ИД «София», 2004.
32. **де Мелло Энтони.** Зачем поёт птица? Перев. с англ. О. Вишмидта. К.: «София»; М.: ИД «София», 2003.
33. **де Мелло Энтони.** Одна минута глупости. Перев. с англ. Н. Вишмидт. М.: ИД «София», 2004.
34. **де Мелло Энтони.** Когда Бог смеётся. Сборник рассказов–медитаций. Перев. с англ. О. Вишмидта. К.: «София», 2004; М.: ИД «София», 2004.
35. **де Мелло Энтони.** Одна минута мудрости. Перев. с англ. Н. Вишмидт. М.: ИД «София», 2004.
36. Рассказы магов / Пер. с исп. СПб.: Азбука–классика, 2004.
37. Мудрецы Талмуда. Сборник сказаний, притч, изречений /худож.–оформ. А. Семёнова. Ростов–на–Дону: «Феникс», 2005.
38. **Лукьяненко С.** Спектр. М.: «АСТ», 2005.
39. **Зенгер Х. фон.** Стратагемы. О китайском искусстве жить и выживать. Том 1. М.: «Эксмо», 2004.
40. **Уайльд О.** Сказки и рассказы. Пер. с англ./Илл. Н. Гольц. М.: Худож. лит., 1993.
41. **Гессе Г.** Книга россказней: Новеллы Г. Гессе; Пер. с нем. С. Ромашко. М.: Текст, 2002.
42. **Гессе Г.** Избранное. М.: «Художественная литература», 1977.
43. **Кривин Феликс.** Сказки с моралью. Ужгород: «Карпаты», 1964.
44. **Медведев А. Н.** 1001 урок боя короткой палочкой (когтем каменной птицы). М., 1994.
45. **Абуль–Фарадж.** Книга занимательных историй. М., Л.: Гос. изд. худ. лит., 1961.
46. **Шапиро Рами.** Хасидские притчи / Пер. с англ. М.: «София», 2005.
47. **Пу Сунлин.** Рассказы о людях необычайных. М.: «Правда», 1988.
48. **Бхагаван Шри Сатья Саи Баба.** Притчи и истории: В 2 кн. Кн. 1. М.: Амрита–Русь, 2005.
49. **Рерих Н. К.** Сказки. М.: Амрита–Русь, 2006.
50. **Уолш, Нил Доналд.** Беседы с Богом (необычный диалог). Книга I / Перев. с англ. М.: ООО Издательский дом «София», 2005.
51. **Кийосаки Роберт Т.** Если хочешь стать богатым и счастливым, не ходи в школу. Минск: «Попурри», 2005.
52. **Тургенев И. С.** Полное собрание сочинений и писем в тридцати томах. Т. 10. М.: «Наука», 1982.
53. **Шах И.** Путь суфиев (пер. с англ.). М.: Центр духовной культуры «Единство», 1993.
54. **да Винчи Леонардо.** Сказки. Легенды. Притчи. М.: Амрита–Русь, 2005.
55. Путь к Мудрости: Акбар и Бирбал / Сост. С.В.Махотина. Мн.: ИП «Лотаць», 2000.
56. Индуистские притчи. Пенза: «Золотое сечение», 2006.
57. **Ганаго Б. А.** Детям о душе. Минск: Издательство Белорусского Экзархата, 2005.
58. **Дорошевич В. М.** Сказки и легенды /[Сост., вступ. статья и коммент. С. В. Букчина]. Мн.: «Наука и техника», 1983.
59. **Тулупов Вячеслав протоиерей.** Крыло ангела. М.: «Русский Хронографъ 1991», 2006.
60. Бай Юй Цзин (Сутра ста притч). Пер. с кит. и коммент. И. С. Гуревич. Вступит. статья Л. Н. Меньшикова. М., Главная редакция восточной литературы издательства «Наука», 1986.
61. **Мегре В.** Энергия жизни. СПб.: ИД «Диля», 2003.
62. **Курпатов А.** 5 великих тайн мужчины и женщины. СПб.: «Нева», 2007.
63. **Уолш, Нил Доналд.** Моменты благодати / Перев. с англ. М.: ООО Издательский дом «София», 2004.
64. **Цветков Э. А.** Мастер самопознания, или погружение в «Я» / Оформл. С. Григорьев. СПб: Лань, 1997.
65. **Выженко А.** Посох, сума и флейта: притчи и высказывания Старчика / А. Выженко. Ростов н/Д: Феникс, 2007.
66. **Выженко А.** Притчи: путеводная Звезда перемен / А. Выженко. Ростов н/Д: Феникс, 2007.
67. **Уолш, Нил Доналд.** Беседа с Богом. Новые откровения / Перев. с англ. М.: ООО Издательский дом «София», 2006.
68. **Уолш, Нил Доналд.** Чего хочет Бог: Ответ на важнейший вопрос / Перев. с англ. М.: ООО Издательский дом «София», 2005.
69. Агада. Сказания, притчи, изречения Талмуда и Мидрашей. Ростов–на–Дону: «Феникс», 2000.
70. **Мегре В.** Новая цивилизация. Книга 8. Часть 1. СПб.: ИД «Диля», 2005.
71. **Афанасьев А. Н.** Русский народ. Полная иллюстрированная энциклопедия. Сказания, легенды и притчи. М.: «Издательство «Эксмо», 2005.
72. **Шлахтер В. В.** Человек — оружие. Курс профессиональной психофизической подготовки бойца. СПб.: изд–во ТОО «Терция», 1998.
73. **Бирс Амброз.** Словарь Сатаны. М.: Изд–во Эксмо, 2005.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ընդդեմ արժեքային վակուումի կամ ակնարկներ ինքնակերտման ճանապարհին (նախաբանի փոխարեն) ... 3
Առանց սիրո ... 6
Արծիվներ ու խեցեմորթներ ... 6
Սեփական եզրակացություններ ... 7
Բջիջը: Հայացք ներսից և դրսից ... 8
Մեծագույն մարդը ... 9
Առակ Աստծո մասին ... 10
Աստված գոյություն ունի՞ ... 11
Հավատն ու իմաստունի մատը ... 11
Հերթով ... 12
Կույր ենթարկվողություն ... 13
Հավատ ... 13
Դյուրահավատություն ... 13
Աստծո մեծ մտահղացումը ... 14
Դժգոհ մարդիկ ... 15
Մի մարդ ուժեղ հիվանդացել էր ... 16
Լավագույն սուսերամարտիկը ... 16
Ո՞վ է հեղինակը ... 17
Խխունջը ծառի վրա ... 17
Սուլոցը ... 18
Լռություն ... 18
Գործողության սրբազան պտուղները ... 19
Փորձագետները ... 19
Հարստությունն ու իմաստնությունը ... 20
Լավագույնն ու վատագույնը ... 20
Գոռոզ առաջնորդը ... 21
Ներքին լույսը ... 22
Քննություն ... 23
Միայն քոնը ... 23
Հանդիպում Բոդհիսաթվա Մանջուշրիի հետ ... 24
Փխրուն նվերներ ... 25
Հիսուսի պատասխանը ... 25
Պարը ... 26
Խայթը ... 26
Ինչո՞ւ ես եկել ... 26
Դռնապանը ... 27





Մեկ թիակով նավակը ... 27
Երեք քույրերն ու ճակատագիրը ... 28
Բարելավում ... 28
Աստծո կրպակում ... 29
Կարճ առակներ ... 29
Լսել կնոջը ... 37
Բարյացակամություն ... 37
Կապիկն ու թռչունը ... 38
Անկեղծություն և բնականություն ... 38
Նվիրական երազանքներ ... 39
Ինչումն է ուժը ... 40
Այն, ինչը մենք կրում ենք մեզ հետ ... 40
Ծանր բեռը ... 41
Անկումների պատճառը ... 42
Երջանիկ ամուսնություն ... 42
Կասկածամտություն ... 42
Առակ առնետի մասին ... 43
Առակ երեք արատների մասին ... 43
Առակ ներդաշնակության մասին ... 44
Առակ նարնջի մասին ... 45
Համբերության թասը ... 46
Ուսուցչի գլխավոր խնդիրը ... 46
Աստծուն հանգի՛ստ թող ... 47
Էթիկական երկու հարց ... 48
Գտի՛ր պատճառը ... 49
Գերված առյուծը ... 49
Ցանկապատի կառուցվածքը ... 50
Սողոմոնի դասերը: Ազատության մասին ... 51
Սողոմոնի դասերը: Ընտրության մասին ... 52
Սողոմոնի դասերը: Սկզբունքների մասին ... 53
Ճիշտ ճանապարհը ... 54
Սիրո չափը ... 54
Աշակերտելու իմաստը ... 55
Անվերնագիր ... 55
Երկու ձկնորս ... 56
Անվերնագիր ... 56
Երջանկության ժառանգում ... 57
Անվերնագիր ... 57

Ջեբրան Խալիլ Ջեբրան «Մարգարեն» (հատվածներ էսսեից) ........... 58
Հայելին և էկրանը ........... 60
Ո՞րն է տարբերությունը ........... 61
Հաջողության գաղտնիքը ........... 61
Ովքե՞ր են ավելի շատ ........... 61
Արժանիքներ և թերություններ ........... 62
Ամենագլխավոր հարցը ........... 62
Ջրի բաժակը ........... 63
Անսիրությունը մեղք է ........... 63
Պայքար ուրվականի դեմ ........... 64
Բարության բեկորները ........... 65
Հանգստության գաղտնիքը ........... 66
Առակ կույսի մասին ........... 66
Լաբիրինթոս ........... 66
Խորհուրդ ուղու վրա ........... 67
Կայծքարն ու հրահանը ........... 68
Ածելին ........... 68
Զրույց Աստծո հետ ........... 69
Շրջապատողների անզգայությունը: Հինգ Շի ........... 70
Երեխան և գողը ........... 70
Կյանքը պարզ է ........... 71
Հիշի՛ր բեկորների մասին ........... 71
Մահվան մասին ........... 72
Որտեղի՞ց ժամանակ գտնել մեդիտացիայի համար ........... 73
Բարություն ........... 73
Կարճ կանգառ ........... 74
Սատկած էշը ........... 75
Հիվանդ երեխան ........... 75
Անվերնագիր ........... 76
Մենք և բնությունը ........... 76
Կին լինել ........... 77
Անհնար է ........... 77
Ճշմարտությունը ........... 77
15 պատճառ ........... 78
Մարդը և նրա նպատակները ........... 79
Անլուծելի խնդրի մասին ........... 81
Անվերնագիր ........... 81
Տարբեր արժեքներ ........... 81



Ո՞ւր են ընկնում մեղավորները ........... 82
Ցանկությունների ու դիտավորությունների մասին ........... 84
Հանգամանքներն ընդունելու կարողություն ........... 84
Յուրաքանչյուրին ըստ իր հավատի ........... 84
Այն ամենը, ինչ իսկապես հարկավոր է իմանալ,
ես մանկապարտեզում եմ սովորել ........... 85
Հայացքների մասին ........... 85
Եվ լավ էր ........... 86
Ինչո՞ւ սակարկել ........... 86
Մի պետության պատմությունը ........... 87
Խորհուրդ փրկության մասին ........... 88
Արդարություն և արդարադատություն ........... 89
Սողոմոն թագավորի երջանկությունը ........... 89
Այն, ինչ պետք է ........... 90
Հեքիաթ մարդկային գիտակցության մասին ........... 91
Առանց ջանքերի հաղթողը ........... 92
Ճշմարտության խանութը ........... 92
Քաղաքն ու վիշապը ........... 93
Ընտանիքի անդամը ........... 93
Խրտվիլակը ........... 94
Ինքն իրեն թշնամի ........... 94
Տղայի խորհուրդները ........... 95
Առակ բեռան մասին ........... 96
Վստահության մասին ........... 96
Ոգիները ........... 97
Ժպիտը ........... 97
Ողջույն արշալույսին ........... 98
Բացասական փորձառություն չկա ........... 98
Տատի խրատները թոռնուհուն ........... 99
Ով պետք է փոխվի ........... 100
Ցատկել է հարկավոր ........... 100
Անմեղությունն ու մեղքը ........... 101
Ընտրությունը քոնն է ........... 101
Աստվածն ու մարդը ........... 102
Նամակ լավ մարդուն ........... 102
Մարդու բնույթը ........... 103
Հակումներ ........... 104
Շարունակի՛ր փորել ........... 105

Քայլք սպիտակ քառակուսով .......... 106
Հիսուսն ու Նիկոդիմոսը .......... 107
Հարցազրույց Աստծո հետ .......... 108
Խոշա Նասրեդինի իմաստությունը .......... 109
Երեք լավագույն բաները .......... 110
Սևամորթ ստրուկն ու շունը .......... 111
Ի՞նչ է սերը .......... 111
Արծագանք .......... 112
Երեք հարց .......... 113
Սրբություն .......... 114
Լռություն .......... 114
Եթե .......... 114
Բանտ .......... 115
Սիրեք .......... 115
Աստված տա՝ ամուսինդ լինեմ .......... 116
Երջանկության սպասում .......... 117
Ամպերը .......... 118
Ձեբրան Խալիլ Ձեբրանի ասույթներից .......... 119
Անծրևների սեզոն .......... 119
Էքսպերիմենտ .......... 120
Ընդամենը դիտել .......... 121

ՄԻ ՔԻՉ ԷԼ ՀՈՒՄՈՐ
Աստծո նամակները .......... 124
Կանանց և տղամարդկանց տրամաբանություն .......... 124
Ֆերմերի պատմությունը .......... 125
Պատվիրանները .......... 125
Բառերի փոխարինում .......... 126
Կրկնապատկեց գինը .......... 127
Հնարամտություն .......... 127
Փիլիսոփայություն մատների վրա .......... 128

Ընթերցողների արձագանքները .......... 129

Գրականության ցանկ .......... 131



# «ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» «ՊՐԱԿՏԻԿ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

— Ինքնազարգացման հոգեբանական դպրոց «Դիստանցիա».
— Անձնային աճի և կարողությունների զարգացման թրեյնինգային խմբեր, հոգեբանական ակումբ.
— Անհատական հոգեբանական խորհրդատվություններ.
— Ուսուցողական թրեյնինգներ և սեմինարներ կազմակերպությունների համար.
— Մասնագիտական վերապատրաստման դասընթացներ հոգեբանների և հումանիտար այլ մասնագետների համար:

Տեղեկությունների և մասնակցության համար դիմել «Տաթև գիտակրթական համալիր»՝ «Պրակտիկ հոգեբանության ուսումնական կենտրոն»:
Հասցեն՝ Կոմիտասի 49/2, 2–րդ հարկ (Կոմիտասի շուկայի հարևանությամբ):
Հեռախոսներ՝ 23 26 48, 23 25 28:

Մեզ գտնելը շատ հեշտ է:



1500

Կազմող՝
ՀՐԱՉՅԱ ԱՄԻՐՅԱՆ

# ԱՊՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

ԳԻՐՔ 6

# ԻՆՔՆԱԿԵՐՏՈՒՄ

*ՀՈԳԵԲԱՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ*


Հրատարակչության տնօրեն՝ Է.Ս. Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան
Համակարգչային ձևավորումը՝ Ս.Գ. Միքայելյանի
Վերստուգող սրբագրիչ՝ Գ.Հ. Կիրակոսյան
Սրբագրիչ՝ Լ.Կ. Առաքելյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 8.75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+3741) 23-25-28,
ֆաքս՝ (+3741) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am
Գրախանութ՝ Երևան, Խանջյան փող. 29, հեռ.՝ 54-06-07,
էլ. կայք՝ www.book.am

Ցանկացած կենսափիլիսոփայություն, հիմնված լինի այն կրոնի վրա, գիտական հիմնավորում ունենա, թե զուտ կոնկրետ մարդու անհատական կենսափորձից բխի, անպայմանորեն կենսահաստատ պետք է լինի: Այն պետք է ուժ տա մարդուն, օգնի նրան ապրել: Օգնի ոչ թե պարզապես դիմակայել կյանքի դժվարություններին, այլ ապրել իմաստուն, ներդաշնակ և հիրավի Մարդավայել կյանքով: Փիլիսոփայությունը մարդու համար է, այլ ոչ թե հակառակը: Կույր պետք է լինել չտեսնելու համար, թե ինչպիսի վիթխարի կենսական ուժեր ու ստեղծագործական հզորություններ են դրված մեր մեջ: Այդ ամենը լիարժեքորեն իրացնելն այն խնդիրն է, որին պետք է ձգտեն բոլոր մտածող մարդիկ: Ցանկացած ուսմունք կամ աշխարհայացք, որը բացասում է հավատը մարդու հնարավորությունների հանդեպ, մերժելի է ու չպետք է փոխանցվի եկող սերունդներին: Միևնույն ժամանակ կենսահաստատ գաղափարներով տոգորված ցանկացած ուսմունք, մարդու և կյանքի անվերապահ արժեքավորությունը հաստատող ցանկացած փիլիսոփայություն մտացածին չպետք է լինի: Այն պետք է բխի կյանքից և հիմնված լինի կյանքի օրենքների ու օրինաչափությունների վրա: Միայն այդ դեպքում է, որ կենսափիլիսոփայությունը դառնում է հիրավի ճշմարիտ և վերածվում մարդու կյանքը վերափոխող ստեղծագործ ուժի:

Սիրելի՛ ընթերցող, այս ժողովածուում տեղ գտած առակների միջոցով փորձ է արված հենց այդպիսի փիլիսոփայություն ներկայացնել Ձեր ուշադրությանը:

*Հրաչյա Ամիրյան*